


Գ. ՄԱՐԿՅԱՆ

ՄԱՐԿՅԱՆԻ ԳՐԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գ. ԳՐԱԳՐԱ 1900 թ



Ժ. ՄԱԹԷՅ

ՔՆՏԱՆԵԿԱՆ ԳԱՂՏՆՆԻՔՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԿԱՐԱՊԵՏ Ս. ԻԻԹԻՒՃԵԱՆ

Արշակունի «ՄԱՍԻՍ»-ի

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

ՏԷՐ և ՏՆՕՐԷՆ

Մաշտոցի և ձերիշէյի Ծրէկէյի լրագրաց

Գ. ՀՍՏՈՐ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. Տ. ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

1900

ՆԱԽԱՄԱՐՏԷՆ ԵՏԵԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԻ
ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՇԱՄՊԷՉԻ

«Գիտեմ հիմայ ինչ որ կ'ուզէի գիտնալ, ըսաւ Շամպէզի ինքնիրեն՝ երբ տը Ռիչմօն դերկոմսուհիին օթեանէն դուրս ելնելով կառքը նստաւ իւր Տէ-Տէօ-Բօն փողոցի բնակարանը վերադարնալու համար: Աղջիկը չի գիտեր մօրը գործած ոճիրը. ապա թէ ոչ, երբ ես ժիւթինի պարտէզէն գտնուած տղեկի մը դիակին խօսքն ըրի, իւր շփոթութեան միջոցին բերնէն քանի մ'արգարացուցիչ խօսքեր կը փախչէին:

Արդարեւ, հակառակ ձեռք առնուած զգուշութիւններուն և դաղտնապահութեան պատուէրներուն, ճշմարտութիւնը վերջապէս երևան ելեր էր, և առաւօտեան թերթ մը նոյն օրը կը պատմէր թէ փոքրիկ դիակ մ'ալ դատուեր էր:

Այս էր պատճառը, որ Շամպէզի ո-

րողեր էր անմիջապէս կատարել այն ձեռնարկը զոր փորձեց Ֆէրնանտի մօտ:

Լուրը կարգալուծն պէս հասկըցեր էր աղքատաց գանձանակին մէջէն գտած յատակագիծին վրայ նշանակուած «Լէֆֆ» իմաստը, որուն շնորհիւ գտեր էր մանկաբարձուհիին սոսկներն, ինչպէս նաև այն տուժարը՝ որ իրեն յայտներ էր տը Ֆէրնիք կոմսուհիին և պարոն ու տիկին տը Ռիչմօնի և Դանիէլ տը Քէօրի անունները:

Հիմայ գիտէր ամէն բան:

—Աւելի լաւ է ինձի համար, կ'ըսէր Շամպէզի ինքնիրեն, որ մայր ու աղջիկ մեզսակից չեն: Հետևապէս վախ չունիմ որ երկուքը միաբանին և զիրար պաշտպանեն ինձի դէմ:

«Առանձին մնալով՝ աւելի տկար, աւելի ձեռքիս մէջ կ'ըլլան: Ասկէ զատ, դերկոմսուհին չի գիտնալով բուն յանցապարտին անունը, աւելի կը վախնայ որ ինքը կ'ամբաստանուի այդ որդեսպանութեան համար: Իւր շփոթելէն հասկըցայ...: Վերջապէս տուած ամէն հարուածներս ալ պարապ չելան: Որչափ աւելի մտածէ, այնչափ պիտի զգայ զիս լռեցընելու հարկը...»

«Անշուշտ պիտի իմացընէ իւր տարփաւորին, Պ. Դանիէլ տը Քէօրի, և խորհուրդ պիտի ուզէ անկէ...»

«Նախաքննիչ դատաւորն ալ, կամ պիտի ստիպէ զայն որ պահանջածս կատարէ... կամ՝ զիս վախցընելու պիտի ելնէ... սպառնալիքներ ընելով: Որովհետև իր անունը չի տուի, պիտի կարծէ թէ չեմ գիտեր դերկոմսուհիին հետ ունեցած յարաբերութիւնները:

«Բայց ինքն ալ ձեռքիս մէջն է միւսներուն պէս... և հիմա չեմ վախնար իրմէ: Եթէ սիրուհին չի վճարէ... ինքը կը վճարէ...: Հարուստ է...: Թող կանչել տայ զիս, ձերբակալել տայ, եթէ կ'ուզէ...»

Եւ քրքիջ մ'արձակեց:

—Երբ այդ երկու սիրահարները վճարեն, կարգը պիտի գայ Տիան տը Ֆէրնիք կոմսուհիին և Գիսային, Պ. տը Ռիչմօնի...»

«Եթէ չուզեն վճարել, տը Ֆէրնիք կոմսը կայ միշտ... վերջի պահուած:»

Երբ Տէ-Տէօ-Բօ՛, փողոցի բնակարանը հասաւ, Շամպէզի թղթապանակէն հանեց նոտարէն տուած առժամեայ ընկալագիրը, և աւելի մանր ծալելով

սենեակին հայելին ու ետեւի պատին մէջտեղը խոթեց :

— Հիմա, ըսաւ ինքնիրեն, սպասենք դէպքերուն. ոտքէս մինչև գլուխս զինուած եմ. աիկին տը Ռիչմոնի բռնելիք ընթացքին համեմատ պիտի վարուիմ ես ալ աիկին տը Ֆէրնիքի հետ :

Շամպէշի մեկնելէն ետև, Ֆէրնանտ ջղային ամենաբուռն տագնապ մ'ունեցեր էր :

Արդէն ենթակայ էր ջղային տագնապի. մանաւանդ բարոյական յուզումներն երբեմն այդ գարհուրելի նուպաները կուտային իրեն, որոնք խենթութեան նշաններով կը սկսին և գրեթէ մահատիպ գոչայագրկութեամբ կը վերջանան :

Թալթըլելով անձակած սուր ճիչերը սենեկապանուհին լսելով ներս վազեր էր : Վերցուցին անկողնին մէջ դրին զինքը, ուր շատ չանցած՝ արտօսութի հեղեղ մը թուլցուց ջղային տագնապը, որ գրգռութեան վերջին աստիճանին հասած էր :

Երբ ինքզինքը գտաւ, պարտասած, ուժաբեկ, սրտատանջ մանաւանդ այն խօսքերուն համար, որոնք զառանցած

միջոցին թուեր էին բերնէն, Մարիին նայեցաւ որ շաքարախառն ջուր կը ներկայացնէր իրեն, որուն մէջ քանի մը կաթիլ եթեր դրուած էր :

— Ա՛հ, աիկին, շատ վախցուցիք զիս, ըսաւ սենեկապանուհին :

Ֆէրնանտ անոր երեսը նայեցաւ սրտատանջ :

Կը հասկցուէր դէմքէն որ իւր գաղտնիքներէն ոչ մին չէր թռած բերնէն, և այս համոզումը շուտով և աւելի լաւ քաջալերեց և հանդարտեցուց զինքը քան Փարիզի դեղագործներուն ամէն եթերները ու նարնջածաղիկի ջուրերը :

— Բան մը չէ՛, ըսաւ տկար ձայնով մը. օդը մրրկալից էր և հօրս չուելուն վրայ ալ սիրտս յուզուած . . . :

Սենեկապանուհին որ գիտէր իւր տիրուհւոյն չափազանց դիւրագգածութիւնը, ինքզինքը համոզուած ձեւացուց այս բացատրութեամբ, և շատ չանցած մեկնեցաւ :

Ֆէրնանտ պահ մ'առանձնանալու և ինքզինքն ամիոփելու պէտք ունէր :

— Աստուած իմ, ըսաւ երբ մինակ մնաց : Այդ մարդը գիտէ ճշմարտութիւնը . . . : Գիտէ մեր ամէն գաղտնի-

քը... : Կորսուած եմ... անյոյս կեցողք
կորսուած... : Բայց ի՞նչ էր այդ ման-
կասպանութեան պատմութիւնը :

Միակ լրագիր մը խօսած էր արդա-
րեւ այդ երկրորդ ոճիրին վրայ, և
Ֆէրնանտ դեռ չէր գիտէր :

Դանիէլ ալ չէր իմացուցած անոր,
որպէս զի չաւելցընէր անոր արդէն
ունեցած վախերն ու մտահոգութիւն-
ները՝ Բիէպիթի գործին վրայ :

— Կորսուած եմ, կորսուած, կ'ըսէր
ու կը կրկնէր : Ազատում չունիմ... :
Եթէ չի վճարեմ այս մարդուն ուղա-
ծը, պիտի խօսի... : Եւ այդ խօսիլը
մեծ հարուած է, մա՛հ է ինձի համար
... : Հապա Դանիէլի՞ն, հապա գաւկի՞թ
համար : Ա՛հ, խելքիս պիտի գայ... :
Ի՞նչ ընեմ, ի՞նչ ընեմ : Վճարել... :
Կրնա՞մ : Հարուստ եմ... բայց ստակ
չունիմ : Ամուսնացեալ կին մ'իրեն յա-
տուկ ստակ չունենար... :

Իւր մարմինը, հարստութիւնը, գոր-
ծերը, մտածութիւնները, գոչեց ձեռ-
ները գալաքելով գայրոյթէն, ամենն
ալ ամուսնին սեփականութիւնն էին :
— Ի՞նչ գերութիւն, ինչ նուաստու-
թիւն : Կասքիս դուռն ինձի բացողը...

պասաւորս ազատ ու անկախ է : Իւր
պաշտօնը կատարելէն ետեւ ինքիրմէ
միայն կախում ունի : Եթէ իւր պաշ-
տօնը կամ ծառայութիւնն անհաճոյ է
իրեն, կրնայ թողուլ... : Անկէ դուրս
ինչ որ ունի իւր սեփականութիւնն է :
Իւր ստակն ու դածին պէս կրնայ գոր-
ծածել... : Մարդ չի համարձակիր բա-
նալ անոր նամակները, կամ երթալ ու-
սերուն վրայէն կարդալ գրածները... :

« Իսկ ես, հոս, անկարող, անզէն, Պ.
տը Թիշմանի ձեռքին մէջ եմ, կամքին
տակն եմ, որ կրնայ ամէն բան ընել
ինձի դէմ և իմ վրայ, բացի զիս հար-
կադրելէ որ զինքը սիրեմ ու յարգեմ :
Եւ տակաւին, եթէ իւր անպատիւ
գաղտնիքը չի գիտնա ի, եթէ զինքն
անով չի բռնէի, պիտի հարկադրուէի
իւր ձեռքին մէջ մնալ : »

Չայս քսած միջոցին սոսկման սար-
սուռ մը ղգաց :

— Եւ իբն ջով, քիչ շատ ճարտարու-
թեամբ, ամենէն դժնդակ կատակեր-
գութիւնը խաղալ, ամենէն անտանե-
լին, գոռոզ հողի մ'եւ անկեղծ սրտի
մը համար, որ ուրիշի մը պատկերովը
լցուած է :

— «Ահ, Դանիէ՛լ, Դանիէ՛լ, ինչո՞ւ
քեզ աւելի առաջ չի ճանչեցի: Ինչո՞ւ
ձեռքս քու ձեռքիդ մէջ չի դրի: Դուն
ոչ միայն երջանկութիւն պիտի ըլլայիր
ինձի համար, վասն զի կր սիրեմ քեզ,
վասն զի միշտ պիտի սիրէի քեզ... »

«Կը ճանչեմ քու գաղափարներդ, քու
զգացումներդ...: Պիտի կրնայի ան-
կեղծ և ուղղամիտ ըլլալ քեզի հետ ա-
մէն պարագայի մէջ...: Դուն երբէք
միտքեդ չի պիտի անցունէիր քու իր-
աւանդներդ խօսքն ընել: Երբէք ուրիշ
բան չի պիտի ուղէիր ինձմէ, բայց
միայն իմ ազատ ու անկախ սէրս... և
ես տարվածուին տակ երբէք չի պի-
տի գտնէի բռնակալ մը, որ կ'սպառ-
նայ, հրամաններ կուտայ, իւր կամքին
ու քմայքին կր հնազանդեցնէ, խաբէ-
ութիւն, սառութիւն ընելու կը հար-
կադրէ, և վերջապէս ծաղրելի խաղա-
լիկ մը կ'ըլլայ:»

Մէկէն կեցաւ:

— Դանիէ՛լ, կրկնեց...: Ան միայն
կրնայ զիս ազատել... եթէ հնար մը
կայ ազատելու: Ասոր համար ամէն
բան կ'ընէ... այո՛, ամէն բան, հնարա-
ւորն ու անհնա՛րը:

Վար ցատկեց անկողինէն. տակաւին

դողդոջուն ու տենդոտ, մեռելի պէս
դժգոյն, շտապով շտկեց իւր մազերն
ու արդուզարդը:

— Պէտք է որ տեսնեմ զայն, կ'ըսէր
ինքնիրեն, անպատճառ տեսնեմ, հի-
մա:

Տասն վայրկեան յետոյ հակառակ իւր
տկարութեան, դուրս ելաւ քաջաբար
իւր ապշած սպասաւորներուն աչքին
առջև, քալելով գնաց Սէն-Սիւրբիս
հրապարակին կառարանը, և ինքզինք
տանել առաւ Սէն Ժէոմէն ծառուղիին
վրայ Դանիէլ տը ֆէօրի տունը, ուր
կը գտնուէր նա նոյն ժամուն:

— օ —

84

ՏԸ ՖԵՐՆԻՔԻ ՕԹԵՒԱՆԸ

Գրեթէ այն միջոցին ուր ֆէրնանտ,
սարսափահար և յուսարեկ, Դանիէլ տը
ֆէօրի տունը կը դիմէր, որուն վրայ
կը կարծէր նշմարել իւր փրկութեան
վերջին յոյսը, Պ. տը Ռիչմոն դերկոման
ալ գեղանի Տիան կոմսուհիին տունը
կ'երթար, ուր քանի մը վայրկեան պի-
տի կանխենք զինքը:

Տիկին տը ֆէրնիք, Անթօան Քօսա-

տի հետ տեսակցութենէն ի վեր, որուն գլխաւոր պարագաները պատմեցինք, քաջալերուիլ սկսած էր:

Իւր երկիւղները, որ Ֆէրնանտի և Բօլ տը Ռիչմօնի երկիւղներուն շափ ծանր չէին, աւելի թեթեւնալու վրայ էին:

Աներկբայ էր թէ Անթօան Բօսատ համր պիտի մնար, ինչ և ալ պատահէր, և այն ատեն ի՞նչ կը մնար վախնալու:

Մանաւանդ թէ, ոչ ինք, ոչ ալ տարփածուն էր մանկաբարձուհին մեռցընողը:

Այդ ոճրին համար տրուած հրամաններէն բնաւ հետք մը չկար. գործածած կոյր գործիքը ջնջեր էր իւր բոլոր նամակները:

Չաւկին մարմինն իսկ եթէ գտնուէր, հիմա որ Ժիւսթին Պօնֆօս մեռած էր, մօրն անունը չէր կրնար յայտնել:

Ասկէց զատ ամուսինն ալ մեկնած էր, եթէ ոչ կատարելապէս համոզուած, գոնէ կասկածը մասամբ փարատուած:

Թէև նախանձոտ ալ ըլլար տակաւին և կասկածի մէջ, ի՞նչ հոգ իրեն, քանի որ իւր մօտը չէր, և հսկողութենէն վախ չունէր:

Կը մնար ուրեմն այն մարդը զոր Բիւրի-տը-Լէրմիթ փողոցի տանը մէջ տեսած էր այնպիսի պարագաներու մէջ, որոնք ծանօթ են մեր ընթերցողաց: Առ այժմ ան միայն մտածել կուտար զինքը:

Տարակոյս բնաւ չունէր թէ ան էր Անթօան Բօսատի ազդարարողը, որպէս զի զգոյշ կենար: Ան էր աղքատաց գանձանակին մէջ խոթուած թուղթերը գողցողը:

Կրնար կորուստի մատնել զինքը, բայց չէր ըրեր:

Ի՞նչ պատճառաւ:

Արդեօք հին ժամանակի ասպետներէն էր, որք վտանգի մէջ գտնուող գեղեցկութեան օգնելու կը դիմէին:

Անշուշտ ո՛չ:

Տիան որ անձնուիրութեան զգացում բնաւ չունէր, որ ամէն բան կը զոհէր միշտ իւր իղձերն ու շահերը գոհացընելու համար, ինչ և ալ ըլլային, ուրիշներու անշահասիրութեան հաւտացող կին չէր, ոչ ալ կ'երևակայէր երբէք զգացմանց ազնուութիւն և վստմութիւն, որոց գաղափարը չունէր:

Ո՛չ, եթէ այն մարդը զինքը փրկէր էր, անշուշտ շահ մ'ունէր. անշուշտ վարձ մը կ'սպասէր. և Տիան, որու համար մարդն ուրիշ բան չէր եթէ ոչ իրեն փափաքելու համար ստեղծուած

կենդանի մը, գեղանի կնոջ մը ինքնահաճ անմտութեամբ կը կարծէր թէ այն անծանօթ մարդը պիտի իւր վարձքը խնդրէր իրմէ... վարձ մը, զոր հատուցանել չէր դժկամակեր երբէք:

Ստամոքսներ կան, որոց համար ամէն ուտելիք սննդարար է: Հետեւաբար Բիւի-տը-լէրմիթ փողոցի մարդն աւելի հետաքրքրութիւն, աւելի անհամբերութիւն կ'ազգէր իրեն մերթընդ մերթ տեսնելու, քան թէ սարսափ, վստահելով իւր կնոջական հրապոյրներուն, կեղծանոյշ ձեւերուն և ճարտարմտութեան, որովք կը յուսար իւր ցանցը ձգել զայն:

Վերջապէս բաւական գոհացուցիչ տըրամադրութեան մէջ էր ներկայ պտրագաներուն նկատմամբ, երբ Բօլ տը Ռիչմօն յանկարծ իւր առջեւ ներկայացաւ:

Տարփածուին այլայլեալ դէմքն անհաճոյ կերպով զարմացուց զինքը:

— Ի՞նչ կայ նորէն, հարցուց պաղ ձայնով մը, զոր կը գործածէր մերթ, մինչեւ իսկ իւր մտերիմներուն հետ, երբ անհաճոյ կերպով ներկայանային: Արդեօք գէշ լո՞ւր մը կը բերէք ինձի:

— Ծանր լուր մը:

— Ի՞նչ լուր:

— Ձեր հարցումէն կը տեսնեմ որ չէք գիտեր:

— Ո՛չ, չեմ գիտեր:

— Ձի կարգացի՞ք... լրագիրը: Արդարութիւնը, լռիկ մնջիկ կը շարունակէ իւր հետախուզութիւնները...

— Բնական էր:

— Նոր խուզարկութիւններ եղեր են Բիէուֆիթի տան մէջ:

— Եւ ի՞նչ գտեր են:

— Տանը մէջ ոչինչ: Բայց ետեւի պարտէզը խուզարկելով... տակնիվրայ ընկելով...

Տիանի դէմքը թեթեւ մը դժգունեցաւ:

— Նոր ծնած տղու մը մարմինը գտնուեցաւ... որ խեղդամահ եղած էր:

Տիան, որ վայրկեանէ մ'ի վեր կ'ըստպասէր այս յայտնութեան, առանց բընաւ այլայլելու լսեց, իբրեւ կին մը, որ բացարձակ տէր է իւր անձին:

— Ի՞նչ վերաբերութիւն ունի մեզի այդ չարաշուք գիւտը, հարցուց անզգած դէմքով մը:

Բօլ տը Ռիչմօն, խօսած միջոցին կը դիտէր զայն:

—Ապահո՞վ էք մեզի վերաբերութիւն չունենալուն, հարցուց Բօլ ձայնը ցած-
ցընելով:

Տիան հասկըցաւ որ անսովոր բան մը կ'անցնէր իւր տարփաւորին մտքէն, և հետեւապէս իւր բոլոր պաղարիւնութիւնը ձեռք առաւ, որպէս զի առանց տկարանալու ընդունէր հարուածը, զոր կ'սկսէր զգալ:

—Չեմ հասկընար ըսածդ, պատաս-
խանեց քաղցրութեամբ:

—Ըսել կ'ուզեմ թէ արդարութիւնը պիտի հաւատայ անշուշտ թէ Ժիւսթին Պօնֆօայի սպանումը ոչ թէ զինքը կողոպտելու համար էր, այլ թող չի տալու որ օր մը բերան տար զաւակը մեռցընող մայրը:

—Աւասիկ գործին բուն հոգին, ը-
սաւ Տիան մտքէն:

Բայց դարձեալ բռնեց ինքզինք և Ժպտուն շրթունքով մ'ըսաւ.

—Պարզ ենթադրութիւններ են ասոնք:

—Տիան, ըսաւ Բօլ տը Ռիչմօն ձը-
ռելով դէպի կոմսուհին.

Եւ ձայնն աւելի ցածցընելով յարեց.

—Ճշմարտութիւնն ամբողջապէս ը-
սի՞ք ինձի:

—Ի՞նչ բանի վրայ:

—Մանկաբարձուհիին սպանման պատ-
ճառներուն վրայ:

—Փոխանակ վերադառնալու այդ
տխուր նիւթին վրայ, աւելի աղէկ կը-
նենք մոռնալ զայն:

—Տիան, ըսաւ Բօլ կոմսուհիին ձեռքն
իւր պաղ և դողահար ձեռքերուն մէջ
բռնելով, ձեր ծածուկ պահելիքը մի-
միայն ձեր գաղտագողի ծննդաբերու-
թի՞ւնն էր:

—Ի՞նչ ըսել կ'ուզէք, պատասխանեց
կոմսուհին բարկութեան փայլակ մը
վառելով աչերուն մէջ:

—Ըսել կ'ուզեմ թէ ուրիշ գաղտնիք
մ'ալ կար թերեւս մանկաբարձուհիին
ու ձեր միջև:

—Ուրիշ գաղտնի՞ք մը:

—Ես երբէք չի տեսայ մեր զաւակը,
ո՞ր է:

—Զուիցերիոյ մէջ ըլլալը չէ՞ք գի-
տեր:

—Դուք ըսիք ինձի, բայց ես չեմ
գիտեր:

—Ուրեմն կ'ամբաստանէ՞ք զիս, հար-
ցուց Տիան պաղութեամբ և քիչ մ'ալ
սպառնալից նայուածքով:

— Ես չեմ ամբաստանողը . . . իրողու-
թիւններն են: Մեռած տղեկը՝ բժիշկ-
ներուն տեղեկագրին նայելով՝ ծնած է
այն միջոցին, երբ դուք Պօնֆօայի
տունն էիք, և մանչ մ'է: Զեր ալ ծնա-
ծը մանչ մը չէ՞:

Տիան ահեղ նայուածք մ'ուղղեց ա-
նոր:

— Բայ խօսեցէք, ըսաւ. մի՛ ծածկէք
ձեր միտքը, զիս իբրեւ որդեսպան
կ'ամբաստանէք, այնպէս չէ՞:

— Ո՛չ . . . ո՛չ . . . կակազեց դերկոմբը
սարսափելով և ետ ետ քաշուելով իւր
խկ մտածութեան առջև. բայց դուք
կրնայիք սահած ըլլալ ինձմէ . . . այդ
դժբաղդ փոքրիկին . . . դիպուածական . . .
մահը:

— Երբ այդպէս եղած ըլլա՛յ, ըսաւ
Տիան անուր յանդգնութեամբ մը:

Բօլ տը Ռիչմօնի՛ դէմքը մոխիր կըտ-
րեցաւ, և բոլոր մարմնովը դողալ սկսաւ:

Տիան դթոտ աչքով մ'անոր նայելով՝

— Օ՛ն, մի՛ վախնար, ըսաւ հեգնոս
պաղութեամբ մը, որուն ազդեցութիւնը
գիտէր իւր տարփաւորին մեղկ ոգւոյն
վրայ. տղայնիդ ողջ է:

— Տեսնե՛լ կ'ուղեմ:

— Անհնա՛ր է:

— Ինչո՞ւ:

— Որովհետև վստահ չեմ ձեր վրայ,
ձեր քաջասրտութեան վրայ, որպէս զի
անոր գտնուած տեղը յայտնեմ ձեզի:
Վախը օր մը չէ օր մը կը խօսեցնէ
ձեզ:

— Բայց դուք չէ՛ք հասկնար որ սոս-
կալի կասկած մը մտած է մտքիս
մէջ . . .:

— Կասկածեցէք որչափ և կ'ուղեք . . .
Եթէ չէք ուղեր հաւտալ ինձի, ի՞նչ
ընեմ ես . . . չեմ կրնար երթալ իմ և ձեր
կեանքը վտանդի մէջ ձգել՝ ձեր կաս-
կածները փարատելու համար: Ես ա-
պահովեցի ապագան: Դուք մէջը խառ-
նուելով մեր վտանգներն աւելցնելէ
զատ ուրիշ բան չէք կրնար ընել:

Այս նկատողութիւնն ամենէն զօրեղն
էր Բօլ տը Ռիչմօնի համար:

— Բայց եթէ ամբաստանե՞ն ձեզ, ը-
սաւ Բօլ քաղցրութեամբ:

— Ադոր համար պէտք կ'ըլլայ որ
Անթօան Քօսատ խօսի . . . բայց չի
պիտի խօսի:

— Ան չի պիտի խօսի, լաւ . . . բայց
միւսը, այն անծանօթը:

— Կ'սպասեմ անոր, պատասխանեց
անկուելով:

— Այդ վստահութիւնդ կը զարհու-
րեցնէ զիս:

— Ամէն բան կը զարհուրեցնէ քեզ:
Այդ տղուն մարմինին գտնուիլն ամէն
բան առջի վիճակին մէջ կը թողու:
Եւ եթէ ըսած մարդդ ներկայանայ...
և պիտի ներկայանայ... կը տեսնենք
ի՛նչ կ'ուզէ... և կը խորհինք պէտք ե-
ղածը...:

— Ի՞նչ պիտի ըսես իրեն.

— Ինձի ըսելիքէն կախում ունի:
Մի՛ մոռնար որ դուն իմ մեղսակիցս
ես: Մեզ կապող շղթան չի կրնար
խորտակիլ: Եթէ ես ընկճիմ, դուն ալ
պիտի ընկճիս:

— Գիտեմ, ըսաւ Բօլ յուզուած ձայ-
նով: Այս պատճառով...

— Այդ պատճառով, դուն որ կորով
չունիս, պէտք է լուռ կենաս. զիս չի
հարցաքննես... և հնազանդիս ինձի:
Բօլ տը Ռիչմօն գլուխը ծռեց:

Կզգար որ կոմսուհին իրաւունք ու-
նէր, և ինքը կարող չէր իրենց նա-
ւակը կառավարել ալեկոծութեան մէջ:

— Դուն ջանա իմանալ արդարու-

թեան բռնած ընթացքը, և ինձի տե-
ղեկութիւն տալ... Այս կը պահանջեմ
քեզնէ...: Մանաւանդ հրապարակի
վրայ, մարդոց առջեւ այդ շուարած
դէմքը մի՛ կրեր, որ ձերբակալութենէ
վախցող ոճրագործի մ'երևոյթ ունի:

Դերկոմսը պատասխանելու վրայ էր,
սպասաւոր մը դուռը բախեց ու բացաւ.

— Տիկին կոմսուհի՛, ըսաւ խոնարհու-
թիւն ընելով, մէկը եկեր է և կը խնդ-
րէ ձեզի ներկայանալ:

— Մէ՛կը, ո՞վ է:

— Իւր այցաքարաը չուղեց տալ, և
միայն սա գոց թուղթը տուաւ:

Տիան մէկէն առաւ թուղթը, որուն
վրայ հասցէ չի կար, և պատեանը
պատուելով կարդաց.

«Բիւի-տը-լ'էրմիթ փողոցի մարդը»:
Վայրկեան մը լուռ կեցաւ Տիան,
Այտերը խնձորի պէս կարմրելով:

Կ'ուզէր զսպել իւր ձայնին դողո-
ջումը:

— Սրսկապանս մտցուցէք, ըսաւ վեր-
ջապէս:

Ծառան մեկնեցաւ:

— Ո՞վ է, հարցուց Բօլ տը Ռիչմօն.
տեսնելով անոր յուզուիլը:

— Ա՛ն:

— Անձանօթքը, գոչեց աչքը տոմսա-
կին վրայ նետելով, գոր կոմսուհին ձեռ-
քը բռնած էր :

— Այո՛, դուրս ել շուտով, և իրի-
կուան եկո՛ւ, որպէս զի ըսեմ քեզի ու-
զածը :

— Չե՞ս վախնար . . .

— Վախնայու ժամանակը չէ . . . այլ
գիտնալու : Ինչ որ ալ բլլայ, պէտք է
որ գիտնամ այս մարդուն բնակավայրը :

— Ես կը գիտեմ դուրս ելնելը, և ե-
տեւէն կերթամ . . . :

— Շատ աղէկ, բայց նայէ որ կաս-
կածի շերթայ . . . օ՛ն դուրս ել :

Եւ ուժով մը հրեց զայն երկու ու-
սերէն :

Սիրտը կը բաբախէր . . . որ սովորա-
կան չէր իրեն, և այս սրտայուզու-
թիւնը լաւ կուգար իրեն, վասն զի
կենդանութիւն կուտար դէմքին և ա-
չերը կը բոցավառէր :

Ակնարկ մը նետեց դէմի հայելիին
մէջ :

— Տիան տը Ֆէրնիք միշտ գեղեցիկ
է, և պիտի յաղթէ, ըսաւ ինքնիրեն :

Եւ ծանր ծանր դուրս ելնելով, դէպի
սրահապանն ուղղուեցաւ, ուր իրեն կը
սպասէր Բիւի-աը-լէրմիթ փողոցին
մարդը :

Ի՞նչ ՊէՏՔ ԷՐ ԸՆԵԼ

Նոյն միջոցին Ֆէրնանտ Դանիէլ տը
Քէօրի տունը կը հասնէր :

Թէև բնաւ չէր գացած հոն, գիտէր
մը յարկը բնակիլը. ուստի շտապով
շունապանին օթեակին առջեւէն անց-
նելով, առանց բան մ'անոր հարցընե-
լու, երկրորդ յարկն ելաւ, և աջ կողմի
առաջին դրան բոժոժն հնչեցուց :

Դանիէլ իւր գրասենեակին մէջ նըս-
տած կը խորհրդակցէր Բրէնպորնի հետ,
նեղանալով ժամանակին անյարմարու-
թեան վրայ, որ իւր օրը կորսնցնել
կուտար իրեն : Իւր դիւանապետը հի-
ւանդ էր :

Սակայն նոյն օրուան համար կոչ դըր-
կած ըլլալով շուանավաճառին և կնո-
ջը, որպէս զի հարցաքննէր զանոնք
չուանը գնող մարդուն վրայ, որուն
նկարագիրը տուած էին Բրէնպորնի,
հիմա պարտաւորուեր էր ետ առնել
կոչին հրամանը :

Նոյն միջոցին սպասաւորը դուռը բա-
նալով իմացուց իրեն թէ տիկին մը ե-
կեր զինքը տեսնել կ'ուզէր :

Կիսաբաց դրան մէջէն Դանիէլ դիմաստուներ մը նշմարելով. իսկոյն ճանչեց:

—Շուտ, ըսաւ Բրէնպորնի. ուրիշ սենեակ մը հրելով զայն. զիս մինակ թողէք, բայց մի՛ հեռանաք... թերևս ձեզի խօսելիք պիտի ունենամ մէկ պահէն...:

Բրէնպորն ժպտեցաւ ծածկաբար և անմիջապէս անհետ եղաւ առանց ձայնի:

Ան ալ նշմարեր էր Ֆէրնանտի դիմաստուները, և ճանչեր էր այն կինը, զոր առտու մը տեսեր էր նախաքննիչ դատաւորին գրասենեակէն դուրս ելած միջոցին:

Հասկցաւ ով՛ ըլլաւ:

Հազիւ Դանիէլ դուռն անոր ետեւէն գոցեր էր, Ֆէրնանտ ներս մտնելով դէմ առ դէմ եկաւ իրեն:

—Ի՞նչ կայ, սիրունիկս, գոչեց անոր վրայ դիմելով և ձեռները բռնելով: Այսպէս ցերեկ ժամանակ տունս գալէք կը հասկցուի որ ծանր բան մը կայ:

—Այո՛, այո՛. ըսաւ Ֆէրնանտ:

—Կը դողաս... Ի՞նչ կայ, ի՞նչ ունիս, կը վախցնե՞ս զիս... եկո՛նստէ:

Եւ ցած անթոռի մը քով տարաւ զայն:

ուր ծաղկտաի կինն ինկաւ, քան թէ նստաւ:

Քողիկը վեր կ'առնէր:

Դանիէլ տեսաւ անոր անուշ դէմքը, որուն դժգունութիւնն աւելի զարհուրեցուց զինքը:

—Հիւանդ ես, գոչեց շմորած:

—Ջղային տագնապ մ'ունեցայ, պատասխանեց կտրտուկ ձայնով մը, բայց բան մը չէ...: Երբ քու քովդ ըլլամ... ինքզինքս լաւագոյն կը զգամ:

Եւ արագ ակնարկ մը նետեց իւր շուրջը... այն կնոջական ակնարկն որ ամէն բան կը տեսնէ:

Դանիէլի սենեակը պարզ էր, բայց գեղարուեստագէտի և խելացի մարդու ճաշակով կահաւորուած էր:

—Ի՞նչ աղէկ կ'ըլլայ հոս ապրիլ իրաւուրէ քով, մրմնջեց թեթեւ հառաչով մը. տխրութեամբ շարժելով իւր սիրուն գլուխը: Բայց հիմա գործն ասոր վըրայ չէ:

Եւ դէպի Դանիէլ ծռելով.

—Կորսուած ենք:

—Կորսուած կրկնեց Դանիէլ:

Ֆէրնանտ ձեռնոցներն հանելով՝ ինքն ալ Դանիէլի ձեռքը բռներ էր, բայց իւր ձեռները սառի պէս պաղ էին:

—Այո՛, շարունակեց, ամենամեծ վր-
տանգ մը կը սպառնայ մեզի... ասչափ
մեծ որ ինձի անհնար կ'երեւի առաջքն
առնել:

—Հասկըցու նայինք, ի՞նչ է:

Դանիէլ կը ճանչէր իւր սիրուհիին
քաջասրտութիւնն ու զիւցազնական
ոգին:

Այն տարփուհիներէն չէր, որ
միշտ վախ կ'ունենան, միշտ վտանգ-
ներու վրայ կը խօսին, որոց դէմ մա-
քառելու հարկին մէջ կը գտնուին, և
գորս մշտնջենաւոր խճրիծներու փաստ
կ'ընեն իրենց տարփածուին դէմ:

Յէրնանա՛ ընդհակառակն՝ աւելի կը
սիրէր ծածկել, և շատ անգամ ալ կը
ծածկէր կրած սրտնեղութիւնները,
յոգնութիւնները, վտանգները, որոց
դէմ կը խիզախէր միշտ Դանիէլի մօտը
գալու և տուած խօսքէն չի թերանա-
լու համար:

Այդ խօսքն ըսելու համար, պէտք
էր որ վտանգը ճշմարիտ ըլլար, բա-
ցարձակապէս ճշմարիտ:

—Մարդ մը ելաւ տունէս, որ ամէն
բա՛ն գիտէ, ըսաւ:

Դանիէլ շտկուեցաւ, ինքն ալ դըժ-

գունած, ոչ թէ իրեն... այլ անոր հա-
մաւ:

Սակայն վայրկեան մը յուսակրեցաւ:

—Թերեւս իմացեր է թէ Բրէնպորն
իրենց Տուէ փողոցի բնակարանը մտեր
է... ըսաւ մտքէն:

Ինքը դեռ այն մասին խօսք մ'ըրած
չէր անոր:

Եթէ այս էր... կրնար փարատել ա-
նոր վախը:

—Մարդ մը որ ամէ՛ն բան գիտէ,
ըսաւ Դանիէլ: Ի՞նչ մարդ է: Անունը
Բրէնպորն է:

—Չեմ ճանչեր այդ անունը, բայց
աւասիկ իմ ըսած մարդուս անունը:

Եւ գրպանէն հանելով ժիւլ Շամպէ-
զիի այցետոմսը, Դանիէլի երկնցուց:

—Ժիւլ Շամպէզի՛, կարգաց Դանիէլ
առաջին սրաայուգութեանը մէջ իյնա-
լով վերստին: Չեմ ճանչեր...: Եւ դուն
կ'ըսես թէ ամէն բան գիտէ... և թէ
տեսար զինքը:

—Այո՛, պահ մ'առաջ տունս էր, կը-
ռնէլ փողոցի օթեւանս:

—Ի՞նչպէս ներկայացաւ:

—Գրեթէ բռնի, — վասն զի չէի ուզեր
ընդունիլ — ըսելով ծառայիս թէ Տուէ
Բրէնպորն: 29 թիւ տունէն կուգար:

Դանիէլ վեր ցատկեց :

— Գիտէ՞ մեր հասցէն... գիտէ՞ մեր զաւկին ուր ըլլալը, ըսաւ :

— Մեր զաւկին ողջ ըլլալը չի գիտեր... որովհետեւ կ'ամբաստանէ զիս թէ սպաններ եմ զայն :

— Սպաններ ես... դուն... մեր զաւակը : Օ՛ն, Ֆէրնանտ, ինքզինքիդ եկուր... : Անհնարին է ըսածդ... : Արգարեւ կայ մէկը որ գիտէ մեր գաղտնիքը... երէկուընէ ի վեր... : Եւ չի կրցի տակաւին իմացընել քեզի... : Բայց այն մարդը դաշնակից մ'է մեզի... և պիտի ազատէ մեզ... : Անունը Բրէնպորն է... : Ապահովութեան ոստիկան մ'է... :

— Ես կ'ըսեմ քեզի, Դանիէլ... թէ տունս եկող մարդը թշնամի մ'է, սարսափելի թշնամի մը, և անունն ալ աւաստիկ... ինձի ձգած սա այցաքարտին վրայ է... : Նորէն կ'ըսեմ քեզի թէ ամէն բան գիտէ... գիտէ Ժիւսթին Պոնֆօայի գաղտնիքները... գիտէ թէ ես՝ Օրիորդ Կառնիէ անունին տակ մանչ զաւակ մը ծնայ անոր տանը մէջ... գիտէ թէ Տուէ փողոցն է մեր ժամադրավայրը... կ'ամբաստանէ զիս

թէ սպաններ եմ զաւակս... : Կ'ըսեմ քեզի թէ այս մարդը կրնայ ամենածանր փորձանք մը բերել երկու քիս ալ գլխուն... իւր ձեռքին մէջն ենք, և զինքը լռեցնելու համար երկու հարիւր յիսուն հազար Ֆրանք կը պահանջէ մեզնէ :

— Ի՛նչ կ'ըսես, ըսաւ Դանիէլ ապշելով :

— Այս է ահա ճշմարտութիւնը, ամբողջ ճշմարտութիւնը, խեղճ պաշտելիս... : Երեք ժամ միայն տրուած է ինձի այս գումարը վճարելու :

— Ստակ քաշելու միջոց :

— Ինչ որ ալ է, կը հասկնաս մեր վիճակը, այնպէս չէ՞ : Կը գուշակես վախճանը : Եթէ չի գուհացընեմ այդ թշուառականին պահանջումը, պիտի խօսի : Զիս պիտի ամբաստանէ դատական իշխանութեան առջև... կամ պիտի երթայ ամուսինս կամ հայրս գտնէ... հայրս, ինչպէս որ սպառնացաւ : Եւ այն ժամանակ... :

Եւ յուսահատական շարժում մ'ըրաւ :

— Կրնամ հաստատել զաւկիս ողջ ըլլալը... : Բայց ասոր համար հարկ կ'ըլլայ խոստովանիլ յանցանքս. պոռալ ամենուն թէ շնացեալ եմ... : Ո՛հ,

եթէ խնդիրը միմիայն իմ վրաս ըլլար, իմ ապահովութեանս... իմ պատուոյս վրայ ըլլար... ամէնն ալ կը զոհէի քեզի համար... Բայց հայրս սրտին ցաւէն կը խենթենայ... Ամուսինս ալ քեզ մեռցնելու կ'ելնէ թերևս... եթէ մենամարտելու ելնէք... կը հասկնա՞ս... եթէ սպաննուիս անկէ, կը մեռնիմ յուսահասութենէս, զիս անիծուած տեսնելով... Իսկ եթէ դուն մեռցնես զայն... ի՞նչպէս կրնանք այնուհետև զիրար տեսնել: Ես ալ կը մեռնիմ... Վերջապէս ի՞նչ պիտի ընենք, ի՞նչպէս պիտի ընենք: Ի՞նչ է ելքին հնարը: Վճարե՞լ այդ մարդուն պահանջածը: Բայց կրնա՞մ: Չունիմ ես այդ ըստակը:

— Ես ալ չունիմ, մըմուաց Դանիէլ բռունցքը սեղմած, չըթունքը մոխիր կտրած:

— Է՛հ, գիտեմ զայդ... ապա թէ ոչ...

— Ես կը գտնեմ այդ ստակը... թէև ամէն ունեցածս տալ պէտք ըլլայ... բայց ժամանակի կը կարօտի...:

— Եւ չի՞ պիտի սպասէ, ըսաւ Ֆէրնանտ:

— Ատկէ դատ, եթէ վճարենք ալ... Ո՞վ պիտի երաշխաւորէ անոր լոտութիւնը:

Դանիէլ իւր բոլոր հարստութիւնը կը նուիրէր, իսկ Ֆէրնանտ ո՛չ կը դարմանար ո՛չ ալ դիտողութիւն մը կ'ընէր:

Արդարև սիրոյ, վստահութեան աստիճան մը կայ, ուր երկու անձ այնչափ ինքզինքնին իրարու տղած են, ուր երկուքն ալ այնչափ հաւասարապէս պատրաստ են ամէն զոհողութիւն իրարու համար ընելու, որ է՞ս Կոնրադ Զիմար մէջերնին:

Շահերու այն ձուլումը, այն օրինական համերաշխութիւնը, զոր ամուսնութիւնը կը կազմէ, սէրն ալ կրնայ հաստատել երբ զօրեղ ու անկեղծ է:

Ֆէրնանտ կը գալարէր ձեւերը՝ տեսնելով Դանիէլի շուարեալ դէմքը, որ նոյնպէս չէր կրնար դեղ մը գտնել այս վիճակին:

— Օ՛ն ըսաւ վերջապէս Դանիէլ՝ ջանալով քիչ մը պաղարիւնութիւն տալ ինքզինքնին՝ իւր սիրակցին յուսահաստութեան առջեւ, մի՛ վհատիր սիրութեան նիկոս: Պէտք է վտանգը դէմ առ դէմ տեսնել... և որոշում մ'ընել: Բացո-

րոշապէս և մանրամասնօրէն պատաս-
խան տուր ինձի: Թերեւս կրնանք մեզի
անոր սպառնացող հարուածէն ազատե-
լու միջոց մը գտնել:

— Ի՞նչ կ'ուզես դիտնալ:

— Այդ մարդն ե՞րբ ներկայացաւ
քեզի:

— Ժամ մը կայ:

— Ի՞նչպէս մարդ է:

— Բաւական կրթութիւն առած, լաւ
հագուած, կենցաղագէտ մարդ մը կ'ե-
րևայ:

— Ի՞նչպէս խօսեցաւ քեզի հետ: Յան-
դգնաբա՞ր, խստաբա՞ր թէ, մարդավա-
րի կերպով:

— Քաղաքավարութեամբ, բայց իբրև
հաստատամիտ և ինքնիրեն վրայ վըս-
տահ մարդ:

— Ո՞րտեղ և իմացեր է մեր գաղտնի-
քը:

— Ա՛հ, գիտե՞մ ես:

— Բնականաբար չըսաւ քեզի: Ի՞նչ
կ'ենթադրես:

— Ոչինչ: Գլուխս իմս չէր:

— Բանի՞ տարու կ'երեւար:

— Քառսուկի չափ:

— Եթէ Ժիւսթին շատ պառաւ և շատ

ազեղ չըլլար, կրնար կարծուիլ թէ ա-
նոր տարփածուն է:

— Օ՛, ըրաւ Ֆէրնանտ՝ անհաւատալի
համարելու և խորշելու ձեռով մը:

— Այո՛, կը հասկընամ միտքէդ ան-
ցածը... բայց այդ տեղակ բաներ կը
գտնուին, սիրելիս, և կարծածէդ շատ
գծուծ և կարօտ մարդ մը, որ այդ-
պիսի վատ սակարկութիւն մը կ'առա-
ջարկէ քեզի, կրնար այն պառաւին ե-
րեսէն ապրիլ, որ ստակ, շատ ստակ
ունէր... կամ թերեւս դայն մեռցնող
անբազործներէն մէկն էր... և անոր
մեռնելէն ետեւ պարտէզին մէջէն զըտ-
նուած գատարկ սնտուկը խուզարկե-
լով, որուն մէջ անշուշտ ստակ և թուղ-
թեր կային, թերեւս իսկ դժբաղդ կըն-
կան ձեռքով գրուած ծանօթութիւն-
ներ... որոցմէ կրցեր է տեղեկութիւն-
ներ քաղել և գաղտնիքներ իմանալ:

— Ո՛հրագործ, մրմնջեց Ֆէրնանտ
նոր սարսափով մը դողահար:

— Երանի՛ թէ ըլլար, ըսաւ Դանիէլ
ցած ձայնով մը, վասն զի իւր գլուխը
աղատելու համար...:

— Բայց այն մեռած աղնկը, որուն
վրայ կը խօսուի՛:

— Ճշմարիտ է, Ֆէրնանտ: Ես ատոր
խօսքը չէի բերք քեզի, որպէս զի քու
վախերդ ու սրաառանջութիւններդ
չաւելնային:

— Ի՞նչ սոսկալի ոճիրներու հիւսք,
մրմնջեց Ֆէրնանտ, որուն մէջ ես ալ
բռնուած եմ, ե՛ս ալ:

Եւ ոտքի վրայ ելաւ, զայրոյթի փայ-
լակ մը ցայտելով սեւ աչերէն, մինչ
իւր գեղեցիկ բերանը դառն զզուան-
քով մը կը կծկէր:

Դանիէլ անոր նայեցաւ տխրու-
թեամբ:

— Այո՛, Ֆէրնանտ, այո՛, ըսաւ ցած
ձայնով մ'եւ յուզեալ դէմքով, ես եմ
պատճառը, իմ է յանցանքը... որովհետեւ
սիրեցի քեզ... որովհետեւ իմ տարփու-
հիս եզար, ներէ ինձի:

— Ներե՞մ, գոչեց վրան դիմելով:

— Այո՛, ներէ ինձի այս ամէն նա-
խատինքները, այս ամէն վիշտերը...
Եթէ ինձի ծանօթացած չըլլայիր...:

Եւ մօտենալով՝ խանդավառ աչերն
անոր գեղեցիկ սեւ աչերուն վրայ սե-
ւեռեց:

— Թերեւս միջոց մը կայ քեզ ազատ-
տելու...:

— Ա՛, ըրաւ Ֆէրնանտ:

— Ինձմէ զատուիլ, իմս չըլլալով, ա-
ւելի ազատութիւն կ'ունենաս... Ես ալ
աւելի դիւրութեամբ կրնամ պաշտպա-
նել քեզ:

— Կ'ուզե՞ս, հարցուց Ֆէրնանտ գու-
նաթափ և տխրադէմ, արձանի պէս
պաղ:

— Ինձի համար չէ, Ֆէրնանտ: Ես
կեանքս ատուի քեզի, պատիւս ալ կու-
տամ եթէ պէտք ըլլայ: Ես քուկդ եմ
... ինչ և ալ պատահի... մինչև իսկ
եթէ դուն թողուս գիս... քուկդ եմ
մինչև ցմահ: Խնդիրը քու վրայ է...
կրնաս զղջալ գիս սիրելուդ վրայ...

— Ո՛հ, շատ գէշ բան է այդ ըսածդ,
պատասխանեց Ֆէրնանտ, և արտասուքի
կաթիլ մը վայեցաւ իւր երկայն սեւ
թարթիչներուն տակ: Շա՛տ գէշ: Կը
կարծե՞ս որ ես ալ քեզնէ պակաս սի-
րեմ քեզ, կը կարծե՞ս որ ես քեզնէ ա-
ւելի տկար, աւելի ետամոլ, աւելի վատ
ըլլամ: Կը կարծե՞ս որ ես պիտի կըր-
նամ հիմա օսրիլ առանց քեզի, որչափ
դուն առանց ինձի... ոչ, ոչ...: Ես
զղջալու բան մը չունիմ: Միթէ չե՞մ
դիտեր թէ ճշմարիտ սէրը, մեծ սէրը, որ

ամբողջ էութիւնը կը գրաւէ. չի կեր-
նար քայել առանց քիչ մը դառնու-
թեան, և թէ մեծ երջանկութիւնները
մեծ ցաւերով կը համեմուին:

Եւ իւր գգուիչ թեւերովն անոր փաթ-
թուելով՝ գլուխն անոր ուսին վրայ
դրաւ:

— Կարելի՞ բան էր ինձի համար, որ
քեզ սիրէի, քուկդ մնայի քանի որ
հաճոյք միայն կար ինձի համար, և
երբ պայքարի կամ վտանգի օրը գար,
քեզ ձգէի փախչէի ըսելով:

« Դուն կարծեր էիր թէ ես Սէ՛ր էի.
բայց ոչ, ես հաճոյք կամ զուարճու-
թիւն միայն էի...: Դուն կարծեր էիր
թէ ես Երջանկութիւն էի, մինչ ես
անձնամուկ կամշոտ մ'էի, որ համարոյր-
ներ կը քաղէ ու կը փախչի երբ ար-
տասուելու առիթ գայ:

« Ո՛չ, ո՛չ, Դանիէ՛լ, մի՛ զրպարտեր
գիտ. դուն իմ կեանքս ես, ես քուկդ
եմ, ես ես չեմ դառնար և չի պիտի
դառնամ երբէք: Թողուլ քեզ այսօր,
երբ ամէն կողմէ սպառնալիք կայ մեր
վրայ, երբ դուն երբէք չի խնայեցիր
անձնուիրութիւնդ, ոչ միայն աններելի
դրժանք մ'է սի ոյ դէմ, այլ և ա-
պաշնորհութիւն ու դաւաճանութիւն:

« Ի՞նչ, ամուսինիս վերադառնա՞լ այն-
պէս չէ՞: Երբէ՛ք, երբէ՛ք: Միտքէ
անգամ տնցունել կարելի չէ: Վերջ
տանք այս խօսքերուն, ժամանակ չի
կորսնցնենք և սիրտերնիս չի վշտա-
ցնենք: Դանք նորէն այն մարդուն, և
նորէն այնպիսի խօսք մի ըսեր ինձի:

Դանիէլ որ կուրծքին վրայ սեղմած
էր զայն, քակեց թեւերը:

Պարագաներ կան, որ բան մը չը-
սելը լաւագոյն պատասխանն է: Դի-
մացինին ըսածներն ընդունիլ է:

— Իմ խօսքս ըրա՞ւ քեզի, հարցո՞ց:

— Ո՛չ:

— Զիս չի ճանչեր ուրեմն:

— Կը յուսամ:

— Ա՛, եթէ այդպէս է...

— Ի՞նչ կ'ըլլայ:

— Չեմ գիտեր... բայց այն ատեն
աւելի հզօր կ'ըլլամ անոր դէմ:

— Ի՞նչ կրնաս բնել:

— Ի՞նչ գիտնամ:

Դանիէլ երկու անգամ դարձաւ սեն-
եակին մէջ:

— Պէտք է տեսնեմ զայն:

— Զգուշացի՛ր, եթէ սպառնալիք կամ
վտանգ տեսնէ իրեն դէմ, կրնայ...

—Մի՛ վախնար, ես չեմ երթար անոր. ան կուգայ ինձի:

—Ի՞նչ պէս:

—Կը տեսնես...: Հարկաւ չի պիտի մեկնիս հիմա...: Կրնաս օրիդ մեծ մասը ինձի նուիրել:

—Այո՛, եթէ պէտք է...:

—Ուրեմն կեցի՛ր, քեզ մէկու մը ներկայացնեմ, որուն խորհուրդներն ու գործակցութիւնը շատ պէտք են մեզի...:

—Մէկո՞ւ մը, զի՞ս, գոչեց սրտատրոփ շարժումով մը:

—Այնպիսի մէկու մը, որ ամէն բան գիտէ, և միայն ինքը կրնայ ազատել մեզ թերեւս:

Եւ դրան մը քով վազելով բացաւ ու ըսաւ:

—Բրէնպո՛րն, մտէ՛ք:



ԱՌԱՋԻՆ ՅՈՅՅԸ

Ֆէրնանտ, հակառակ իւր տարփածուն հաւաստելուն, որուն վրայ կատարեալ վստահութիւն ունէր, բնազդումով մը ետ ետ գնաց երբ տեսաւ

այդ օտար մարդը, որ յանկարծ իւր կեանքին մէջ կը մտնէր:

Արդէն ըսած էինք թէ Բրէնպորն՝ առաջին տեսութեամբ անախորժ երեւոյթ մ'ունէր, մանաւանդ կանանց համար, տգեղ և գուեհիկ տեսքով մարդ մ'էր:

Մտնարհ ձեռով մը ներս մտեր, և իւր փոքրիկ գորշ ու փայլուն աչերով նայուածք մը նետեր էր ազնիւ տիկինին վրայ, որ դէմը կանգնած էր քիչ մը հեռուն, և որուն դէմքն առաջին անգամ կը տեսնէր:

Ֆէրնանտ ալ իւր կողմէ Դանիէլի դառնալով, իւր նուրբ նայուածքը յայտնապէս կ'ըսէր.

—Այս մա՞րդն է, որուն հաւատացիր մեր ամենէն թանկագին գաղտնիքները, և որուն վրայ յոյս դրեր ես թէ պիտի ազատէ մեզ:

—Պարո՛ն Բրէնպորն, ըսաւ մէկէն Դանիէլ, ձեզի կը ներկայացնեմ տիկին տը Ռիչմօն դերկոմսուհին:

Բրէնպորն խոնարհեցաւ խորին անաժանքով:

—Շնորհակալ եմ, պարոն տը Քէօր, ըսաւ, իմ անձնուիրութեանս վրայ ձեր

ունեցած այդ համարման և վստահութեան համար, Գրտեմ որ մեծ պարտականութիւն մ'ունիմ թէ՛ ձեր և թէ՛ արկին դերկոմսուհիին նկատմամբ... և պիտի ընեմ ինչ որ մարդ մը կրնայ ընել... չի վրիպելու համար այդ պարտականութենէն... անարժան չի գանուելու համար այն ներուսին, զոր վեհանձարար շնորհեցիք ինձի:

Եւ կանգ առաւ, իւր սովորութեան համեմատ, բայց կարճ, և այս անգամ խօսքը փէրնանախ ուղղելով, որ առջած կեցեր էր, զգուշաւոր կերպով մը յարեց .

— Բայց տիկինը որ զիս չի ճանչնարնաւ, չի կրնար հասկնալ թէ ինչպէս կրցեր եմ խառնուիլ իւր և ձեր ամենէն ներքին գաղտնիքներուն: Հետեւապէս կը հասկնամ իւր զարմանքն ու անվստահութիւնը:

Փէրնանտ աննշմարելի շարժում մ'ունեցաւ, ինքզինք այսչափ լաւ գուշակուած տեսնելով:

— Արդարեւ, ըսաւ Դանիէլ, պարագաներուն ծանրութենէն յափշտակուելով՝ ժամանակ չունեցայ իրեն հասկցնելու...

— Կը ներէք ինձի ուրեմն, որ ես ներկայացնեմ ինքզինքս, ըսաւ Բրէնպորն:

Դանիէլ գլուխը ծռեց ի նշան հաւանութեան, ուստիկանին ուշիմ ուղղամտութենէն ազդուելով, որ անոր բնաւորութեան սկզբնատիպն էր:

— Տիկին՛, ըսաւ վերջինը, անունս Բրէնպորն է, տգեղ անուն մը... և ես ապահովութեան տեսչի պաշտօնեայ մ'եմ, որ նոյնպէս տգեղ արհեստ մ'է, բայց օգտակար և միանգամայն հարկաւոր... և որ երբեմն իւր գեղեցիկ կողմերն ունի, որովհետեւ թող կուտայ երբեմն, ինչպէս ներկայ պարագային մէջ օգնութեան հասնիլ անմեղին, և օգնել անոր իւր անմեղութիւնն ապացուցանելու:

«Պ. Դանիէլ տը Բէօր զիս իրեն խորհրդական չառաւ և չէր ալ աներ երբէք: Ձեր գաղտնիքը, տիկին՛, իրենը չէր: Կը մեռներ և երևան չէր հաներ: Ես ինքս գողի պէս դուռը կոտրելով այդ գաղտնիքին մէջ մտայ:

«Պաշտօնիս բերմամբ ինձի յանձնուած էր՝ Պ. տը Բէօրի տնօրէնութեան տակ փնտռել գտնել Բիէոֆիթի ոճիրին հեղինակները, նշմարեցի որ Պ. նա-

խաքննիչ դատաւորը վարանոտ ու շուարած ընթացք մ'ունէր: Այդ բանն իմ ուշադրութիւնս արթնցնելով, այլևայլ նշաններ զիս առաջնորդեցին գտնելու Պ. Վառօան և իւր բնակարանը՝ Տուէ փողոց թիւ 29:

«Փոխանակ իմ մեծիս խօսելու, ինչպէս որ պարտքս էր, կասկածելով իւր վրայ զոր ցաւելով կը խոստովանիմ, ուզեցի մինակ գործել: Մտայ գետնաշարկի փոքրիկ բնակարանը... և թերի կամ սխալ քննութեամբ, տխմարի կամ ապուշի մը պէս, յանդգնեցայ կըրկին ոճիրով ամբաստանել թէ՛ Պ. տը Քէօրը, որ աշխարհի ամենէն պարկեշտ մարդն է, և թէ տիկին տը Ռիշմօն դերկոմսուհին, զոր բաւական էր ինձի անգամ մը միայն տեսնել, իմ կասկածներուս տխմարութիւնը հասկնալու համար:

«Այս վիճակին մէջ, երբ գիտէի ինչ որ կրնար ձեզ կորսնցնել, առանց գիտնալու ինչ որ կրնար ձեզ արդարացընել, Պ. տը Քէօր չէր կրնար ազատել ձեզ, բայց միայն իրողութիւնները ճշդելով, և բուն ճշմարտութիւնն ինձի ցուցնելով, այն սուտ և առերեւոյթ ճշմարտութեան դէմ, որով նախապաշարուեր էի:

«Պէտք է հասկնաք նաև, տիկի'ն դերկոմսուհի, թէ ձեզի դէմ այսպիսի ծանր անիրաւութեան մը մէջ գտնուած ըլլալով, ամէն ճիգս, խելքս և անձնութեանս պիտի թափեմ դարմանելու համար գործած սխալներս, զորս երբէք չի պիտի ներեմ ինձի:»

Բրէնպորն լռեց, թեթեւ մը խոնարհելով դեռատի տիկինին առջեւ:

Կատարելապէս գրաւեր էր իւր երկու ունկնդիրները:

Դանիէլ շատ գոհ եղեր էր այն փափկութենէն, որով Բրէնպորն ինքնին կուգար քիչ խօսքով բացատրել իւր վարմունքին քիչ մը տարօրինակութիւնն, և թերեւս իսկ անխոհականութիւնը տիկին տը Ռիշմօնի առջեւ:

Ֆէրնանտ ալ, ազնիւ բնաւորութեան, բարձր խելքի տէր, զգայուն այն ամէն բանի որ արժէք մը կամ նշանակութիւն մը կ'ունենան, ատեցող ամստութեան և գոեհկութեան, գոհ եղեր էր Բրէնպորնի ուշիմ և անկեղծ բացատրութիւններէն, ինչպէս նաև առերեւոյթ պարզմտութեան տակ ծածկած նրբամտութենէն:

Առանց վարանելու մօտեցաւ, և իւր

աղնուապետական քնքուչ ձեռքն անոր
երկնցուց :

— Պարո՛ն, ըսաւ, բաւական է ըսել
ձեզ տեսնելու համար թէ՛ դուք խե-
լացի և միանգամայն պարկեշտ մարդ
մ'էք... : Դանիէլ իրաւունք ունէր ձեր
վրայ վստահելու թէ՛ դուք միայն կըր-
նաք փրկել մեզ :

— Պիտի ջանամ, տի՛կին, պատաս-
խանեց Բրէնպորն, հազիւ իւր հաստ
մատներուն ծայրը դպցնելով անոր կը-
լոր ու դիւրաթեք մատներուն :

— Եւ հիմա, ըսաւ Դանիէլ, խօսինք
այն խնդրոյն վրայ, որուն համար գու-
մարուած ենք այս միջոցիս : Ծանր վը-
տանգներ կ'սպառնան մեզ, Բրէնպորն :

— Նոր բա՛ն կայ :

— Այո՛, ուրիշ մարդ մ'ալ գիտէ մեր
գաղանիքը... մարդ մը որ պահ մ'ա-
ռաջ դուրս ելած է տիկինին տունէն...
սպառնալով թէ ամէն բան պիտի յայտ-
նէ եթէ իւր լռութիւնը գնելու չի
հաճի :

Բրէնպորն հանդարտութեամբ մտիկ
ընելէ ետեւ .

— Տիկինը կը հաճի՞ մանրամասնօրէն
պատմել իւր և այդ մարդուն միջև
անցածը :

Ֆէրնանտ քիչ խօսքով բայց ամբող-
ջապէս պատմեց ինչ որ ծանօթ է
մեզի :

Բրէնպորն մեծ ուշադրութեամբ մը-
տիկ ըրաւ :

Երբ Ֆէրնանտ լռեց, ոստիկանը
վայրկենի մը չափ խոր լռութիւն պա-
հեց :

Դանիէլ և Ֆէրնանտ անոր կարծիքը
լսելու կ'սպասէին սրտատանջ :

— Հը՛, ըրաւ վերջապէս, գործը
ծանր է, շատ ծանր :

— Կը կարծէ՞ք որ ոճրագործներէն
մէկն եղած ըլլայ, որովհետեւ ամէն
բան ենթադրելի կուտայ թէ առնուազն
երկու հոգի էին :

— Այդ կէտն է որ զիս մտածել կուտայ
տիկինին ըրած պատմութեան սկիզբէն
ի վեր : Հաւանական կ'երևի բայց ոչ
հաւաստի . բանեցուած ձեւերը ոճ-
րագործի ձեւերը չեն, որչափ որ կրցի
դատել տիկինին ըրած համառօտակարա-
գրութենէն : Սակայն ամէն բան հնա-
րաւոր է, Ես ինքս տեսած չըլլալով
զայն, չեմ կրնար որոշում մ'ընել... :

— Բայց ա՞յն ատեն... :

— Ի՞նչպէս կրնար այնչափ լու տեղե-

կութիւն ունենալ, պիտի հարցնէք: Առայժմ իմ կարծիքս է թէ ոճրագործին ընկեր կամ մեղսակից ըլլայ թէ ոչ, այն մարդը կրնայ ըլլալ, որուն հետքը գտայ պատին անկիւնը և ծաղկոցներուն եզերքը... մոյկերուն տէրը: կը յիշէք որ ստուգուեցաւ թէ երբ մէկը մանկաբարձուհին կ'սպաննէր, միւսը պարտէզին մէջ կեցած էր: Այն մարդըն է գետինը փորողը, սնտուկը գտնողը... մէջի ստակներն ու թուղթերը վերցնողը, որոնցմէ տեղեկացած է ժիւսթիինի և անոր դիմող անձանց գաղտնիքներուն:

—Եւ կրնայ մեզ մատնել երբ ուզէ, ընդմիջեց Ֆէրնանտ: Եւ եթէ ամբաստանէ մե'զ, գէ'չ է գործերնիս:

—Կարելի է թէ և ապացուցուած չէ, պատասխանեց Բրէնպորն իւր սովորական սաղարիւնութեամբ: Թերևս ձերբակալելու սպառնալիքը զայն վախցնելով հարկադրէ յայտնելու մեզ իւր բոլոր գաղտնիքը: Ի՞նչ է պարոն նախաքննիչ դատաւորին կարծիքը:

—Այդ մարդը խիզախ մէկը կ'երևի ինձի... յաւ գինուած, պատասխանեց Դանիէլ մտահոգ և վարանոտ դէմքով:

«Բայց ինչ որ ալ է, պէտք է տեսնել, ճանչել, հարցաքննել...»

—Իմ ալ կարծիքս այդ է... բայց ի՞նչպէս:

—Եթէ ես իւր տունն երթա՞մ...

—Խոստովանիլ է թէ կը վախնաք իրմէ, և իւր ձեռքին մէջն էք:

—Հոս բերել տա՛լ...

—Այդ ալ վտանգաւոր է, վասն զի ձեզ մատնել է Դուք պարզ անհատ մը չէք... դատաւոր էք... Բիէնֆիթի ոճիրը դատելու պաշտօն ունիք:

—Բայց պաշտօնատեղիս բերել տալ, գոչեց Դանիէլ, հոն հարցաքննել...: Եթէ խօսի... դարձեալ գէչ է մեզի: Իւր ամէն խօսքերը պիտի արձանագրուին կէտ առ կէտ, պաշտօնապէս... և եթէ Ֆէրնանտի անունը տայ, գիտցածը ըսէ... ալ կարելի չէ աւրել, հետքը ջնջել, առաջըն առնել զայն թակղութեան, որմէ զերծ մնալու համար կեանքս իսկ զոհելու պատրաստ եմ:»

Բրէնպորն ձակատը կը քերէր, մինչ Ֆէրնանտ ալ աչերովը կը հարցաքննէր զայն:

—Նախախնամութիւնը մեզի հետ է, ըսաւ յանկարծ Բրէնպորն, ձեր դիւանադպիրը հիւանդ չէ՞:

— Այո՛ :

— Ուրեմն ձեր գրասենեակը կը բե-
րենք այդ մարդը և դիւանադպրին
պաշտօնը ես կը կատարեմ: Թող ու-
ղածին չափ խօսի... ես միայն պիտի
լսած ըլլամ ձեզի հետ... բայց գոնէ կը
դիտնանք անոր դէմ բռնելիք ընթաց-
քնիս: Հարկաւ պիտի ճանչենք թշնա-
մին, անոր ուժը, միջոցները, դիտա-
ւորութիւնները... եւ թերեւս սխալ
քայլ մ'առնելով՝ օձիքը մեր ձեռքը
կուտայ:

— Իրաւունք ունիք, գոչեց Դանիէլ:
Այդ ալ ծայրայեղ միջոց մ'է արդա-
րեւ, բայց ուրիշ ամէն միջոցներէ նը-
ւազ վտանգաւոր:

— Ո՞ւր կը բնակի, հարցուց Բրէն-
պօրն դեր-կոմսուհիին:

— Տէ-Տէօ-Բօն փողոց թիւ * * *:

— Լաւ, ձերբակալման հրամանագիր
մ'ստորագրեցէք, Պարոն տը Բէօր: Ես
ինքնս վրաս կ'առնեմ գործադրութիւնը
և այդ ժիւլ Շամպէզին բերել ձեր
պաշտօնական գրասենեակը:

Դանիէլ հրամանագիր մ'առաւ սեղա-
նին վրայէն, լեցուց և ստորագրեց:

— Աւասիկ, ըսաւ Բրէնպօրնի երկն-

ցընելով: Վստահելի, կարող մարդիկ
ունի՞ք:

— Երկու հատ ունիմ ձեռքիս տակ,
որոնց վրայ կրնամ վստահեցնել ձեզ:
Դուք հիմա դատական պաշտօնատունը
դացէք, ես ալ Տէ-Տէօ-Բօն փողոցն
երթամ: Ժամ մը չանցած ձեր առջեւ
կը տեսնէք մարդը:

Եւ անմիջապէս մեկնեցաւ:

— 0 —

ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

Ժիւլ Շամպէզի, տը Ֆէրնիք կոմսու-
հիին առնէն դուրս ելնելուն պէս, ուր
անցածը ետքը պիտի պատմենք, իւր
բնակարանը գնաց:

Իսկոյն Սոֆիի սենեակը մտնելով,
ձեռքէն բռնեց և կամացուկ մ'իւր սենե-
ակը տարաւ:

— Ի՞նչ կայ, ի՞նչ ունիք, հարցուց
Սօֆի զարմանալով իւր վարձակալին
ընթացքին վրայ:

— Սիրելի՛ որդեակս, պատասխանեց
Շամպէզի, պարտքս է իմացընել քեզի
թէ, դէպք մը կը պատրաստուի ան-

չուշտ, որ կրնայ դող հանել ձեզ, եթէ հիմակուց չիմացընեմ...:

—Ո՛հ, Աստուած իմ, գոչեց Սօֆի, վտանգ մը կ'սպառնայ ձեզի:

—Վտանգ... առ այժմ չեմ կարծեր:

—Ուրախ եմ ուրեմն:

Եւ գորովալի միանգամայն անձնուէր հլութեան դէմքով մը անոր նայեցաւ:

Շամպէզի լաւ կրթեր էր զայն, այն մարդոցմէն ըլլալով, որոց համար կինը, ստորին էակ, պարտի հնազանդել իւր տիրոջ, և մանաւանդ հաճելի ըլլալ... առանց հասկնալ կամ խորհըրդածել ջանալու:

—Խոշոր խաղ մը կը խաղամ, խիստ խոշոր խաղ մը, ըսաւ, եթէ շահիմ, հարստութեան աղբիւր մը պիտի ըլլայ ինձի... մեզի...: Եւ պիտի շահիմ...: Յաղթելու միջոցները ձեռքիս մէջ են...: Բայց պիտի դիմադրեն, տարակոյս չունիմ, և ծանր դժուարութիւններ ալ կրնան ելնել դէմս...:

Ծանր դժուարութիւններ. ի՞նչ դժուարութիւններ:

—Օ՛, մի՛ վախնաք... ինչ որ ալ պատահի, ձեր պաղարիւնութիւնը մի՛ աւրէք:

—Բայց քեզի համար կը վախնամ:

—Ճշդիւ ես ալ ինձի համար ըսել կ'ուզեմ: Միայն թէ պէտք է խղճմտօրէն հնազանդիս ինձի:

—Պատրաստ եմ:

—Կարելի է որ գան ձերբակալեն զիս:

—Ձերբակալե՛ն, գոչեց Սօֆի ահաբեկ:

—Ազուր խարտիչուհիս, շարունակեց Շամպէզի, պարապ տեղը մի՛ յուզուիր: Եթէ զիս բռնեն, դատական պաշտօնատունը կամ ուրիշ տեղ տանին... մի՛ վախնար: Բան մը չըլլար ինձի: Աչքս առած եմ: Նախ գիտցիր որ շատ քաղաքավարութեամբ պիտի վարուին ինձի հետ, և քաջ համոզուած եմ, որ բանտի թաց խոտին վրայ չի պիտի պառկիմ...:

—Բայց ի՞նչ ըրիր որ այդպէս վարուին քեզի հետ, ընդմիջեց Սօֆի՝ սարսափախառն զմայնամբ մ'անոր դիցազնական պաղարիւնութեան վրայ:

—Իմ այն չարածձի վէպս տեսա՞ր... «Ե կեռք, ան է պատճառը: Բայց նորէն կ'ըսեմ, ծայրը հարստութիւն կայ: Առանց վտանգը աչքն առնելու՝ դիւրին չէ յաջողիլ: Կեանքը պայքար մ'է:

գործը լաւ գինուած ըլլալուն մէջ է :
Ես ալ լաւ գինուած եմ . ուստի մտիկ
ըրէ գիտ առանց դողալու :

— Կ'ընեմ :

— Ինչպէս որ ըսի քեզի, եթէ գիտ
ձերբակալեն, չեմ կարծեր որ վար
դենն . բայց ամէն բան նախատեսել պէտք
է : Ուստի, երբ տեսնես որ մինչեւ
քառասունեութ ժամ ետ չի դառնամ,
պէտք է նախ զգուշանալ որ և է դի-
մումէ, որ և է միջնորդութենէ :
Հասկցա՞ր :

— Ո՛չ, բայց պիտի հնազանդիմ քե-
զի :

— Աւասիկ կարեորը : Երկրորդ քա-
ռասունեութ ժամ անցնելէ ետեւ, ա-
ւելցուց Շամպէզի հայլիին ետեւէն առ-
նելով նօտարին ընկալագիրը, զոր հոն
պահեր էր առջի իրիկունը, այս թուղ-
թըն ու սա նամակը կ'առնես ու կ'եր-
թաս ցոյց տուած հասցէին, Ռիվօլի
փողոց թիւ * * * Պ . վէրտիէի, որ այս
ընկալագիրն առնելով՝ փոխարէն վա-
ւերացուած և արձանագրուած գիր մը
պիտի տայ քեզի :

Այս ըսած միջոցին Շամպէզի ընկա-
լագիրը կանխաւ պատրաստուած նա-
մակին մէջը դրաւ և խնամով գոցեց :

— Ետքը՞, հարցուց Սօ ի, ի՞նչ պի-
տի ընեմ :

— Ետքը, շարունակեց Շամպէզի,
թղթապանակէն երկրորդ նամակ
մը հանելով զոր նոյնպէս կանխաւ
պատրաստած էր, նօտարին տալիք
պաշտօնական թուղթն այս նամակին
մէջը դնելով կը կնքես... Իմ ան-
ուանքս կը յանձնարարես խնամով, և
թղթատարութեան կը յանձնես :

— Որո՞ւ ուղղուած է այդ նամակը :

— Տե՛ս :

Տիկին Շաթլէն առաւ նամակը և
կարդաց վրայի հասցէն

Պարոն Տը Յերնի + Կոմ

Դեպքան Ի Ք... .

— Ա՛, դուք քաղաքականութեան ալ
կը խառնուիք, գոչեց խեղճ կիսն ապշե-
լով :

— Չեմ գիտեր... Թերևս : Ինչ և ալ
ըլլայ, դիւանագիտութիւն է : Բայց
խնդիրն հոն չէ : Իմ ազատութիւնս,
կեանքս կախումունի այն ուղիմութենէն
ու ճշդութենէն, որով պիտի կատարես
քեզի յանձնած պաշտօնս :

— Օ՛, աներկբայ եղիր... :

Եւ արտասուքի կաթիլներ ցայտեցին
աչքէն :

—Օ՛ն, արիացի՛ր, ըսաւ Շամպէզի գո-
րովով: Պահէ սա նամակները, ըսածիս
պէս գործածէ... առանց բնաւ վախ-
նալու:

—Բայց սարսափելի բանե՛ր են ա-
սոնք:

—Կարծածիդ չափ չեն, բայց եթէ
խելքով չի վարուիս, իրաւ սարսափելի
կ'ըլլան: Հիմա մտի՛ր սենեակդ, կղպէ՛
հաղորդակցութեան դուռը... և ինչ
որ ալ ըլլայ, ինչ որ լսես մի՛ ցուցներ
քու սիրուն դէմքդ: Ամէն բան կը
կորսուի, եթէ մեզ միացնող յարաբե-
թիւնները իմացուին: Եթէ հոս գան,
բնաւ որ և է շարժում չի պիտի ընես,
բնաւ ձայն չի պիտի հանես, ինքզինքդ
չի պիտի ցուցնես: Մնացեալն ինձի
ձգէ: Օ՛ն, աղջիկս, համբուրէ զիս և
աներևոյթ եղիւր:

Ժիւլ Շամպէզի գորովով համբուրելէ
ետև դողահար Սօֆին, մեղմով մը
դուռս հրեց իւր սենեակէն:

Սօֆի հեռացաւ, և շատ չանցած
Շամպէզի լսեց դրանը կղպուիլը:

Եւ ժպտեցաւ:

—Ահա այսպէս պէտք է կրթել այս
կիները, մրմռաց ինքնիրեն: Տարակոյս

չունիմ որ եթէ հարցաքննեն զինքը,
ձուկէ մ'աւելի համր պիտի ըլլայ: Կի-
ները լաւ կողմեր ունին... զորս բա-
ւական է գործածել գիտնալ:

Եւ եկաւ նստաւ իւր գրասեղանին
քով:

—Հոս վտանգաւոր բան մը չիկայ
այլ ևս, յարեց: Ժիւլի մտնէն
գտնուած արժէքներն ու տեսարակը
սպառնում տեղ են: Ինձի համար տաս-
նեակինգ լուի միայն պահեցի դրամա-
պանակիս մէջ: Թղթապանակիս մէջ ալ
վաթսուն սանդիմնոց դրոշմաւոր թուղթ
մը միայն կայ: Թող ուզածնուն չափ
խուզարկեն, բան մը գտնելիք չունին:
Ալ ուրիշ գործ չի մնար ինձի բայց
միայն սպասել տիկին տը Ռիչմօն դեր-
կոմսուհիին կամ անոր կողմէն գալիք
մարդոց:

Եւ սիկառ մը բոլորեց:

—Ինքը պիտի գա՞յ արդեօք, յարեց,
անշուշտ խորհուրդ հարցուցած է իւր
տարփածուին...: Նախաքննիչ դատա-
ւորն հարկաւ դէմ կեցած կ'ըլլայ, բայց
չուտով կը փոխէ կարծիքը, եթէ զիս
վախցնելու ելնէ: Կը տեսնէ որ ինքն ալ
ձեռքիս մէջն է...: Օ՛ն, թող դեր-

կոմսուհին գայ, կամ իւր տեղը ոստիկաններ զրկէ ինձի... Պատրաստ եմ:

Հազիւ Շամպէզի այս եղբակացու-թիւնն ըրեր էր, դուռը զարնուեցաւ:

—Մտէք պոռաց, առանց տեղէն շար-ժելու:

Բանլիքը դարձաւ և Բրէնպորն սե-մին վրայ երեւցաւ: Շամպէզի խսկոյն ճանչեց զայն:

—Նոյն ինքն է, ըսաւ:

Եւ ոտքի վրայ ելնելով.

—Ի՞նչ կ'ուզէ՞ք, պարո՛ն, հարցուց առանց յուզուելու երեւոյթի:

—Պարոն ժիւլ Շամպէզի, պատաս-խանեց ոստիկանը, ուշադրութեամբ անոր նայելով՝ իբր արդէն ծանօթ դէմքի մը:

—Ես եմ պարոն, հաճեցէք ներս մտնել:

Բրէնպորն յառաջացաւ քանի մը քայլ, դուռը կէս բաց թողլով, և Շամպէզի կրցաւ նշմարել ստուերին մէջ, սանդուղին գլուխը, երկու հսկայ մարդոց կէս դէմքը:

—Պարո՛ն, ըսաւ ոստիկանը, փա-փուկ պաշտօն մը յանձնուած է ինձի՝ կը յուսամ որ զիս չէք հարկադրե՞ր բռնութիւն գործածելու:

—Բռնութիւն, ի՞նչ պատճառով, պարո՛ն: Ես արդէն կ'սպասէի ձեզ:

—Իրա՞ւ:

—Այո՛, իրաւ: Դուք ապահովու-թեան պաշտօնեայ էք, և եկած էք զիս դատական պաշտօնատունը կամ ոստիկանութեան դիպակը տանելու:

—Արդարեւ հրամանագիր մը բերած եմ ձեզի՝ նախաքննիչ դատաւորին ներկայանալու, ըսաւ Բրէնպորն:

—Գիտեմ ձեր այցին նպատակը, բայց ո՞ր նախաքննիչ դատաւորին պի-տի տանիք:

—Պ. Դանիէլ տը Բէօրի:

—Կատարեա՛լ:

—Գործերնիս վարպետ բարեձաղիկի մը հետ կ'երեւի, ըսաւ մտքէն Բրէն-պորն:

—Պատրաստ էք հետս գալու, պա-րո՛ն, յարեց բարձր ձայնով:

—Այո՛, պատրաստ եմ:

Բրէնպորն մէկ կողմ քաշուեցաւ ճանբայ բանալու համար Շամպէզիի, որ գլխարկն առեր գլուխը դրեր էր առանց վարանելու:

Եւ սենեակէն դուրս ելնելով, Բրէն-պորնի բերած երկու մարդոց հետ դէմ առ դէմ եկաւ:

— Գոցեցէք սենեակիս գուռը, ըսաւ Շամպէզի, և բանլիքը վրանիդ պահեցէք, որպէս զի եթէ խուզարկութիւն մ'ընել պէտք ըլլայ՝ ձեր քով գըտնուի, և ինձի տաք երբ վերադառնամ:

— Այդ մասին հրաման մը չունիմ, ըսաւ Բրէնպորն՝ բանլիքը Շամպէզիի յանձնելով:

— Գործ պիտի ունենանք այս մարդուն հետ, ըսաւ ինքնիրեն մտահոգութեամբ:

Չորսն ալ վար իջան սանդուղէն անխօսուկ:

Կառք մը կ'սպասէր փողոցէն մէջ:

Շամպէզի մէջը մտաւ նստաւ իբրեւ պտըտելու գացող զուարթ քաղքենի մը:

Բրէնպորն և ոստիկաններէն մին ալ անոր երկու քովը նստան:

Միւս ոստիկանն ալ կառավարին քովը նստաւ, և կառքը ճանբայ ելնելով շտկուեցաւ դէպի դատական պաշտօնատունը:



ՆԱԽԱՔԻՆՈՒԹԻՒՆԸ

Ժիւլ Շամպէզի անհոգ կերպով զետեղուած էր կառքին երկու դռնակներէն մէկուն մօտ:

Ոստիկան մ'ալ միւս անկիւնը նստած էր:

Բրէնպորն Շամպէզիի դէմը նստաւ, որպէս զի կարող ըլլար անոր դէմքը գննելու:

Կառքը ճանբայ ելնելուն պէս, Շամպէզի ծխապանակը հանեց և սիկառ մը պլորեց:

— Կը գործածէ՞ք, հարցուց ազնուաբար Բրէնպորնի:

— Երբէք, պաշտօն կատարած միջոցիս:

— Ծուխը ձեզ անհանգիստ չընե՞ր:

— Բնաւ:

Շամպէզի սիկառը վառեց և սկսաւ հաճոյքով ծխել: Ծանրան Բրէնպորն բերանը չի բացաւ, եւս քան զեւս զարմանալով և մտայուղուելով Շամպէզիի բացարձակ անհոգութեան վրայ:

— Այսպիսի մարդու մը հետ խօսիլ կամ զինքը խօսեցընել անօգուտ է կ'ը-

սէր մտքէն : Հասարակ անզգամ մը չէր որպէս զի վարպետութեամբ խօսք քաղէր բերնէն և օձիքը ձեռքն անցունէր :

Ասկէ զատ միւս ոստիկանին ներկայութիւնն ալ կ'զգուշացնէր զինքը :

Պէտք չէր որ խնդրոյ նիւթ եղող սարսափելի գաղտնիքները իմանալու կամ կռահելու առիթ տրուէր ո և է մէկու մը :

Շատ չանցաւ ոստիկանութեան դուռը, անկէց ալ դատական պաշտօնատունն հասան, և Բրէնպորն կառքը վարը թողլով, Շամպէզին ալ մէջը՝ երկու ոստիկաններուն հսկողութեան տակ, ինքը մէկէն Դանիէլ տը Բէօրի գրասենեակը ելաւ, որպէս զի իմացընէր իւր ձեռնարկին յաջողութիւնը :

Երբ զինքը ներս մտցուցին, տեսաւ որ Ֆէրնանտի հետ նստած էր :

— Է՛, ի՞նչ լուր, հարցուց Դանիէլ :

— Մարդը հոս վարն է :

— Ի՞նչ ըսաւ, ի՞նչպէս մարդ է :

— Ծաղրե՛ց զիս : Կ'սպասէր ինձի : Խելացի, բուռական կրթուած և աշխարհ տեսած մարդ մ'է, ինչպէս որ շատ լաւ գուշակեր էր տիկին դերկոմսուհին : Պէտք է զգուշութեամբ խաղալ հետը :

Ֆէրնանտ և Դանիէլ իրարու երես նայեցան սրտատանջ մտահոգութեամբ :

— Պիտի հարցաքննեմ զինքը, ըսաւ Դանիէլ :

— Բայց զգուշութեամբ, քաղցրութեամբ և վարպետութեամբ :

— Իմ ալ դիտաւորութիւնս այդպէս է : Շուտով վեր բերէք, չեմ կրնար մնալ այս ահագին անստուգութեան մէջ :

— Բայց, ըսաւ Բրէնպորն, Ֆէրտինանտը ցուցընելով, պէտք չէ որ տեսնէ տիկինը :

— Ո՛չ, ո՛չ, գոչեց Ֆէրնանտ : Բայց Պ. տը Բէօր թող պիտի տայ ինձի որ լսեմ ըլլալիք խօսքերը : Պէտք է որ իմանամ, գիտնամ... :

— Կը հասկընամ, պատասխանեց Բրէնպորն, միայն թէ այդ Շամպէզին չի կռահէ ձեր ներկայութիւնը :

— Տիկինը հոս պիտի մտնէ, ընդմիջեց Դանիէլ իւր սիրուհին դէպի փոքրիկ սենեակ մը տանելով, որուն դուռը աջ կողմն էր, ուսկէց կրնայ ամէն բան լսել առանց տեսնուելու :

— Ուրեմն ես երթամ մարդը բերեմ, Հինգ վայրկեան ետքը Շամպէզի

նախաքննիչ դատաւորին առջեւն էր :

Յէրնանտ աներեւոյթ եղեր էր :

Բրէնպորն դնաց նստաւ քարտուղարին տեղը, որ՝ ինչպէս գիտեն ընթերցողք՝ հիւանդ ըլլալով եկած չէր այն օրը :

Դանիէլ տը Բէօր և Ժիւլ Շամպէզի վայրկեան մ'իրարու երես նայեցան լռին :

Առաջին անգամ էր որ կը տեսնէին զիրար :

Երկուքն ալ կը դիտէին ու կը չափէին զիրար, ինչպէս որ կ'ընեն մեծ նամարտի ժամանակ :

Եւ արդարեւ կենաց և մահու խընդիր էր դատաւորին և ամբաստանեալին միջեւ :

Շամպէզի նախ խզեց լռութիւնը :

— Կը սպասեմ, պարոն՝ նախաքննիչ դատաւոր, ըսաւ խոնարհելով ժպտադէմ, որ հաճիք իմացընել ինձի թէ ի՞նչ պատճառով բերուեր եմ ձեր առջեւ :

— Միտքերնէդ չանցնի՞ր, պատասխանեց Դանիէլ տը Բէօր խիստ ձայնով մը :

— Կրնայ անցնիլ, բայց դարձեալ

դատաւորին կ'իյնայ ըսել ինձի թէ ինչո՞ւ համար կանչած է զիս : Անշուշտ հոս բերուած եմ պատասխանելու ինձի ըլլալիք հարցումներու :

— Հաճեցէք նստիլ, ըսաւ Դանիէլ ազդուելով Շամպէզի արտասովոր յանդգնութենէն, և յայտնեցէք ձեր անունն ու մականունը :

— Կը խնդրեմ, ըսաւ Բրէնպորնի դառնալով, որ դուք ալ ճշդիւ նշանակէք պարոնին պատասխանները :

— Շատ պէ՞տք է, հարցուց Շամպէզի :

— Ամէն հարցաքննութիւն պէտք է արձանագրուի :

— Բայց ներեցէք ինձի աւելցնել թէ խոհեմութիւնն է :

— Ձեզի՞ համար, հարցուց Դանիէլ :

— Ո՛չ ինձի, այլ յեղի համար, պատասխանեց յանդգնաբար Ժիւլ Շամպէզի : Բայց եթէ այդպէս է ձեր հաճոյքը, հոգ չէ ինձի համար : Ըլլալիքը սա է որ ետքը դուք պիտի պատուէք այդ բոլոր թուղթերը :

Դանիէլ տը Բէօր շփոթիլ սկսաւ :

Դէմը նստող մարդը դիւրաւ վախցնելու մարդ չէր :

Սոսկալի տագնապ մը կը ճնշէր դըժ-
բաղդ դատաւորին սիրտը :

Սակայն բաւական կորով ունեցաւ
ինքզինքը բռնելու :

— Ի՞նչ է ձեր անունը, հարցուց :

— Ժիւլ Շամպէզի :

— Տարիքնի՞դ :

— Երսունուհինգ :

— Բնակավայրնի՞դ :

— Տէ Տէօ-Բոն փողոց Թիւ... :

— Ամուսնացեա՞լ էք :

— Ամուրի եմ :

— Ո՞ր ծնած էք :

— Փարիզ :

— Ապրուստի միջոցնի՞դ :

— Հասութատէր :

Կարճ լռութիւն մը տիրեց :

Դանիէլ կը պատրաստէր իւր ամ-
բաստանութիւնը, որ պաշտպանողա-
կան միակ միջոցն էր այդ վտանգաւոր
մարդուն դէմ :

— Պարոն, ըսաւ վերջապէս իւր բո-
լոր ուժը միացընելով և Շամպէզիի ե-
րեսը նայելով : Դուք ամբաստանուած
էք իբրև մեղսակից Բիէռֆիթի մէջ
գործուած սպանութեան, Ժիւլսթիւ
Պօնֆօա կոչուած կնոջ անձին վրայ :

Դանիէլի յոյսը բացարձակապէս պա-
քապ ելաւ :

Շամպէզի ո՛չ յուզուեցաւ, ո՛չ վախ-
ցաւ, ո՛չ զարմացաւ :

— Ի՞նչ, կ'ըսէր, մեղսակի՛ց, ի՞նչպէս :

— Ձե՞ք գիտեր :

— Անկեղծաբար խօսելով, միտքէս
կ'անցնի, բայց կ'ուզեմ որ դուք բա-
ցատրէք :

Այս պատասխանը նենգաւոր էր :

Եթէ Դանիէլ վարանէր, ինքզինք կը
մատնէր թշնամիին, գործին մէջ ու-
նեցած ուղղակի և անձնական շահը
խտատովանելով :

Պէտք էր՝ դիմացիներն պէս՝ յանդգ-
նութիւն ձեռք առնել :

— Բացատրեմ ձեզի, պարոն, ըսաւ
վտահ կերպով մը :

« Դուք տիկին աը Ռիշմօն դերկոմսու-
հիին տունը գացիք, և հոն՝ վատ ըս-
պառնայիքնեքով՝ Բիէռֆիթի մէջ գործ-
ուած ոճիրին վրայ մանրամասն տեղե-
կութիւններ տուիք, որոցմէ յայտնի
կը տեսնուի թէ գործակից էք այն ո-
ճիրին :

Շամպէզի բնաւ չզգածուեցաւ :

— Ըսել է թէ տիկին աը Ռիշմօն

դերկոմսուհիին գանգատելուն վրայ հոս-
բերուած եմ ես :

— Տիկին տը Ռիչմօն, ինչպէս որ
պարտքն էր, եկաւ, և ձեր ըրած
ձեռնարկը յայտնելով՝ դատական ար-
դարութեան պաշտպանութիւնը խնդ-
րեց :

— Տիկին տը Ռիչմօն մեծ անխոհե-
մութիւն մ'ըրաւ ադով : Ես անպաշտօն
կերպով, լռելեայն և կրնամ ըսել՝ իր-
րեւ բարեկամ ներկայացեր էի իրեն...
Եթէ, Պ. Դանիէլ տը Գէօրէն զատու-
րիչ դատաւորի գանգատած ըլլար,
չատ պիտի գղջար... : Բայց տիկինը
գիտէր ըրածը... ես ալ...

— Օ'ն, պարո'ն, գոչեց Դանիէլ յուզ-
ուելով, թողէք այդ հեգնական ձեռ...
որ բնաւ չի վայլեր ձեր դիւրքին, և
լըջարար պատասխանեցէք իմ հար-
ցումիս :

— Կը պահանջէ՞ք :

— Այո՛, պարո'ն :

— Ի՞նչ կ'ուզէք գիտնալ :

— Ըսեր էք թէ տիկին տը Ռիչմօնի
պատուոյն վերարեբեալ գաղտնիքներ
գիտէք :

— Այո՛ :

— Եւ առաջարկեր էք վաճառել իրեն
ձեր լուսթիւնը... :

— Երկու հարիւր յիսուն հազար ֆը-
րանքի : Աւելի կ'արժէ : Բայց ես պարզ
ճաշակի տէր եմ... :

— Ըսել է թէ կը խոստովանիք ըս-
տակ քաշելու այդ ապօրէն փորձը որ
շոնթած կը կոչուի :

— Օ'հ, անպիտան բառ : Ունեցածը
վաճառելն... առուտուր կը կոչուի :

— Պարո'ն, ըսաւ Դանիէլ, դուք որ-
չափ և խորամանգ, որչափ և յան-
դուգն կարծէք ինքզինքնիդ, սխալ
հաշիւ ըրած էք : Ժիւսթին Պօնֆօայի
սպանութեան վրայ այն կերպով խօ-
սելու համար՝ պէտք է որ մեղսակից
եղած ըլլաք մինչև մէկ աստիճան : Դուք
յուսացիք որ պատուաւոր կնոջ մը վրայ
ահռելի զրպարտութիւններ ընելով,
երևակայական ոճիրներու համար ամ-
բաստանելու սպառնալիքով զինքը պի-
տի վախցնէիք, և ձեզի ստակ տալու
պիտի հարկադրէիք... կը տեսնէք որ
սխալ հաշիւ ըրեր էք... : Ձեր հոս իմ
առջև ներկայութիւնը ծանր ամբաս-
տանութեան մը ներքեւ, որ կրնայ մինչև
կառափնարան զրկել զձեզ, ապացոյց
մ'է ըսածիս :

Դանիէլ իւր բոլոր ուժը ժողովեր էր սարսափեցնելու համար դէմը նստող թշուառականը, որուն առջև կը դողար։

Բայց երբորդ անդամ յոյսը պարսպ ելաւ։

— Իմ հոս ներկայութիւնս, պատասխանեց Շամպէզի, կ'ապացուցանէ պարզապէս թէ տիկին տը Ռիչմոն ինձի հետ կռուելու փորձ կ'ընէ... որպէս զի պրծի իր առջև տրուած սա երկսայրաբանութենէն. —

«Վճարեցէք, կամ գէշ է ձեր գործը»։

«Դուք ալ կ'ուզէք աղատել զայն զիս վախցնելով. իմ ըրած սպառնալիքիս ուրիշ սպառնալիքով մը պատասխանելով։ Բայց վտանգաւոր է այդ խաղը, հաւատացէք ինձի, պարոն Դանիէլ որ Բեռլին»։

Երկրորդ անգամ Շամպէզի շեշտեց դատաւորին անունը, որով վերստին ցնցեց զայն։

— Ի՞նչ է այն տիկնոջ դէմ ըրած ամբաստանութիւննիդ, հարցուց երկտասարդը, տեսնելով որ իւր ամէն ճիգն ի դերու կ'ելնէր իւր ոսոխին անդգաժութեան առջև։

— Անշուշտ ըսած է ձեզի։

— Ես ձեր բերնէն լսել կ'ուզեմ։

— Եթէ կը պնդէք այդ մասին... Բայց մտածեցէք որ իմ խօսքերս պիտի արձանագրուին պարոնէն, ըսաւ Բրէնպորնը ցուցնելով։

«Նկատեցէք որ մինչեւ հիմա բան մը չըսի ես, որուն համար շնորհակալ պէտք է ըլլաք ինձի։

Եւ ժպտեցաւ։

— Ճշմարիտ է որ, յարեց Բրէնպորնը ցուցընելով, պարոնը, որուն անունը չեմ գիտեր, ձեր քարտուղարը չէ, ապահովութեան պաշտօնեայ է, որուն գործը չէ գրիչ բռնել...։ Այս ամէնը շատ անկանոն է, բայց իմ գիտնալիք բանս չէ։

Դանիէլ այս խօսքերը լսած միջոցին պակուկքը խածեր էր, և Բրէնպորն ալ գլուխը մէկէն վեր առեր էր՝ ինչան իւր բուն հոգածութեան զոր կ'ազդէր իրեն առջեւը խաղցուած տեսարանը։

Սակայն ետ քաշուիլ անհնարին էր։

— Պոտեցէք, ըսաւ նախաքննիչ դատաւորը՝ տեսնելով որ վիճաբանիւր չէր յաջողած իրեն։

Պէտք էր գիտնալ անդունդին խո-

րութիւնը, որուն մէջ ինքզինքը սուզ-
ուած կ'զգար Ֆերնանտի հետ:

— Լսեցէք ուրեմն: Այո՛, պարոն
նախաքննիչ դատաւոր, գացի գտայ
տիկին տը Ռիչմոնդերկոմսուհին, և
գրեթէ սա խօսքերը ըսի իրեն.

«Ներկայ տարւոյս մարտ 5ին դուք
Բիէնֆիլթ գացիք, և գաղտնի ծնըն-
դաբերութիւններ կատարող Ժիւսթին
Պօնֆոա անուն մանկաբարձուհիի մը
տունը մտաք, և 17ին ապօրէն մանչ գա-
ւակ մը ծնաք: Եթէ ձեր ամուսինը, ձեր
հայրը իմանային ձեր այս ծանր յանցան-
քը, դուք ինձմէ աղէկ դիտէք հետեւան-
քուես մէկ խօսք մը միայն ունիմ ըսե-
լիք: Ապացոյցները ձեռքիս մէջն են.
բայց ես չեմ ուզեր ձեր անպատուու-
թիւնը, և պատրաստ եմ լռելու... Ա-
մենամեծ ծառայութիւն մ'է որ կ'ընեմ
ձեզի:

«Արդ, որովհետեւ ամէն ծառայու-
թիւն վարձատրութեան արժանի է,
իմ այս ընելիք ծառայութեանս գինն է
250000 Ֆրանք:

«Եւ խոստացայ մինչեւ երեք ժամ
սպասել տիկին դեր-կոմսուհիին... և
դուք վրիպեցնել պիտի տաք այս ժա-
մադրութիւնս:

Շամպէզի ճիշդ թուականներ կը ցու-
գընէր:

Այո՛, լաւ տեղեկութիւն տուած, սար-
աափեղի կերպով զինուած էր:

— Դուք ուրիշ բաներ ալ ըսիք, ա-
ւելի ծանր բաներ, ըսաւ Դանիէլ՝ ձայ-
նին սարսուռը կրցածին չափ զսպելով:
— Ի՞նչ ըսի:

— Ամբաստանեցիք տիկին դերկոմ-
սուհին թէ այդ ծնած զաւակն սպան-
նելու է, և թէ այդ տղեկին դիակն է
որ գտնուեր է մանկաբարձուհիին պար-
տէզին մէջ:

— Այո՛, այդ ալ յիշեցի ինձի ծանօթ
պատճառներով:

— Կը պնդէ՞ք այդ ամբաստանու-
թեան վրայ:

— Ամենեւին:

— Ա՛, ըրաւ Դանիէլ յուսոյ փայլակ
ձեզ ծագելով մտքին մէջ:

— Բայց միւս ըսածներուս վրայ կը
պնդե՞մ... և պատրաստ եմ ապացու-
ցանելու:

— Ի՞նչպէս:

— Այն չեմ կրնար ըսել:

— Այսինքն թէ չէք կրնար բան մ'ա-
պացուցանել, գոչեց նախաքննիչ դա-
տաւորը:

— Բայց այո՛ . . . այո՛ . . . ես իմ ըսածներուս ամէնն ալ ապացուցանելու միջոցներն ունիմ ձեռքիս մէջ :

— Կը ստէ՞ք :

— Նախ՝ կրնամ Պ. տը Ռիչմօնի և Պ. տը Ֆէրնիքի զրկել այն տեղին հասցէն, ուր տիկին տը Ռիչմօն կը տեսնէ իւր տարփաւորը :

Դանիէլի դէմքը մոխիր կտրեր էր :

— Ի՞նչ հասցէ :

— Տուէ փողոց 29 յարկը Պարոն Վառօս կոչուած մարդու մ'անունով վարձուած է . . . :

Ջախջախիչ հարուածն էր այս :

Թէեւ Դանիէլ կ'սպասէր, բայց և այնպէս ապշած մնաց կէս վայրկեանի չափ :

Սակայն անգամ մ'ալ փորձեց զարհուրեցընել այդ մարդը, որ իւր կեանքը ձեռքին մէջ բռնած էր, և անկէ ալ աւելի Ֆէրնանտի պատիւը :

Այդ ամէնը կ'ապացուցանեն թէ, ըրսաւ շչուն ձայնով մը՝ որովհետեւ սրտին յուզումէն կոկորդը կը սեղմուէր, դուք մանկաբարձուհիին տունը մտած և գողցած էք անոր թուղթերը որոց հետքը չի գտնուեցաւ :

— Թերևս, պատասխանեց Շամպէզի կէս ծիծաղով մը, տեսնելով իւր հակառակորդը, որ շուարած կը թալթըլէր ամենադժուար դիրքին մէջ ուր ինկած էր :

— Խոստովանութի՛ւն մ'է այդ, գոչեց Դանիէլ, Դուք խեղճ կինն սպանող երկու ոճրադործներէն մին էք :

— Երկրորդ անգամ է որ այդ ամբաստանութիւնը կ'ընէք ինձի դէմ, պարո՛ն նախաքննիչ դատաւոր : Բայց ապացուցանել պէտք է :

— Պիտի ապացուցանեմ, գիտնալով ոճրին գիշերն հոն գտնուելնիդ և ի՛նչ ըրած ըլլալնիդ :

Շամպէզի ցնցուեցաւ անշմարելի կերպով :

— Եւ յետո՞յ :

— Յետոյ ձեզ եղեռնադատ ատեանին պիտի յանձնեմ :

— Հրամայեցէք, եթէ կրնաք, պատասխանեց Շամպէզի թեւերը կուրծքին վրայ ծալլելով :

— Ասպարէ՞զ կը կարդաք ինձի դուք :

— Այո՛. որովհետեւ Պ. Դանիէլ տը Բէօր չի պիտի ուզէ ուզէ որ ես հրապարակաւ ըսեմ .—

«Աւասիկ տիկին տը Ռիչմօն դերկոմսուհիին հոմանին :»

ՅԱՂԹՈՂ

Լուսթիւնը յաջորդեց այս պատաս-
խանին :

Դանիէլ ընկճուեր էր ուժաթափ :

Ինչպէս մենամարտի մէջ, ուր կըռ-
ուողներէն մին ատրճանակը պարպելով՝
ոսոխը զինուած կը մնայ, Ֆէրնանտի
տարփածուն ալ ինքզինքը մատնուած
կը տեսնէր իրեն դէմ խիզախող թըշ-
ուառականին ձեռքը :

Ի՞նչ պիտի ընէր : Ահարկութիւնը
չէր յաջողած :

Ուրանա՞լ :

«Սո՛ւտ կ'ըսէք» պատասխանե՞լ :

Թշնամանե՞լ :

Ոչ մէկն օգուտ կրնար ունենալ :

Գիտէր, կրնար խօսիլ հակառակոր-
դը :

Ասկէ զատ, ազնուական և անկեղծ
բնաւորութիւններ կան, որք կը գար-
շին սուտ խօսելէ :

Ստախօսութեան մէջ, ինչ որ ալ ը-
նէ մարդ, միշտ վատ բան մը կայ, ո-
րուն չեն կրնար խոնարհիլ բարձր բը-

նաւորութիւններն ու վեհ սիրտերը :

Մանաւանդ այս պարագային մէջ
ամէն ուրաստ անօգուտ էր :

— Ֆէրնանտ կորսուած է ըսաւ մտքէն
Դանիէլ ինքզինքը մոռնալով, ինչպէս
միշտ, երբ խնդիրն իւր սիրուհոյն
վրայ էր :

Շամպէզի քանի մը վայրկեան հեշ-
տանքով ճաշակեց իւր յաղթու-
թիւնը :

— Կը հաճի՞ք, պարո՞ն նախաքննիչ
դատաւոր, թոյլ տալ ինձի որ այս
հարցաքննութիւնն ստորագրեմ, ըսաւ
վերջապէս :

Այս նոր երգիծանքին առջև Դանիէլ
բեկուն շարժում մ'ըրաւ :

— Կը հասկնաք, այնպէս չէ՞, յարեց
Շամպէզի, թէ չէք կրնար դատական
ատեաններու յանձնել զիս... և թէ
Պ. Բօլ տը Ռիշմօն իւր թշնամանեալ
պատուոյն սարսափելի համարը կը պա-
հանջէ ձեզնէ : Ես գիտէի որ տիկին տը
Ռիշմօն իմ ըրած փոքրիկ դիմումս պի-
տի իմացընէր ձեզի, և կ'սպասէի... :
Հիմայ ձեր երկուքին համար աւելի
դիւրին կ'ըլլայ իմ օրինաւոր պահանջա-
գողացնել :

— Զգուշացեք, պարո՛ն, ըսաւ վերջապէս Դանիէլ տը Գէօր՝ ծանրութեամբ տնկուելով: Մինչև հիմայ սոսկական մարդու մը կ'ուղղէիք ձեր խօսքը, ուղածնուդ պէս գործածելով անոր դէմ ձեր ձեռքն եղած գաղտնիքը, զոր ես չեմ ուզեր ուրանալ...: Այդ մարդը վախցաւ նախ, չեմ ժխտեր, բայց ոչ իրեն համար, այլ այն կնոջ համար, որուն կրնաք մնաս հասցնել մէկ խօսքով: Բայց այդ մարդուն ետեւը դատաւոր կայ, կիրքին ետեւը պարտականութիւնը կայ: Եթէ ես տիկին տը Ռիչմոն դերկոմսուհիին տարփածուն եմ, նախաքննիչ դատաւորի պաշտօն ունիմ: Ոճիր մը գործուած է...: Ինձի յանձնուեցաւ փնտռել գտնել գործողները և արդարութեան յանձնել: Ո՞վ ըսաւ ձեզի թէ ես պատրաստ չեմ մարդը դատաւորին զոհելու, կիրքս պարտականութեանս զոհելու: Ո՞վ ըսաւ ձեզի թէ ես աւելի նախամեծար չի պիտի համարիմ մահն ինձի և մինչեւ իսկ սիրուհիս համար, քան պարտազանցութիւնն ու անպատուութիւնը: Ո՞վ ըսաւ ձեզի թէ ես քաջութիւն չպիտի ունենամ ձեզի պատասխանելու:

«Ինչք առէք իմ և տիկին տը Ռիչմոնի պատիւը. ես ալ ձեր գլուխը կ'առնեմ դահլիճին առջև կը նետեմ... վասն զի ժիւսթին Պօնֆօան սպաննողներուն մէկն էք:»

Այսպէս խօսած ժամանակ Դանիէլ տը Գէօր ոտքի վրայ ելեր էր:

Իւր դժգոյն դէմքը համակերպող դիւցազնութեան մ'արտայայտութիւնը առած էր:

Ձայնին մէջ կ'զգացուէր խորտակուող սրտի մը մորմոքն, և ամէն բան իւր պարտականութեան զոհելու պատրաստ մարդու մ'առնական որոշումը:

Այնչափ յստակ, այնչափ ջինջ և այնչափ գեղեցիկ էր այս երեւոյթը, որ ժիւլ Շամպէզի առաջին անգամ սրբտառանջութեան թեթեւ սառսուռ մ'զգաց:

Արդարեւ Շամպէզի գործակից եղած չէր մանկաբարձուհիին սպանութեան, բայց նոյն միջոցին պարտէզին մէջն էր, բայց զոհին ստակն ու թուղթերը գողցեր էր, բայց համախոհ կամ մեղսակից եղեր էր գործուած ոճրին առջեւ պահած լուրթեամբն, և ետքն ալ ոճրագործին ուղղած ազդարարութեամբ:

բը: Ի՞նչպէս պիտի ելնէր մէջէն՝ եթէ Դանիէլ բաւական գերի ըլլալով իւր պաշտօնին՝ զինքը եղեռնադատ ատեանին յանձնէր:

— Նորէն կը հաւաստեմ ձեզ, պարո՛ն, թէ կը սխալիք, ըսաւ քաղցրութեամբ. ոճրագործն ես չեմ և կրնամ հաստատել:

— Կը ճանչէ՞ք զայն, ըսաւ յանկարծ Բրէնպորն որ չէր դադարած աչքին պոչովը զննելէ ժիւլ Շամպէզին, և ըսկիզբէն ըսեր էր ինքնիրեն իւր սովորական սրամտութեամբ.

«Այս մարդն ոճրագործի ոչ դէմքն ունի, ոչ շարժուածքը:

— Թերեւս, ըսաւ Շամպէզի:

— Ո՞վ է:

— Չեմ կրնար անունը ըսել, պատասխանեց Շամպէզի, որ չէր ուզեր մատնել Անթօան Քօսատը, և ընթերցողք գիտեն պատճառը:

— Նկարագիրը տուէք ուրեմն:

— Դուք ալ գիտէք ինձի չափ, պարո՛ն, շարունակեց Շամպէզի Բրէնպորնի ուղղելով խօսքը, որովհետեւ ճշդիւ տրուեցաւ ձեզ այն խանութպանին կողմէ, որ ժիւսթին Պօնֆօան խեղ-

դելու և ետքն ալ կախելու գործածուած չուանը ծախեր էր:

Բրէնպորն ապշած մնաց:

— Ըսէք անունը, գոչեց Դանիէլ:

— Ի՞նչ օգուտ ունի:

— Պէտք է որ արդարութեան ձեռքը մատնուի: Ատով միայն կրնաք դուք ալ ձեզ արդարացընել:

Շամպէզի ժպտեցաւ:

Դանիէլ նորէն վախցաւ:

Սկսեր էր գիտնալ Շամպէզի ժպտաներուն նշանակութիւնը:

— Եթէ անունը տայի, ըսաւ, ամէնէն առաջ դուք պիտի ուզէիք մոռնալ. . . վասն զի զայն ալ չի պիտի կրնայիք, չի պիտի համարձակէիք արդարութեան մատնել:

— Ի՞նչ պատճառաւ: Ես երբէք իրաւախոհ եղած չեմ իմ պարտականութեանս հետ:

— Այն պատճառաւ որ ձեզի համար ձեր պարտականութեան, և անոր համար ալ կառափնարանին միջեւ ընտանիքի մը խայտառակութիւնը պիտի կանգնի, ընտանիքի մը, որ շատ մօտ է ձեզի. . . և հետեւապէս այդ ոճրագործին միայն գլուխը չիլնար:

Դանիէլ անոր վրայ սեւեռեց իւր
խոլոռ աչերը:

Ի՞նչ կը նշանակէին այս երկդիմի ըս-
պառնալից խօսքերը: Ի՞նչ նոր գաղտ-
նիք կար այս մարդուն քով:

Պահ մը կարծեց թէ խելքին պիտի
գար:

Եւ Շամպէզիի վրայ վազելով.

— Եթէ սպաննեմ ձեզ, գոչեց ձեռքերն
անոր երկնցնելով և շրթունքը փըր-
փրած:

Շամպէզի ետ քաշուեցաւ:

Իրէնպորն ոտքի վրայ ելեր էր որ-
պէս զի բռնէ նախաքննիչ դատաւորը:

— Օգուտ չունենար ձեզի, պատաս-
խանեց Շամպէզի: Ես գործս կարգի
դրած եմ, վասն զի գիտեմ որ կեանքս
վտանգի մէջ է: Եթէ այսօր մեռնիմ,
երկու օր ետքը իմ ամէն ըսածներուս
ապացոյցները տը Ծէրնիք կոմսին ձեռ-
քը պիտի հասնին:

Դանիէլ դողաց:

Խելքը գլուխն եկաւ:

— Լա՛ւ, պարոն, ըսաւ յամբարար:
Յաղթուեցայ: Դուք լուռ կենալու հա-
մար առաջարկեցիք...

— Երկու հարիւր յիսուն հազար ֆը-

րանք... տիկին Տը Ռիչմօն դերկոմ-
սուհիին համար:

— Բայց այդ ստակը չի կրնար քանի
մը ժամու մէջ վճարուի:

Շամպէզի պատասխանելու վրայ էր...
Յանկարծ քովի զարդախուցին դու-
ռը բացուելով, Ծէրնանտ երեւցաւ:

Հակասակ իւր չափազանց դժգու-
նութեան, հանդարտ և ինքզինքին
տէր կը թուէր:

Շամպէզիի մօտենալով, իւր երեւ-
նալէն առաջ եկած լուութեան մէջ:

— Պարո՛ն ըսաւ անոր, ութ օր շնոր-
հեցէք ինձի, և այն ութ օրուան մէջ,
պատուոյս վրայ խօսք կուտամ ձեզ թէ
ձեր լուութեան համար պահանջած եր-
կու հարիւր յիսուն հազար ֆրանքը
պիտի ստանաք:

Շամպէզի վարանեցաւ վայրկեան մը.
Բայց տեսնելով որ գործը մինչեւ յե-
տին ծայրը մղած էր, և աւելի հեռու
մղելով կրնար մեծ չարիք մը կամ ա-
ղէտ մ'առաջ բերել, որուն մէջ իւր
չահերն ալ կորնչէին:

— Կը հաճիմ, ըսաւ:

— Այն ստակին փոխարէն կը յանձնէ՞ք
ինձի այն ապացոյցները զոր ունիք
ինձի դէմ:

—Այո՛, տիկին:

—Ուրեմն երթաք բարով: ութ օրէն կը տեսակցինք:

—Ո՛ւթ օրէն:

Եւ Շամպէզի մեկնեցաւ աղատ և յաղթող, ինչպէս որ կ'սպասէր:

ՈՒՐ ԿԸ ԲՍՅԱՏՐՈՒԻՆ ԺԻԻԼ ՇԱՄՊԷՉԻԻ ՎԵՐՋԻՆ ԽՍՄԲԵՐԸ

Դանիէլ ինկեր էր իւր աթոռին վրայ, ճակատը ձեռուրներուն մէջ բռնած:

Ֆէրնանտ քովը գնաց:

—Օ՛ն, քաջ եղիր, ըսաւ քաղցրութեամբ, բան մը կորսուած չէ:

—Ո՛չ, պատասխանեց Դանիէլ խուլ ձայնով մը: Ո՛չ, բան մը կորսուած չէ, եթէ գործը միայն Դանիէլ տը փէօրի և Ֆէրնանտ տը Ռիչմոնի վրայ ըլլար: Այդ թշուառականին մինչև ութ օր պահանջած երկու հարիւր յիսուն հազար ֆրանքը կրնայ գտնուիլ...: Եթէ հարկ ըլլայ, բոլոր ունեցածս կուտամ... առանց հոգ ընելու...: Բայց գալով դատաւորին, գալով այն մարդուն, ու

բուն ահագին պաշտօն մը յանձնուած է, որուն կատարումը իւր պատուոյն և խղճին վստահուած է, բոլորովին կորսուած է...:

—Ինչո՞ւ:

—Այդ մարդը կը ճանչէ ոճրագործը. անոր գործակիցն է մինչև աստիճան մը...:

«Հոս, իմ սենեակիս մէջն էր... Թողուցի որ գնաց՝ արհամարհելով ընկերութիւնը, արդարութիւնն ու օրէնքնէրը...»

Ֆէրնանտ վայրկեան մ'անոր նայեցաւ, խորին և վշտահար գուլթով մը:

Կը հասկնար այդ խեղճին տառապանքը: Կը հասկնար այդ պարկեշտ մարդուն հոգիին մէջ անցածը, որ իւր սիրած կինը փրկելու համար ամէնէն մեծ և ամէնէն դժուարին զոհողութիւնը կ'ընէր:

—Ուրեմն, ըսաւ յանկարծ իւր արտայայտիկ սիրուն գլուխը վեր առնելով, կատարէ պարտքդ... ինչ և ալ ըլլայ հետեւանքը... ես ամէն բանի պատրաստ եմ:

Դանիէլ մէկէն ուժով մը բռնեց անոր ձեռքերը:

— Լռէ՛, գոչեց, լռէ... ո՛չ, ո՛չ,
երբէ՛ք:

— Ես ալ համամիտ չեմ պարոն նա-
խաքննիչ դատաւորին, ըսաւ անդիէն
Բրէնպորն, որ մինչև այն ժամանակ
լուռ կեցած էր, և երկու տարիաւոր-
ներն ալ մոռցած էին դայն:

Դանիէլ և Ֆէրնանտ մէկէն դարձան
անոր նայեցան:

— Այդ ժիւլ Շամպէզին, յարեց ու-
տիկանը, մասն չունի ժիւսթին Պոն-
ֆօայի սպանութեան մէջ. տարակոյս
չունիմ: Ես շատ մարդասպաններ և ա-
մէն տեսակ սրիկաներ տեսած ըլլալով,
կը ճանչեմ գանոնք...: Այդ մարդը
բաւական լաւ կրթութիւն առած ըն-
կերական մարդ մ է, անկեալ վիճակի
մէջ: Իւր մոլութիւնները նախ թշուա-
ռութեան և ապա յուսահատութեան
մէջ ձգած են զինքը...: Օր մը ամէն
ամօթ մէկ կողմ դնելով՝ որոշեց ամէն
միջոց ի գործ դնել, իւր առջի դիրքը
վերստին ձեռք անցունելու համար:
Դիպուածը... դիպուած մը, գոր ես
վրաս կ'առնեմ իմանալ, քանի մը կա-
րեւոր գաղտնիք անցուց ձեռքը... Եւ
կ'ուզէ օգուտ քաղել անոնցմէ՝ հարըս-
տութիւն ձեռք անցունելու համար:

«Մինչեւ անձնասպանութեան կրնայ
մղել ձեզ ստակ շահելու համար: Եթէ
պէտք տեսնէ, ամօթ և նախատինք
կրնայ սփռել բոլոր աշխարհի վրայ...
վերջապէս ոչ մէկ չարութենէ, ոչ մէկ
վատութենէ չի քաշուիր... բարոյական
կարգի մէջ: Դանակի հարուած տուող
մարդ չէ և երբէք տուած չէ. ձեռքո-
վը՝ ինչպէս որ կ'ըսեն՝ ճանճ մ'անգամ
չի մեռցըներ: Լեզուովը կամ անստո-
րագիր նամակներով համօրէն աշխար-
հի կէսը խողխողել կուտայ միւս կէ-
սին: Ես կը ճանչեմ այդ տիպարը:

— Կրնաք իրաւունք ունենալ, Բրէն-
պո'րն, մրմռաց Դանիէլ տը Բէօր,
բայց այն ժամանակ ինչո՞ւ ոճրագոր-
ծին անունը չի տար, եթէ ինք ան-
մեղ է:

— Ա՛հ, ես կը վախնայի որ կուտայ,
ըսաւ Ֆէրնանտ դողալով:

— Կը վախնայի՞ր, հարցուց Դանիէլ
զարմանքով:

— Այո՛, չէ՞ք յիշեր ի՛նչ ըսաւ: Դեռ
միաքս են բրած խօսքերը: Ա՛յնպիսի
սպառնալիքներ կը պարունակէին, որք
կը զարհուրեցընեն զիս, վասն զի այդ
թշուառականը ընող մարդ է... ըրած

սպառնալիքներէն ոչ մին պարապ չե-
լաւ մինչեւ հիմա :

« Դուն իսկ, Դանիէլ, աւելցուց
Ֆէրնանտ կամաց ձայնով, չի դողա-
ցի՞ր երբ ըսաւ թէ՛ ոճրագործին ա-
նունը եթէ տար, դուն չի պիտի հա-
մարձակէիր, չի պիտի կրնայիր զայն
ձերբակալել տալ :

— Այո՛, կակազեց Դանիէլ, բայց
ի՞նչ կը կարծես դուն :

— Բան մը չեմ կարծեր, այլ միայն
կը վախնամ : Չըսա՞ւ թէ ոճրագործին
նկարագիրը ձեր քովն է :

— Այո՛ :

— Կրնա՞ք ցուցընել ինձի :

— Աւասիկ, ըսաւ Դանիէլ թղթակա-
լին մէջէն թուղթ մը հանելով և Ֆէր-
նանտի երկնցընելով :

Նա ալ մէկէն առաւ, աչքէ անցուց,
և սարսափի ճիչ մ'արձակեց :

— Ֆէրնանտ, Ֆերնանտ, ի՞նչ կայ,
ի՞նչ եղար, գոչեց Դանիէլ վրան վա-
զելով որպէս զի թող չի տար որ մա-
րէր իյնար :

— Նախազգացումնե՛րս . . . նախազգա-
ցումնե՛րս, կակազեց դեռատի կինը :

— Կը ճանչէ՞ք այդ նկարագրին տէ-
րը, հարցուց Բրէնպորն :

— Ո՛հ, դժբա՛ղդ, դժբա՛ղդ եմ, գո-
չեց Ֆէրնանտ հեկեկալով, անիծուա՛ծ
ենք : Ես գիտէի որ այդ մարդուն ըս-
պառնալիքը պարապ չէր : Ա՛հ, տէ՛ր
Աստուած, ի՞նչ պիտի ըլլանք :

— Ֆէրնանտ, Ֆերնանտ, հասկըցու
տեսնեմ ի՞նչ է, կ'ըսէր Դանիէլ, անոր
ձեռքերը սեղմելով՝ և այլայլեալ դէմ-
քէն ճշմարտութիւնը գուշակելու ջա-
նալով :

— Ո՛չ, ո՛չ, կը գոչէր յուսահատու-
թեամբ, ո՛չ, մի՛ հարցաքննեք զիս . . .
չի պիտի ըսեմ :

— Ինձի՞ ալ :

— Բեզի՛ ալ, ո՛չ մէկու, բնա՛ւ մէ-
կու :

Ճանչեր էր Անթօան ֆօստան ըլ-
լալը :

Անունը տա՛լ, ամբաստանել էր,
մատնե՛լ էր իւր մայրը, Տիան տը Ֆէր-
նիք կոմսուհին :

Ճշմարտութիւնը, ահաբեի ճշմարտու-
թիւնն յանկարծ երեւցեր էր իրեն :

Եթէ Անթօան սպաններ էր Ժիւսթին
Պօնֆօան, Անթօան որ կոմսուհիին չար
հոգին էր, ուրիշ նպատակով բրած չէր
կրնար ըլլար, բայց միայն իւր կաթ-
քոյրն ազատելու համար :

Մօրը ծածկատրուրդ ուղեւորութիւնը կուգար միտքը...: Ան ալ գացեր էր մանկաբարձուհիին տունը...: Եւ իւր այրը, Տը Ռիչմոն դերկոմսը, չէր կրնար չի գիտնալ...: Հետեւապէս ան ալ խորհրդակից էր: Սպաններ էին ժիւսթին Պօնֆօան, որպէս զի վատ գաղտնիք մը թաղէին անոր հետ...: Ամէն տեղ, Ֆէրնանտիչուրջը, վրան, իրեններուն վրայ խոհեր և արիւն:

Ի՞նչ ըսէր:

Ի՞նչ ընէր:

Տեսնելով Ֆէրնանտի վարանումները, տեսնելով անոր ներսը մղուած սոսկալի պայքարը, յուսահատական խուճապը, որ խորոտած գեղեցիկ աչերուն մէջ կը կարդացուէր, ճշմարտութիւնն ու ժգնապէս փայլատակեց նախաքննիչ դատաւորին մտքին մէջ:

— Օ՛հ, սարսափելի՛ բան է, մրմուռաց Դանիէլ ինքնիրեն՝ իւր այդ մտածութեան պատասխանելով:

— Մի՛ աշխատիր հասկնալու, կ'ըսէր Ֆէրնանտ հեւալով:

— Ես հասկցա՛յ, պատասխանեց երիտասարդը՝ խլելով թուղթը Ֆէրնանտի

ձեռքէն, և նորէն կարդալով նկարագիրը:

— Ճշդիւ ա՛ն է, ըսաւ վերջապէս: Թէև երեսը չեմ տեսած, բայց ան միայն կրնայ ըլլալ: Կը յիշեմ հարաւային արտասանութիւնը...: Կը ճանչէր մանկաբարձուհին... և մերթ ընդ մերթ կուգար անոր տունը...:

— Լռէ՛, լռէ՛, կ'ըսէր ու կրկնէր Ֆէրնանտ, ձեռքը տարփածուն բերնին վրայ դնելով, որպէս զի խեղդէր անոր խօսքերը:

— Անթօան ֆօսա՛տն է, շարունակեց Պ. տը Բէօր, բան մը մտիկ չընելով այլեւս: Կը հասկնամ իրողութիւնը...: Եւ անոնք որ սպաննելու հրամանը տուին այդ Անթօան ֆօսատին... ուրիշ մարդիկ չեն, բայց միայն քու ամուսինդ, Պ. տը Ռիչմոն... և մայրդ, տը Ֆէրնիք կոմսուհի՛ն:

— Շնորհ, կակագեց դեռատի կինը, աթոռի մը վրայ ինկաւ չի կրնալով այլ եւս ոտքի վրայ կենալ:

Բրէնպորն ինքն ալ, հակառակ իւր վարժութեան ամէն տեսակ տառամներու, դժգուններ ու յուզուեր էր:

— Ա՛հ, թշուառականները, շարունա-

կեց նախաքննիչ դատաւորը: Այդ ան-
պատիւ մարդը... որ քեզ առաւ իմ
ձեռքէս, որ քու կեանքդ կորսնցուց,
որուն երեսէն մեր կեանքը մշտնջենա-
ւոր ցաւ մը, կսկիծ մը, թախիծ մը
պիտի ըլլայ, վասն զի մեզ կը զատէ
իրարմէ... յաւիտեան կ'արգիլէ մեզի,
ազատաբար ազնուաբար, գոռոզաբար,
ճակատաբաց միանալ իրարու հետ աշ-
խարհի աչքին առջեւ: Եւ ան ալ, որ
քեզ ծախեց իւր տարփածուն... իւր
խայտառակութիւնը ծածկելու և իւր
մեղապարտ զուարճութիւնները պահ-
պանելու համար:

— Գթութիւն... գթութիւն անոնց
վրայ, գոչեց Ֆէրնանտ աղերսաւոր
ձայնով:

— Ի՞նչ դահիճներո՞ւղ վրայ:

— Զանոնք զարնե՛լ, մեզ զարնել է,
յարեց պաղատագին:

Այս խօսքին վրայ Դանիէլի զայրոյ-
թը ինկաւ:

— Ծշմարիտ է, ըսաւ յուսահատելով:
Ա՛հ, խենթենալու բան է:

— Եւ սակայն, յարեց ինքնիրեն խօ-
սելու պէս, մենք ի՞նչ ոճիր գործե-
ցինք: Զիրար սիրեցինք: Բո՞ւկդ է

յանցանքը, ի՞մս է, եթէ ա-
մուսնացուցին քեզ, զոհեցին այնպիսի
մարդու մը զոր չէիր կրնար յարգել...
զոր չէիր ընտրել երբէք, եթէ քու
ծաղիկ հասակդ, գեղեցկութիւնդ,
խելքդ, սիրտդ, հոգիդ ու մարմինդ
վատ առուտուրի մը նիւթ ըրին՝ ան-
խոստովանելի ամօթներ ծածկելու հա-
մար: Բո՞ւկդ է յանցանքը, ի՞մս է...:
Եւ պէտք է որ մեզ այս վիճակին մէջ
դնող այդ ամէն չարութեանց հետե-
ւանքը մեր անմեղ գլուխներուն վրայ
իյնայ այսօր: Ասկէ զատ, եթէ մենք
զիրար ճանչցած ու գտած չըլլայինք
ալ, դուն դարձեալ այս վիճակին մէջ
պիտի գտնուէիր, քանի որ տը ֆէրնիք
կոմսուհիին աղջիկն ես, և այս ոճրին
հեղինակն ան է...:

Եւ Դանիէլ՝ ինքիրմէ ելած՝ ձեռքե-
րը կը գալարէր սրտին ցաւէն ու յու-
սահատութենէն:

— Այդ ամէնը ճշմարիտ է, ըսաւ
Ֆէրնանտ, բայց համերաշխութիւն մը
կայ զոր չենք կրնար երբէք նետել
մեր վրայէն: Միտքդ բեր անգամ մը
խեղճ հայրս. միտքդ բեր մեր զաւա-
կը. միտքդ բեր զիս:

Յանկարծ ոտքի վրայ ելաւ բոցա-
փայլ աչերով .

— Սակայն իրաւունք ունիս, գոչեց
բարկացայտ : Բաւակա՞ն է : Չենք կրը-
նար տաւապիլ միշտ ուրիշներու հա-
մար, ուրիշներու երեսէն : Սոսկումը
զիս պիտի խենթեցընէ : Դուն դատա-
ւոր չես այլ եւս, մոռցիր դայն, հրա-
ժարական տուր և փախչի՞նք :

— Փախչի՞նք, կրկնեց Դանիէլ :

Բրէնպորն մօտեցաւ կամացուկ մը :

— Անհնա՛ր է, ըսաւ :

Այս հանդարտ ձայնը ցնցեց երկու
տարփաւորները : Մուգեր էին թէ եր-
րորդ անձ մը կար հոն :

— Անհնա՛ր է, կրկնեց Բրէնպորն .
փախչիլը մատնել է զձեզ, մատնել է
ձեր գաղտնիքը, ձեր իններուն գաղտ-
նիքը : Շամպէզի վրիպելով իւր յոյսե-
րէն բերանը կը բանայ, և վրէժ առ-
նելու համար ձեզ կ'ամբաստանէ իբրև
որդեսպան : Արդարեւ դուք կ'ապացու-
ցանէք ձեր անմեղութիւնը, որովհե-
տեւ զաւակնիդ ողջ է, բայց գայթակ-
ղութեան առաջքը չէք կրնար առնել :

— Եթէ վճարենք պահանջը . . . ընդ-
միջեց Դանիէլ :

— Լաւ, բայց այն ժամանակ ուրիշ
դատաւորի մը կը յանձնուի քննու-
թեան շարունակութիւնը . . . ճշմարտու-
թիւնը երեւան կ'երևնէ, Պ. տը Ռիչմօն
և տիկին տըմէրնիք կը ձերբակալուին
Անթօան Բօսատի հետ, և ինչ որ դուք
կ'ուզէք ծածկել, երեւան կ'երևնէ յայտ-
նապէս :

Ֆէրնանտ և Դանիէլ նորէն ընկճե-
ցան :

— Եւ հայրս կը մեռնի ամօթէն ու
սրտին ցաւէն, մրմնջեց դեռատի կինը :

— Ուրիշ մահ մը, տիկի՛ն, կրնայ ա-
ռաջքն առնել տը Ֆէրնիք կոմսին մեռ-
նելուն, և թող չիտալ որ ճշմարտու-
թիւնն հրապարակ ելնէ :

— Ուրիշ մահ մը . . . կակազեց դեր-
կոմսուհին, վախնալով հասկնալ :

— Այո՛, տիկի՛ն . . . շատ յանցաւոր-
ներ տեսնուած են բարձր դասակար-
գէ . . . որք պատիժէ ազատ մնալու և
իրենց անուան պատիւը փրկելու հա-
մար անձնասպան եղած են :

— Մա՞յրս . . . ըսաւ Ֆէրնանտ տկար
ձայնով մը :

— Դուք տուիք անունը :

Դանիէլ և Ֆէրնանտ սարսուեցան :

—Կը մնան ուրիշ երեք անձ, շարունակեց Բրէնպորն, նախ Պ. աը Ռիչմոնդերկոմսը՝ ձեր ամուսինը, Երբ կոմսուհին մեռնի, շատ հաւանական է որ ապացոյց չի մնար անոր դէմ... որովհետեւ անձամբ բան մ'ըրած չերելիր... Միայն ապօրէն յարաբերութիւնը կայ տիկին աը Ֆէրնիքի հետ, որ կրնայ կասկած հրաւիրել իւր վրայ... բայց անոր անհետանալէն ետքը ո՞վ կը համարձակի այլեւս խօսքն ընելու:

—Բայց թէ որ Անթօան ֆօսատ բռնուելով՝ ամբաստանէ...
—Չրպարտութիւն է ըրածը, կ'ըսեն... կամ իրեն դէմ վճռուելիք պատիժը թեթեւցրնել տալու խոստումով կը լռեցընեն: Ասոր համար ալ պէտք կ'ըլլայ որ Պ. Դանիէլ աը ֆէօր նախաքննիչ դատաւոր մնայ:

—Ա՛հ, գէշ բան, մրմռաց Դանիէլ:

—Ամէն օր կ'ըլլայ այդ բանը, պարոն նախաքննիչ դատաւոր, յարեց Բրէնպորն, և եթէ ընկերական շահու տեսակէտն ի նկատի ունենաք, հաւատացէք ինձի, թէ այնպիսի պարագաներ կան, ուր աւելի նախամեծար, աւելի օգտակար կը համարուի չըսել ամէն բան, չիմանալ ամէն բան, որպէս զի անմեղներու ալ ծանր վնաս չի հաս-

նի, ինչպէս՝ օրինակի համար՝ Պ. աը Ֆէրնիք կոմսին:

—Եթէ Անթօան ֆօսատ գրաւոր ապացոյցներ ունի, հարցուց Ֆէրնանտ:

—Ես կ'առնեմ ձեռքէն, ըսաւ Բրէնպորն և յարեց:

—Կը մնայ Ժիւլ Շամպէզի... Ան ալ ստակի զօրութեամբ կը լռէ:

—Պէտք է որ Անթօան ֆօսատ ձերբակալուի, ըսաւ Դանիէլ:

—Եթէ չի փախչի, յարեց Բրէնպորն:

—Ի՛նչ սոսկալի փորձութեան մէջ ինկած եմ, ըսաւ Դանիէլ, չի համարձակելով սակայն հակառակիլ Բրէնպորնի խորհուրդներուն որք Ֆէրնանտի փրկութիւնն էին:

—Չի փախչիր, պատասխանեց Ֆէրնանտ: Ես կը ճանչեմ զինքը. կոմսուհիին կամակատար ստրուկն է: Միայն անոր կը հնազանդի... Մանաւանդ չեմ կարծեր որ ամբաստանէ զայն:

—Աւելի լաւ: Բայց ապացուցուած չէ այդ: Ինչ որ ալ ըլլայ, պէտք է գտնեմ զայն, և այս վայրկեանէն պէտք է ետեւէն իյնամ: Ո՞ր կը բնակի:

—Չեմ գիտեր:

— Տիկին տը Ֆէրնիք անշուշտ գիտէ . . . : Եւ անոր միջոցով դուք ալ կրնաք գիտնալ, տիկին :

— Մայրս տեսնե՛լ . . .

— Պէ՛տք է, դուք միայն կրնաք անոր յայտնել ճշմարտութիւնը, ամբողջ ճշմարտութիւնը . . . հասկցնել իրեն թէ դիւցազնական որոշում մը միայն կրնայ զինքը փրկել յետին խայտառակութենէ . . . :

— Ահռելի՛ բան :

— Հարկ է սակայն :

— Մայրս . . .

— Եւ ձեր հայրը, տիկին, որ բոլորովին անմեղ է . . . :

— Եւ զաւակս, յարեց Ֆէրնանտ : Բաւական է իւր ծնունդը . . . պէտք չէ որ . . . ա՛հ, չափազանց սոսկալի է :

Եւ դողաց :

— Եւ քեզ, Դանիէ՛լ, աւելցուց գողորիկ ձայնով մը, որ այս ամէն խայտառակութեանց սպառնալիքը կը կրես, զի ս սիրած ըլլալուդ համար . . . որուն կեանքը խորտակուելու վտանգին մէջ է, որուն խիղճը կը մաքառի հոգիին հետ :

«Ձեզ ամէնդ ալ պիտի ազատե՛մ :»

Եւ դուրս նետուեցաւ նախաքննիչ դատաւորին սենեակէն, ժամանակ չի թողլով Դանիէլի որ պատասխան մը տար :

— Ֆէրնանտ, գոչեց, ի՞նչ ընելու կ'երթայ :

— Իւր պարտքը կատարելու, պարո՛ն, պատասխանեց Բրէնպորն բռնելով Դանիէլը : Մեք ալ մեր պարտքը կատարենք, զինքը փրկելու համար, ինչպէս որ ինքը կ'երթայ աշխատիլ իւր հայրը, զաւակը և ձեզ փրկելու համար :



ՈՐ ԿՂՊԱՆՅՈՒՅԱՆԷ ԹԷ ԱՆԳԾԵԼԻ ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ ԿՐ ԳՏՆՈՒԻՆ

Շամպէզի, ինչպէս որ նախատեսած էր, ազատ և յաղթական դուրս կ'ելնէր նախաքննիչ դատաւորին քովէն :

Սակայն զգացած ուրախութիւնն անխառն չէր :

Դանիէլի հետ պայքարը բաւական քուռն եղեր էր :

Բանի մ'անգամ զգացեր էր թէ իւր փրկուլթիւնը դերձանէ մը կախուած

էր, զոր իւր ոսոխին պարկեշտութիւնը խզել կ'սպառնար:

Ասկէ զատ, որչափ և աներես թըշուռառական մ'էր ինքը, որչափ և զուրկ էր բարոյական իմաստէ, դարձեալ լառագոյն անցեալէ մը մնացած մարդասիրական զգացումի տարտամ նշոյլ մը կար սրտին մէջ, որով հասարակ մահկանացուաց շատերէն ոչ վատթարագոյն էր. ու ոչ ալ լառագոյն:

Շամպէզի մոլի մարդ էր, կենաց վայելքի մոլեգնաբար ծարաւի, ծոյլ, իւր ապրուստն աշխատութեամբ հայթայթելու անկարող, իւր կրից, բաղձտնաց և հաճոյից գերի, բայց ճիւղ մը չէր:

Բրէնպորն լաւ դատեր էր գայնձեռքով ճանճ մ'անդամ մեռցնող մարդ չէր:

— Օձիքս ձեռք չի տուի, կ'ըսէր ինքնիրեն, վարպետութեամբ խաղացի և վաստակեցայ, եւ պէտք էր այնպէս ըլլար, քանի որ յաղթող թուղթերը ձեռքս էին: Ինձի բան մը չեն կրնար ընել և չպիտի ընեն...: Զիս ազատ թողունին յայտնի ապացոյց մ'է...:

Եւ ինչո՞ւ չի կատարեն ուղածս: Աշ-

քա՞տ են: Ո՛չ, բայց անձնասիրութիւննին կը վերաւորի: Դուրսէն մէկն իրենց գաղտնիքին ծանօթ ըլլա՛յ և զիրենք իւր կամքին տակն առնէ՛: Բնականաբար զիրենք կը զայրացընէ և միանգամայն կ'ահարեկէ: Սակայն ի՞նչ է իրենցմէ ուղածս: Քիչ մ'ստակ... կրնան ինքզինքնին ծախու առնել...: Ես գէշութիւն մը չեմ ըներ իրենց:

«Ընդհակառակն կ'իմացնեմ իրենց սպառնացող ազնապը, այն վտանգը, որուն մէջ պիտի իյնային շնորհիւ այդ Դանիէլ տը քէօրին պարտաճանութեան, որ մէկ օրէն միւսն իւր ճանկը պիտի ձգէր Անթօան Քօստոն, առանց ընաւ միտքէն անցնելու թէ իւր կորուստին պիտի դիմէ՛ր: Երկու հարիւր յիսուն հազար ֆրանք այս ծառայութեանս համար: Մեծ բան մը չէ, բայց դժուարաւ պիտի գտնեն...: Անոր համար է որ Տը Ռիչմօն դերկոմսուհին ութ օր ժամանակ խնդրեց...: Տարակոյս չի կայ որ պիտի գտնեն ըստակը և ութ օրէն առաջ պիտի վըճարեն:

«Իմ ալ ուղածս այս է...:

«Թող բռնեն իրենց տուած խօսքը, ես ալ իմս կը բռնեմ»:

«Պէտք է ուղղամիտ ըլլալ դորձին մէջ: Երբ իմ փոքրիկ հարստութիւնս կազմուի, իրենց կը յանձնեմ ապացոյցներս. և այն ժամանակ թող երթան ինքզինքնին ուրիշ տեղ կախել տան»:

«Ասով հանդերձ կը համակրիմ սիրուն դերկոմսուհիին... որ ստուգիւ գեղեցիկ է և խիստ պարկեշտ երեւոյթ մ'ունի, հակառակ Պ. Դանիէլ տը Բէօրի հետ ունեցած յարաբերութիւններուն...: Բայց երբ կին մ'ամուսին մը կ'ունենայ որ իւր զոքանչին հետ կը խաղայ... խնդիրը կը փոխուի...: Այդ կինը կը պաշտէ իւր հայրը, կը պաշտէ իւր տարփածուն, կը պաշտէ իւր զաւակը... որ Տուէ փողոցի 29 թիւ տան մէջ կը խնամուի գգուանքով ու գուրգուրանքով...: Ես այդ անձանց որ և է գէշութիւն չեմ ըզձար...: Թող ես ապրուստի միջոց ունենամ... աշխարհի ամէնէն պարկեշտ մարդն եմ»:

Այս խորհրդածութիւններով Շամպէզի անդորրեց իւր առածիդ խղճին թեթեւ խայթերը. Դանիէլ տը Բէօրի և Ֆէրնանտ Տը Ռիչմօնի մասին, և ըսկսաւ Տիան տը Ֆէրնիք կամսուհիին վրայ մտածել:

Հոն տեսարանը քիչ մը տարբեր եղած էր:

Կը յիշեն մեր ընթերցողները թէ ժիւլ Շամպէզի Ֆէրնանտի հետ առաջին տեսակցութենէն ետեւ Տը Ֆէրնիք կոմսուհիին ներկայացեր էր՝ նախաքննիչ դատաւորին քով կանչուելէն առաջ:

Մեք Տիանը թողուցեր էինք այն վայրկեանին, ուր Բօլ տը Ռիչմօնի ապրսպրեր էր ծածկարար դիտել այն անծանօթ մարդը որ իրեն ներկայանալ կ'ուզէր, և ետեւէն երթալով սովորիլ բնակավայրը: Այս ապսպրանքէն ետեւ՝ Տիան՝ հայլիին վրայ ակնարկ մը նետեց իւր յաղթելու վարժուած հրմայքին փայլը տեսնելու համար, և յետոյ իւր զարդախուցը գնաց:

Բիւի-տը-Լ'Էրմիթի մարդը, ինչպէս որ ծանուցեր էր ինքզինք, կ'սպասէր հոն:

Այն փոքրիկ սենեակը մտած միջոցին, առաջին նայուածքով հասկցաւ թէ խաբուած չէր. ճշդիւ այն մարդն էր որ զինքը ազատեր էր քանի մ'օր առաջ:

—Օ՛, դուք էք, պարո՛ն, գոչեց՝ անոր մօտենալով ձեռքերն երկնցուցած:

— Ինչպէս որ կո տեսնէք, տիկին, պատասխանեց Շամպէզի թեթեւ մը խոնարհելով և պաղ լուծեամբ պատասխանելով իրեն մատուցուած ձեռնասեղմումին :

— Ի՞նչ, ի՞մ փրկի՛չս, յարեց Տիան ջանալով բռնկցնել զայն իւր բոցազան նայուածքովը : Կը յուսայի գտնել ձեզ որ մը... շնորհակալ ըլլալու համար ձեր այն ասպետական վարմունքէն... այն դիւցազնական քաջութենէն, որով ստոյգ վտանգի մը դէմ խիզախեցիք, օգնութեան հասնելու համար կնոջ մը... որ անծանօթ էր ձեզի :

— Օ՛, օ՛, ըսաւ ինքնիրեն Շամպէզի, որ շատ վարժ էր հասարակ քծնաբանութիւններու : Զիս հրապուրել կ'ուզուի հոս... : Բայց ո՛չ, Լիզէթ, ո՛չ :

Ձեւ մը, եղանակ մը կայ քալելու, ժպտելու, նայելու, ձեռքը տալու, ձայնի չեչտ մը կայ, որ կին արարածը ձանձող մարդոց համար ամէն պարզ խօսքերէ աւելի բացորոշապէս ըսել կ'ուզէ :

«Աւասիկ պատրաստ եմ ձերն ըլլալու, եթէ կ'ուզէք, և երբ ուզէք :»

Ուստի Շամպէզի ալ չի խաբուեցաւ :

Բան մը դարմացուց զինքը, այսինքն թէ ստորին դասի կանանց հետ յարաբերութիւն շատ ունեցած ըլլալով, չէր սպասեր այս տեսակ ձեւեր տեսնել բարձր դասակարգէ կնոջ մը կողմէ :

— Օ՛, տիկին, ըսաւ հետզհետէ պաղելով քանի որ կը զգար թէ զինքը տաքցնելու ջանք մը կար, թէեւ տակաւին ձեզ տեսնելու բերկրութիւնը չունեցայ, սակայն արդէն շատ բան գիտէի... ձեր վրայ :

Թեթեւ տազնապ մ'անցաւ կոմսուհիին աչքին մէջէն, և անոր համարձակ փայլը իսկոյն նսեմացուց :

— Արդարեւ, ըսաւ Տիան, այնչափ գիպող վայրկեանին միջամտելու համար պէտք է որ արդէն տեղեակ ըլլայիք... :

Եւ հառաչ մ'արձակեց :

— Աւա՛ղ, պարոն... չեմ ծածկեր ձեզնէ ճշմարտութիւնը, զոր արդէն գիտէք... : Միայն սա կէտը չէք գիտեր թէ այն տեսակցութիւնը, որուն վրայ եկաք դուք, խղման տեսակցութիւն մ'էր :

Շամպէզի՛ անփոյթ շարժում մ'ընելով՝ ընդմիջեց :

— Տիկին, ըսաւ, այդ բանը ձեր ամուսնին պէտք էր ըսէիք, կամ այն մարդուն որ ձեր փեսային Պ. Տը Ֆիշմօն դերկոմսին տեղն անցնիլ ուզէ:

Տիան դժգոհ շարժում մ'ըրաւ և երեսին գոյնը նետեց:

Շամպէզի իւր գիտցածէն աւելին գիտէր, և բնաւ տրամադիր չէր քծնաբանութիւն ընելու:

Ի՞նչ վարձ պիտի պահանջէր արդեօք մատուցած ծառայութեանը համար:

— Ասկէ զատ, յարեց մեր մարդը, չեմ յուսար թէ բնաւ որ և է բողոքատրութիւն կարող ըլլայ Պ. Տը Ֆիշմօնիքի զայրոյթն ամոքելու: Սարսափելի մարդ է, և բնաւ կատակ չընէք պատուոյ խնդիրներու հետ:

— Ահա այդ պատճառով է որ, պարոն, ըսաւ Տիան իւր ամենէն սիրտագրգիռ նայուածքն ու փաղաքուշ մայնըն ուղղելով Շամպէզիի, իմ շնորհակալութիւնս և ձեր ցոյց տուած քաջութեան վրայ հիացումս անսահման է, կեանքէս աւելին կը պարտիմ ձեզ: Ի՞նչպէս կրնամ փոխարինել ձեր անսահման խնդրութիւնը: Կը տեսնէք որ սակայն կութիւն չեմ ըներ և չի պիտի ընեմ:

Այս խոսքերն ըսած միջոցին, Տիան ցած բազմոցի վրայ նստեր էր՝ կուրծքը քիչ մը դէպ ի առաջ ծռելով, այնպէս որ խօսակիցը կարենար աղեղնաձև կտրուած շրջազգեստին մէջէն իւր փարթամ լանջքին փայլուն ձերմակութիւնը տեսնել:

Միանգամայն իւր քովը նստելու տեղ մը ցոյց կուտար անոր, իւր ազնուապետական ձեռքով:

Այս փոքրիկ վարպետութիւնը վայրկեան մը շփոթեցուց Շամպէզին, բայց խոհեմութեամբ աչերն անդին դարձուց:

— Կը կարծեմ թէ պիտի կրնանք համաձայնիլ, պատասխանեց վերջապէս, չի հասկնալ ձեռացնելով իրեն եղած հրաւերը:

Տիան դարմանքով անոր նայեցաւ: Կ'սկսէր ինքզինք վիրաւորուած և ստորնացած դգալ:

Ի՞նչպէս այս պարոնը, որ գէշ չէր, տակաւին երիտասարդ հասակի և կրից կորովին մէջ, Յովսէփեան զգաստութիւն և հաւատարմութիւն կ'ուզէր ցոյց տալ իր տիկինին՝ եթէ ամուսնացած էր, շնական առաքինութիւն որ

մարդու մ'արժէքը կը կոտորէ ամէն կիներուն առջեւ և քիչ մ'ալ ծաղրելի կ'ընէ, ի բաց առեալ բուռն տարփանքի մը պարագան, որ տեսակ մը գոհութիւն է անոր կողմէ և իրեն համար ալ յաղթութիւն: Ի՞նչպէս այս մարդը, որ կարեւոր ծառայութիւն մը մատուցած էր իրեն, կրնար դրամական հատուցում պահանջել և իւր հաշիւը չէր ներկայացըններ:

Փարիզի ամենէն գեղանի և ըզձալի կիներէն մէկն ունէր իւր առջեւ, այդ կին ինքզինք կ'ընծայէր, որչափ կարելի էր ընծայուիլ հասկնալու կարող մարդու մը, և այս մարդը որ ապուշ մը չէ, սառի պէս պազ կը կենայ իրմէ հեռու, չի հասկնալով որ իւր այդ վարմունքը կոշտ էր, պարզապէս տմարդութիւն էր այդ ազնուական գեղուհիին դէմ, որ կ'ուզէր հատուցում մը ընել իրեն, յուսալով որ անդամ մը զինքը ձեռքն անցունելէ ետև այլեւս վախ մը չէր ունենար իրմէ:

— Բայց համաձայնելու համար շարունակեց Շամպէղի, պէտք է գիտնանք թէ ի՞նչ հիման վրայ կրնանք:

— Ըսէք ուրեմն, պատասխանեց Տիան նազելի շարժումով մը:

— Ես գործնական մարդ եմ, տիկին, և իմ նլաստովս եղած եմ: Ես շատ ապրած եմ, աշխարհն ամէն կողմէն տեսած եմ. հետեւապէս համոզուած ու հասկցած եմ թէ մարդիկ երկու դասակարգի կը բաժնուին, պարզամիտներու և խորամանկներու, տկարներու և զօրեղներու, շահագործուածներու և շահագործողներու: Մարդկութեան կէսը կ'ուտուի միւս կէսէն: Ես ալ ուտուողներէն մէկն եղած ըլլալով, որոշեցի որ ուտողներուն կողմն անցնիմ: Սա ալ նշմարեցի թէ՛ մեր այս յառաջդիմութեան և լուսոյ դարուն մէջ արծաթն ամէն բան է: Ես ալ աղքատ եմ... և կ'ուզեմ հարուստ ըլլալ:

Տիան մտիկ կ'ընէր սրտատանջ ուշադրութեամբ մ'եւ հետզհետէ աւելցած յուսախաբութեամբ:

Եթէ չի կրնար այս մարդը ձեռքն անցունել, շատ վստահաւոր կ'ըլլար իրեն:

Այդ բիրտ անձնասիրութեան և անամօթ տենջանքի յայտարարութիւնն ուրիշ կերպով չէր գայթակղեցներ զինքը:

Ինքը ալ բարոյական զգացում չու-

նենալով, ուրիշներու քով ալ չգտնը-
ւելուն վրայ չէր նեղանար:

Իրեն ներկայացուած գաղափարներն
իրօք իւր գաղափարներն էին, եթէ
լրջաբար խորհրդածէր փոխանակ
անասնական պարզմտութեամբ և ան-
գիտագից անկեղծութեամբ մ'իւր բը-
նազդներուն հետեւելու:

Սակայն Շամպէզիի այս խօսքերը տա-
կաւին յոյս մը կը թողուին կոմսուհիին,
և այն յայտն էր որ յայտնեց ըսելով.

— Դուք փառասէր էք, պարո՛ն, կը
հասկնամ: Ուստի ներեցէք ինձի ըսել
ձեզ թէ այդ մասին ալ կրնամ օգտա-
կար ըլլալ ձեզի... Ամուսինիս դիր-
քը... ազդեցութիւնը, անունը, յա-
րաբերութիւնները... այս ամէնը կրը-
նան սեպհականութիւնն ըլլալ այն
մարդուն որսն ի նպաստ ուզեմ գոր-
ծածել: Շատ գոհ և ուրախ կ'ըլլամ, ե-
թէ ձեր արժէքն ունեցող մարդու մը
հանդիպիմ... և... եթէ ան յանձն առ-
նու զիս գոհացնել, մեծ և գեղեցիկ
ասպարէզ մը կը բանամ անոր առջև...:

— Այո՛, տիկին, գիտեմ որ դուք ուժ
մ'էք... ինչպէս որ ես ալ ուժ մ'եմ...
ձեզի դէմ: Միայն թէ, ինչպէս որ

ճշմարիտ է թէ երկու բացասութիւն-
ներ ստորասութիւն մը կ'արժեն,
նմանապէս նշմարած եմ թէ՛ երկու մի-
ացեալ ուժեր ալ մէկ ուժ մը կը կազ-
մեն. . . հետեւապէս երկուքէն մէկը
միւսէն կ'ընտելով կ'ոչնչանայ... դուք
ալ պիտի ընէք ձեր ըսածներն այն
մարդուն համար զոր սիրէք, և ան ալ
ձեզ սիրէ...:

— Անշո՛ւշտ,

— Դժբաղդաբար ես լմնցուցած եմ
«սիրել» բային խոնարհումը, ինչ որ ալ
տրուի ինձի, չեմ կրնար վերսկսիլ,
մանաւանդ ձեզի պէս կնոջ մը հետ:
Կարելի չէ սիրել ձեզ անտարբեր եւ
ախպատիժ: Դուք ոչ միայն գեղեցիկ
էք, այլ և շատ հանճարեղ և ճարտա-
րամիտ կ'երեւիք ինձի... և կը վախ-
նամ որ չեմ կրնար գլուխ ելնել ձեզի
հետ:

— Ի՞նչ կ'ուզէք ուրեմն, պարո՛ն, գո-
չեց Տիան անհամբերութեամբ ոտքի
վրայ ելնելով՝ սաստկապէս գրգռուած
իւր պարտութենէն:

— Դրա՛մ:

— Դրա՛մ, կրկնեց Տիան արհամար-
հանքով:

— Այո՛, տիկին, այո՛: Շատ պարզ է: Ձեռքիս մէջն էք դուք: Կրնամ խօսիլ և պիտի լռե՛մ. բայց...

— Վճարե՛լ, այնպէս չէ՞:

Շամպէզի խոնարհեցուց դլուխը:

— Օ՛, պարո՛ն: Ես ձեզ ազնիւ մարդ մը կարծեցի... և կը տեսնեմ որ քանի մը հազարնոց պանքտոմօի պէտք ունիք...

— Երկու հարիւր յիսուն հազար Փըրանքի:

— Երկու հարիւր յիսուն հազար Փըրանքի՞, գոչեց Տիան ուսերը ցնցելով, և աւելցուց.

«Եթէ տալ չուզեմ... զիս պիտի ամբաստանէք տը ֆէրնիք կոմսին, այնպէս չէ՞: Բայց չի պիտի հաւատայ ձեզի: Ես փարատած եմ անոր կասկածները...: Եթէ նորոգուին, ես դարձեալ կրնամ փարատել: Նախ որ հոս չէ. երկրորդ զիս չի տեսաւ Բիւի-տըլլէրմիթ փողոցի տան մէջ...: Դուք աւելի ապացոյց մը չունիք ձեր ձեռքը...: Ասկէց զատ՝ ձեզի պէս մարդու մը խօսքին հաւատք չընծայուիր: Պարզապէս զրպարտիչ մը կը համարուիք, և շատ հաւանական է որ ամու-

սինս զայրանալով ջախջախէ ձեզ՝ եթէ երբէք յանդգնիք երթալ ըսել իրեն թէ կինը կը խարէ զինքը:

Տիան իւր խօսակցին կը նայէր ըսպառնալից դէմքով:

— Շատ ճիշդ է, պատասխանեց Շամպէզի հանդարտութեամբ: Բայց մինակ ադոր վրայ չի պիտի խօսիմ իրեն...:

— Ուրիշ ի՞նչ կայ:

— Բիէոֆիթի գո՛րծը կայ:



ՆՈՐ ՅԱՂԹՈՒԹԻՒՆ

— Բիէոֆիթի գոր՛ծը կիկնեց Տիան. զսպելով իւր ահուելի յուզումը գոք՝ այս խօսքերն արթնցուցեր էին սրտին մէջ:

— Կամ, եթէ կ'ուզէք, Բիէոֆիթի «ճէյը», զոր անշուշտ գիտէք:

— Այո՛, գիտեմ, պարո՛ն, լրագիրներն երեք շաբաթէ ի վեր անոր վրայ կը խօսին:

— Արդ, տիկին կոմսուհի, կը կարծէք թէ ոճրագործներուն անունը գիտցող անձը, որ կրնայ զանոնք եղեռնադատ ատեանը շրկել, մեծ պա-

հանջով մ'ըրած կ'ըլլայ երբ իւր լե-
ռութեան վճարուիլը խնդրէ, և ասոր
համար երկու հարիւր յիսուն հազար
Փրանքը շատ է:

Տիկին տը Ֆէրնիքի դէմքը մոխիրի
գոյն առած էր:

— Ի՞նչ վերաբերութիւն ունի ինձի,
պարսն, ըսաւ խրոխտ կերպով մը:

— Թուղթ խաղանք սեղանի վրայ:
Ես ոչ միայն գիտեմ թէ Պ. Բօլ տը
Ռիչմօն ձեր հոմանին է զոր չէք ուրա-
նար, այլ և գիտեմ թէ այդ յարաբե-
րութենէն տղայ մը ծնած է:

— Սուտ է, այդպիսի տղայ չի կայ:

— Հի՛ս, չի կայ, ըսել կ'ուզէք, վասն
զի մեռած է:

— Մեռա՛ծ:

— Այո՛, և ի՛նչ հիւանդութեամբ
մեռնիլն ալ կրնամ ըո՞եւ: Մայրը մեռ-
ցուց զայն:

— Սո՛ւտ կը խօսիք, գոչեց Տիան
չլմորած:

— Ինձի պէտք չէ ըսել զայդ, տի-
կին... Ինձի որ կոտրեօր բացի աղ-
քատաց գանձանակը, որուն մէջ խոթած
էր Անթօան Բօսատ ձեր իրեն յանձնած
թուղթերը՝ երբ ձեր ամուսինն հետա-
մուտ եղեր էր անոր:

— Ա՛, դո՛ւք էք, կակազեց տիկին
տը Ֆէրնիք սարսափահար ետ ետ եր-
թալով:

— Այո՛, ես եմ, տիկին, որ ձեռք
անցուցի այն նամակը, որուն մէջ կ'ը-
սէի Անթօան Բօսատի, որ Բիէնֆիթի
մանկարարձուհիին տունը երթայ: Իմ
քով է ձեր այն յատակագիծը, որուն
մէջ « Կէր մը կայ ցուցնող թէ հոն
աղու մը դիակը կար, զոր անհետ ընել
պէտք էր:

Տիանի ակօսները կը կափկափէին:

Ինքզինք անձողոպրելի կերպով բռ-
նուած կ'զգար. իւր ամենէն մեծ վա-
խը կ'իրագործուէր:

— Անթօան Բօսատ, շարունակեց
Շամպէզի այս թուղթերուն պարունա-
կութիւնը իմանալէ առաջ զանոնք կոր-
անցնելով, նոր հրամաններու սպասեր
էր...: Այն հրամաններն եկան... և
ինքն ալ գործադրեց...: Եւ Ժիւսթին
Պօնֆօա չի պիտի խօսի այլեւս...: Բայց
ես կրնամ խօսիլ...: Վասն զի, ինչպէս
որ կը տեսնէք, ես ամէն բան գի-
տեմ... և ապացոյցներ ունիմ:

— Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ը-
սաւ Տիան զլուխը ձեռներուն մէջ ծած-
կելով:

—Մի՛ վախնաք, տիկի՛ն, յարեց
 Շամպէզի հեզնութեամբ, աւելի լաւ է
 որ այն թուղթերն իմ քովս ըլլան քան
 թէ ձեր ամուսինին՝ Պ. տը Ֆէրնիք
 կոմսին քով։ Վասն զի ինձի հետ կրնաք
 համաձայնիլ... իսկ անոր հետ... Ես ո՛չ
 ձեր ամուսինն եմ, ոչ ալ տարփածուն...
 Չեզ ո՛չ դատելու, ո՛չ ալ պատժելու
 իրաւունք ունիմ։ Նմանապէս փափաք
 չունիմ ո՛չ մարդկային ընկերութիւնք
 բարեկարգելու, ո՛չ թշնամանուած բա-
 րոյականին վրէժը խնդրելու, ո՛չ ալ
 գործուած ոճիրին պատժուելուն հետա-
 մուտ ըլլալու։ Միայն կ'ուզեմ իմ շահս
 խաղին մէջէն քաշել առնել. վերջա-
 պէս կ'ուզեմ եկամուտի ազրիւր մը
 ձեռք անցունելով։ Երթալ խաղադու-
 թեամբ ուտել գեղեցիկ երկրի մը մէջ,
 ուր կարենամ անձանօթ մնալ, ինչպէ՞ս
 օրինակի համար՝ Չուիցցերիոյ մէջ։
 Կ'ըսեն թէ այդ երկրին բնակիչները
 պարկեշտ են...։ Հետեւապէս ես ալ
 թէ՛ կը փոխուիմ և թէ՛ կ'ըրօսնուիմ...
 «Այն 250000 ֆրանքով, զոր պիտի
 տաք ինձի, 25000 ֆրանքի տարեկան
 հասոյթ մը կը կազմեմ և գոհ կ'ապ-
 րիմ։ կը տեսնէք ահա թէ շատ բա-

րեյտըող դիպուած մ'է ձեզի համար
 իմ այս միջամտութիւնս։ Առանց ինձի,
 Անթօան ֆօստա ձերբակալուած էր
 արդէն...։ Եւ Անթօան ֆօստան ալ
 մինչև տը Ֆէրնիք կոմսուհին հեռու-
 թութիւնը երկար չէ...։ Նախաքննիչ
 դատաւորը շուտով կրնայ լեցընել։
 —Ուրեմն կ'ուզէք որ գնեմ ձեզնէ
 այդ թուղթերը, ըսաւ կոմսուհին
 գլուխը վեր առնելով։
 —Այո՛։
 —Եւ կը պահանջէք...
 —Արդէն ըսի ձեզ։
 —Բայց ու՞ր և ի՞նչպէ՞ս կ'ուզէք որ
 գտնեմ այդպիսի գումար մը... առանց
 ամուսինիս հաւանութեան։
 —Օ՛, հաւանական է որ չի տայ։
 —Այն ժամանակ...
 —Բայց դուք հնարագէտ կիին մ'էք,
 ձեր ճարտարամտութեամբը կրնաք այդ
 դժուարութեան ճարը գտնել։
 —Անհնա՛ր է։
 —Բէ՛հ եթէ ուզէք...։ Կեցէ՛ք. թէև
 ինձի չի վերաբերիր, բայց գաղափար
 մը թելադրեմ ձեզի։ Առանց շատ հե-
 ոուն երթալու, Պ. Տը Ռիշմօնը չիկայ...
 որ շատ հարուստ է... և ձեզ չափա-
 դանց կը սիրէ, տարակոյս չունիմ որ

այս փոքրիկ ծառայութիւնը չի գլա-
նար ձեզի, մանաւանդ որ եթէ դուք
ոճրադատ ատեանին ներկայանաք,
չատ հաւանական է որ ան ալ ձեզի
հետ գանուի... առանց հաշուելու սա
կէտն ալ թէ՛ Պ. տը Ֆէրնիք ձեզ եր-
կուքդ ալ անխնայ կը հարուածէ, երբ
իմանայ ճշմարտութիւնը:

Քանի մը վայրկեանէ ի վեր կոմսու-
հիին դէմքը փոխուած էր: Անշարժ
կեցած մտիկ կ'ընէր Շամպէզին:

Յանկարծ փայլակ մ'անցաւ տխուր
և ձկտած աչերուն մէջէն:

— Եթէ այդ գումարը ձեզի տամ,
ձեր քովի թուղթերը կը յանձնէ՞ք
ինձի:

— Այո՛, իբրև ընկալագիր:

— Եւ կրնա՞մ վստահ ըլլալ ձեր բա-
ցարձակ և յաւիտենական լուծեան
վրայ, ինչ և ալ պատահի:

— Կրնաք: Երբ ուզածս վճարուի և
ապացոյցներս ձեռքէս ելնեն... իմ
չափս ալ լուծիւն կը պահանջէ...: Ես
չեմ սիրեր ուրիշի վնաս հասցնել...
առանց պատճառի:

— Կրնա՞ք երեք օր ժամանակ տալ
ինձի:

— Այսինքն թէ երեք օր ետքը նո-
րէն պատիւ ունենամ հոս գալու:

— Ո՛չ, ո՛չ, ըսաւ մէկէն Տիան, ո՛չ
հոս, անխոհեմութիւն կ'ըլլայ:

— Ո՞ւր հապա:

Տիան Շամպէզի մօտենալով՝ ցած
ձայնով մ'ըսաւ:

— Հոն... ուր ո՛չ ձեզի ո՛չ ալ ինձի
համար վտանգի կասկած չի կրնար ըլ-
լալ, ուր մարդ չի կրնար գիտնալ մեր
տեսակցութիւնը... հոն ուր անգամ
մը տեսանք զիրար...:

— Իրի-ար-լ'երմիթ փողոցը:

— Այո՛:

— Եւ դուք մինա՞կ պիտի գաք հոն:

— Օ՛, այո՛:

— Ստակն ալ հետերնի՞դ:

— Անշուշտ: Դուք ալ հետերնիդ կը
բերէք թուղթերը... իմ նամակս. յա-
սակագիծը:

— Շատ աղէկ:

— Կ'երդնուք, այնպէս չէ՞, զիս չէք
խաբեր...: Ես ձեր կամքին տակն
եմ... ուզածնիդ պիտի կատարեմ...
դուք ոխ մը կամ տակութիւն մը չու-
նիք ինձի դէմ, վասն զի գէշութիւն
մը չեմ ըրած ձեզի...: Աննենդ սա-

կարկուտ ինն մ'է... զոր երկու կողմէ պիտի կատարենք:

— Այո՛, տիկին, աննենգ սակարկութիւն մ'է... և դուք բնաւ վախճալութեան մը չունիք...: Եթէ ձեզ հարուածել... ձեզի վնաս մը հասցընել ուզէի... կ'երթայի ձեր ամուսինը կը գտնէի:

— Վստահ եմ որ կոմսը լռիկ մնջիկ չէր պատժեր իւր պատուոյն հետ խաղցողները, որպէս զի դատաստանի և դատապարտութեան գայթակղութիւններուն առաջըն առնէր: Բայց ես կը գարշիմ և կը սոսկամ արիւնհեղութենէ:

— Այո՛, այո՛, ճշտօրիտ է...: Ուրեմն որոշուած է: Երեք օրէն... իրիկուան ժամը տասնուժեկին:

— Լաւ, տիկին, բայց առանձին, այնպէս չէ՞:

— Անտարակոյս, պատասխանեց Տիան այնպիսի հլու ձայնով մը, որ բացարձակապէս անկեղծ թուեցաւ Շամպէզիի: Կը կարծէ՞ք որ վկայ մ'ունենալ ուզեմ իմ պարտութեանս, խոստովանութեանս... նուաստացմանս:

Ժիւլ Շամպէզի խոնարհելով մեկնեցաւ:

Պիտի դողար եթէ նշմարէր այն

հաստատոյի նայուածքը զոր ձգեց կոմսուհին իւր վրայ:

— Ա՛հ թշուառակա՛ն, ըսաւ ակռաները սեղմելով, և իւր գոց բռունցքը զէպ ի դուռն ուղղելով, երբ Շամպէզի դուրս ելաւ: Կ'սպասե՛մ քեզ թիւթաւ-լէրմիթ փողոցը: Դուն քեզ հօր կը կարծես... անմիտ:

— 0 —

93

ՄԱՅՐ ՈՒ ԱՂՋԻԿ

Բայց Տիանի սրտադողը լմնցած չէր այն օրը:

Մարդուս կենաց մէջ այնպիսի ժամանակներ կը պատահին, ուր ձախող զէպքերը զարհուրելի հասլճեպով մը կը յաջորդեն իրարու:

Տեօակ մը փլոււմ է, մեր էութեան շէնքին փլոււմը, որուն բեկորները վար թնկած ժամանակին՝ մեզ ամէն կողմէ կը հարուածեն:

Հազիւ ժիւլ Շամպէզի դուրս ելէր էր առանց տեսնելու իրեն դէմ արձակուած սպառնալիքը, սենեկապանուհին ներս մտնելով իմացուց տիրուհին թէ տիկին ար Ռիչմոնդը դերկոմսուհին

եկեր կը հարցնէր թէ կրնա՞ր տեսնել
տիկին տը Ծէրնիք կոմսուհին :

— Աղջիկս, ըսաւ Տիան զարմանքով,
անշուշտ... թող ներս գոյ... Ես միշտ
պատրաստ եմ զինքը տեսնելու :

Սենեկապանուհին դուրս ելաւ :

Եթէ կոմսուհին իւր ներքին զգաց-
մանն ականջ դնէր, իւր դուռը չէր
բանար այն օրը, մանաւանդ աղջկանը :

Չէր սիրեր զայն :

Մէկուն դէմ անիրաւութիւն կամ
յանցանք դորձողը՝ չի սիրեր զայն :
Որչափ ծանր ըլլան գործուած անիր-
աւութիւնները, կամ չարութիւնները,
այնչափ նուազ կը սիրուին զո՞հ եղող-
ները :

Տիան միշտ կը նախանձէր Ծէրնանտի
վրայ, որուն գերազանցութիւնը լաւ
կը զգար :

Անոր անկեղծ և ուղղամիտ բնառ-
թիւնը չէր կրնար համակրելի ըլլալ Ի-
րեն :

Չայն սիրելն ինքզինք դատապար-
տել էր, ուստի աւելի հեշտ էր ատել :

Երկիւղ ալ ունէր անկէ, կը վախնար
թէ կ'իմանար այն վատ դաւանանոթ-
թիւնը, որուն զո՞հ եղած էր նոյն քով

անոր կողմէ, որ իւր ամէնէն անձնուէր
բարեկամը, ամէնէն ամուր նեցուկը, իր
ամէնէն լաւ և ամէնէն լուսամիտ խոր-
յրդատուն պէտք էր ըլլար :

Վերջապէս այս այցելութիւնը կը
նեղէր զինքը :

Երկար ժամանակէ ի վեր Ծէրնանտ չէր
ուզեր առանձին տեսակցիլ մօրը հետ :
Ինչո՞ւ եկեր էր :

Ի՞նչ կ'ուզէր :

Ժամեր կան, ուր ամէն բան սպառ-
նալիք կը թուի, ամէն բան երկիւղ
կ'ազդէ :

Սակայն կոմսուհին շուտ մը շտկեց
ինքզինք, և հնար եղածին չափ բնա-
կան երեւոյթը տուաւ դէմքին, ըսելով
ինքնիրեն թէ ինչ և ալ ըլլայ աղջկանը
գալուն շարժառիթը, կրնար գուշակել,
և թէ պէտք չէր բնաւ զգացնէր իւր
սրտին մէջ տիրող տագնապը :

Առաջին նայուածքով, զոր նետեց
Ծէրնանտի վրայ, երբ մտաւ նա փոք-
րիկ զարդախուցէն ներս ուր տիկին
տը Ծէրնիք մնացած էր ժիւլ Շամպէզիի
մեկնելէն ետեւ, կոմսուհին հասկցաւ
թէ արտասովոր և մինչեւ իսկ ծանր
բան մը կար :

Եւ արդարեւ Ֆէրնանտ վերջին ծայր դժգոունած էր և բոլոր անձովը յուզուած, այնպէս որ ծանր դէպք մը գուժելու երեւոյթ ունէր :

Այս պատճառաւ Տիան, որ դէպ առաջ շարժում մ'ըրեր էր, կանգ առաւ և սպասեց որ ազդիկը խօսի նախ :

— Մինա՞կ ենք, հարցոց Ֆէրնանտ կարճ ձայնով մը :

— Այո՛, ինչո՞ւ կը հարցնէք. ի՞նչ կայ, ըսաւ կոմսուհին կասկածելով և զգուշաւոր ձև մ'առնելով :

Ֆէրնանտ չի պատասխանեց անմիջապէս :

Սրտին բարախումը կը տեսնուէր իւր գարնային թեթեւ զգեստին տակ, և իւր տենդոտ շնչառութենէն կուրծքը կ'ուռէր ու կ'իջնէր, մինչ աչերն ալ տարօրինակ նայուածք մ'ունէին, որ հազար տեսակ զգացում և գլխաւորապէս գուժ և սոսկում կ'արտայայտէր :

— Բայց ի՞նչ կայ, կրկնեց կոմսուհին աւելի զարհուրելով թերևս իւր աղջկան լռութենէն ու երեւոյթէն, քան քիչ մ'առաջ մեկնող թշուառահանին սպառնալիքներէն :

Ֆէրնանտ մէկ ձեռքը կուրծքին վրայ

դրաւ յուզմունքը զսպելու համա, միւսն ալ մօտը գտնուած թիկնաթոռի մը վրայ, որպէս զի կարենար քիչ մ'ուժփոխ առնել այն անկեղբան նիւթէն :

— Մա՛յր իմ, ըսաւ կամաց ձայնով մը, պարագաները ծանր են, մտիկ ըրէք զիս առանց ընդմիջելու, կ'աղաչեմ : Կ'ուզէի ուժ ունենալ ըսելիքս երկարօրէն բացատրելու... առանց վիճարանութեան, որ անօգուտ է մեր մէջ, և միանգամայն զարհուրելի : Եթէ իմ տեղս ուրիշ մը կարենար խօսիլ ձեզ, ես անշուշտ չէի դար հոս... Բայց անխուսափելի էր... այս կամ ուրիշ օր մը. թէեւ չի կրնայի նախատեսել թէ...

Ձայնը կանգ առաւ կոկորդին մէջ երբ պիտի ըսէր թէ՛

— Դուք մի՛չեւ ոճրագործութեան, մինչեւ սպանութեան կրնայիք դիմել :

— Ի՞նչ իմացեր է, ի՞նչ լսեր կամ գտեր է, կ'ըսէր միաքէն կոմսուհին դուշակելով ճշմարտութեան մէկ մասը :

Եւ իւր բոլոր պաղարիւնութիւնը ձեռք առաւ :

— Պօսէ՛, ըսաւ :

— Մա՛յր, յարեց Ֆէրնանտ, եթէ գործն իմ վրաս ըլլար... եթէ ինձի

դէմ գործած ոճիրիդ վրայ ըլլար, լուռ կը կենայի դարձեալ, ինչպէս որ կեցայ մինչեւ հիմա: Եւ եթէ կորսուած, բացարձակապէս կորսուած չըլլայիր, ես դարձեալ կը լռէի տակաւին, ինչ և ալ կարենային ընել... Վասն զի այնպիսի բաներ կան որ աղջիկ մը պէտք չէ երբէք ըսէ իւր մօրը... մինչեւ իսկ եթէ մայրն իւր վարձուքովը խզած ըլլայ այն ամէն կապերը որք զինքը կը միացնեն աղջկանը հետ: Բայց ձեր կորուստը հօրս ալ կորուստն է, հօրս որ բոլորովին անմեղ է: Եւ ես կը պարտիմ իմացընել քեզի, ցուցնել քեզի ոտքիդ տակը բացուած վիհը: որուն մէջն իյնալէ ազատում չունիս այսուհետեւ:

— Չեմ հասկնար, ըսաւ կոմսուհին դէմքը կապարի գոյն առած:

— Իմ քեզի ըսելիքներուս մէջ, յարեց Ֆէրնանտ, բաներ կան, որոց մէկը մասնաւորապէս ինձի կը դպչի, և որուն խօսքը չպիտի ընէի եթէ ասէնուն ալ առաջին պատճառն եղած չըլլար:

«Ամուսինս՝ Պ. տը Ռիչմօն՝ քու տարփածուդ է:

— Սո՛ւտ է, ըսաւ կոմսուհին:

— Ես գիտեմ տարիէ մի վեր, յարեց Ֆէրնանտ, եւ անոր մեկնած օրը իմացայ... քու անոր ուղղած մէկ նամակէդ որ բնաւ տարակոյս չէր կրնար թողուլ ձեր յարաբերութիւններուն վրայ: Վերադարձին յայտնեցի իրեն... չկրցաւ ուրանալ... Եւ վստեցի զինքը սենեակէս: Ամուսիսս չէ այլ եւս: Կը տեսնեմ որ տեղեկութիւն չունիս: Պատուիրեր էի իրեն որ լուռ կենայ, և չէ համարձակած յայտնել քեզի... ինչպէս որ կը յուսայի: Կեանքիս տասը տարին կուտայի, որպէս զի դուն չգիտնայիր թէ աղջիկդ ծանօթ էր այդ ամօթալի խայտառակութեան:

Տիան հասկցաւ որ ուրանայն անդուտ էր, և գուցէ իսկ ձախող:

Ֆէրնանտ գիտէր ամէն բան, տարակոյս չի կար:

Այս էր պատճառը որով մօրմէն հեռու կը կենար տարիէ մի վեր:

Գալով Բօլ տը Ռիչմօնի խոստովանութեան, այն տեսակ մը դաւաճանութեան որով չէր կրցեր կոմսուհիին իմացընել, այն մասին ալ երկբայիլ չանցաւ միտքէն:

Վատ մարդ էր, վասյցեր էր:

Ի՞նչ ընելու էր հիմա:

Ինքզինքը պաշտպանե՞լ:

Անհնար էր:

Ֆէրնանտ աւելի յուզուած կ'երեւէր քան բարկացած:

Եթէ միայն այս էր դիտցածը մեծ բան մը չէր:

Պէտք կ'ըլլար անոր զգացումներուն դիմել, սիրտը շարժել... ներում ստանալ... Թէև հարկ ըլլար զոհել իւր տարփածուն, և հրաժարիլ անկէ:

Տիան երբէք սրտանց սիրած չէր մարդ մը, որպէս զի ի հարկին անմիջապէս չի զոհէր զայն իր փրկութեանը համար, եթէ վտանգի սպառնալիք մ'զգար:

Այն կիներէն էր, որոց համար տարփաւորը պարզապէս արու մ'է որ կը սիրեն, արդիւեալ պտուղ, և ոչ այս կամ այն ձիրքը կամ առաւելութիւնն ունեցող մարդը:

Այդ տեսակ կիները դիւրաւ կը թողուն իրենց տարփածուն, գիտնալով որ ամէն ժամանակ կրնան տարփածու մարդ մը գտնել, որ իւր նախորդին վրայ նորութեան առաւելութիւնը կ'ունենայ զոնէ քանի մ'որ:

Յանկարծ այն արագ որոշմամբ որ կանանց յատուկ է ծանր պարագաներու մէջ, աղջկանը ծունգն ինկաւ:

Արդէն Շամպէզիի կողմէ ծանր ըսպառնալիք կար իրեն: Գոնէ այս նոր վտանգին առաջը պէտք էր առնել:

Չի գիտնալով կամ չի հասկընալով աղջկանը հոգիին մէջ անցածը, կարծեց թէ գործը նախանձոտ կնոջ մը հետ էր, որ ամուսինը ձեռքէն առնուելուն վրայ յուսահատութեան մէջ ինկած էր:

— Ներէ, ըսաւ անոր, չեմ ուրանար, յանցապարտ եմ քեզի դէմ... ծանր յանցապարտ... վատ ընթացքի մէջ գտնուած եմ...: Չես կրնար գիտնալ թէ ո՞րչափ ցաւ զգացած եմ և կ'ըզգամ...: Այս կորանքը, այս նուատութիւնը, որ յանձն կ'առնեմ քու ծունգերդ իյնալով, ես որ քու մայրդ եմ, կը ցուցընէ թէ ինչպէս կը դատեմ ու կը դատապարտեմ զիս...: Կ'երզնում քեզի թէ երբէք չի պիտի տեսնեմ այսուհետեւ Պ. տը Ռիմօնը...: Արդէն երկար ժամանակէ ի վեր յարաբերութիւնս խզելու միջոցը կը փնտռէի:

Ֆէրնանտ ձեռքը բռնել ուզեց, բայց
ան զգուանքով ետ քաշուեցաւ:

— Ա՛հ, անգութ մի՛ ըլլար, երջան-
կութիւնդ աւրեցի, գիտեմ... բայց
կրնայ վերադառնալ...: Կը հասկնամ
ինձ դէմ ատելութիւնդ...: Եթէ գիտ-
նայիր... զիս փրկել պէտք էր... վա-
տութիւն ըրի... թող որ հասկըցը-
նեմ:

— Աւելորդ է, պատասխանեց Ֆէր-
նանտ արհամարհոտ նայուածքով մը:
Ես նախանձոտ չեմ, և չեմ ատեր քեզ:
Ես գիտեմ ինչ անցաւ. ետքէն հաս-
կցայ...: Պ. տը Ռիչմօն քու տարիա-
ծուդ էր, երբ ես ամուսնութեան առի
զայն: Հայրս կասկածներ ունէր... եր-
կուքդ ալ վախցաք, և ինքզինքնիդ
ազատելու համար, դուն որ իմ մայրս
էիր, զիս այդ մարդուն տուիր...:
Արդարեւ երբ իմացայ ձեր ապօրէն
յարաբերութիւնը, ատելութիւն ըզ-
գացի քեզի դէմ, բայց անցաւ. ուրիշ
զգացում մ'սպաննեց այն ատելութիւնս:
Ինձի դէմ գործած ոճիրդ տեսակ մ'ա-
զատութիւն երեւցաւ աչքիս: Եթէ
գործը ատոր վրայ ըլլար, պիտի ըսէի
քեզի:

«Պահէ այդ մարդը:

«Իմ ամուսինս չէ և չի պիտի ըլլայ
այսուհետեւ: Փափկասիրտ կնոջ մը
համար անտանելի պարտականութիւն-
ներէ կ'ազատես զիս, այնպիսի պար-
տականութիւններէ որոց մէջ սիրտը
ոչ ևս գործ ունի:»

«Մինչեւ իսկ շնորհակալութիւնս կը
յայտնէի ձեզ, եթէ հայրիկս չըլլար,
իմ ազնիւ, աննենգ և իւր պատուոյն
ջերմ նախանձախնդիր հայրս, որուն
անունը կ'անպատուես: Այո՛, կ'օրհնեմ
այն որ և է կինը որ իմ տեղս բռնէ
այդ Պ. տը Ռիչմօնի քով, վասն զի
այդ միակ միջոցով կրնայ կին մը ա-
զատել այնպիսի ամուսինէ մը զոր չի
սիրեր բնաւ, և որ անյաղթելի զըզ-
ուանք կը պատճառէ իրեն: Այո՛, ա-
զատիլ այնպիսի հպատակութենէ մը,
որ գերութենէ աւելի գէշ է իւր պա-
տիւն ու արժէքը գիտցող կնոջ մը
համար:

«Ո՛չ, ո՛չ, մայր իմ, ուզէ սխալը...:
Ես չեմ եկած հոս Պ. տը Ռիչմօնը քեզ-
նէ խնդրելու: Եթէ այդ ըլլար գալուս
պատճառը, կրնայի դարձեալ գաղտնի
պահել այն վերքը զոր սրտիս մէջ բա-
9

ցած էր այդ դաւաճանութիւնը, մայրական պարտաւորութեանց այդ մոռացումը: Կրնայի լալ մայր չունենալուս վրայ... կրնայի արհամարհել քեզ... բայց չէի բողոքեր... կը լռէի առանց ձեր կարծածին պէս ցաւ զգալու: Ընդհակառակն՝ ազատագրեալ գերիի մը պէս ուրախ ըլլալով՝ քեզի կը թողէի ձեռքէս առած մարդդ, զոր կեանքս գնելու համար իսկ չէի ընդունիր: »

Տիան ապշելով մտիկ կ'ընէր ազլկանը խօսքերը:

Հիմա նոր սարսափ մը կը տիրէր վրան:

«Ի՞նչ է ուրեմն ինձի գալուն պատճառն ու նպատակը, կ'ըսէր ինքնիրեն: Ի՞նչ կար, ի՞նչ իմացեր էր, ի՞նչ ըսելու եկեր էր:»

Այս մտածութեամբ ոտքի վրայ ելաւ Տիան:

— Չեմ հասկընար, ըսաւ:

— Պիտի հասկնա՞ս հիմա:



ՎԵՐՋԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

— Այդ բանին վրայ խօսելուս պատճառն այս էր որ, ըսաւ Ֆէրնանտ, ամուսնիս հետ ունեցած ապօրէն յարաբերութեանդ պատճառաւ այնպիսի ծանր արարքներ գործեցիր, որոնց վրայ պիտի խօսիմ հիմա...:

— Արարքներ, կրկնեց Տիան:

Ֆէրնանտ նորէն չորս կողմը նայեցաւ ապահով ըլլալու համար թէ լսող չի կար, յետոյ կոմսուհիին մօտենալով ըսաւ:

— Արդարութիւ՛ր ձեռք անցուցած է Անթօան Բօսատի նկարագիրը:

Տիան քայլ մ'ետ գնաց:

Վախցած գէշութիւնները կատարում կը գտնէին:

Ազլիկն իմացեր էր...:

Բայց ի՞նչպէս. ո՞վ կրցեր էր իմացընել:

Շամպէզի թերեւս:

Սակայն բռնեց ինքզինքը, Հոս խոստովանելու... Ֆէրնանտի սիրտը շարժելու պէտք չունէր, այլ ուրանալ, բացարձակապէս ուրանալ պէտք էր:

Մանաւանդ որ աղջիկը չէր կրնար ապացոյցներ ունենալ... Անթօան Բօսատ միայն կրնար զինքը մատնել... բայց անոր վրայ ալ անկասկած էր :

— Ինչո՞ւ Անթօան Բօսատի խօսքը կ'ընես ինձի, ըսաւ ակռաները սեղմելով, Ի՞նչ բան ունի մեր մէջը :

— Անթօան Բօսատ սպաննեց Բիէն-Ֆիթի մանկաբարձուհին, յարեց իսկոյն Ֆէրնանտ : Դատական իշխանութիւնը նորէն կ'ըսեմ, ձեռքն անցուցած է անոր նկարագիրը . թերեւս ժամէ մը, վաղը, վերջապէս քիչ ժամանակէն պիտի ձերբակալուի :

— Ինձի՞ ինչ եթէ Անթօան Բօսատ ոճիր գործեր է, պատասխանեց կոմսուհին յանդգնաբար . քարը գլխուն... թող կրէ պատիժը... անոր ըրածներուն պատասխանատու չեմ ես :

— Կը սխալիս, Երբ մայր իմ : Անթօան Բօսատ բռնուի, պիտի հարցընեն փնտռեն թէ ինչո՞ւ սպաննեց այն խեղճ կինը... Պիտի իմացուի քու հետդ մտերիմ յարաբերութիւններ ունենալը... այդ ահռելի ոճիրը գործելու համար անձնական շահ մը չունենալը... : Քեզ ալ պիտի հարցաքընեն... հօրս իմաց պիտի տրուի... պիտի վազէ գայ... պիտի իմանայ թէ

դուք այդ մանկաբարձուհիին տունը գացեր էք հօրս բացակայութեան միջոցին... և նորածին տղու մը դիակը գտնուեր է... պարտէզին մէջ... դուն աղէկ գիտես... ուրիշներ ալ գիտեն :

— Ուրիշներ ալ :

— Այո՛ դատական իշխանութիւնը գտած է հետքը... : Դուն ալ կրնաս ձերբակալուիլ այսօր կամ վաղը :

Ֆէրնանտ որ նախ վարանումով խօսած էր յուսալով թէ՛ մայրն իւր անմեղութիւնն հաստատող պատասխաններ պիտի տար, այժմ ոճրին սոսկալի Բսկութեանը համոզուելով կը խօսէր, Բսկութիւն մը որ երկբայութեան տեղ չէր թողուր, կոմսուհիին դողահար վիճակին և դէմքին այլայլութեան առջեւ :

— Ձերբակալուի՛մ... ե՛ս, կակազեց Տիան, շփոթելով վտանգին անխուճափելի վերահասութեան առջեւ :

Երբ գործը խաբելու, խորամանկելու, սուտեր յօրինելու մէկուն դիւրահաւանութեանը, միւսին անմիտ յաւանտաութեանը հետ խաղալու, իւր կառքին լծել ուղած մարդոց կիրքը, կուրուրթիւնը կամ իզձերը շահագոր-

ծելու վրայ ըլլար, պաղարիւնութիւնն ու յանդգնութիոնը չէին բաժնուիր իրմէ:

Խնարէութիւնն ու ստախօսութիւնը քաջութեան պէտք չունին, խղճի, ինչպէս նաև սրտի և ճշմարիտ զգայնութեան բացակայութիւնը չեն դպչիր մտքի յստակութեան:

Բայց հոս նոյն բանը չէր. եղեռնադատ ատեան, կամ առ նուազն հրապարակային գայթակղութիւն կար առջեւը, զոր ամուսինը պիտի իմանար և չի պիտի ներէր:

— Ուրկէց ատոնք իմացար հարցուց կակազելով:

— Նոյն իսկ նախաքննիչ դատաւորէն, որ քեզ մեղապարտ կը համարի, և արդէն ինչ ձերբակալել պիտի տար, եթէ ես ազաչելով պաղատելով յետաձգել չի տայի, որպէս զի դամ իմացնեմ քեզի թէ կորսուած ես,

— Կորսուած, կորսուած, կրկնեց Տիան ահռելի կերպով ալլալամ, հոգիին բոլոր տգեղութիւնն և վատ երկիւղի մը բոլոր արհաւիրքը դէմքին վրայ ցուցնելով:

— Ո՞վ է այդ նախաքննիչ դատաւորը... հարցուց դողալով:

— Պ. Դանիէլ տը Բէօր, որուն յանձնուած է հետախուզել Բիէնֆիթի ուձիրը, պատասխանեց Ֆէրնանտ:

Այս անունը լսելուն պէս կոմսուհին վեր ցատկեց, աչերը փայլիլ սկսան, և կծկած տժգոյն շուրթերը թուլցան տեսակ մը ստատանայական ժպիտով:

Միտքն եկաւ իսկոյն թէ՛ Ֆէրնանտ ամուսնութենէ առաջ սիրեր էր Դանիէլ տը Բէօրը, և թէ զինքը ըստիպել հարկ եղեր էր Բօլ տը Ռօչմօնի հետ ամուսնանալու համար, զոր լալով և գրեթէ բռնի ընդուներ էր:

Հետեւաբար, անշուշտ չէր դադրած Դանիէլ տը Բէօրը սիրելէ և տակաւին կը սիրէր:

— Դանիէլ տը Բէօր, գոչեց, Դանիէլ տը Բէօր: Եւ դուն անոր քովէն կուգաս... Եւ ան ըսաւ քեզի թէ իմ վրաս կասկած կար... և թէ Անթօան Բօսատ պիտի ձերբակալուի:

— Այո՛:

— Եւ ան յանձնեց քեզի գալ ինձի իմացնել:

— Գիտէ իմ հոս ըլլալս... արգելք չեղաւ գալուս:

Տիան հետզտէ կը շտկուէր քսնի որ

աղջիկն ստորաասարար կը պատասխա-
նէր իր հարցումներուն :

Դէմքին արտայայտութիւնը կը փոխ-
ուէր . յուսահատականէն յաղթականի
և մինչեւ իսկ սպառնականի կը փոխ-
ուէր :

— Իբրեւ ի՞նչ գացեր էիր դուն այդ
Դանիէլ տը Քէօրի քով : Ի՞նչպէս
յայտնեց քեզի նախաքննութեան
գաղտնիքը . հարցուց Տիան : Ի՞նչպէս
թող կուտայ քեզի զեկոյց բերել կաս-
կածուած ամբաստանուած անձի մը
զոր իւր անհրաժեշտ պարտականու-
թիւնն էր ձերբակալել եթէ սուտ չի
խօսեցար :

— Բայց . . . ըսաւ Ֆէրնանտ շիրթե-
լով :

— Ըհե՛լ է թէ քու տարբածո՞ւղ է :
Մարդ մ'իւր տարփուհիին միայն կրո-
նայ հաւտալ այդպիսի գաղտնիքներ
իւր տարփուհիին համար միայն կը մոռ-
նայ իւր պարտականութիւնները :

Ես սուր ծիծաղ մ'արձակեց :

— Եւ քեզի հաշիւ տալու պէտք
չունիմ, պատասխանեց Ֆէրնանտ խըս-
տութեամբ՝ վայրկեան մը վարանելէ
ետեւ : Եւ դուն թերեւս միակ անձն ես

որ իրաւունք չունիս իմ վարքս դատե-
լու, և սխալս դատապարտելու՝ եթէ
գործած եմ :

— Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, ըսաւ Տիան
հեզնական ժպիտով մը, սրտին մէջ
որոտացող լիւր ցուցնելով իւր աղջկա-
նը դէմ, զոր իւր մոլեկան կրքին զո-
հեր էր, որ իրաւունք ուներ զինքը
ատելու, և որ ժամէ մ'ի վեր նուաստ
և դողահար վիճակի մէջ ձգա ծէր զին-
քը իւր ոտներուն առջև :

Դողացեր էր, կը դողար, դիմակը
վար առնուեր էր . մարդկային ուրիշ
զգացում մը չէր մնացեր վրան նոյն
միջոցին՝ բայց միայն ինքնապահպա-
նութեան բիրտ բաղդունն և վրիժա-
նութեան ծարաւն այն անձին դէմ
որ զինքն ստիպեր էր այնպէս երեւ-
նալու, ինչպէս որ էր իրօք :

— Աեշուշտ, յարեց, ես իրաւունք
չունիմ տը Ռիչմոն դերկոմսուհին դա-
տելու, ինչպէս որ ան ալ չունի տը
Ֆէրնիք կոմսուհին դատելու : Երկուքս
ալ չնացեալ, կրնանք ձեռք ձեռքի
տալ, այնպէս չէ՞ Ֆէրնանտ, և դուն
նոյնչափ իմ ձեռքիս մէջն ես, որչափ
ես քու ձեռքի :

«Տը Ֆէրնիք կոմսը կատակ չընէր իւր պատուոյն հետ. զոր ինչպէս կինը, նոյնպէս եւ աղջիկը պղծած են... Ասկէ զատ, տը Ռիչմօն դերկոմս մ'ալ կայ, որ կրնայ չի հանդուրժել կնոջն ըրածին...»

Ֆէրնանտ բացաւ բերանը, բայց մայրը ժամանակ չի թողուց պատասխանելու:

—Օ՞, գիտեմ ինչ պիտի ըսես, աւելցուց իսկոյն. դերկոմսը վա՛տ է, պիտի ըսես. ես ալ համաձայն եմ: Եթէ այդ է քեզ քաջալերողը, կը սխալիս խեղճ Ֆէրնանտս: Էրիկ մը քաջութեան պէտք չունի սպաննելու համար իւր կինն ու անոր տարփածուն... որովհետեւ վտանգ մը չիկայ իրեն համար:

Ֆէրնանտ մտիկ կ'ընէր իւր մայրն այնպիսի դառն զարմանքով մը որ իւր զայրոյթն իսկ կ'սպաննէր:

Երկար ժամանակէ ի վեր կը դատէր զայն, երկար ժամանակէ ի վեր իւր սէրն ու յարգանքը վերցուցած էր վերայէն, երկար ժամանակէ ի վեր գիտէր թէ ատելի էր անոր:

Քանի մը ժամէ ի վեր հասկցեր էր

նաև թէ, այդ կինն այնպիսի ոճիրներ գործած էր, որ զինքը թիարան կամ կառափնարան կը տանէին. մեղսակից կամ թելադիր եղած էր մարդասպանութեան մը, և անձամբ ալ որդէսպանութիւն գործած, վասն զի տարակոյս ներելի չէր այլեւս:

Եւ սակայն այդ վատթար մօր, այդ եղեռնաւոր կնոջ բռնած դիրքը տակն ու վրայ կ'ընէր իւր գաղափարները, կը խռովէր ու կը տրորէր իւր սիրտը:

—Խնդիրն ատոր վրայ չէ. ըսաւ վերջապէս. դուք չէ՞ք հասկնար ձեր վիճակը:

—Շատ աղէկ կը հասկնամ: Պ. Դանիէլ տը Ֆէօր, բան մը չընէր իւր սիրուհիին մօրը, որ կրնայ զինքը մատովը ցուցնելով ըսել:

«Ահա տը Ռիչմօն դերկոմսուհիին տարփածուն:»

—Այդ է քեզ խարողը, տիկին. պատասխանեց Ֆէրնանտ զայրանալով վերջապէս լսած սպառնալիքներէն: Դանիէլ տը Ֆէօր պիտի կատարէ իւր պարտականութիւնը որչափ և սուղ նստի իրեն: Եթէ ինքը կատարելու քաջութիւն չունենայ, ուրիշները կը կատարեն անոր տեղը:

—Օ՛, դուն կ'աղաչես իրեն և մտիկ կ'ընէ:

—Կը սխալիս: Քու գաղտնիքդ գիտցողը միայն Դանիէլ տը Գէօրը չէ... Եթէ ուզէ ալ, չի կրնար արգելել արդարութեան գործը:

—Ի՞նչպէս:

—Երկու ուրիշ անձեր ալ գիտեն ճշմարտութիւնը, մէկը ոստիկանութեան պաշտօնատարը... միւսն ալ ուրիշ մարդ մը... որ կը ճանչէ Անթօան Քօսատի և ձեր ալ մեղաւիցութիւնը...:

Տիան նորէն դողալ սկսեց էր:

—Բիւի-տը լ'էրմիթ փողոցի մարդը... այո՛, գիտեմ, բայց չի պիտի խօսի:

Եւ կրճտեց ակռաները, աչերն ալ փայլակ մ'արձակեցին:

—Հաւատա ինձի, յարեց Ֆէրնանտ, աղատում չի կայ քեզի համար... ինչ որ ընեմ, անօգուտ է: Ապա թէ ոչ կուգայի՞ հոս, կը յայտնէի՞ քեզի վրտանգին ծանրութիւնը: Սխալ էր կարծելդ թէ քեզի դէմ ունեցած ատելութիւնս բերած էր դիս հոս... ընդհակառակն գութս էր...: Այո՛, գութս թէ՛ քեզի և թէ՛ հօրս համար:

Ոչ ոք կրնայ հիմա արգելել արդարութեան գործը: Անթօան Քօսատ պիտի ձերբակալուի, կ'ըսեմ քեզի: Եւ այն ժամանակ դուն ալ լմնցած ես:

—Անթօան Քօսատ չի պիտի խօսի:

—Ի՞նչ օգուտ կ'ունենայ անոր չի խօսիլը, իրողութիւնները կը խօսին:

Կոմսուհին կը գալարէր ձեռները: Կը հասկընար աղջկանն իրաւունք ունենալը, կը հասկընար թէ քանի որ կասկած կար իւր վրայ, ճշմարտութիւնը չէր կրնար ծածուկ մնալ:

—Ի՞նչ ընեմ, ի՞նչ ընեմ, կ'ըսէր սենեակին մէջ քալելով, և թեւերը խենդի պէս տատանելով:

—Փախչի՞մ, ըսաւ մէկէն կանգ առնելով:

—Խոստովանիլ է յանցապարտութիւնդ: Ի՞նչ պիտի ըսես հօրս:

—Պահուրտի՞մ:

—Ո՛ւր: Կը գտնեն քեզ... և ոճրադատ ատեանը կը տանին:

Տիան իւր գոգոյն ճակատը կը ճմլէր կծկած ձեռքերովը:

—Ի՞նչ ընեմ ուրեմն, ի՞նչ ընեմ:

Ֆէրնանտ կը լռէր հեւալով և չէր համարձակեր անոր նայիլ՝ ամօթահար

և յուսահատ իւր աչքին առջեւ ան-
ցած տեսարանէն, որ իւր երեւակայած
ամէնէն սոսկալի տեսիլները կը գերա-
զանցէր:

Յանկարծ Տիան ձեռքը վար առաւ
իւր այլայլած երեսէն, և տխուր աչե-
րը աղջկանը վրայ սեւեռելով՝ տեսաւ
զայն յուզող սրտատանջութիւնն և ցա-
ւագին արհամարհանքը:

— Ա՛, կը հասկընամ, գոչեց փրփրած
չրթունքով, անձնասպան ըլլամ այն-
պէս չէ՞: Ա, յո՛, այո՛, այո՛... ամենուր
ալ գործին կուգայ, ձեզի համար վախ-
նալու բան չի մնար...: Մեռածներուն
ետեւէն չեն իյնար... ձեր պատիւը կը
փրկուի...: Կ'ըսեն թէ բուռն տենդ
մ'եկաւ վրաս...: Եւ դուք հանգիստ
ու երջանիկ կ'ապրիք...: Եւ դուն,
դուն...:

Եւ վայրագ քրքիջ մ'արձակեց:

— Բայց ո՛չ, ես չեմ սպաններ զիս,
երբէ՛ք, բնաւ երբէք: Ամէն բան յանձն
կ'առնեմ, բայց ո՛չ մեռնիլը:

Ակռաները կը կրճտէին, և ծունգերը
կը դողային:

— Ա՛հ, այդ առաջարկելու եկեր էիք
պաղ կերպով, հանդարտ դէմքով...

մա՛հ, մահ ինձի համար... միայն ինձի
համար... իսկ դուն հանգիստ և եր-
ջանիկ ապրիս տարփածուիդ թեւերուն
մէջ... ա՛հ թշուառական, երբէ՛ք, կը
լսե՞ս, երբէ՛ք...: Գնա ըսէ Դանիէլ
տը Բէօրիդ, նախաքննիչ դատաւո-
րիդ... եթէ զիս ամբաստանեն, եթէ
զիս ձերբակալեն... պիտի գոչեմ թէ
դուն ըրած ես ամէնն ալ... և այնպիսի
ամօթով, այնպիսի խայտառակութեամբ
մը պիտի ծածկեմ երկուքդ ալ, որ
մէջը թաղուած պիտի մնաք...: Մահ-
ուան փոխարէն մահ... գոնէ վրէժս
կ'առնեմ...: Եւ դուք չէք կրնար զը-
ւարճանալ իմ յուսահատութեամբս... և
պատիւ գողնալ իմ խայտառակութե-
նէս...:

Ֆէրնանտ վայրկեան մը նայեցաւ
այդ կնոջ, որուն չարաշուք գեղեցկու-
թիւնն անհետացեր էր իւր յուր կիր-
քերուն և ապիրատ բնագղներուն ներ-
քին մղումէն:

— Մնաս բարով, մայր, ըսաւ ծան-
րութեամբ, և դէպի դուռը շտկուե-
ցաւ:

Բայց հազիւ երկու քայլ առած էր,
զգաց որ շրջագգեստին քղանցքէն բու-
նելով կ'արգիլէին զինքը:

Ետին դառնալով տեսաւ որ Տիան՝
չմտրելով՝ սպառնալիքէ սարսափի, և
և յոխորտանքէ նուաստութեան մէջ
ինկած, ծուգերուն վրայ քսուելով՝ իւր
քղանցքին փաթթուեր էր, որ մեկնած
միջոցին հետը կը տանէր փրկութեան
ամէն յոյսերը:

— Շնորհ, գոչեց լալով, շնորհ, ա-
ղատէ զիս:

— Ձեմ կրնար:

— Դանիէլ տը Բէօր...

— Ձի կրնար այլ եւս:

— Յետաձգում մը խնդրէ իրմէ, եր-
կու երեք օրուան... շարաթի մը հա-
մար... որպէս զի մտածեմ և որոշում
մ'ընեմ...: Գթա ինձի, կորուստի մի
մատներ զիս. որով ինքզինքդ ալ կը
մատնես: Երեքօր, կ'աղաչեմ, երեք
օր միայն:

— Փորձ մը կ'ընեմ, պատասխանեց
Ֆէրնանա:

Եւ քղանցքն ազատելով՝ փախաւ:

Ժամանակն էր: կը վախնար որ խել-
քին կուգար:

— Երեք օր, կրկնեց կոմսուհին երբ
մինակ մնաց, աչքն անթարթ, բերա-
նը կծկուած: Մինչեւ երեք օր Բիւր տը

Շնորհի փողոցի մարդը կը մեռնի,
քովը գտնուած վտանգաւոր թուղթե-
քը ձեռքս կ'անցնին... Անթօան Բօ-
ուաու ալ կը փախչի հեռու երկիր մը
կ'երթայ... Այն ժամանակ կը տես-
նէնք:

95

ՈՒՐ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ԿՐ ԿԱԶՄՈՒԻ

Ֆէրնանտին մեկնելէն ետեւ Դանիէլ
աը Բէօր նորէն իւր աթոռին վրայ ին-
կեր էր:

Գազափարները կը պտուտկէին խե-
ղազատակին մէջ:

Իմացած բաները կը զարհուրեցնէին
զինքը, և իւր ամենէն յուստես կան-
խաճառածումները կը գերազանցէին:

Մարդու մը, ժիւլ Շամպէզիի ձեռ-
քին մէջն էր իւր և Ֆէրնանտի պա-
տիւը: Իրկուքն ալ անոր տրամադրու-
թեան տակն էին, և այդ թշուառա-
կանն ահեղապէս սպառազինուած էր
իրենց դէմ. այն աստիճան ահեղա-
պէս, որ հնար չիկար հետը մաք-
ախու և ձեռքէն պրծելու:

Եւ տակաւին այդ մարդն ըսած չէր
իւր ամէն գաղտնիքը:

Ֆէրնանտի կողմէ մօրը դէմ եղած
ամբատանութիւնը պէտք եղածէն ա-
ւելի կ'ապացուցանէր զայս:

Անթօան Քօսատ սպանիչն էր ժիւսթին
Պօնֆօայի...: Անոր ետին կար տը
Ֆէրնիք կոմսուհին. ասոր ալ ետին
պիտի ըլլար Բօլ տը Ռիչմօն:

Երբէք մարդ մը չէր այնչափ տազ-
նապած թերեւս՝ որչափ Դանիէլ տը
Քէօր կը տազնապէր նոյն միջոցին, և
չէր հանդիպած աւելի կնճռոտ և աւե-
լի սրտայոյզ վիճակի մը:

Ո՛ր կողմ դառնար, անդունդ կը
տեսնէր:

Ամէն կողմ ոճիր, ամէն կողմ ան-
պատուութիւն:

Բուռն պայքար մը կը մղուէր
մտքին մէջ, և տակնի վրայ կ'ը-
նէր իւր խզտած և հակառակ կամքե-
րէ քաշքշուած խիղճը:

Մարդը, տարփուորը, դատաւորը
հակառակ պարտակտնութիւններ ու-
նէին, հաւասարապէս նուիրական:

Ֆէրնանտի պատիւը պէտք էր ազա-
տէր, այն կնոջ՝ սր ինքզինքն իրեն-
տուեր էր, կեանքն ու համբաւն իրեն-
յանձներ էր:

Բայց պարտքն էր նաեւ դատի են-
թարկել սպանութեան ծանօթ հեղի-
նակները:

Ի՞նչպէս պիտի հարուածէր զանոնք՝
առանց միւսն ալ նոյն հարուածով
զարնելու:

Եւ եթէ իւր գօրութենէն վեր,
մարդկային գօրութիւններէ վեր պա-
տասխանատուութիւններէ ընկճելով՝
հրաժարական տար, իւր նախաքննիչ
դատաւորի պաշտօնը թողուր, ուրիշ
մը պիտի կատարէր իւր տեղը, և ա-
մէն պէտք եղածը պիտի ընէր երեւան
հանելու, լուսաւորելու, հրապարտկա-
գոյժ ընելու ինչ որ Դանիէլ պիտի
ուզէր մութի ու լուսութեան մէջ ծած-
կել:

Անձնասպանութեան գաղափարներ
կը ներկայանային մտքին... բայց կը
մերժէր, վասն զի լքում մ'էր, վատու-
թիւն մ'էր Ֆէրնանտի դէմ, որուն մի-
ակ նեցուկն էր:

Անոր հետ պէտք էր ընկճէր կամ
յազթէր, իւր մարմնովը, պատուովը,
անձնուիրութեամբը ծածկելով մինչեւ
վերջին վայրկեանը:

Բրէնպորն ալ, հակառակ իւր բազ-

Մամեայ փորձառութեան և արտասովոր պաղարիւնութեան, վրդոված էր իւր այո ամէն լսածներովը, և խոր ու ցուազին համակրութեամբ մը կը դիտէր Ֆէրնանաի սիրահարը:

Տեսաւ անոր այտերն ի վար վիժտած արտուքի կաթիլները,

Այն լռին յուսահատութիւնը որ կը գետնահարէր այդ քաջասիրտ երիտասարդը, որ երբէք տկարացած չէր անձնական ու է վտանգի առջեւ, սաստկապէս յուզեց ոստիկանութեան գործակալը:

Յանկարծ մոռնալով զինքն անկէ զատող պաշտօնական դասակարգի հեռաւորութիւնը, և քաջալերուելով այն վստահութենէն զոր ցոյց տուած էր իրեն Դանիէլ, ըովը գնաց և ձեռքը բռնեց, որ կրակի պէս տաք էր:

— Չափազանց կը վշտակրիք պարո՛ն, ըսաւ մեղմորաբար:

Դանիէլ վեր առաւ արտասուալից աչերը:

— Այո՛, ըսաւ համր և ցած ձայնով մը, կը վշտակրիմ որչափ կրնայ մարդ մը վշտակրիլ:

Եւ իւր ձեռքերուն մէջ առաւ ոստիկանին երկնցուցած ձեռքը:

— Կեանքս խորտակեցաւ: Սրտիս ամէն զգացումները կը հարուածին, կը չարչարուին: Ահ եթէ միմայն իմ տկարութեանս... իմ կրքիս ականջ դնէի... տիկին տը Ռիչմօնի առաջարկը կ'ընդունէի...: Կը փախչէի անոր հետ, հեռու տեղ մը, այնչափ հեռու, որ յաւիտեան չի կրնան գտնել մեզ: Բայց ոչ, անտեղի է, անհնա՛ր է: Փախչիլը՝ ամէն բան մատնել, շանթը փայլատակել տալ է...: Մեզ կրնան գտնել միշտ...: Թերեւս մեզ կ'ամբաստանեն իրրեւ ոճրագործ...: Փախուտը չի կրնար բան մը դարմունել, աւելի կը ծանրացնէ մեր վիճակը: Չեմ կարծեր որ մարդ մ'ինձմէ աւելի դժբաղդ ըլլայ:

Բրէնպորն ժպտեցաւ իւր նուրբ և բարեմիտ ժպիտով:

— Ի՞նչ պիտի ըսէիք եթէ ձեզ չի սիրէր այլ ևս, հօծեց Դանիէլի ականջին: Երիտասարդ դատաւորը ցնցուեցաւ: Արեւի ճառագայթին պէս բան մ'անցաւ կապոյտ աչերուն մէջէն:

— Ճշմարիտ է, պատասխանեց. իրաւունք ունիք, կը սիրէ զիս...: Անոր սէրը կորսնցընելն աւելի ծանր և աւելի

չի դժնդակ կ'ըլլայ ինձի համար: Ձիս շրջապատող ամէն աւերումներուն մէջ ծաղիկ մը կայ, որուն անուշ հոտը մինչեւ ինձի կուգայ տակաւին, լոյս մը կայ, որ զիս կը լուսաւորէ ու կ'ողբուորէ, զիս կենաց հետ կը կապէ, թող չի տար որ էութիւնն անիծեմ և մարդկութիւնն արհամարհեմ: Անոր սէրը՝ Ո՛հ, կի՛ն, կի՛ն, Աստուծոյ ետեւ ամէնէն հօր. ստեղծիչ երջանկութեան, նախատիպ անձնութեան, երբ ճամարտապէս կի՛ն ես: Առանց քու նայուածքիդ որ կը մխիթարէ, կը սրտապնդէ և կը զօրացնէ՛, առանց քու համբոյրներուդ որ կը տաքցընեն, առանց քու սրտիդ, որ գորովէ ու անձնութեանէ կազմուած է, կեանքը շատ տգեղ, շատ դժնդակ, շատ տըխո՛ւր է: Երանի՛ անոնց որ կը սիրուին. երանի՛ անոնց որ կը սիրեն:

—Շա՛տ ճշմարիտ է, ըսաւ Բրէնպորն: Ուրեմն պէտք չէ որ յուսահատութիւնը ճնշէ ձեր սրտին պէս ուժեղ սիրտ մը:

—Ի՞նչ պէտք է ընեմ ուրեմն:

—կացութիւնը դէմ առ դէմ տեսնել քաջարար, առանց պատրանքի առանց տկարութեան:

—Բայց ո՛ր կողմէ ալ դիտեմ, ելից հնար մը չեմ տեսներ:

—կը սխալիք, ելից հնար կայ միշտ: Պէտք չէ երբէք ըսել թէ ամէն յոյս կորած է: Այլ պէտք է ըսել թէ զօրեղ կամքով մը ամէն բանի ճարը կը գտնուի:

«Որո՞ւ հետ է մեր պայքարը, մեզի պէս միսէ ու ոսկորէ կազմուած էակներու դէմ. մարդկային գործերու, մարդկային կամքերու, վատութիւններու, ոճիրներու, բարուց ապականութիւններու դէմ: Արդ՝ այս ամէնուն դէմ հանենք մեր պաղարիւնութիւնը, մեր խելքը, մեր կամքը: Միայն բընութեան օրէնքներուն ու վտանգներուն դէմ չենք կրնար բան մ'ընել: Ինչ որ մարդկային է, անոր դէմ մարդկրնայ ընել ուզածք: Ամէնէն դէշ վիճակները, կացութիւնները կը բարւոքին յամառ կամքի մը, անընկճելի կորովի մ'օգնութեամբ:»

Դանիէլ անոր կը նայէր զարմանքով: —կը զարմանաք այս խօսքերուս վրայ, պարո՛ն տը քէօր, յարեց Բրէնպորն, որովհետեւ ծանօթ չէք իմ կեանքիս...: Որովհետեւ չէք գիտեր

թէ սրտի ինչ ահեզ փոթորիկի մը պատճառով ապահովութեան պաշտօնատար եղայ: Այս միջոցիս իմ ձեռք վրայ ունեցած համակրութեան մէկ շարժառիթն ալ սա է թէ ես ալ որ մը զգացած եմ ինչ որ կ'ըզաք դուք հիմա. ես ալ ժամ մ'անցուցած եմ այդպիսի տազնապով մը: Ես հիմա մարդ չեմ, այլ ընկերական մեքենանային մէկ ստորին բայց օգտակար գործիքը: Ժամանակաւ ուրիշ բան էի . . . : Ես ալ սիրեցի . . . և կի՛ն մը խոսրտակեց զիս: Կարծեցի թէ կը մեռնէի . . . բայց ապրեցայ, մնացած կտորուանքովս կազմելով . . . ինչ որ կը տեսնէք: Բրէնպորն, ոստիկանութեան պաշտօնատար մը . . . լրտես մը, ինչպէ՛ս կ'ըսեն: Հրաժարեցայ ինձի համար ապրիլէ, և ուրիշներուն համար կ'աղբիմ . . . :

— Ա՛, դուք ալ վշտակրած էք:

— Այո՛, պարո՛ն, նոյն վիշտով զոր դուք կը կրէք, բայց իմա ձերիննէն գէշ էր, վասն զի ենթական արժանի չէր այդ տազնապին, այնպիսի սրտի մը կողմէ, որ այս կողս պատեանին տակ արժէք մ'ունէր . . . :

«Արդ, եթէ ես չի մեռայ կրած հարուածէս, կորուսած պատրանքէս, ամօթէս, որ գանձեր շոյլեր էի ցած հոգիի մը, որ իմ հոգւոյս տանջանքներուն վրայ կը ծիծաղէր . . . և եթէ ապրեցայ, պատճառն այս է թէ, նորէն կ'ըսեմ, անհնար բան չի կայ գորեզ կամքի մը համար. լրտես եղայ որպէս զի պատժեմ զայն . . . և պատժեցի՛ :

Եւ իւր ծանր ու քիչ մ'ալ կոր ուները ցնցելով՝ շարունակեց:

— Ո՛չ, անհնարին բան չի կայ բայց միայն տկար հոգիներու: Ինքնամոլ սիրտերու, նուաստախոհ միտքերու համար: Ամէն կացութիւն կրնայ բարւոքիլ, նոյն իսկ ձերն ալ՝ որչափ և յուսահատական երեւնայ . . . կնոջ մը, դաշնակիցի մը հետ, ինչպէս է տիկին տը Ռիչմօն:

— Բարեկա՛մ ըլլանք, ըսաւ անոր Դանիէլ, որովհետեւ եղբայր ենք մեր զգալու եղանակով և կրած վիշտերու նոյնութեամբ:

— Շնորհակա՛լ եմ, պարոն տը ֆէօր, գոչեց Բրէնպորն կարմրելով զգացած ուրախութեանէն: Պիտի ցուցնեմ թէ:

այս խոնարհ պաշտօնատարն արժանի է այդ պատուոյն... եթէ ոչ ուրիշ բանով, գոնէ իւր անձնուիրութեամբ:

Կարճ լռութիւն մը տիրեց այս երկու տարբեր երեւոյթով բայց սրտի և մտքի կողմէ իրարու նմանող մարդոց միջեւ:

— Գանք ձեզի, ըսաւ Բրէնպորն. նորէն կ'ըսեմ թէ կացութեւնը կրնայ բարւոքիլ. Փախուստը, զոր տիկին տը Ռիչմօն կառաջարկէ կրքի թափով, զոր կը հասկնամ և որ կը կրկնապատկէ իմ սքանչացումս այդ աշնուախոսի և իսկապէս գերազանց բնաւորութեան վրայ, փախուստը, կ'ըսեմ, չի կրնար փրկել ձեզ. ձեր հրաժարականն ալ չի կրնար: Պէտք է որ խրամատին վրայ կենաք, կանգուն, բարձրագլուխ, և սպասէք:

— Սպասե՛լ ի՞նչ բանի: Անթօան Բօսատի ձերբակալման հրամանագիրն ստորագրեցի...: Տը Ֆէրնիք կոմսուհիինն ալ ստորագրելով հարկադրիմ:

— Տիկին տը Ռիչմօն գնաց իմացընել իւր մօրը: Ան ալ պիտի հասկնայ թերեւս թէ մեռնիլը խայտառակութենէ նախամեծար է իրեն համար:

— Տիկին տը Ֆէրնիք անկարող է այդպիսի որոշում մ'ընելու:

— Կը կարծէ՞ք:

— Աներկբայ եմ: Դուք չէք ճանչեր այն կինը, ինչպէս որ ես կը ճանչեմ: Եւ ձայնը ցածրընելով:

— Անպատիւ կին է, ըսաւ կարմրելով Ֆէրնանտի համար, որուն մայրն էր:

Բրէնպորն մտածել սկսաւ:

— Ուրեմն ես ինքս երթամ տեսնեմ զայն:

— Դո՞ւք:

— Այո՛ ես: Ուստի թողունք զայս առ այժմ: Զիս այս վայրկենիս մտահոգ ընողը... ձեր զաւակն է:

Դանիէլ տնկուեցաւ մէկէն:

— Վտանգի մէջ է, գոչեց:

— Յայտնի չէ, բայց ամէն բան նախատեսել պէտք է...: Իբրեւ ձեզ վախցնելու միջոց կամ ձեզի դէմ վրէժխնդրութիւն, եթէ ամուսինն իմանայ... կամ կոմսուհին կասկածի...: Նախ, այդ Շամպէզին գիտէ զաւակ մ'ունենայնիդ... կը վախցուի այդ մարդէն, որ խորամանկ և պաղարիւն մարդ է... չարութեան մէջ:

— Ո՛հ, թշուառականը, ըսաւ Դանիէլ, այն թշուառականն է մեզ մեռցընողը:

—Սպանու թեան մեղսակից ըլլայ թէ ոչ... և ես աւելի հակամէտ եմ հաւատարու թէ գործակից եղած չէ, մանկաբարձուհիին թուղթերն այ ան գողցած է: Ուստի եթէ տիկին տը Ռիչմոնդին Բիէնֆիթ երթալուն և հոն զաւակ բերած ըլլալուն ապացոյցը տեսած է անոնց մէջ, հարկաւ տեսած կ'ըլլայ նաև տը Ֆէրնիք կոմսուհիին հոն երթալ կենալուն ապացոյցը, որովհետեւ ամէն նշաններէ կը հասկցուի թէ այդ ոճրին հեղինակը կամ գլխաւոր թելադիրն ան է:

—Ուստի...

—Ուստի պիտի ուզէ օգուտ քաղել այդ կրկին գաղտնիքէն: Պիտի երթայ տը Ֆէրնիք կոմսուհիին տունը, եթէ արդէն չէ գացած: Եւ չենք գիտեր թէ ի՛նչ կրնայ ըսած ըլլալ անոր, և թէ ի՛նչ որոշումներ եղած կրնան ըլլալ մէջերնին:

—Տէ՛ր Աստուած, այդ ալ ուրիշ փորձանք, մըմնջեց Դանիէլ՝ յուզուելով այս նոր վտանգէն:

—Կրնայ կոմսուհիին յայտնել իւր աղջկան ձեզի հետ յարարերութիւնը եւ զաւակ մ'ալ ունենալը:

—Այո՛, իրաւունք ունիք: Պէտք չէ որ տղան Տուէ փողոցը մնայ:

—Իմ ալ կարծիքս այդ է:

—Ո՛ւր տանինք պահենք, ըսաւ Դանիէլ:

—Բրէնպորն մտածեց վայրկեան մը:

—Իմ վրայ վստահութիւն ունի՞ք, հարցուց:

—Բացարձակ վստահութիւն:

—Ուրեմն գտած եմ ձեզի պէտք եղածը: Ես քոյր մ'ունիմ, որ Շանթի-յեիի անտառին մէջ փոքրիկ գիւղ մը կը բնակի, հինգ վեց տունէ բազկացեալ, որ Լապիշ կը կոչուի: Քոյրս այրի է, մինակ կ'ապրի իւր փոքրիկ տընակին մէջ, ուր ես ալ միտք ունիմ օր մը քաշուելու՝ երբ զգամ թէ սիրտս պէտք չունի այլ եւս մարդկային կենաց շարժումներէն և կրից տեսարաններէն նեղուելու: Այս գիւղը բաւական հեռու է Փարիզէն, բաւական անձանօթ, գործերու հոսանքէն հեռու, և մարդու մտքէն չանցնիր հոն երթալ հոն փնտռել ձեր որդին և հետի ստնտուն, այնպէս որ գոյութիւն չունեցածի պէս՝ աշխարհէ հեռու հանգիստ և անպահով կրնան ապրիլ:

«Կ'ուզէ՞ք որ հոն տանինք. ես վըստահ եմ քրոջս վրայ, ինչպէս ինձի»

— Կը'նդունիմ, բարեկամ, գոչեց Դանիէլ տը Բէօր, շնորհակալութեամբ կ'ընդունիմ... Ես կը ճանչեմ Ֆէրնանտը, երբ իւր ամէնէն գէշ հնչընուքներուն, իւր բարոյական դժնդակ տանջանքներուն վրայ աւելնայ այն գաղափարն ալ թէ զաւակը կրնայ ձեռքէն յափշտակուիլ, յուսահատութեան լրումն է: Խեղքին կուգայ... և չապրիր: Ուստի մեր զակին, մեր Գէորգին վրայ նախ պէտք է խորհիլ: Ինչ և ալ ըլլայ մեզի, պէտք է որ վըտանգէ ազատ ըլլայ ան... և եթէ ծընողքը պիտի ընկճին իրենց դէմ մըղուած պայքարին մէջ, ձեզի, Բրէնպո'րն, ձեր քրոջը, ընտիր սրտի մը, եթէ ձեզի կը նմանի, կը հաւատանք այն փոքրիկ էակը, որ մեր յանցանքին, մեր սիրոյն պտուղն է:

— Կ'ընդունիմ, պարոն, և շնորհակալ եմ, ըսաւ Բրէնպորն պարզապէս: Եւ ժամացոյցը ծոցէն հանելով տեսաւ որ ժամը չորսն էր:

— Պէտք է անպարեմ. ըսաւ, Ծանթիյեի հանդիպող կառախումբը ժամը

վեցին կ'ելնէ: Սիւրվիլիէրի կայարանը պիտի իջնենք, և հոնկէց կառք մը նստելով Լապիշ պիտի երթանք:

— Չուենք ուրեմն:

Եւ երկուքը մէկէն փութապէս մեկնելով դատական պաշտօնատունէն՝ Տուէ փողոց գացին և ուղղակի առաջին յարկն ելան ստնտուին քով:

Դանիէլ երկու խօսքով հասկցուց անոր թէ շուտով պէտք էր պատրաստուէր մանկիկին հետ մեկնելու:

Լուիզ կալթիէ, այս էր ստնտուին անունը, ինչպէս որ կը յիշեն ընթերցողք, քսան վայրկենի մէջ պատրաստուեցաւ:

Նոյն միջոցին Դանիէլ մէկ կողմ առնելով Բրէնպորնը.

— Կարելի է, մինչեւ խակ հաւանական է որ, ըսաւ, ես զինքը չի տեսած կամ իրեն լուր մը չի տուած, տիկին տը Ռիչմօն հոս գայ որդին տեսնելու: Զիս մտահոգ ընող կասկածը զայն ալ կրնայ մտահոգ ընել և պիտի ընէ անշուշտ: Եթէ գայ հոս և տղան չի գրանէ, ահաւելի հարուած մը կ'ըլլայ իրեն: Ուստի պէտք է իմացընենք իրեն որ պէս զի դող չելնէ:

— Չէ՞ք կրնաք գիր մը գրել իրեն :

— Իւր տունը երթալ անհնար է . . . :
էրկանը գալէն ի վեր, չեմ հանդիպիր
հոն : Բայց կրնամ գիր մը գրել և դռ-
նապանուհիին յանձնել, որպէս զի եթէ
գայ և զիս չի գտնէ, այն գիրէն իմա-
նայ տղեկին ուր ըլլալը . . . և ուղած
ժամանակ երթայ համբուրէ :

Վար իջան գետնայարկի սենեակը,
և հոն Դանիէլ գրասեղանին առջեւ
նստելով հետեւեալ տողերը գրեց .

« Պաշտելի Ֆէրնանտա .

« Մեր գանուած եղերական վիճակին
« մէջ, աւելի ապահովութեան համար՝
« խոհեմութիւն համարեցի մեր Գէորդ-
« գիւլը հեռացընել Փարիզէն :

« Բրէնպորն, իրրև անձնուէր բարե-
« կամ, կ'առաջարկէ ինձի իւր քրոջը՝
« այրի տիկին Սորլէնի տունը դնել առ
« այժմ :

« Տիկին Սորլէն Լապիշ գիւղակը կը
« բնակի, ուր Սիւսովիլիէրի կայարանէն
կ'երթցուի :

« Կայարանին դիմացի ճաշարանապե-
տը կառք մը կուտայ Լապիշ գեղն եր-
թալու համար :

« Ես հիմայ ճամբայ պիտի ելնեմ մեր
« զաւակն հոն տանելու համար :

« Քաջալերուէ, պաշտելիս, ես վստա-
հութիւն և հաւատք ունիմ ապագային
« վրայ » : (Ստորագրութիւն)

Դանիէլ ծալլեց այս նամակը, և
պատեանին վրայ գրեց .

ՕՐԻՈՐԴԻ ԿԱՌՆԻԷ

— Ահա լմնցաւ, ըսաւ Բրէնպորնի :
Դնացէք վար իջուցէք ստնտուն, ես ալ
այս նամակը դռնապանուհիին տամ
քանի մը կարելու յանձնարարութիւն-
ներով :

Բրէնպորն ստնտունին քովն ելաւ :

Դանիէլ ալ իւր փոքրիկ գետնայար-
կին դուռը գոցելով՝ դռնապանուհիին
սենեակը գնաց :

— Սիրելի տիկին Պրնօա, ըսաւ անոր,
առ ամենակարեւոր նամակը ձեզի կը
յանձնեմ : Եթէ օրիորդ կառնիէ հոս
գայ այս իրիկուն կամ վաղ առտու,
վեր չելած իրեն տուէք . . . բայց մինակ
իրեն :

— Շատ աղէկ, այնպիսի տեղ մը դը-
նեմ որ մարդ չի տեսնէ : Եւ պահարա-
նին դարակը քաշելով մէջը դ աւ :

— Հիմա, ըսաւ Դանիէլ, պէտք է ի-
մացընեմ ձեզի թէ տղեկն ու ստնտուն
պիտի տանիմ :

—Պիտի տանի՛ք, կրկնեց բարի կինը
զարմանքով:

—Այո՛, ժամանակի մը համար գեղե
պիտի տանիմ օգտավորութեան: Պէտք
չունիմ, այնպէս չէ՞, նորէն ապսպրե-
լու թէ՛ բացարձակ լռութիւն պիտի
պահէք...: Ամէն ժամանակէ աւելի
հիմայ պէտք է:

—Կրնաք այդ մասին վստահ ըլլալ
ինձի:

—Գիտեմ, և ապերախտ չեմ գըտ-
նուիր:

Նոյն միջոցին Բրէնպորն երեւցաւ
ստնտունն հետ, որ տղեկը թեւերուն
մէջ գրկած էր խանձարրապատ:

Կարասիները որ բաւական ծանր
էին, Բրէնպորն ձեռքն առեր էր:

Նոյն միջոցին սլարապ կառք մ'անց-
նելով, կանչեցին և ժամը Յին քա-
ռորդ մնալով Հիւսիսային կայարանը
հասան:

Ժամը վեցին, Բրէնպորն, Դանիէլ,
ստնտուն և տղեկը շոգեկառքը մտան,
որ անմիջապէս ճամբայ ելնելով քա-
ռասուհիեզ վայրկեանէն Սիւրվիլիէրի
կայարանը հասաւ:



ԲԱՆ ՄԸ ՉԻ ԿՈՐՄՈՒԻՒ ԵՐԲԷՔ

Յէրնանտ՝ մօրը քովէն մեկնած յա-
մանակ՝ ինքնիրմէ ելած էր. ըրածիս
ու զգացածին տէրը չէր գրեթէ:

Ինչ պատճառներ ալ ունենար ատե-
լու և արհամարհելու տը Յէրնիք կոմ-
սուհին, այդ կինը վերջապէս իւր
մայրն էր, և թէպէտ երբէք բարի
սիրտ և գորով ունեցած չէր իւր ազ-
ջկանը վրայ, բայց և այնպէս այն աս-
տիճան զօրեղ կապեր կան, որոց խը-
պումը միշտ մեր մարմինին մէջ մասը
կը տանի իրեն հետ և ծածուկ վէրք մը
կը բանայ մեր սրտին մէջ:

Ասկէ դատ, անզգամութեան, ապա-
կանութեան և վատութեան այնպիսի
վիհեր կան, որք գլխու պտոյա կը
պատճառեն պարկեշտ հոգիներու, բա-
րոյական անկումի աստիճան մը, զոր
չեն կրնար հասկնալ, չեն կրնար հան-
դուրժել, մինչև իսկ ուրիշներու վրայ:

Ասկէ դուրս, վիճակն ալ այն աս-
տիճան տխուր, այն աստիճան ողբալի
էր, որ ամէնէն կորովի, ամէնէն զօրեղ
էութիւնը կրնար շմորել:

Ֆէրնանտ ամէն մասամբ բաժանորդ էր Դանիէլ տը Քէօրի տաղնապին:

Անոր պէս ինքզինք վտանգներէ շրջապատուած կը տեսնէր: Կրնանք ըսել թէ՛ անկէ աւելի կը վշտագնէր սա միակ պատճառաւ, որ ընտանեկան կենաց փորձութիւններու մէջ կինն աւելի դառնապէս կը զգածուի միշտ:

Եւ միթէ Ֆէրնանտ ալ կրկնապէս չէ՞ր հարուածուէր իբրեւ դուստր:

Մայրն էր այդ մեղապարտ կինը, որ դատական իշխանութեան ձեռքը պիտի իյնար:

Եւ հայրն էր այն պարկեշտ մարդը, տիպար ասպետական ուղղութեան, որուն անունը խայտառակութեամբ, խոհերով և արիւնով պիտի ծածկուէր երբ ամէն բան երեւան ելնէր:

Կը հասկնար որ կոմսուհին մահը միայն կրնար փրկել կացութիւնը...

Եւ այս գաղափարը տենդի սարսուռներ կուտար իրեն...

Ինքը՝ Ֆէրնանտ՝ վայրկեան մը չէր սպասեր... եթէ անոր տեղն ըլլար և կ'սպաննէր ինքզինք... բայց կ'ըզգար որ մայրը չի պիտի ընէր այդ բանը: Այս մասին զգացածը չէր հա-

մարձակեր ինքնիրեն իսկ խոստովանիլ, ինքզինք իբրեւ ծնողասպան գտնելով իւր սրտին փափկութեան մէջ՝ պահ մ'այդ բանը մտքէն անցունելուն համար իբրեւ փրկութեան միջոց, թէև մօրը ըսելու քաջութիւն չէր ունեցած... ոչ ալ թերեւս կրցեր էր ըղձալ՝ երբ անոր առջեւը գտնուեր էր:

Միւս կողմէ մայրը գիտէր իր գաղտնիքը, գիտէր որ Դանիէլ տը Քէօր իբր տարփածուն էր:

Ի՞նչ պիտի ըլլար հետեւանքը:

Կոմսուհին կ'ատէր զինքը... ինչպէս որ կատէ մարդ մէկը որուն դէմ յանցանք մը գործած է, և կը ջանար այդ գաղտնիքը զէնք ընել ձեռքը ինքզինք փրկելու և ազջիկը կորուստի վիճը ձգելու համար, առանց վարանման, առանց խղճմտութեան:

Բօլ տը Ռիչմօնի պիտի յայտնէր, որ առանց ինքնիրեն ըտելու թէ իւր բռնած ընթացքն ու գործածած ձեւերը կ'արդարացնէին իւր կինը, վրէժ առնելու պիտի ելնէր, և ուրախութեամբ պիտի առնէր, որովհետեւ վտանգ մը չի կար իրեն համար:

Բայց կրնար նաև մեղսակից համար-

բուիլ իւր տարփուհիին՝ զոքանչին՝ ոճ-
բագործութեան և ամբաստանուիլ ա-
նոր հետ :

Ֆէրնանտի գաղափարը սակայն իւր
սիրելիին Դանիէլ տը Քէօրի ուղղա-
պէս սպառնացող վտանգին վրայ կը
դառնար միշտ :

Եւ այն գաղափարը թէ անոր սէրը՝
պաշտած կնոջը սէրը՝ անոր կեանքն
իսկ վտանգի մէջ պիտի ձգէր, Ֆէր-
նանտի սիրտը կը կեղեքէր :

— Ա՛հ, անիծած եմ ես, անիծա՛ծ,
կ'ըսէր ու կը կրկնէր :

«Եւ սակայն զիս աւելի լաւ կ'ըզամ
անորն րլլալէ՛ս ի վեր... փոխեց,
բարձրացուց գաղափարներս ու ըզգա-
ցումներս :

«Գործած յանցանքս, որովհետեւ յան-
ցաւոր եմ օրինաց և աշխարհի առջեւ,
ազնուացուցի իմ սիրոյս բարձրու-
թեամբ ու պարկեշտութեամբ :

«Ա՛հ, եթէ իմ զբօսանքս միայն փնտ-
ռէի, իմ հաճոյքիս միայն ուշ դնէի...
Իմ շահերս ու ճաշակներս միայն գո-
հացընել խորհէի... Ինչպէս կ'ընեն
չատ կիներ նմանօրինակ պարագանե-
րու մէջ, առանց խղճմտութեան, ա-

ռանց հոգ ու գուժ ունենալու ուրիշ-
ներուն զգացմանց և ցաւոց վրայ, իմ
ինքն ասիրութիւնս ալ արժանի էր այս
պատիժին, և իրաւունք չէի ունենար
գանդատելու :

«Բայց ես այնպէս չի վարուեցայ Դա-
նիէլի հետ... : Վկայ է Աստուած, զոր
յաճախ աղաչեցի օգնութեան կոչեցի
ըսելով. —

«Ներէ ինձի, Աստուած իմ, վասն զի
անկեղծ եմ, սիրոյս մեծութիւնը սրբ-
տիս մէջ կարգալով՝ թողութիւն շնոր-
հէ ինձի, և օր մը թերեւս քու ամե-
նակարող զօրութիւնդ շնորհէ ինձի այն
կատարեալ երջանկութիւնը, որուն կը
փափաքիմ : Քաջութիւն աուր ինձի,
ազղած սիրոյս բարձրութեանը հաս-
ցուր իմ կամքս... և զիս արժանի ը-
րէ այն սիրոյն, նոյնը ինձի ալ ներ-
շնչելով» :

Այսպէս երազելով Ֆէրնանտ կը քա-
չէր՝ առանց ուշադրութիւն տալու իւր
նիւթական գործերուն, ոչ ալ մարմ-
նոյն բռնած ուղղութեանը, այնչափ
հոգին գրաւուած և միտքն ալ պա-
շարուած էր այդ միակ զբաղումով :

Յանկարծ կանգ առաւ, և աչքը

վերցընելով՝ տեսաւ որ Տուէ փողոցին մէջն էր, 29 թիւ տան առջեւ:

Մարմինը սրտին գաղտնի բնազդին հնազանդելով՝ զինքը մեքենաբար, անգիտակցաբար դէպ այն տունը մը դեր էր, ուր գրեթէ ամէն օր կ'երթար Դանիէլը տեսնելու, և ուր դաւակը կ'ապրէր:

Դանիէլ հոն չէր այն ժամուն, վասն զի ուշ էր: Բայց Գէորգը հոն էր:

— Ուզեց որ համբուրէր զաւակը:

— Անմեղ արարածին քաղցր ժպիտը լուսոյ ճառագայթ մը կրնար ձգել այն խաւարին մէջ ուր ինքը կը թալթըլէր:

Յանկարծ միտքն եկաւ թէ ան աչ կրնար վտանգուիլ, և զինքը տաղնապեցընող մըրիկէն յափշտակուիլ:

Առանց խորհելու դռնէն ներս մըտաւ, նետի պէս վազեց անցաւ բակն ու սանդուղէն վեր դիմեց, այնպիսի արագութեամբ և այն աստիճան թեթեւ քայլերով, որ տիկին Պընօա, նոյն միջոցին կրնակը դարձուցած ըլլալով՝ չի կրցաւ տեսնել անցնիլը:

Սանդուղին զլուխն հասնելով, բոժոժը քաշեց:

Պատասխան տուող, դուռը բացող չեղաւ:

Նորէն բոժոժը քաշեց դողահար: Յետոյ ականջը դրանը դնելով մտիկ ըրաւ... Սոր լուր թիւն: Վախցաւ:

— Խէ՛նթ եմ, ըսաւ, իւր վրայ խընդալու ձեւով: Ծծմարը դուրս ելեր է, մանկիկին հետ... Եւ սակայն դուրս ելնելու ժամը չէ, ուշ է: Ի՞նչ կայ արդեօք, դարմանալի՞ բան:

Եւ սանդուղէն վար վազելով հասաւ դռնապանուհիին օժեակը, և ներս մըտաւ սրատորոփ:

— Ո՞ւր է ծծմարը, հարցուց:

— Ա՛, տիկին, դո՞ւք էք: Ներեցէք չկրցի ձեր անցնիլը տեսնել:

— Ի՞նչ կայ, կրկնեց Ֆէրնանտ. ինչո՞ւ չի բացուեցաւ ինձի սենեակին դուռը:

— Պ. Դանիէլ քիչ մ'առաջ դուրս ելաւ հոսկէ:

— Հո՞ս էր, հարցուց Ֆէրնանտ քաջալերական ժպիտով մը:

— Այո՛ տիկին, և սա նամակը ձգեց ձեզի համար, ըսաւ՝ թողթը տալով: Ֆէրնանտ յափշտակեց նամակը և առաջին տողերէն սիրտը հանդարտեցաւ:

Դանիէլի վրայ հաւատքը խորին էր, բացարձակ էր: Կը ճանչէր, գիտէր գնահատել այս անձնուէր հոգին, բարձր խելքը, և զօրեղ բնաւորութիւնը:

Իրմէ առաջ մտածեր էր իրենց զաւկին վրայ. խորհէր էր ապահովութեան մէջ դնել զայն և միջոցը գտեր ու գործադրեր էր, երբ ինքն ալ նոյն կասկածէն մղուելով եկեր էր՝ առանց բան մը խորհած ու պատրաստած ըլլալու:

—Ա՛հ, ըսաւ ուժով մը շունչ առնելով, երբ տեսայ որ դուռը շէր բացուեր ինձի, շատ վախցայ:

—Կը հասկնամ, պատասխանեց տիկին Պընօա, իմաց չէր տրուած ձեզի:

—Ոչ, բայց հիմա սիրտս հանդարտ է: Շնորհակալ եմ, տիկին Պընօա: Ժամանակն ուշ է... փախչիմ:

Եւ դուրս ելաւ, կառք մը բռնեց և իւր օթեւանը գնաց կռնել փողոցը:

—Պատուական մարդ է Դանիէլս, կ'ըսէր ճամբան ինքնիրեն: Թէ՛ իւր քովն ըլլամ, և թէ՛ հեռուն, կ'ղգամ իմ վրայ ունեցած հոգածութիւնը...: Քիտեմ որ սիրտն ալ միտքն ալ ինձի հետ է... ինձի դպչող կամ շա-

հագրագող ոչ մէկ բան կը մոռնայ...: Եւ ես չը սիրե՛մ զայն ինչպէս որ ինքը զիս կը սիրէ. և մեղապարտ կամ յանցաւոր ըլլամ զինքը սիրելով...: Կը կարծեմ թէ՛ ամէնէն անձնամու, ամէնէն չոր սիրտ, ամէնէն թեթեւաբարոյ, ամէնէն հասարակ կինն ալ վերջապէս կը տաքնայ այդ սիրոյն բոցովը, կը բռնուի, կը գրաւուի այդ գորովին քաղցրութեամբը, որ թերանալ չգիտեր... որ թուլնալ, ձանձրանալ և վայրկեան մ'իսկ մոռնալ չգիտեր երբէ՛ք:

Կառքը կեցաւ:

Տուն հասեր էր:

Դէմքը տխրեցաւ:

Բանտը կը մտնէր:

—Պարոն դերկոմսը չուզեց ճաշել առանց տիկինին, ըսաւ սենեկապանուհին, երբ կ'օգնէր իրեն փեղոյրն ու թիկնոցը հանելու:

—Արդարեւ քիչ մ'ուշ մնացի. պատասխանեց Ֆէրնանտ պաղութեամբ և ճաշի սրահը մտաւ:

Դերկոմսը կը ճեմէր հոն՝ իրեն ըստպատելով:

—Սիրտս անհանգիստ ըլլալ կ'ըսկսէր,

սիրելի՛ս, ըսաւ իրեն, երբ ծառան սե-
ղանր կը պատրաստէր:

— Ատէլ տը ներսի տունն էի և զիս
չի թողուց, պատասխանեց Ֆէրնանտ:

Երկու ամուսինները դէմ դէմի նստան,
վերջին աստիճան կանոնաւորութեամբ
իրենց սպասաւորներուն առջեւ, որք
բնաւ չէի կասկածեր այն մեծ վիհը որ
կը բաժնէր կիներ այրէն, և այն զգա-
ցումները զոր կը տածէին իրարու դէմ:

Այս դուրս գլխի ճաշը ճամբորտ
տանջանք մ'էր Ֆէրնանտի համար,
մանաւանդ այն օրը:

Ամուսնին նայելով՝ կ'ըսէր մտքէն.

— Եթէ մայրս խօսի իրեն... եթէ
իմանայ թէ ես Դանիէլը կը սիրեմ,
թէ անոր տարփուհին եմ, ի՞նչ պիտի
ընէ:

Պազ քրտինք մը կը թորէր ճերմակ
մարմինէն, և սիրտը կը բարախէր
ցասումէն, երբ կը մտածէր թէ՛ այս
մարդը կընար թերեւս մեռցնել Դա-
նիէլը, կամ ուրիշ բուն միջոցով մը
զինքը մշտնջենապէս բաժնել անկէ:

Պահ մը Դանիէլի արիւնովը ծած-
կուած երեւցաւ իրեն:

Այդ մարդուն ձեռքով Դանիէլի գըլ-

խուն վրայ կախուած վտանգներուն
երեւակայական տեսիլն ա'յն աստիճան
սարսափելի էր, ա'յն աստիճան բուն
էր զգացած ատելութիւնը այդ անձին
դէմ, որ կընար վաղը դահիճն ըլլալ
իւր տարփածուն, խողխողիչն ըլլալ
իւր երջանկութեան, որկրնար զինքը այն
վիճակին մէջ դնել, որ յաւիտեան չի
կարենար տեսնել զայն, այս մտածու-
թիւնն ա'յն աստիճան սոսկում պատ-
ճառեց իրեն, որ թաշկինակը գրպանէն
հանեց, խեղդելու համար սարսափի ա-
ղաղակը որ շրթունքէն դուրս պիտի
պոթկար: Եւ ցատկեց ելաւ սեղանէն,
որպէս զի վախչէր հեռանար այդ ա-
րիւնուշտ տեսիլէն և անհանդուր'ելի
ներկայութենէն, որ տեսակ մը մատ-
նութիւն և իւր կարողութենէն շատ
ծանր վատթարացում մը կը թուէր ի-
րեն:

Բայց իւր այդ յուզման մէջ, թաշկի-
նակը գրպանէն հանելով սեղանէն ցատ-
կած ելած միջոցին, մոռնալով որ Դա-
նիէլի նամակը գրպանը գրած էր, չի
կրցաւ տեսնել թէ՛ իւր աթոռին քովն
ինկեր էր:

— Ի՞նչ ունիս, սիրելի՛ս, հարցուց

Բօլ տը Ռիչմօն, զարմանալով կնոջը դէմքին տարօրինապէս այլայլելուն և սեղանէն ցատկել ելնելուն վրայ:

— Բան մը չէ... տկարութիւն մը... բայց կ'անցնի... քիչ մ'օդ առնելու պէտք ունիմ:

— Եւ վախնալով որ ամուսինը իւր թեւը մտնէր զինքը մինչեւ ճաշի սրահին դուռը տանելու համար, դուրս նետուեցաւ դողալով:

Բօլ տը Ռիչմօն, որ երկու քայլ առեր էր կնոջը մօտենալու համար, աչքը դիպուածով անոր աթոռին հանդիպելով՝ նշմարեց գետինը ինկած նամակը, և մէկէն ծռելով վերցուց:



ՈՒՐ ԲՕԼ ՏԸ ՌԻՇՄՕՆ ԿԻՄԱՆԱՅ ԻՒՐ ՎԻՃԱԿԸ

Այս դէպքը պատահած ժամանակ ճաշը գրեթէ աւարտած էր, և երկու ամուսինները մինակ մնացած էին, որովհետեւ սպասաւորներն ըստ սովորութեան աղանդերը բերելէ ետեւ դուրս ելած էին:

Ուստի տեսնող չէր եղեր Ֆէրնան-

տին մեկնիլը, ոչ ալ անոր ձգած նամակին վերցուիլը Բօլ տը Ռիչմօնի ձեռքով:

Ամուսինն անմիջապէս աչքը հասցէին վրայ նետելով:

— Յրիորդ կառնիէ՛ կարդաց զարմանքով:

— Ի՞նչ է այս ըսաւ ինքնիրեն, կընոջս ուղղուած չէ, ոչ ալ հոս ուրիշ մէկու մը... վասն զի Տիկին տը Ռիչմօնի ծառայող կիներուն ոչ մէկն այդ անունը կը կրէ:

«Ի՞նչ գործ ունի հոս այս նամակը... այս աթոռին քով:

«Ասկայն տարակոյս չունիմ որ Ֆէրնանտի վրայէն ինկաւ, թաշկինակը հանած միջոցին... ձմրթկած պատեանը կը ցուցնէ թէ՛ նեղ գրպանի մը մէջ դրուած էր... շրջազգեստի գրպանի մը մէջ:

«Գիրն ալ ծանօթ չէ ինձի:

«Բայց նայինք ի՞նչ կ'ըսէ:»

Այն օրէն ի վեր որ Ֆէրնանտ աւրուեր էր իրեն հետ, այն օրէն ի վեր որ իւր ամօթալի գաղտնիքն իմացեր էր, դերկոմսին երազն էր վրէժ առնել կնոջմէն, կամ այնպիսի առիթ մը

գտնել, որով նորէն իւր ճանկն ան-
ցունէր զայն:

Եթէ մինչեւ հիմա խնամով չէր հըս-
կած անոր վրայ, անցած անցքերն ու
գէտքերը զինքն այն աստիճան գրաւած
և իւր անձը փրկելու մտահոգութեամբ
պաշարած էին, որ պարապ ժամանակ
չէր ունեցած:

Բայց դարձեալ անհոգ չէր կեցած,
կը դիտէր, կ'սպասէր առիթ մը, կամ
զէնք մը ձեռք անցունել կ'ուզէր:

Ուստի նամակը պատեանէն հանեց
առանց խղճմտութեան, որովհետև ան-
երկբայ էր կնոջը գրպանէն իյնալուն,
հետեւապէս իրաւունք ունէր պարու-
նակութիւնն իմանալու:

Նախ ստորագրութեանը նայեցաւ:

— «Դանիէ՛լ, կարդաց. չեմ ճանչեր,
փոքրիկ անուն մը:

Յետոյ աչքը վերցուց առաջին տողին
վրայ, և սա իօսքը կարդաց.

«Պաշտելի՛ ֆէրնանտո»:

Այս անգամ Բօլ տը Ռիչմօնի գոյնը
փոխուեցաւ:

— «Պաշտելի ֆէրնանտո...» մրմռաց:
Իւր անունն է... իրե՛ն գրուած է:

Եւ շտրունակեց ընթերցումը:

Աւելորդ կը համարինք նամակին պա-
րունակութիւնը կրկնել, որուն մէջ
Դանիէլ կը հասկըցընէր Ֆէրնանտի ի-
րենց զաւկին համար ըրած որոշումը-
և որ բնաւ տարակոյս չէր թողուր ա-
նոր հետ ունեցած յարաբերութեան
վրայ:

Կարդացած միջոցին ձեռքերը կը դո-
ղային:

Ֆէրնանտ տարփածու մ'ունէր:

Ֆէրնանտ շնացող մ'էր:

Կոյր կատաղութիւն մ'զգաց մէկէն:

Բնաւ մտքէն չանցուց թէ այդ ա-
մուսնական տարաբաղդութեան առա-
ջին հեղինակն ինքն էր, զինքը զար-
նող զէնքը ինք սրեր էր:

Բնաւ չանցուց մտքէն թէ իր բռնած
ընթացքը չէ՞ր արդարացնէր իր խայ-
տառակ ընթացքը, տը Ֆէրնիք կոմ-
սունիին հետ ունեցած ապօրէն յարա-
բերութիւնը իրաւունք կը թողուէին
իրեն զարմանալու այս եղածին վրայ
և որ և է վրէժխնդրութիւն միտքէն
անցունելու:

Ո՛չ Ֆէրնանտ իր կինն էր, կը խա-
բէր զինքը: Այս միայն կը տեսնէր,
այս միայն կը հասկընար:

Եւ որչափ որ այլն չէր սիրեր զայն, իր նախանձութիւնն ու կատաղութիւնը դարձեալ վերջին աստիճան բուն էին, որոց վրայ շատ չանցած՝ ուրիշ մ'ալ աւելցաւ, այն էր վրէժխնդրութեան զգացումը:

Ֆէրնանա կը խարէր զինքը, բայց հիմա գործն երեւան ելած էր:

Յանկարծ միտքն եկաւ թէ՛ այդ նամակին միջոցով Ֆէրնանա իր ձեռքն ինկած էր հիմա, պիտի հարկադրուէր դողալ իւր առջեւ, ոտքը պիտի իյնար, ներում, շնորհ, գթութիւն պիտի խնդրէր:

Թուեցաւ իրեն թէ նորէն անոր տէրը պիտի ըլլար:

Այս մտածութիւնն սիրովեց զինքը:

Յաղթական տմոյն ժպիտ մը կծկեց իր բարակ շրթունքը:

Ֆէրնանա նախտտեր, անարգեր, թշնամաներ էր զինքը: Իրեն հետ ունեցած ամուսնական կապը խզեր, զինքը վռնտեր էր իր ննջարանէն՝ իրբև անարգ և զզուելի օրարած մը:

Հիմա կարգն իրենն էր զայն ոտքին տակն առնելու, ջախջախելու, ուղածին պէս անարգելու, նուաստացնելու:

Կենաց և մահու իրաւունք ունէր անոր վրայ... ինքզինք ամենազօր կը զգար անոր նկատմամբ:

Մեռցընել՝ չէր անցունէր միտքէն. բայց այլևայլ ձեւերով չարչարել, պատժել կը խորհէր, իրմով գոհ չըլլալուն, իրեն դէմ գլուխ վերցընելուն, ասպտամբելուն համար:

Նախ երկիւղ չունէր այլեւս իր զոքանչին հետ ապօրէն յարաբերութեանը համար: Տիկին տը Ռիչմոն ինքն ալ նոյն յանցանքին տէրն ըլլալով՝ չէր կրնար այլեւս բան մ'ընել իրենց դէմ:

Երկրորդ կը բաժնէր զայն իւր սիրած ու սիրուած տարփածուէն:

Վերջապէս կրնար ուղածին պէս իշխել, բռնանալ իր կնոջը վրայ, և իր ամէն հաճոյից հպատակեցընել:

Եւ վրէժխնդրական ու հեշտասիրական կրկին փայլակներ սկսան նշողել իր տօգոյն աչերուն մէջ:

Նորէն կարդաց նամակը:

Ֆէրնանա դաւակ մը ունէր:

Առաջին վայրկեանէն աչքին չէր դարկեր:

Բայց հիմա կը զարնէր:

Եւ կը պաշտէր այդ դաւակը, ինչ-

պէս որ կը հասկցուէր նամակէն :

Առանց անոր, առանց այդ փոքր էակին, որուն տուած էր իւր սիրտն սահողին, թերեւս նորէն ընդգիժանար իրեն, աչքն առնելով գայթակղութիւն և մինչեւ իսկ մահը, փոխանակ իրեն հնազանդելու, իւր լուծին ասկը մըտնելու, տարփածուն զոհելու : Բայց զաւակ մ'ունէր, որուն համար անշուշտ պիտի ուղէր ապրիլ, որուն սիրոյն համար ամէն բան յանձն պիտի օռնէր, ամէն զոհողութիւն պիտի ընէր :

—Պէտք է մտածել ասոր վրայ, ըսաւ : Վերջապէս ձեռքիս մէջն է : Վրէժս պիտի առնեմ իրմէ :

Եւ կրճտեց ակռաները :

—Բայց ո՞վ է տարփածուն, ըսաւ : Դանիէլ : Ի՞նչ Դանիէլ : Այս գիլն անծանօթ է ինձի :

Տասն վայրկեան մնաց հոն անշարժ և խոկուն իւր բռնելիք ընթացքին վըրայ մտածելով :

Առաջին բանն էր Ֆէրնանտը թողուլ իւր ապահովութեան մէջ, չի յայտնել գիտցածը, մինչեւ իսկ ամենավոքը կասկածի նշան մը չի ցուցնել :

Այս մտածութիւններուն մէջ էր,

դուռն ուժով մը բացուեցաւ, և Ֆէրնանտ ներս մտաւ :

Նամակին կորսուիլը նշմարեր, սաստիկ դող ելեր էր յիշելով որ սեղանին առջեւ թաշկինակը հաներ էր, ուստի եկեր էր նամակը գտնելու, որ եթէ ամուսնին ձեռքն անցնէր, զինքը, զաւակը ու Դանիէլը մէկանց անոր կը մատնէր :

Դերկոմսը տեսնելով, մնաց հոն գարմանքի և սարսափման թեթեւ տուտ մը զսպելով :

Ամուսինը չի նշմարել ձեւացրնելով՝ չաւրեց իւր հանդարտութիւնը :

Կատարելապէս տէր էր իրեն, և եթէ պէտք ըլլար, կեղծաւորութիւնը մինչեւ վերջին կատարելութեանը կը հասցընէր :

Գրեթէ ամէն վատ մարդիկ այսպէս են, ինքզինքնին բռնել գիտեն : Պաշտպանութեան ամէնէն մեծ միջոցնին է : Այս կերպով զերծ կը մնան դիւրազդածութեան կամ ուրիշ որ և է կրից շարժումով մ'ինքզինքնին մատնելու վտանգէն :

Այն մարդուն պատմութեանը կը նըմանի, որ հակառակորդի մը կռիւէ

ոտքի հարուած մ'ուտելով ետեւին, առանց դառնալու և փոյթ ընելու շարունակեց ճամբան:

Հետեւեալ օրը, զարնող մարդը որ և է պատճառաւ զղջալով բրածին վըրայ, կ'ուզէ ներում խնդրել: Միւսը, ինքզինքին տէր, անուշ ժպտով մը կ'ընդմիջէ անոր խօսքը:

—Ինձի բա՞ն մ'ըրիք, կ'ըոէ անոր, բայց ես չի նշմարեցի, բնաւ չի նշմարեցի:

Բօլ տը Ռիչմօն ալ, թէև սովորականէն քիչ մ'աւելի դեղնած, կնոջը մօտեցաւ, և յոյժ բնական գէմքով մը.

—Ի՞նչպէս եղաք, սիրելիս, հարցուց անոր: Ես մարդ պիտի զրկէի ձեզնէ լուր առնելու:

—Քիչ մը լաւ... շնորհակալ եմ. պատասխանեց Ֆէրնանտ զսպելով իւր յուզմունքը: Կը կարծէի թէ հոտի սըրուակս հոս մոռցեր եմ... բայց չեմ տեսներ:

Եւ աչքովը կը խուզարկէր նստած աթոռին քովերը:

Տը Ռիչմօն նշմարելով.

—Նամակը կը փնտռէ, ըսաւ մաքէն: Ֆէրնանտ չի գտաւ փնտռածը, բայց

ամուսնին հանդարտութիւնը քաջալերեց զինքը:

Երբ դուրս ելաւ իւր՝ սենեակը վերադառնալու համար, համոզուած էր թէ Դանիէլի նամակը, ո՛ւր և ձգած ըլլար, ամուսնին ձեռքն անցած չէր:

—Հիմա, ըսաւ ինքնիրեն Բօլ տը Ռիչմօն, երբ մինակ մնաց, պէտք է իմացնեմ Տիանին, և խորհուրդ հարցընեմ: Բոլոր այս գործին մէջ, որ գրեթէ ինձի չափ անոր ալ կը դպչի, պէտք է համաձայնութեամբ վարուինք:

Եւ անմիջապէս ելաւ զոքանչին տունը գնաց:

Գ Ի Ի Ղ Ա Կ Ը

Լապիշ գիւղակը գիտցող քիչ մարդկայ: Հինգ տունէ կը բազկանայ Շանթիյեի անտառին մէջ, ծառերու գեղեցիկ շրջանակով մը, որ տերեւներու մէջ ծածկուած բոյնի մ'երեւոյթ կուտայ անոր:

Հոն հասնելու համար, Սիւսվիլիէոի կայարանէն պէտք է նախ Լիւզարշի ճամբան բռնել, յետոյ երկու քիւ-

մէթրի չափ երթալէ ետև, մեծ ճան-
բէն աջ կողմ դառնալ խնճորենիններէ
չըջապատուած օճապտոյտ Կրբուղիի
մը մէջ, որ դարուփոս դաշտէ մ'անց-
նելով կը հասնի անտառին եզրը, ան-
կէց ալ քիչ մը տեղ քոյնտի քալելով
Լապիշի ճամբան կը տեսնուի:

Գիւղակը հասնելէ առաջ հին վանքի
մը պատը կը տեսնուի մատուռի կա-
մարներուն մնացորդներովը: Քիչ մ'ան-
դին ալ ագարակ մը բլուրի մը կրթը-
նած, անկէց ալ երկու բոպէի չափ
անդին Լապիշի տուները կը տեսնուին,
խոշոր կաղնիներէ հովանաւորուած:

Դանիէլն ու ընկերները, այսինքն
ծծմարը, մանկիկն ու Բրէնպորնը տա-
նող կառքը մէկ ժամու մէջ կրցեր էր
հասնիլ Լապիշի մօտ:

Նոյն միջոցին արեւը մարը կը մըտ-
նէր բարձրաբերձ ծառերու ետին ծած-
կուելով և հորիզոնը ծիրանազարդե-
լով, որուն ոսկեգօծ պայծառութիւնը
հակապատկեր մը կը կազմէր լռիկ հո-
վիտին մէջ սողացող լայն ստուերնե-
րուն հետ:

Հակառակ իւր սրտատանջ մտահո-
գութիւններուն, Դանիէլ ար Գէօր ըս-

փոփանք մ'ղգաց այդ գեղջկական սի-
րուն տեսարանէն. և յոյս ու վստա-
հութիւն ծագիլ սկսան սրտին մէջ:

Սոր լռութիւն կը տիրէր իւր շուր-
ջը. ընկերներն ալ մտքի ամփոփում
մը կ'զգային բնութեան խաղաղիկ ազ-
դեցութենէն, որ մեծ քաղաքին խառ-
նաչփոթ գոռուգոչումներուն ու ան-
կարգ անկանոն աղմուկներուն հակա-
պատկերն էր:

—Հասանք, գոչեց յանկարծ Բրէն-
պորն թոթուելով իւր թմբութիւնը:

Արդարեւ գրեթէ նոյն վայրկեանին
կառքը կեցաւ գիւղին առաջին տանն
առջեւ:

Մաքուր տուն մ'էր, գեղջուկ բայց
վայելուչ երեւոյթով, նկուղներու վը-
րայ շինուած, գետնէն քանի մ' ոտք
բարձր:

Բակէ մ' և միակ վերնայարկէ մը կը
բաղկանար:

Բակին ետեւը բաւական ընդարձակ
պարտէզ մը կար բանջարեղէններու և
պաղարբեր ծառերու:

Շէնքն ու պարտէզը մէկ մէթր
բարձրութեամբ պատով մը շրջապատ-
ուած էին, որուն վրայ ալ կանանջ
ներկով վանդակորմ մը կար:

կառքին շոինդը, որ շատ հազուադէպ էր այդ քաշուած և գրեթէ անծանօթ գիւղակին համար, բանալ տըռուաւ տուներուն դռները, և մեր նըկարագրածին սեմին վրայ յիսուն տարեկանի մօտ կին մը տեսնուեցաւ, միջահասակ, կայտառ, վառվռուն և ուշիմ երեւոյթով, գլուխը ճերմակ գդակ մը դրած, որուն եզերքէն աղբբեկ մաղերու փունջեր կախուած էին:

Բրէնպորնի քոյրն էր:

Այս վերջինն արդէն դուրս ցատկեր էր կառքէն:

—Օ՛, դո՛ւք էք, եղբայր իմ, գոչեց կինը դէմը վազելով:

—Այո՛, Մատլէն, ես եմ և ընկերներ ունիմ հետս:

—Բարով եկան ամէնն ալ:

—Հրամեցէք ներս, պարո՛ն, ըսաւ սիրուն ժպիտով մը Դանիէլ տը Բէօրի. որ նոյնպէս վար իջեր էր կիսաքէն:

Նոյն միջոցին կառավարն ալ ծծմարին կ'օգնէր վար իջնելու:

Բրէպորնի քոյրը, տեսնելով ծրծմարն ու գիրկին մանկիկը, հորցական նայուածք մ'ուղղեց եզբօրը, որ հասկընալով ըսաւ.

—Կը հասկըցընեմ քեզի:

Ուղեւորները, Մատլէնի առաջնորդութեամբ դռնէն ներս մտան, ուր հարստութեան երեւոյթ չի կար, բայց մաքրութիւն ու բարեկեցութիւն կը տիրէր, արդիւնք պարկեշտ ժրջանութեան:

Ծծմարն ու մանկիկն առաջին սենեակին մէջ թողլով, Մատլէն երկու այրերն իւր ննջասենեակը տարաւ, և երկու աթոռ ներկայացնելով նսեցուց, սպասելով որ յայտնէին այցելութեան նպատակը:

—Սիրելի՛ քոյրս, ըսաւ Բրէնպորն, քեզ Պ. Վառօային կը ներկայացընեմ, և կուգամ անոր և իմ կողմէ ծառայութիւն մը խնդրել քեզնէ, զոր չպիտի մերժես, վասն զի կը ճանչեմ քու բարեսիրութիւնդ:

—Ի՞նչ ծառայութիւն է ուզածնիդ հարցուց սիրալիր նայուածք մ'ուղղելով եղբօրը, որուն աչերուն կը նմանէին իւր սեւ վառվռուն աչերը:

—Ժամանակի մը համար պիտի հիւրընկալես հետերնիս եկած ծծմարն ու գիրկին մանկիկը:

—Շատ դիւրին է, պատասխանեց Մատլէն յօժարափոյթ:

—Հաւատացէք, տիկին թէ ապե-
րախտ մը չի պիտի պարտաւորէք, ը-
սաւ Դանիէլ, և թէ...

—Օ՛, պարո՛ն, շնորհակալութեան
արժանի բան մը չէ ըրածս: Ես այրի
կին մ'եմ, մինակ կ'ապրիմ: Մէկ զա-
ւակ մ'ունեցեր եմ, ան ալ մեռած է
տղայ հասակին մէջ...: Չեր ինձի յանձ-
նել ուզածը, իմ խեղճ փոքրիկս կը
յիշեցնէ ինձի. ուստի բոլոր սրտովս
պիտի սիրեմ ձեր զաւակը որչափ ժա-
մանակ որ թողուք իմ քով: Աւելի ին-
ձի կ'իյնայ շնորհակալութիւն յայտնել
ձեզ, որ զիս առանձնութենէ կ'ազա-
տէք:

—Բայց դարձեալ յոչ նուազ շնորհա-
կալ եմ ձեզ այդ ընդունելութեան հա-
մար, ըսաւ Դանիէլ, և ձեզ տեսնելէս
ետեւ կ'զգամ թէ զաւակս ձեր քովէն
աւելի ապահով տեղ չի կրնար ըլլալ:

—Հեռուէն քիչ մը տեսայ ձեր ման-
կիկը, բայց շատ սիրուն երեւցաւ ին-
ձի, և եթէ Փարիզէն կուգայ, այս
տեղի օդը շատ օգուտ պիտի ընէ ա-
նոր:

—Տարակոյս չունիմ, ըսաւ Բրէմպորն-
ձայնը ցածցնելով, բայց պէտք է ի-

մացնեմ քեզի թէ, մինակ օդին լաւու-
թեանը համար չէ որ հոս կը բերենք
այս տղեկը, այլ աւելի իւր ապահովու-
թեանը համար:

Այս վերջին բառն ուժով մը շեշտ ց:

Այրի տիկին Սորէնի ուշիմնայուած-
քը իմացուց թէ կը հասկնար, և թէ
արդէն մասամբ գուշակեր էր ճշմար-
տութիւնը:

—Ուստի, յարեց Բրէմպորն, մի՛ ձան-
ձներ հոս ըլլալը, բայց բոլորովին ալ
մի ծածկեր, որպէս զի հետաքրքրու-
թիւն չի շարժէ, և աչքդ միշտ վրան
ըրէ: Եթէ ամենափոքր դէպք մը պա-
տահի, իմացու ինձի:

—Հասկըցայ:

—Մայրն անշուշտ պիտի դայ տես-
նելու, աւելցուց Դանիէլ:

—Ի՞նչպէս պիտի ճանչեմ:

—Դեռատի կին մ'է, ըսաւ մէկէն
Բրէմպորն, վայելչագեղ հասակով,
թխորակ, սեւ աչուի, ազնուաշուք
դէմքով: Անունն ալ կարնի է:

—Այդչափը կը բաւէ:

Մատչէն չէր ուղեր անխորհուրդ
հարցում մ'ընել, ճանչելով իւր եղ-
բայրն և գիտնալով որ առանց ծանր

պատճառի այդ դիմումը չէր ընէր իրեն:

Իսկոյն ելան ծծմարին քով գացին:

—Ո՞ր պիտի դնես այս տիկինը, հարցուց Բրէմպորն ծծմարը ցուցընելով:

—Առաջին յարկի լաւագոյն սենեակիս մէջ, որ հարաւի դէմ է:

—Եկէք, ծծմար, ցուցրնեմ ձեզի:

Քանի մը վայրկեանի մէջ Լուիզ տեղաւորեցաւ իւր նոր բնակարանին մէջ: Սենեակը փոքր էր, բայց շատ զբաւարթ. սքանչելի տեսարան մ'ունէր:

—Հաճելի կը գտնե՞ս այս տեղը, հարցուց Դանիէլ:

—Օ՛, Փարիզէն հարիւրապատիկ աւելի...: Ես ալ գեղացի ըլլալով, երկիրս կը յիշեցնէ ինձի...:

—Եւ բան պակաս չի պիտի ունենաք, յարեց Մատլէն, մէկտեղ պիտի նստինք ելնենք, և ես այնպէս մը պիտի ընեմ որ չի ձանձրանաք իմ ընկերակցութենէս:

—Ահա ամէն բան կարգադրեցաւ ամէնուս ալ ուղածին պէս, ըսաւ Բրէմպորն, ուստի մեկնինք:

—Ինչո՞ւ կ'աճապարէք: Ճաշ չէ՞ք ընէր:

—Շոգեկառքը կը փոխցնենք, պէտք է Փարիզ վերադառանք:

Դանիէլ Մատլէնի մօտենալով՝ պանքտոմս մը խոթեց ձեռքը:

—Առաջին ծախքերն ասով հոգացէք: ըսաւ կամացուկ մը.

Բրէմպորնի քոյրը կը վարանէր ընդունելու:

Բայց եղբայրն արագ նայուածքով մ'իմացուց ընելիքը:

Մատլէն ալ ընդունեց պարզապէս: Կառավարն արդէն ելեր նստեր էր կառքին վրայ և ասոնց կը սպասէր:

Բրէմպորն համարութեց իւր քոյրը և ձեռքն ամուր մը սեղմեց իբրեւ վերջին յանձնարարութիւն, որուն նշանակութիւնը հասկըցաւ Մատլէն:

—Ցտեսութիւն, ըսաւ Դանիէլ բաւական յուզուած, և դարձաւ ծծմարին:

—Ձեզի յանձնարարելիք բան մը չունիմ, ըսաւ: Ձեզ արդէն կը ճանչեմ, և վստահ եմ ձեր վրայ, ձեր անձնուիրութեան վրայ:

—Կրնաք ապահով ըլլալ...: Ե՞րբ պիտի տեսնեմ տիկինը:

—Օ՛, չի ուշանար: Թերեւս վաղը կուգայ:

Դանիէլ սեղմեց մանկիկը թեւերուն մէջ, երկու երկայն պաշիկ դրաւ անոր կրորիկ այտերուն վրայ, և տունէն դուրս նետուեցաւ՝ հազիւ զսպելով արտասուքը:

Ի՞նչ էր պատճառը:

Ձի կրցաւ ըսել բայց սիրտը կը ճնշուէր, և կոկորդն ալ չոր էր:

Վայրկեան մ'ետքը կառքը վազելով հեռացաւ՝ տանելով նախաքննիչ դատաւորն և ապահովութեան պաշտօնեան:

— 0 —

ՈՒՐ ՏԻԱՆ ԿՄՊԱՅՈՒՅԱՆԷ ԹԷ ՃԱՐՏԱՐ ԽՈՐՀՐԴՄՈՒ Է

Բօլ տը Ռիչմօն, նոյն իրինկունը ժամ իննուկէսին Պոնաբառթ փողոցի շքեղ օթեւանը գնաց, և ուղղակի տը Ֆէրնիք կոմսուհիին քոյն ելաւ:

Այո վերջինը գիտեր թէ պիտի գար, և կը սպասէր:

Դիւրաւ կը հասկցուի թէ անցած անցքերէն ետե կոմսուհիին պէտք ունէր դերկոմսը տեսնելու և իրենց վիճակին եւս քան զեւս ծանրանալն անոր իմացնելու:

Ֆէրնանտի մեկնելէն ետե Տիան իւր

սենեակը վերագարձեր և դուռն ամէնուն գոցեր էր, ի բաց առեալ դերկոմսը, որ Բիւի-տը-լիէրմիթ փողոցի յարդուն հասցէն պիտի բերէր իրեն:

Հակազդեցութիւնը կատարուեր էր:

Նախ Շամպէզիի, ետքն ալ աղջկանը հետ տեսակցութեան միջոցին, յոյսի, սարսափի, կատաղութեան և յուսահատութեան ամէն զգացումները կրելէ ետե, տեսակ մը թմրութեան մէջ ինկեր էր, որ քանի մը ժամ գրեթէ ապշած և ինքզինքը կորուսած վիճակի մէջ ձգեր էր զայն, ինչպէս որ կ'ըլլայ մարդ բարձր տեղէ մ'իյնալէ ետե:

Ո՞ղջ էր, կ'ապրէ՞ր, հազիւ գիտէր:

Սակայն, այդ կինը, պայքարի համար կազմաւորուած, պայքար, որ իւր ստապատիր կենաց հոգին էր, և գերագոյն դիրք մ'ունենալու համար սիրտ և բարոյական զգացում միայն կը պակսէր իրեն, այդ կինը չէր կրնար մնալ այդ լքեալ վիճակին մէջ:

Անձին պահպանման բնազդը արթնցաւ վերջապէս, և իւր անագորոյն անձնասիրութեան խթանին հարուածները նորոգեցին իւր կարողութիւնները գործածելու զօրութիւնը:

Գտնուած վիճակն իսկապէս ահռե-
լի էր :

Իւր ամէն գաղտնիքը, ամէնէն ե-
ղեանաւորներն ինչպէս նաև ամէնէն
ամօթալիներն յայտնուած էին :

Դատական իշխանութիւնը գիտէր
ոճրագործին անունը :

Անթօան Քօսատի և տը Ֆէրնիք
կոմսուկիին միջեւ ա՛յնչափ սերտ կա-
պեր կային . . . որ անհնար էր, եթէ
լաւ փնտռէին, իւր կոյր գործիքը ձեռք
անցնելէ ետեւ, ինքն ալ չանցնէր :

Ֆէրնանտ չափագանցութիւն չէր ը-
րած :

Մէկ վայրկեանէն միւսը կրնար կաս-
կածուիլ, ամբաստանուիլ, բանտար-
կուիլ . . . :

Ի՞նչպէս կրնար առաջքն առնուիլ :
Ի՞նչ ընելու էր :

Շամպէզիի ձեռքէն ազատիլ, գող-
ցած թուղթերը ձեռք անցունել, ջըն-
ջել, բաւական չէին հիմա :

Անթօան Քօսատը փախցնե՞լ :

Բայց ի՞նչպէս :

Եթէ հսկողութեան տակ էր . . . եթէ
կը լրտեսուէր . . . :

Բօլ տը Ռիչիֆօնը :

Ան ալ չէ՞ր կրնար լրտեսուիլ, որով-
հետեւ գիտէին իրենց մեղապա տ մը-
տերմութիւնը :

Մեռնի՞լ պէտք էր ուրեմն ազատե-
լու համար հրապարակային խայտա-
ռակութենէ, իւր ամուսնին՝ տը Ֆէր-
նիք կոմսին վրէժխնդրութենէն, կամ
գլխուն վրայ կախուած օրէնքին սուրէն :

«Ո՛չ, ո՛չ, ամէն բան աչքս կ'առնեմ,
բայց ո՛չ անձնասպանութիւն» :

Իւր վատութիւնը կ'ըմբոստանար այդ
գաղափարին դէմ, ինքը որ իւր զգա-
յարանքը, պչրանքը, մալութիւնները
գոհացրնելու համար միայն ապրած
էր, որ իւր կիրքերուն. քմահաճոյք-
ներուն, գինքը հաճելի ընելու, ստե-
լու և խաբելու պէտքին անխղճաբար
զոհեր էր ուրիշներուն երջանկութիւնն
ու կեանքը, սարսափահար կ'ընկրկէր
այն միակ մտածութեան առջեւ թէ՛
գործած ոճիրները վերջապէս իրեն
դէմ պիտի դառնային, և թէ քառու-
թեան ժամը հնչած էր :

Ուստի պէտք էր մեռնելէ զոտ ու-
րիշ միջոց մը գտնել, այս անել ճամբէն
դուրս ելնելու համար :

Շամպէզիի մահը փրկութիւն երեւ-
ցեր էր իրեն :

Միջոցներէն մէկն էր հիմա :

Բայց ի՞նչ օգուտ կրնար ունենալ այդ մահը, եթէ Դանիէլ տը Բէօր բանտարկել տար Անթօան Բօսատը :

Բայց կ'ընէ՞ր :

Կը համարձակէ՞ր :

Յուսոյ աղօտ ժպիտ մը փայլեցաւ այլայլած դէմքին վրայ :

Ինչ որ ալ ըսած ըլլար Ֆէրնանտ զինքը զարհուրեցնելու և անձնասպանութեան մղելու համար, որպէս զի վրէժ առնէր մօրմէն և ազատէր ձեռքէն, հաւանակա՞ն էր որ Դանիէլ տը Բէօր քաջութիւն կամ մանաւանդ անմտութիւն ունենար զարնելու կործանելու տը Ֆէրնիք կոմսուհին, միևնոյն վտանգին ետեւարկելով նաև տը Ռիչմօն դերկոմսուհին, որուն տարվածուն է :

— Այո՛, կ'ըսէր ինքնիրեն. բայց ապացոյցներ պէտք կ'ըլլան ինձի... և այն ժամանակ ես ալ անոր սպառնալով իւր դիրքին, պատուոյն և շահերուն մէջ, թերեւս կարող կ'ըլլամ ետ կեցնելու, և լռութեան ու անկարողութեան հարկադրելու :

Այն ժամանակ կը մնար միայն թուղ-

թերս գողցող մարդը... բայց ան ալ... եթէ Բիւի-տը-լէրմիթ փողօցը գայ... և պիտի գայ... շի կրնար այնուհետև երկիւղ պատճառել ինձի :

Այս մտածութիւններուն մէջ էր, յանկարծ Բօլ տը Ռիչմօն դռնէն ներս մտաւ :

Ան ալ շատ դժգոյն էր. բայց աւելի պաղ և սմանդուկ զայրոյթի մ'ազդեցութեան ներքեւ կ'երեւար, քան իւր սովորական սարսափներուն :

Կոմսուհին տեսքը մեծ զարմանք պատճառեց իրեն :

Երբէք այնպիսի այլայլութիւն տեսած չէր այդ կնոջ դէմքին վրայ, որ միշտ տէր էր իւր շարժումներուն, քաջավարժ ամենախորին ծածկամտութեան, որուն դէմքը միշտ հանդարտ և ժպտուն էր, ձայնը անվրդով, շարժումները կանոնաւոր, պատրաստաբանութիւնը կատարեալ ամենածանր պարագաներու մէջ :

— Ի՞նչ կայ, գոչեց դերկոմսը մոռնալով գրեթէ իւր բարկութիւնն ու բերած լուրը. այս անակնկալ տեսարանին առջեւ :

— Այն կայ թէ ինչ գէշութեան է որ

կը վախնայինք, ամէնն ալ կատարուե-
լու վրայ են, պատասխանեց Տիան:

— Իհիւի տը-լ'էրմիթ փողոցին մա՞ր-
դը...:

— Այո՛, ամէն բան գիտէ՛: Գիտէ ո՞վ
է Ժիւսթին Պօնֆօան մեռցընողը, ո՞վ
է մեռցնելու հրաման տուողը: Ինքն է
որ աղքատաց գանձանակին մէջէն ա-
ռած էր Անթօան ֆօսասի խոթած
թուղթերը...:

— Ուրի՞շ:

— Գիտէ նաև թէ ես մանկաբարձու-
հիին տունը գացած... հոն ծննդա-
բերութիւն ըրած եմ...: Կ'ըսէ թէ
պարտէզին մէջէն գտնուած դիակը
մեր զաւկինն է... եւ թէ Ժիւսթին
Պօնֆօա խեղդամահ եղած է որպէս զի
չի կրնա՛յ խօսիլ:

— Բայց, ըսաւ դերկոմսը ոտքէն մին-
չեւ գլուխը դողալով, որովհետեւ զա-
ւակը ողջ է, որովհետեւ Զօւիցերիոյ
մէջ է, այնպէս չէ՞...:

— Այդ չի կրնար մեզ փրկել, ընդ-
միջեց մէկէն կոմսուհին: Ողջ է ըսելու
և ապացուցանելու համար... հարկ
կ'ըլլայ խոստովանիլ յանցանքս... զիս
և քեզ ամբաստանել ամուսնիս առջեւ

որ դարձեալ խայտառակութիւն... և
մահ է... ծայրը... վասն զի կոմսը չի
ներեր:

— Զլմարիտ է, կակազեց Բօլ աը
Ռիչմօն սասանած:

Եւ կոմսուհին նայեցաւ:

— Այն մարդը որ մեզ անգամ մը ա-
զատեց, թշնամի՛ է ուրեմն:

— Այո՛:

— Սպաննացա՞ւ քեզի:

— Այո՛:

— Եւ դուն չի կրցիր... զինաթափ
ընել դայն, նուաճել... լռելու հարկա-
դրել, աւելցուց դերկոմսն ամէն ա-
մօթ աչքն առնելով վտանգին առջեւ,
և իւր շփոթութեան մէջ յայտնելով
թէ լաւ կը ճանչէր իւր տարփուհին և
թէ ինք անոր չափ արժէք չունէր:

— Ստակ միայն կ'ուզէ:

— Կուտանք... բայց կը լռէ՞: Ո՞րչափ
կ'ուզէ:

— Երկու հարիւր յիսուն հազար ֆը-
րա՞նք:

— Անմի՞ջապէս:

— Մինչեւ երեք օր:

— Անհնա՞ր է:

— Ո՛չ, բայց վտանգին մեծն այն
կողմէն չէ:

— Գիտե՞ս անունը, գիտե՞ս ուր բնակիլը :

— Ետեւէն գացի, քու հրամանիդ համեմատ. անունը ժիւլ Շամպէզի է և կը բնակի Տէ-Տէօ. Բօն փողոցը թիւ 15 :

— Տէ-Տէօ-Բօն փողոցը :

— Անթօան Քօսատի դիմացը : Այս կերպով ձեռք անցուցած է մեր գաղտնիքը... : Անոր ետեւէն երթալով հասած է մինչեւ մեր քով :

— Եւ մինչեւ ժիւլ թիւ Պօնֆօայի քով : Բայց քմէնէն ծանրն այդ չէ, աւելցուց ուց Տիան : Մեր վիճակը գրեթէ յուսահատական ընողը... ձեր ինձի դէմ գործած դաւաճանութիւնն է :

— Դաւաճանութիւնս, գոչեց դերկոման ապշելով :

— Այո՛, ձեր դաւաճանութիւնը : Ֆէրնանտ գիտէր մեր յարաբերութիւնը... ըսեր էր ձեզի... բայց դուք ծածկեցի՛ք ինձմէ :

— Ո՞ւրիկէ իմացաք :

— Նոյնիսկ Ֆէրնանտէն... պակճառա՛ջ :

Բօլ տը Ռիչմօն կրճտեց ակռաները, բայց խօնարհեցուց աչերը իւր տարփուհիին արհամարհոտ նայուածքին առջեւ :

— Եթէ ես ժամանակին իմացած ըլլայի, թերեւս, և անշուշտ իսկ... պէտք եղածը կ'ընէի... զինաթափ ընելու և անկարողութեան մէջ դնելու իմ... :

«Աղջիկս» պիտի ըսէր, չի համարձակեցաւ :

— «Ձեր կի՛նր» ըսաւ :

— Արդեօք ձեզի ալ սպառնացա՞ւ, հարցուց Բօլ խեղդուկ ձայնով մը :

— Ան է մեզ մեռցընողը :

— Թերեւս, մրմուռաց Բօլ կեղծ ժպիտով մը, իւր ըրած գիւտը միտքը բերելով :

— Եթէ մեր յարաբերութիւնները միայն գիտցած ըլլար... բան մը չէր տակաւին :

— Ուրիշ ի՞նչ գիտէ :

— Մնացեա՛լը :

— Ի՞նչ :

— Եկաւ իմացուց ինձի թէ դատական իշխանութիւնը գտած է ոճրագործը, Անթօան Քօսատը... և պիտի ձերբակալուի... թէ իմ վրայ ալ կասկած կայ, թէ մեղսակից եմ անոր... և միանգամայն որդեսպան... որուն ապացոյցը գանուեր է Պօնֆօայի պարտէզը խուզարկուած ժամանակ : Հետեւապէս ես ալ դատի պիտի ենթարկուիմ... ձերբակալուի՛մ :

—Սարսափելի՛ բան է, մրմռաց դեր-
հոմսը դողալով: Իմ վրաս ալ կասկած
կա՞յ:

Տիան հեգնոտ ծիծաղ մ'արձակեց
դժնեայ դէմքով:

Նոյն վայրկենին ամէն կողմէ սպառ-
նալիք կրելով, բովանդակ տիեզերքը
կ'ատէր, և ամէնէն աւելի թերեւս այս
մարդը, իւր տարփածուն, որուն քով
կը զգար թէ բնաւ օգնութիւն, բնաւ
անձնուիրութիւն կարելի չէր յուսայ:

Ճշմարիտ է որ, ի հարկին, եթէ կա-
րենար զօքանչը գոհելով ինքզինք վր-
կել, բնաւ չէր վարաներ: Բայց մենք
չենք ներեր ուրիշներուն որ ընեն մե-
զի ինչ որ մենք շատ արամադիր ենք
անոնց ընելու:

—Տը Ֆէրնիք կոմսուհիին վրայ կաս-
կածողը, ըսաւ Տիան, տը Ռիչման դեր-
կոմսին վրայ ալ կը կասկածի: Չենք
կրնար զատուիլ իրարմէ: Միևնոյն
խայտառակութեան բաժակը երկուքս
ալ պիտի քամենք, միևնոյն բազդին
բաժանորդ պիտի ըլլանք:

—Ո՛չ, ոչ, անհնար է, ըսաւ Բօլ
խեղդուկ ձայնով մը: Ինձի դէմ բնաւ
քնաւ ապացոյց չկայ...: Ես Փարիզ

չէի ձեր տղաբերքին ժամանակ...:
Ես բանէ մը տեղեկութիւն չունէի...:
Դուք աղէկ գիտէք: Ես կրնամ ապա-
ցուցանել:

—Եւ այն հրամաննե՞րը որ իմ կողմէս
տարիք Գօսատին:

—Վկայ չի կար:

Տիան ցնցեց ուսերը:

—Թողունք զայդ, ըսաւ, չէք կրնար
ատով ազատիլ... վասն զի երբ ես
ընկճիմ, լուռ չեմ կենար, չեմ երթար
մինակ կորնչիլ, մեր երկուքին գործած
յանցանքներն ու ոճիրները ես միայն
քաւելի՛ գթալով ձեր գձուձ վատու-
թեան վրայ:

—Տիան:

—Ինչո՞ւ չիմացուցիր ինձի թէ Ֆէր-
նանտ գիտէր ամէն բան:

—Սպառնացեր էր ինձի թէ կոմսին
պիտի յայտնէր, եթէ ես լուռ չի կե-
նայի, պատասխանեց Բօլ շուարած:
Ասկէ զատ...

—Ասկէ զատ նուազութիւն էր ձե-
զի համար խոստովանիլ ինձի թէ մի-
չեւ իսկ ձեր կնոջմէն կը վախնայիք:

Դերկոմսը լռեց:

—Սրդ, ես ձեզնէ նուազ խորհրդա-

պահ ըլլալով՝ լուր մը կուտամ ձեզի
...որ մեր փրկութեան միակ յոյսն է
...եթէ գիտնաք օգուտ քաղել...
ինձի պէս: Ֆէրնանտ տարփաւոր մ'ու-
նի:

— Գիտեմ, պատասխանեց մէկէն Բօլ
գլուխը վեր առնելով:

— Ա՛, գիտէ՞ք, երբէ՞ն ի վեր:

— Կէս ժամէ ի վեր: Եւ եկայ ձեզի
իմացնելու... խորհուրդ հարցնելու...:

— Լաւ...: Տարփաւորն ալ գիտէ՞ք,
ո՛վ է:

— Չեմ գիտեր:

— Ես ըսեմ ձեզի: Բիէսֆիթի գործը
քննելու պաշտօն ունեցող նախաքննիչ
դատաւորն է:

— Նախաքննիչ դատաւորը՝...

— Պարոն Դանինյ տը Բէօր:

— Դանիէ՛լ... Դանիէլ տը Բէօր,
ճշդիւ ա՛ն է, ըսաւ դերկոմար ճակտին
զարնելով, և դէմքն աւելի դեղնեցաւ:

— Ի՞նչ եղաք, ի՞նչ կայ, հարցուց
կոմսուհին:

— Այն ատեն Ֆէրնանտ մէկ կ'ըլլայ
անոր հետ... երկուքս ալ կործանելու
համար: Ըսել է թէ կինս ամբաստա-
նած է մեզ... այո՛, ինքը... ա՛հ, հի-
մա կը հասկընամ ամէ՛ն բան:

— Կարելի՛ է, հաւանակա՛ն է:

— Ազատում չունի՛նք ուրեմն, գո-
չեց դերկոմար:

Եւ կահի մը յեցաւ ինքզինքը բռնե-
լու համար: Ակռաները կը կափկափէ-
ին, ծունկերը կը դողային, քրտինքը
կ'ողողէր տափակ ճակատը:

— Եթէ ապացոյց մ'ունենայինք ի-
րենց դէմ, կրնայինք մաքառիլ, և մե-
զի դէմ սպառնացողին սպառնալիքով
պատասխանել:

— Ապացոյց մը, կրկնեց Բօլ մէկէն
ցնցուելով: Ունի՛մ:

— Իրա՛ւ, խօսեցէք ուրեմն. ի՞նչ ա-
պացոյց է:

Կոմսուհին բիբերը շողշողել սկսան
յուսով և գոհունակ ատելութեամբ:

— Սա նամա՛կն է ահա...:

Չայս ըսելով դերկոման անոր երկն-
ցուց կէս ժամ առաջ գետնէն գտած
նամակը:

Կոմսուհին քաշեց առաւ ձեռքէն և
անյագարար կարդաց երկու անգամ:

Թշուառական տարփածուն աչերը չէր
զատեր անոր երեսէն, որպէս զի ջա-
նար գուշակել զգացած տպաւորութիւ-
նը, և յուսոյ նշոյլ մը տեսնել:

Տիան լուռ կեցաւ վայրկեանի մը
չափ :

— Հիմա բան մը կորսուած չէ, ըսաւ
վերջապէս յաղթական շեշտով մը :

— Ո՛հ, երանի թէ ճշմարիտ ըլլար :

— Աներկբայ : Այս նամակով Ֆէր-
նանտ և Դանիէլ տը Բէօր մեր ձեռ-
քին մէջն են : Բան մը չեն կրնար ընել
մեզի դէմ :

— Ի՞նչպէս :

— Չե՞նք կրնար . . . : Ա՛հ, տարակոյս
չունիմ, այդ տղան . . . մեր փրկուածի-
նը պիտի ըլլայ :

— Ես մեր վրէժխնդրութիւնը տեսեր
էի անոր վրայ :

— Արկէց աւելին պիտի գայ մեզի .
անպատժութիւն և բացարձակ ապա-
հովութիւն . . . :

— Չեմ հասկընար :

— Շատ պարզ է : Գիտենք ուր ըլ-
լալը :

— Այո՛ :

— Պէտք է վերցրնել անկէ :

— Իմ ալ միտքէս անցեր էր, Ետքը՞ :

— Տղան վերնալէն ետքը, Ֆէրնան-
տի շնութեան ապացոյցը ձեռուրնիս
ունենալով . . . տարփաւորին ալ անունը

գիտնալով . . . երկուքն ալ մեր ձեռքին
մէջ կ'ունենանք . . . :

— Աղէկ չեմ հասկընար :

— Եթէ նախաքննիչ դատաւորը չի
խղրէ գործը . . . կ'սպառնանք ամէն
բան յայտնել . . . զինքն և Ֆէրնանտն
ամբաստանել . . . կատարուած ոճրին
համար . . . :

Այնչափ գարշելի էր այս գաղափա-
րը, մօր մը բերնին մէջ, որ Բօլ տը
Ռիչմօն ինքն ալ դողաց :

— Բայց որովհետեւ զաւակնին ողջ
է . . . ըսաւ :

— Ո՞վ պիտի ապացուցանէ եթէ ան-
յայտ ըլլայ :

— Սոսկալի բան է, ըսաւ դերկոմսը :
Տիան ցնցեց ուսերը :

— Այո՛, բայց պէտք չենք ունենար
մինչեւ հոն երթալու : Հայրական սէրը,
մայրական սէրը զանոնք անձնատուր
կ'ընեն մեզի : Իրենց զաւակը նորէն
ձեռք անցունելու համար, իրենց ապօ-
րէն ընթացքն երեւան չելնելու հա-
մար . . . կը լուեն . . . : Ինքզինքնին ա-
զատելու համար մեզ կ'ազատեն

Այս ձեւին տակ, երկու մեղսակից-
ները դիւրաւ կրնային համաձայնիլ :

Մէկ ժամ ետքը, երբ Բօլ տը Ռիչ-
մօն մեկնեցաւ կոմսուհիին քովէն, ա-
մէն բան որոշուած էր մէջերնին, և
յոյսը վերստին կը ծնէր սիրտերնուն
մէջ:

— Կը մնայ Շամպէզին, ըսաւ դեր-
կոմսը մեկնած ժամանակ:

— Անոր մասին հոգ մի՛ ըներ, ըսաւ
կոմսուհին: Ես վրաս կ'առնեմ գայն:

ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹԵՆԷ ԵՏԵԻ,

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Կոմսուհիէն բաժնուած ժամանակ Բօլ
տը Ռիչմօն ինքզինք քիչ մը քաջա-
լերուած կ'զգար:

Տիանի յղացած ու առաջարկած ծը-
րագիրը գերագոյն կ'երեւար իրեն և
արդիւնքն ալ ապահով:

Կը մնար գործադրութիւնը:

Բայց պէտք չէր որ Ֆէրնանտ ամե-
նափոքը կասկած մ'ունենար: Արդ, ե-
թէ չի գտնէր Դանիէլի նամակը, եթէ
վախնար թէ ուրիշի ձեռք անցած էր,
խկոյն կ'երթար կ'իմացընէր տարփա-
ծուին, և կրնային երթալ վերցընել

տղան նոր դրուած տեղէն և տանիլ ու-
րիշ տեղ մը դնել, զոր ոչ ինքը, ոչ
ալ ամուսինը կրնային գիտնալ:

Ուստի որոշեր էին նամակը նորէն
Ֆէրնանտի դարձունել այն կերպով որ
չի կռակէր ճշմարտութիւնը:

Շատ պարզ էր:

Բօլ տը Ռիչմօն իւր տունը վերա-
դառնալով, ուղղակի կ'նոջը սենեակն
ելաւ, ուր ոտք չէր դրած այն տեսա-
րանէն ի վեր զոր պատմած ենք արդէն:

Ֆէրնանտ չէր պառկած տակաւին:
Յուզուած, տակնիվրայ եղած այնչափ
դժնդակ անցքերէ, սոսկալի հնկնուք-
ներէ, և վերջն ալ նամակը կորսնցը-
նելով, սրտատանջ կը պտըտէր սենեա-
կին մէջ, վախնալով որ խելքին պիտի
գար:

Ամուսինը տեսնելուն պէս, կանգ ա-
ռաւ, զարմանալով անոր յանդգնու-
թեանը վրայ:

— Ի՞նչ կ'ուզէք ինձմէ, ըսաւ բարկա-
ցայտ նայուածքով մը: Արդիւած չէի՞
ձեզ դրանս սեմէն ներս կոխել:

— Օ՛, մի վախնաք, ըսաւ խոնարհ
կերպով մը, մոռցած չեմ: Սիրտս ան-
հանգիստ ըլլալով՝ եկայ հասկնալու թէ

ի՞նչպէս եղաք: Ժամանակն ուշ, լոյսերն իդ կը վառէր... վախցայ... Մնաց որ, եթէ ձեր ամուսինը չեմ այլեւս, չէք կրնար արգելել զիս որ բարեկամն իդ չըլլամ...:

Այսպէս խօսած միջոցին Բօլ տը միջմօն կրնակը Ֆէրնանտի անկողնին դարձուցած ըլլալով, նամակը ետեւէն նետեց, որ գնաց ինկաւ անկողնին ոտքերէն մէկուն քով, ստուերին մէջ առանց նշմարուելու:

— Ծնորհակալ եմ ըսաւ Ֆէրնանտ չոր կերպով մը: Աղէկ եմ, և հանգիստի պէտք ունիմ: Այսուհետեւ սենեակս մտնելուս պէս դրան նիգը պիտի քաշեմ:

Բօլ, իւր պաշտօնը կատարած և նըպատակին հասած ըլլալով, չի պնդեց և դուրս ելաւ:

Ետեւէն լսեց որ Ֆէրնանտ նիգը կը քշէր:

Քանի մը վայրկեան ետքն ալ նամակը դիպուածով աչքին հանդպեցաւ:

Ֆէրնանտ կարծեց թէ դող ելնելով աղէկ չէր փնտռած զայն, և սիրտը անդորրելով՝ անկողինը մտաւ:

— Տարակոյս չկայ, կ'ըսէր դերկոմսը, թէ վաղը տեսնել պիտի ուզէ իւր զաւակը: Եթէ ես ալ վաղը Լապիշ

երթամ, կտրելի է որ իրարու հանդիպինք, և գործը վտանգի մէջ իյնայ: Ուստի թողում որ նախ ան երթայ եւ ուղածն ընէ:

Առտուան ժամ ութին դերկոմսը մեկնեցաւ օթեւանէն, իմաց տալով կնոջը թէ օրն ի բուն դուրսը գործ ունենալով չի պիտի կրնար ճաշի գալ:

Չայս ընելէ ետեւ կառք մը նստելով հիւսիսային երկաթուղին կայարանը գնաց, և տոմսակ մը գնեց Սիւրվիլիէրի համար:

Ժամը տասնումէկին հոն հասաւ:

Կայարանէն դուրս ելած միջոցին, դէմի ճաշարանը տեսաւ, որ հոն գըլտնուող միակ տունն էր:

Այս տունէն կրնար տեսնել շոգեկառքէն իջնողները:

Ուստի մտաւ ճաշարանը, որուն պետն էր Ժաք անունով մարդ մը, երբեմն կառավար, և նախաճաշ ապսպրեց մասնաւոր սենեակի մը մէջ, որուն պատահանը կառարանին հրապարակին վրայ կը նայէր:

Ուրիշ բան չունէր ընելիք, բայց միայն ճաշած միջոցին պատուհանին վարագոյրին մէկ ծայրը վեր առնել, որպէս զի դուրսն անցածը տեսնէր:

Երկար սպասեց :

Վերջապէս ժամը մէկին քառորդ մը նալով՝ Փարիզէն եկող կառախումբն հասաւ, և քանի մը վայրկեան ետքը Ֆէրնանտ երեւցաւ :

Ուղղակի դէպի ճաշարանը դիմեց, Գանիէլ տը Գէօրի նամակին մէջ դըրուած ծանօթութեան ճշդիւ հետեւելով :

Գրեթէ իսկոյն կառքի մը լծուելուն ճայնը լսուեցաւ, որու միջոցին Ֆէրնանտ առջեւի փոքրիկ հրապարակին վրայ յամրաքայլ կը ճեմէր մտախոհ, առանց բնաւ կասկածելու թէ ամուսինն իւր ոչ մէկ շարժումը կը վրիպեցընէր աչքէն :

Վերջապէս կառքը պատրաստուեցաւ, հին անպիտան կառք մը, որուն +ոքէ անունը կուտար տէրը :

Ֆէրնանտ մէկէն ցաակեց մէջը նըստաւ, և կառքը Լապիշի ճամբան բրունեց :

Դերկոմսը զայս տեսնելուն պէս, ելաւ իւր դարանէն, վար իջաւ, և կերածին ծախքը վճարելով դուրս ելաւ :

Բօլ տը Ռիշմօն, թէև աներոջը պէս հանրապետական կառավարութեան կը ծառայէր, Օրլէանեան տոհմին կուսա-

կից գերդաստանէ մ'էր, և յարարերութիւնները չէր խզած Օրլէանեան իշխանազուններուն հետ :

Այս պատճառաւ քանի մը տարի առաջ Շանթիյեիի մէջ տրուած կոչունքներուն ներկայ գտնուած, և աշնային որսորդութեանց ալ մասնակից եղած էր, բազմաթիւ ազնուազարմ ընկերներու հետ :

Այս պատճառաւ քաջածանօթ էր անտառին և շրջականերուն :

Ուստի առանց մէկու մը հարցնելու, առանց առաջնորդի պէտք ունենալու, արագ քայլերով անցաւ երկաթուղիին երկայնքէն, քսան վայրկեանի մէջ անտառը հասաւ, և մէջէն անցնող հովանաւոր ծառուղին մտաւ :

Շատ չանցած, սարահարթի մը վըրայ հասաւ, որուն բարձրէն կը տեսնուէին Լապիշի քանի մը տուները :

Թէեւ քալելով կ'երթար, բռնած ճանքան ամենէն կարճն ըլլալով, գըրեթէ միեւնոյն ժամանակ գիւղը հասաւ Ֆէրնանտի հետ, որուն կառքը դրան մ'առջեւ կեցած էր :

— Ահաւասիկ տունը, ըսաւ ինքնիրեն :
Եւ հողակոյտի մը վրայ նստելով,

որմէ առննը բաւական հեռի ըլլալով, զինքը չէին կրնար ճանչեր, հոն սպասեց, աչերն իւր որսին ապաստանին վրայ ուղղած :

Նոյն միջոցին Ֆէրնանտ իւր Գէորգիկին քովն էր, գոր անդադար կը պահէնէր, կը սիրէր, գրեթէ մոռնալով գլխուն վրայ կախուած ահեղ սպառնալիքներն, և իւր եղերայոյց կենաց բուռն տագնապները :

Յժմարը՝ Լուիզ կալթիէ, և Բրէնպորնի քոյրը՝ այրի տիկին Սօրլէն, որ ներկայ էին, զմայմամբ կը տեսնէին այդ շնորհաքեղ կնոջ մայրական գորովին զեղումը :

Մանկիկը՝ յոյր դէմքով, վարդ այտերով, միանգամայն զուարթ, կը ժպտէր մօրն երեսին, շարժելով իւր փոքրիկ թեւերն ու գիրուկ ձեռքերը, որոց վրայ կաթոգին կը փակցնէր դերկոմսուհին իւր կարմիր շրթունքը :

Մէկ ժամէն աւելի կեցաւ հոն Ֆէրնանտ, երջանիկ, ուրախ, շաղակրատելով, լալով, ժպտելով, ամէն բան դիտելով կնոջ և մօր աչքով, որմէ ոչ մէկ մանրամասնութիւն չի վրիպիր, գոհութեամբ տեսնելով որ տղեկը բան

մը պակաս չունէր և պիտի չունենար, և արդէն իսկ բարեկամանալով Բրէնպորնի քրոջը, որուն պարկեշտ և ուշիմ դէմքն առաջին տեսութեամբ իւր համակրութիւնը գրաւած էր :

Մանկիկը, զոր Ֆէրնանտ ծունդերուն վրայ առնելով կ'օրրէր մեղմաբար, քիչ քիչ աչերը գոցելով քնացաւ ժպտադէմ. այն մանկական քունոճ, որ իսկապէս զմայլելի և նուիրական բան մ'ունի :

Ֆէրնանտ այն ժամանակ օրոցին մէջ գրաւ զայն :

Ժամանակը կ'անցնէր :

Փարիզի ճանբան երկայն էր :

Պէտք էր չուել :

— Մնաք բարով, սիրելիս... Ես հընար եղածին չափ յաճախ կուգամ :

— Որովհետեւ տղեկը կը քնանայ, ըսաւ ծծմարը և օդն ալ պատուական է, եթէ տիկին Սօրլէն հաճի, կարճ ուղեկցութիւն մ'ընենք տիկինին մինչեւ սարահարթին գլուխը, ուր կառքը ծանր երթալու կը հարկադրի :

Ֆէրնանտ ուրախութեամբ ընդունեց : Իւր զաւկին խնամ տանողներուն հետ քանի մը վայրկեան աւելի անցունելն անհաճոյ չէր կրնար ըլլալ իրեն :

Ամուսինը, ստրահարթին գազաթէն ուր նստած էր, տեղաւ երեք կիներուն դուրս ելնելն, և տունէն յամրաքայլ հեռանալը՝ մինչ կառքն ալ ետեւնուն կ'երթայ:

Յետոյ ծառերու թաւուտի մ'ետին աներեւոյթ եղան:

— Ա՛, ըրաւ, տունը մինակ թողուցին...: Վայրկեան մ'իսկ պէտք չէ կորսնցընել:

Եւ ցատկեց ոտքի վրայ ելաւ, եւ խոտորնակ կողմէն վազելով տան առջեւ հասաւ:

Հոն կանգ առաւ հեւալով, ականջը տնկած, աչքը չորս կողմ:

Ստրահարթին կողմէն կառքին անիւներուն ճռինջը կը լսուէր, ինչպէս նաեւ ճիւղն սմբակներուն ձայնը երբ մանրախիճերու կը դարնուէին:

Իսկ տանը մէջ լռութիւնը բացարձակ էր:

Բօլ բակին փոքրիկ վանդակէն ներս ցատկելով դրանն առջեւ հասաւ:

Գո՛ց էր:

Չայրուցի շարժում մ'ըրաւ:

— Կղպանքը կոտրել հարկ է մրմռաց, ի՞նչպէս պիտի ընեմ, ժամանակ պիտի

անցնի... ձայն պիտի ելնէ... վրայ պիտի գան... թերեւս դրացիներն ալ լսեն կամ տեսնեն զես, եթէ երկար կենամ հոս:

Այսպէս մրմռալով՝ աչքը չորս կողմ կը պտըտցընէր:

Տեսաւ որ գետնայարկին սենեակին պատուհաններէն մէկը կէս բաց մնացած էր, առջեւն ալ նստարան մը կար:

Հոն վազեց նստարանին վրայ ելաւ, և պատուհանը քշելով ներս ցատկեց:

Բայց ո՞ւր էր տղեկը:

Նոյն միջոցին, նախախնամութիւնը, որ միշտ բարիները շի պաշտպաներ, և չարերուն ալ յաջողելուն թոյլտուութիւն կ'ընէ երբեմն, ուղեց որ մանկիկը կէս մ'արթըննայ և փոքրիկ ձայն մը հանէ:

Այսչափը բաւեց:

Բօլ լսեր էր:

Սենեակէն դուրս վազեց և բակին ծայրի սանդուղէն վեր վազելով, տղեկին գտնուած սենեակին առջև հասաւ:

Ներս մտաւ և օրոցին մէջ տեսաւ իւր կնոջ զաւակը:

Վայրագ յաղթանակի ժպիտով մ'օրոցին մօտեցաւ, գրկեց առաւ տղեկը,

որ աչերը խողոր բացած կը նայէր :
Ծածկոյթներուն մէջ փաթթեց , և ձեռ-
քը բերնին վրայ դնելով , որպէս զի
ձայնը խեղդէ , վար իջաւ , բակի սե-
նեակը մտաւ , պատուհանէն վար ցատ-
կեց , և փողոցի վանդակադռնէն դուրս
վազելով փախչիլ սկսաւ գողի պէս :

ԱՅՆ ԵՒ ԱՅՆ ԳՈՐԾԵՐ

Նոյն օրն , ուր Բօլ տը Ռիչմօն Ֆէր-
նանտի զաւակը կը գողնար մեր ան-
ձանց իւրաքանչիւրն իւր երկիւղնե-
րուն , կիրքերուն կամ շահերուն մըղ-
մանը համեմատ գործեր է :

Առաւօտուն , Տիան տը Ֆէրնիք Բիւի-
տը-Ղէրմիթ փողոցը դացեր էր , ուր ,
ինչպէս գիտեն ընթերցողք , Անթօան
Քօսատ ապաստանած էր Ժիւլ Շամպէ-
շիի ազդարարութենէն ետեւ , և հոն
կը կենար առժամապէս , որպէս զի
դիւրաւ կարենար հաղորդակցիլ կոմ-
սուհիին , կամ եթէ պէտք ըլլար , Բօլ
տը Ռիչմօնի հետ :

Տիան , դրանն առջեւ հասած ժամա-

նակ , մէջերնին կանխաւ որոշուած ձե-
ւով բաղխեց :

Անթօան Քօսատ , որ միշտ կը հսկէր ,
հասկըցաւ ով ըլլալը և վազեց բացաւ

— 0 , այսպէս կանո՛ւխ , ըսաւ Քօ-
սատ , երբ բակին ներսի սենեակը մը-
տան ուրախութեամբ , և վախով խառն
նայուածք մ'ուղղելով կոմսուհիին :

— Այո՛ , ըսաւ Տիան թիկնաթոռի մը
վրայ իյնալով , ոչ միայն ստուգիւյրուզ-
ուած ըլլալուն , այլև իւր յուզումը
ծածկել չուզելուն պատճառաւ :

— Նոր բա՞ն մը կայ , հարցուց Քօ-
սատ , կոմսուհիին առջեւը կանգուն
կեցած , չհամարձակելով մօտն երթալ
առանց անոր հրաւերին :

— Այո՛ :

— Ծա՞նր :

— Ի՛նչ բանէ որ կը վախնայինք ,
կատարուելու վրայ է : Կորսուած ենք :
Անթօան դժգունեցաւ :

— Ես , թերեւս . . . բայց դո՞ւն :

— Մանաւանդ ես : Տեսայ այն մար-
դը որ մեր և կոմսին միջեւ նետուե-
ցաւ :

— Անձանօ՞թը :

— Այ . . . ա՛յ , անձանօթ չէ այլ ևս : Գի-
տեմ անունը . . . : Գիտեմ ուզածը . . . :

— Թշնամի մ'է ուրեմն :

— Ամենէն անգութը :

Անթօան սեղմեց բռունցքը :

— Միտքէս կ'անցնէ՛ր, մրմուաց :

— Այդ մարդը, յարեց Տիան, ամէն բան գիտէ... : Ոչ միայն գիտէ թէ ես Բօլ տը Ռիչմօնի տարփուհին եմ, այլ և թէ աղայ մը ծնայ Ժիւսթին Պօնֆօայի տանը մէջ... և... :

Ձայնը կամացցուց դողալով .

— Մեռցուցի՛ր զայն :

— Եւ յայտնե՞լ կ'ուզէ : Բայց ունի՞ անպացոյցներ :

— Ունի : Ինքն է որ Սէն-Սիւլբիս եկեղեցիին աղքատաց գանձանակին մէջ խոթած թուղթերդ առած է : Եւ այն թուղթերը, որ քովն են, խոստովանութիւն մ'են դատական իշխանութեան առջեւ :

Անթօան Բօսատի դէմքը կապարի գոյն առեր էր :

— Պիտի ամբաստանէ՞ քեզ :

— Այո՛, եթէ վաղը երկու հարիւր յիսուն հազար Փրօ չի տամ իրեն :

— Հնա՞ր է :

— Անհնար է : Ի՞նչպէս կ'ուզես որ ես ամուսնաւոր կիին, այդպիսի դումար մը գտնեմ քսանուչորս ծամու մէջ :

— Եւ եթէ չի կրնա՛ս վճարել... :

— Եթէ չի կրնամ իւր լուութիւնը գընել... պիտի խօսի... պիտի յանձնէ թուղթերը, որք իմ բացարձակ կորուստս պիտի ըլլան :

— Որո՞ւ պիտի խօսի. որո՞ւ պիտի յանձնէ թուղթերը :

— Դատական իշխանութեան, կամ ամուսինիս :

Նորէն լուութիւն տիրեց :

Կոմսուհին Բօսատի կը նայէր աղերսարկու աչերով, զոր թշուառականը լաւ կը հասկնար :

Գալով իրեն, շէկ աչերն անթարթ կը նայէին արիւնռուշտ նշոյլներով փայլուն և վայրագ ճեղք մը կը կծկէր իւր բարակ շուրթերը :

— Ի՞նչ են ինձի տալիք հրահանգներդ, հարցուց յանկարծ : Ի՞նչ որոշում որած ես :

— Մեռնի՛ր, ըսաւ Տիան, եթէ կարելի չէ այդ մարդն անգիլել : Այո : մեռնի՛ր... գայթակղութենէ առաջ... խայտառակութենէ առաջ... :

— Մեռնի՛ս դուն, քոյրս... մեռնի՛ս, գոչեց վրան նետուելով և թեւերուն մէջ սեղմելով իբր թէ պատուար մը ձեւացնելով իւր մարմնավը : Ո՛չ, ո՛չ, երբէ՛ք :

— Ի՞նչ կ'ուզես որ ընեմ: Դուն չես գիտեր...: Ուրիշ սպառնալիքներ ալ կախուած են գլխուս վրայ:

— Ի՞նչ սպառնալիք:

— Ֆէրնանտ գիտէ ճշմարտութիւնը:

— Աղջիկդ:

— Այո՛, ամէն բան գիտէ:

Եւ համառօտ մը պատմեց Ֆէրնանտի հետ տեսակցութիւնը:

Անթօան Գօսատ հեւալով մտիկ կ'ընէր:

— Ըսել է թէ անունս գիտե՞ն, կազգեց, և այդ նախաքննիչ դատաւորը, Դանիէլ տը Բէօր, որ աղջկանդ տարփածուն է, կասկած ունի վրայդ:

— Այո՛:

— Ուրեմն ազատում չունինք: Ինձի համար հոգ չէ: Ես արդէն զոհած եմ կեանքս: Իմս չէ, քուկդ է: Երբ վճարելու ժամը հնչէ, կը վճարեմ...: Բայց քեզ, որ կեանքիս լոյսն ես, քեզ որով ապրեցայ քեզ, որուն համար պիտի մեռնիմ, քեզ ո՞վ պիտի ազատէ հիմա: Աղջիկդ կ'ատէ քեզ, կ'ատէ իւր ամուսինը...: Եւ նախաքննիչ դատաւորը, այդ Դանիէլ տը Բէօրը այդ ատելութեան հնազանդելու համար մեզ պիտի հարուածէ, քեզ պիտի հարուածէ անխնայ:

— Աղջկանս երազն է որ ես մեռնիմ, պատասխանեց կոմսուհին զսպուած կա-

տաղութեամբ մը: Բայց եթէ Բօլ տը Ռիչմօն յաջողեցաւ, չեմ վախնար այլ եւս, ոչ անկէ ոչ ալ տարփածուէն:

Եւ պատմեց ինչպէս խորհուրդը ըրած ըլլալը Բօլ տը Ռիչմօնի հետ, որ գողնայ Ֆէրնանտի զաւակը:

— Այն տղեկով զինքը մեր ձեռքին մէջ կը բռնենք, այն տղեկով նախաքննիչ դատաւորն ալ մեր ձեռքին մէջ կ'ուներանք: Ուստի այս կողմէն յոյս մը կայ: Աստուք կ'ըսեմ քեզի, որպէս զի մեր ճշմարիտ վիճակին կատարելապէս ծանօթ ըլլաս, որպէս զի քաջորոշապէս հասկընաս որ եթէ այն մարդը խօսի, գործէ, կը հաւատան իրեն, և ես չեմ կրնար զիս պաշտպանել, և ոչ մէկ բան մ'ուրանալ:

Անթօան կը մտածէր:

— Դերկոմսուհիին և Դանիէլ տը Բէօրի կողմէն բան մը չեմ կրնար ընել, բայց միւսին կողմէն... ուրիշ:

Եւ փայլակ մ'անցաւ կոմսուհիին տըրտում աչերուն մէջէն:

— Ի՞նչ ըսել կ'ուզես, հարցուց սեղմուելով անոր կուրծքին վրայ և իւր տաք ու անուշաբոյր շունչն անոր երեսին փչելով:

—Անունն ի՞նչ է:

—Ժիւլ Շամպէզի:

—Ո՞ւր կը բնակի:

—Տէօ-Բօն փողոց 15:

—Իմ բնակարանիս դէմ...: Հասկը-
ցայ...: Զիս դիտեր, ետեւէս պտըտեր
է: Ի՞նչ որոշեցիք մէջերնիդ:

—Զիս չի մատնելու համար առայժմ,
թէն առանց յուսալու... խոստացայ
վճարել...

—Ե՞րբ:

—Վաղը:

—Ո՞ւր տեղ:

—Հոս:

Անթօան շարժում մ'ըրաւ և իւր ա-
րիւնձուշտ աչերը իւր կաթ-քրոջը վրայ
սեւեռեց.

—Ժամը քանի՞ին:

—Գիշերուան ժամը տասնութեկին:

—Պիտի գա՞յ:

—Աներկբայ եմ:

—Մինա՞կ:

—Մինակ:

—Եւ քեզ վտանգի մէջ ձգող թուղ-
թերն ալ հե՞տը պիտի բերէ:

—Այո՛, հետը պիտի բերէ:

Անթօան վայրագ քրքիջ մը փրցուց:

—Թող գայ ուրեմն:

—Ի՞նչ է գաղափարդ, հարցուց Տի-
ան քծնոտ ձայնով մը:

—Ինչո՞ւղ պէտք: Զի պիտի մեռնիս:
Պիտի ազատիս: Կէս գիշերին քեզի
պիտի յանձնեմ վտանգաւոր թուղթե-
րը... և այդ մարդը պիտի լռէ:

Թեթեւ սարսուռ մը պտըտեցաւ կոմ-
սուհիին նուրբ մորթին մէջ, որչափ և
այս խօսքը լսելու համար եկած էր:

—Անթօան, եթէ զիս փրկես...

—Վստա՞հ եղիր:

Եւ նորէն լռեցին:

—Բանի մը պէտք ունի՞ս, հարցուց
Տիան վայրկեան մը ետքը:

—Այո՛, ստակի:

—Ո՞րչափի:

—Երկու հազար ֆրանքի:

Կոմսուհին գրպանը խուզարկելով,
գեղեցիկ թղթապանակ մը հանեց և
մէջը գտնուածն առաւ:

—Ահա աօթիկ երեք հազար ֆրանք
ըսաւ:

—Շնորհակալ եմ:

—Ուրիշ ի՞նչ ունիմ ընելիք, հար-
ցուց Տիան:

—Վաղը իրիկուն հոս գտնուէ, ինչ-

պէս որ ժամագիր եղած ես, ժամը ճիշդ տասնումէկին, և քիչ մ'ալ առաջ:

—Շատ աղէկ:

Եւ քանի մը տարտամ խօսքեր ալ փոխանակելէ ետեւ բաժնուեցան իրարմէ:

Քօսատ դժգոյն և յուզւած էր, բայց տեսակ մը վայրագ ուրախութիւն կը ցոլար շէկ աչերուն մէջ: Կոմսուհին շուտով մեկնիլ կ'ուզէր:

Բաւական չէ՞ր գիտցածը: Փափաքին հասած չէ՞ր:

Կը ճանչէր Քօսատը: Իրեն համար ամէն բան կ'ընէր:

—Օ'ն, Տիան, ըսեր էր իրեն, քանի որ ես ողջ եմ, կը հսկեմ վրադ, և մէկը չկրնար դպչիլ քու պաշտելի գլուխիդ:

—Եթէ Բօլ յաջողեցաւ, կ'ըսէր Տիանին քնիւրեն նոյն վայրկեանին, եթէ Թէրնանտի աղեկը ձեռք անցուց, վաղը վախնալու բան չի մնար այլեւս. . . խօսիլ կրցող բերաններուն ամէնն ալ կը գոցուին:

Հազիւ կէս ժամէ ի վեր տուն վերադարձեր էր, ապարանին զանգակը հնչեց:

Կոմսուհին բնակարանը, կը յիշեն ընթերցողք առաջին յարկին մէջն էր, և մասամբ մը ներսի մեծ բակին վրայ կը նայէր:

Ուստի կրնար մտնող ելնողը տեսնել: Վաղեց պատուհանի մը քով, վարագոյրին մէկ ծայրը վեր առաւ:

Արդեօք Բօլ աը Ռիշմօնն էր, որ յաջողած ըլլալուն ուրը կը բերէր:

Բացուեցաւ մեծ դուռը, և անծանօթ մարդ մ'երեւցաւ:

Միջահասակ գիրուկ մարդ մ'էր, պարզ բայց վայելուչ կերպարանքով:

Քանի մը խօսք փոխանակեց բարապանին հետ, որ դիմաւորեր էր զինքը, և այցաքարտ մը տուաւ անոր:

—Ո՞վ է այդ մարդը, հարցուց Տիանին քնիւրեն մտայոյց շարժումով մը, որ դիւրաւ կը հասկցուէր իւր գտ'ուած վիճակին մէջ, ուր ամէն բան կրնար սպառնալիք մ'ըլլալ իրեն համար: Արդեօք ինձի՞ հետ գործ ունի: Եւ սակայն անծանօթ է ինձի: Երբէք տեսած չեմ:

Բարապանը՝ այցելուին տուած այցաքարտին վրայ նայելով զարմացական շարժում մ'ըրաւ:

Յետոյ գլուխը թեթեւ մը խոնարհեցընելով անոր առջեւ, նշան ըրաւ որ ետեւէն գայ:

Տիան՝ պատուհանին քովէն մեկնելով՝ գնաց նստաւ փոքրիկ սեղանի մը առջեւ, և ականջ դրաւ լսելու համար թէ իւր բնակարանը կուգային :

Սիրտն ուժգին կը բարախէր :

Ապասելն երկար չի տեւեց ,

Սենեկապան ծառայ մը դուռը բազխելով ներս մտաւ, ձեռքը արծաթէ ամփսէով մը, որուն վրայ անձանօթին այցաքարտը գրուած էր :

— Ի՞նչ է այդ, հարցուց Տիան :

— Անձ մը, որուն անունը սա քարտին վրայ նշանակուած է, կը խնդրէ տիկին կոմսուհիին ներկայանալ, պատասխանեց ծառան :

Տիան իսկոյն առաւ քարտն և կարգաց :

Բ Բ Է Ն Պ Ո Ր Ն

Պաշտօնեայ ապահովութեան

Վայրկեան մը համը մնաց զարմանքէն ու սարսափէն :

Բայց վարանիլ չէր ըլլար :

— Ներս բերէք, ըսաւ այնպիսի ձայնով մը զոր ջանաց գորացներ :

— Ոտակիանութեան պաշտօնեայ մը, մրմռաց. նոր վտա՞նգ մը կուգայ զիս հարուածելու : Յարձակում : այսչափ

շուտով կը կատարուի, և ես կորուստի՞ պիտի մատնուիմ Բօլի և Բօսատի գործելէն առաջ :

Այսու հանդերձ դէմքը յարդարեց այս գերագոյն սայքարին համար, եթէ իւր սարսափելի նախատեսութիւնները կ'իրականային :

Բրէնպորն ըսեր էր Դանիէլ տը ֆէօրի թէ ամէն ճիգ պիտի թափէր զիրենք փրկելու համար :

Եւ փորձելու եկեր էր :

Ներս բերուելով, քաղաքավարութեամբ ողջունեց մեծ տիկինը, և ըստ պատեց որ առաջ ան խօսք ուղղէ իրեն :

Տիան առաւ անոր ողջոյնը գլխու թեթեւ խոնարհումով մը :

Շատ դժգոյն էր, բայց ինքզինքին տէր կ'երեւար :

— Ո՞ւրք ունիք ինձի. պարո՞ն, ըսաւ բաւական հանդարտ ձայնով մը :

— Գործս զօրեղ հակառակորդի մը հետ պիտի պիտի ըլլայ, ըսաւ մտքէն Բրէնպորն աչքին պոչովը զննելով զայն :

— Հաճեցէք նստիլ, աւելցուց կոմսուհին. քիչ մը հեռուն կեցած ամբողջ մը ցոյցնելով :

Բրէնպօրն նստաւ ցոյց տրուած ա-
թոռին վրայ . և երկուքն ալ վայրկեան
մ'իրարու նայեցան լռին :

ՈՒՐ ԲՐԷՆՊՈՐՆ ԱՒԵԼԻ ԶՕՐԵՂԸ ՉԷ

— Տր Ֆէրնիք կոմսուհին միտքը դրեր
էր խօսք մը կամ շարժում մը չընել՝
մինչեւ որ չի գիտնար թէ ինչ սպառ-
նալիք կար իրեն դէմ . և թէ ինչ ը-
նելու եկեր էր ապահովութեան պաշ-
տօնատարր :

Ուստի բացարձակ լռութիւն պա-
հեր :

Բրէնպօրն պարտաւորեցաւ նախ
խօսք բանալ :

— Տիկին ըսաւ պաղ կերպով մը, կէս
վայրկեան լուռ կենալէ ետեւ, ձեզի
ներկայացնել տուած քարտս իմացուց
ձեզի թէ ես ապահովութեան պաշտօն-
եայ եմ :

— Այո՛, պարո՛ն, բայց աւելի բան
մը չիմացուց :

— Ուրեմն չէ՞ք գիտեր իմ հոս գա-
լուս պատճառը :

— Ո՛չ, պարոն :

— Զարմանալի բան, մանաւանդ այն
խօսակցութենէն ետեւ որ ունեցաք ե-
րէկ ձեր աղջկանը՝ տիկին տը Ռիչմօն
գերկոմսուհին հետ :

— Չեմ հասկնար :

Բրէնպօրն քիչ մը կանգ առաւ, իւր
կարճ ու գէր սրունքին մէկը միւսին
վրայ դրաւ . և աւելցուց ծանրութեամբ :

— Տիկին, կր բաւէ միայն ձեզի նա-
յիլ, հասկնալու համար թէ դուք շատ
խելացի զօրեղ բնաւորութեան և կամ-
քի տէր էք :

Կոմսուհին անզգած մնաց :

— Բայց ես ինքս ալ, շարունակեց
Բրէնպօրն, մեծերուս խօսքին նայելով
բաւական ուշիմ մարդ մ'եմ, և իմ քով
ալ կամք և բնաւորութեան ուժ չեն
պակսիր : Ասկէ դատ, երկար ժամանա-
կէ ի վեր ոստիկանութեան պաշտօնա-
տար ըլլալով, արհեստին ամէն դը-
ժուարութիւններուն վարժ եմ, դիւ-
րաւ չեմ խաբուիր կամ բռնուիր : Ուս-
տի լաւ կ'ընէք անկեղծութեամբ վա-
րուիլ ինձի հետ, որ ձեր կեանքին ա-
մենէն ներքին մանրամասնութիւննե-
րուն ծանօթ եմ :

Կոմսուհին կը շարունակէր լուռ կե-

նալ, որ մինչեւ աստիճան մը կը գրգռէր զԲրէնպօրն: Լուսթիւնն այսպիսի պարագայի մէջ, մեծ առաւելութիւն մ'է միշտ:

—Տիկին ըսաւ մէկէն, տեսնելով որ դէմինը պատասխան տալ չէր ուզեր. գուք երկու ոճիրի Վհամար ամբաստանուած էք: Ժիւսթին Պօնֆօա մանկաբարձուհին սպաննել տըւած էք ձեր մէկ վաղեմի ոպասաւորին ձեռքով որ Անթօան Քօսատ կը կոչուի, ձեր տրամադրութեան ներքեւ մարդ մը, որուն նկարագիրն առած ենք, և պիտի ձերբակալուի, եթէ արդէն ձեռք անցած չէ...:

—Ուրի՞շ, հարցուց Տիան:

—Ամբաստանուած էք թէ Ժիւսթին Պօնֆօան մեռցնել տուած էք, որպէս զի չի կրնայ երբէք յայտնել ձեր գործած առաջին ոճիրը ձեր ապօրէն զաւկին վրայ, զոր ասկէց երկու ամիս չափ առաջ ծնաք, և որուն մարմինը թաղուած գտնուեցաւ մանկաբարձուհիին պարտէզին մէջ:

«Ահա այս է, տիկին կոմսուհի, ձեր աղջկան ձեզի ըսածը, երբ ձեզ տեսնելու եկաւ երէկ:

—Արդարեւ, պարո՛ն, տիկին տը Ռիչմօն դերկոմսուհին խօսեցաւ ինձի այդ բանին վրայ... բայց...:

Տիան կախ թողուց խօսքը հեգնիչ և միանգամայն սպառնական ժպիտով մը:

—Բա՞յց, հարցուց Բրէնպօրն:

—Բայց ուրիշ բաներ այ ըսաւ ինձի, և ետքը ես ալ ուրիշներ իմացայ... զորս կ'երեւի թէ գուք չէք գիտեր... վասն զի, եթէ գիտնայիք, չէիք գար հոս և այդ բերանը բանցըներ:

—Ի՞նչ են այդ բաները:

—Օ՛, ժամանակն եկած չէ ամէնն ալ ձեզի ըսելու: Իմ պարտքս չէ իմացնել ձեզի ամէն բան, ոչ ալ ընտանիքիս ամէն գաղտնիքը ձեզի յայտնել:

—Ինքզինք կարող կը զգայ ամէն բանի դէմ խիզախելու, ըսաւ մտքէն Բրէնպօրն: Պիտի տեսնենք հիմա:

Յետոյ յարեց:

—Եթէ ես չեմ գիտեր տը Ռիչմօն դերկոմսուհիին ըստծներուն ամէնը՝ ձեզի հետ ունեցած գաղտնի խօսակցութեան մէջ, գոնէ գիտեմ որ ըսած է:

«Մայրի՛կ, վիճակդ շատ գէշ է, կորսուած էք... ազատում չունիք ձեր»:

բակալութենէ, և հետեւապէս դատապարտութենէ մը, որ ամօթ և անպատուութիւն պիտի ըլլայ թէ՛ ինձի և թէ՛ ձերիններուն: Մայրիկ, կոտափնարան կամ թիարան կ'սպասէ ձեզ: Փախչիլն իսկ անհնար է ձեզի համար. վասնզի չի կրնար ազատել ձեզ այս ահռելի խայտառակութենէն որ պիտի ցայտէ ձեր վրայ, հօրս անունին վերայ:»

— Այո՛, գրեթէ այդպիսի բաներ ըսաւ ինձի:

— Եւ խորհուրդ մ'ալ չի տուա՞ւ:

— Ոչ:

— Ուրեմն, ինչ որ ազջիկ մը չի համարձակեցաւ ըսել իւր մօրը ես ըսեմ ձեզի... բրտաբար, ինչպէս որ պարտքըս է: Տիկին կոմսուհի, անձնասպանութենէ զատ ուրիշ միջոց չունիք ձեզ ոճրադատ ատեանին ձեռքէն կորզելու:

Տիան չի ցնցուեցաւ: Ընդհակառակն գրեթէ ուրախական շարժում մ'ըրբաւ:

Իրէնպորնի այս ձեռնարկը, տուած այս խորհուրդը, որչափ և զարհուրելի էր, կ'ապացուցանէին թէ զինքը պաշտօնապէս դատի ենթարկելու կը վարանէին, և թէ իւր վիճակն սկիզ-

բէն կարծուածին չափ յուսահատական չէր:

Ուստի տնկուեցաւ:

— Եւ եթէ պատասխանեմ ձեզի թէ ես անմեղ եմ, իմ վրայ ձգուած ոճիրներուն մէկն ալ գործած չեմ, և չուզեմ անձնասպան ըլլալ, ի՞նչ պիտի ընէք:

— Դատական արդարութիւնն իւր պարաքը կը կատարէ:

— Ի՞նչ կ'ըսէք, պարոն, եթէ համարձակէին զիս ձերբակալել, դատաստանի ենթարկել... այդ մտացածին ոճիրներուն համար, արդէն ձեռնարկած էին: Իմ գիտցածս, սովորութիւն չկայ երթալ գտնելու ոճրագործները կամ ամբաստանեալներն և անոնց ըսելու. «Իեզ պիտի ձերբակալեն, սպաննէ ինքզինքդ որպէս զի պրծիս օրէնքին ձեռքէն»: Արդ դուք որ ոստիկանութեան պաշտօնէն ըլլալով այդպէս կը վարուիք ինձի հետ, ըսել է թէ ինձի չափ շահ ունիք որ ես դատի չենթարկուիմ, չի խայտառակուիմ, չի դատապարտուիմ:

— Տիկին, Պ. տը Ֆէրնիք կոմսը կը մեղքնան, և անոր պատիւն ու բարձր

գիրքը հնար եղածին չափ անազարտ պահել կ'ուզեն :

Տիան ոտքի վրայ ելաւ հեզնոտ ծի-
ծաղով մը :

— Ո՛չ պարոն, ըսաւ Պ. Դանիէլ տը
Քէօրը կը մեղքընան, նախաքննիչ դա-
տաւորը կը վախնան որ ես դատա-
ւորներու առջեւ ելած ժամանակ զայն
ցուցընելով կ'ըսեմ :

— «Ահա տը Ռիչմօն դերկոմսուհիին
տարվածունն :»

Բրէնպորն չկրցաւ թեթեւ ցնցում
մ'արգիլել, հասկընալով որ կոմսուհիին
մատր իւր ձեռնարկին ճշմարիտ պատ-
ճառին վրայ կը դնէր :

Դիմակը վար կ'առնուէր :

Որովհետեւ Տիան գիտէր ճշմարտու-
թիւնը, Բրէնպորն ինքզինք զինաթափ
կ'զգար :

Եւ քիչ մը վարանեցաւ :

— Բայց պարոն, յարեց կոմսուհիին
բերկրելով իւր տարած յաղթութեանը
վրայ. կը վախնամ որ ինձի կ'իյնայ ը-
սել ձեզի. — «Թուղթ խաղանք սեղանի
վրայ :» Պ. Դանիէլ տը Քէօր և տը Ռիչ-
մօն դերկոմսուհիին կը վախնան որ ես
կ'ամբաստանեմ զիրենք, իրենց ամօ-

թալի ընթացքը հրապարակ կը հա-
նեմ... ուստի կ'ուզեն զիս վերցնել մէջ
տեղէն... որպէս զի անհանգիստ չը-
նեմ զիրենք. կը հասկընամ, Բայց
անձնանպան չի պիտի ըլլամ. ոչ ալ
փախչելու փորձ պիտի ընեմ: Բռնեցէք
Անթօան ֆօսատը, եթէ կ'ուզէք, և
կրնաք ձեռք դնել վրան... ըրէք ինչ
որ կ'ուզէք... : Իսկ ես, երբ զիս բռն-
նադատէք, կը խօսիմ... : Եթէ զիս
անպատուեն, ես ալ կ'անպատուեմ... :
Եթէ զիս նեղը ձգեն, վրէժս կ'առ-
նեմ... եւ եթէ ընկճիմ, հաւատացէք
որ մինակ չեմ ընկճիր :

Բրէնպորն գրեթէ վախնալ սկսաւ :

Սակայն պէտք չէր թողուր որ զինքն
այսպէս հարուածէր :

— Զգուշացէք, տիկին, ըսաւ, ձեր
այդ սպառնալիքները չեն կրնար ար-
գիլել արդարութեան գործը : Զեր
այդ ամբաստանող թիւնները որ կ'ընէք
պատուարժան դատաւորի մ'եւ ձեր
աղջկան դէմ, այդ ձրի զրպարտու-
թիւնները, զորս չէք կրնար ապացու-
ցանել, ձեր վրայ կը ծանրանան :

Այս միջոցին սենեակին դուռը մէ-
ցէն բացուելով, Բօլ տը Ռիչմօն երեւ-
կաւ :

կոմսուհին, որ բռուն անհամբերութեամբ կ'սպասէր անոր ւտանձնած պաշտօնին արդիւնքն իմանալու, հրաման ըրեր էր ծառաներուն որ եկածին պէս ներս մտցնեն, թէեւ ինքն գրազած ըլլայ:

Զայն տեսնելուն պէս՝ վազեց դէմն ելաւ, և ցած ձայնով մը.

— Ի՞նչ լուր, հարցուց հեւարով:

— Կատարուեցաւ, պատասխանեց Բօլ առանց Բրէնպորնը տեսնելու:

— Տղե՞կը:

— Մեր ձե՞ռքն է:

Տիան յաղթական աւազ մ'արձակեց:

— Բայց մինակ չենք եղե՞ր, յարեց Բօլ յանկարծ տեսնելով Բրէնպորնը, զոր Տիան ծածկեր էր իրմէ, դէմը վազած միջոցին:

— Ո՛չ, ըսաւ Տիան սուր ձայնով մը, մինակ չենք:

Եւ Բրէնպորնի դառնալով.

— Պարո՛ն, ըսաւ, ձեզի կր ներկայացընեմ Պ. աը Ռիչմօն դերկոմը, աղջկանս ամուսինը:

Յետոյ Բօլ աը Ռիչմօնի դառնալով յարեց.

— Պարոն դերկոմս, ձեզի կը ներկա-

յացնեմ, Պ. Բրէնպորն, ապահովութեան պաշտօնեայ, որուն կրնաք եթէ յարմար դատէք, ներկայացնել ձեր գանգատը աը Ռիչմօն դերկոմսուհին և անոր տարփածուին, նախաքննիչ դատաւոր Պ. Դանիէլ աը Բէօրի դէմ:

— Այդ գանգատին համար ապացոյցներ պէտք կ'ըլլան, Պարոն դերկոմս, պատասխանեց Բրէնպորն, և ես ձեր այդ գանգատը լսելու չէի եկած, այլ իմացնելու տիկին կոմսուհին թէ՞ կրկին սպանութեան յանցանքով պիտի ձերբակալուի, և թէ դուք ալ անտարակոյս դատի պիտի ենթարկուիք իբրեւ մեղսակից:

— Ըրէք տեսնեմ, գոչեց Տիան հրայտ աչերով:

Բօլ աը Ռիչմօն, որ ի սկզբան սարսափեր էր, բայց յետոյ կոմսուհին յաղթական հրաւերէն հասկնալով գործին վիճակը, գլուխը վեր առաւ:

— Ես ալ նոյն հրաւերը կ'ընեմ ձեզի, պարոն, ըսաւ: Գնացէք ըսէք ձեր մեծին Պ. Դանիէլ աը Բէօրի, թէ ո՛չ տիկին կոմսուհին, ոչ ալ ես չենք վախնար իրմէ, և թէ ծագրաւոր ծսպառնալիքները կարենալ կատարել:

առաջ՝ տը Ռիչմօն դերկոմսը պիտի գտնէ իրեն դէմ, որ իւր թշնամանեալ պատուոյն համարը պիտի պահանջէ իրմէ :

— Բայց, պարօն, ըսաւ Բրէնպօրն, գրեթէ շփոթած, կրկին անգամ կ'ըսեմ թէ... :

— Ա՛, այո, ապացոյց պիտի սէք, ընդ միջեց դերկոմսը. անհոգ եղիք այդ մասին... : Ես ունիմ ապացոյցներ... : ամէն պէտք եղած ապացոյցները... : անհերքելի ապացոյցներ՝ զինքը աւելի չարաչար հարուածելու համար, որչափ ինքը չէր յուսար հարուածել տը ֆէրնիք կոմսուհին և զիս : Թող լաւ մը տածէ գործի ձեռնարկելէ առաջ... : վասնզի ամէն կերպով ձեռքիս մէջն է և տարակոյս չունիմ որ ինքը շնորհ պիտի խնդրէ :

— Ես ձեզի հետ վիճարանելու եկած չեմ, պատասխանեց Բրէնպօրն տեսնելով որ գործը ձախող կերպարանք կ'առնէր : Բայց պիտի տեսնէք որ արդարութեան դէմ դիւրին չէ խիզախել : Զայս ըսելով մեկնեցաւ Բրէնպօրն, շփոթած, շուարած, մտայոյղ և յուսահատ, որուն նմանը երբէք պատահած չէր իրեն :

Տիան և Բօլ տը Ռիչմօն մինակ մնացին :

— Է՛, յաջողեցար, այնպէս չէ՞, հարցուց կոմսուհին :

— Տղան ապահով տեղ է :

— Ազատեցա՞նք :

— Եւ Շամպէզի՞ :

— Ամէն բան մեր ձեռքն է, կ'ըսեմ ըբզի : Օ՛ն պատմէ նայիմ, ի՞նչպէ՞ ըրիր :

Բօլ տը Ռիչմօն պատմեց Լապիշի մէջ ըրածը :

— Բայց, աւելցուց, եթէ Դանիէլ տը Բէօր իմանալէ առաջ գործի ձեռնարկէ... :

— Պիտի իմանա՞յ. սպասէ :

Եւ փոքրիկ գրասեղանի մ'առջև վազելով՝ նստաւ և հետեւեալ տոմսը գրեց, զոր Բօլ տը Ռիչմօն՝ ետին կանգնած, հետզհետէ կը կարդար ուսին վրայէն :

— «Սիրելի Ֆէրնանտս, ի՞նչ կ'իմա- ճնամ : Դուն գաղտնաբար զաւակ մը «ձներ ես շնութեան պառուղ, Ժիւսթին «Պօնֆօայի տան մէջ. և այն զաւակդ «անյայտ եղեր է... : միւս կողմէ ալ «նորածինի մը դիակը գտնուեր է դժ-»

«բաղդ մանկաբարձուհիին տանը մէջ...»
 «Եւ հիմա քեզ կ'ամբաստանեն ոչ մի-
 «այն շնութեան... այլ և որդեսպա-
 «նութեան համար... Ա՛հ, թշուառ-
 «աղջիկ, այդպէս կ'անպատուես ամու-
 «սինիդ անունը... հօրդ անունը, Գո-
 «նէ կարենայիր ցուցնել զաւակդ
 «քեզնէ համար պահանջողներուն...»
 «Առանց ատոր... տիկին ար Ֆէրնիք»
 «մը, տիկին ար Ռիչմօն մը ոճրադատ
 «ատեանին՝ անջեւ, Դուն չես սպան-
 «նած զաւակդ, այնպէս չէ՞...» Գի-
 «տե՛ս ուր ըլլալը... կրնաս ըսել, ա-
 «ւասի՛կ... այնպէս չէ՞...»

«Մայրդ տակաւին չուզեր անիծել
 «քեզ... բայց յուսահատութենէն կը
 «խենթենայ...»

«Իմացուր Պ. Դանիէլ ար Քէօրին»
 «Եթէ կրնայ, ազատէ քեզ... մեզ ա-
 «մէնս ալ ազատէ»

«Տիան ար Ֆէրնիք»

Բօլ ար Ռիչմօն հասկըցեր էր

— Ա՞յս է, ըսաւ կոմսուհին յաղթա-
 պանծ :

— Այո՛... սքանչելի է : Մեր ձեռ-
 քին մէջն են... Եւ իմ վրիժառու-
 թիւնս կ'սկսի, պատասխանեց դեր-
 կոմսը :

Տիան այս գարշելի նամակը պա-
 տեանի մը մէջ դնելով՝ բոժոժը հնչե-
 ցուց :

Սպասաւոր մ'երեւցաւ :
 — Շուտ կարնէլ փողոց տար այս
 նամակը, տիկին ար Ռիչմօնի ձեռքը,
 ըսաւ... առանց վայրկեան մը կոր-
 սընցընելու :

ՈՒՐ ԴԱՆԻԷԼ ՏԸ ՔԷՕՐ ԻՆՔՁԻՆՔ
 ԿԸ ԿՈՐՍԻՑՆԷ

Կոմսուհիին քոզէն մեկնելէն ետեւ,
 Բրէնպորն անմիջապէ՞ս դատական պաշ-
 տօնատունն երթալով՝ Դանիէլ ար
 Քէօրի սենեակն ելեր էր, գիտնալով
 որ հոն պիտի գտնուէր իւր ձեռնար-
 կին արդիւնքն իմանալու համար :

— Է՛, ի՞նչ լուր, հարցուց Դանիէլ՝
 յուզուելով Բրէնպորնի դժգոյն և շփ-
 թած դէմքէն :

— Անյաջող ելայ. ինչպէս որ ինձ-
 մէ անաջ տիկին ար Ռիչմօն ալ շէր
 կրցած յաջողիլ : Կացութիւնը հետզ-
 տէ կը ծանրանայ :

Եւ մանրամասնաբար պատմեց տի-

կին տը Ծէրնիքի հետ որած խօսակ-
ցութիւնը, յետոյ տը Ռիչմօն դերկոմ-
սին գալը, ըրած սպառնալիքները,
երկու թշուառականներուն յաղթա-
պանծ ու վստահ դէմքը:

— Ըսել է թէ, կակաղեց Դանիէլ
չուարած, այդ մարդը գիտէ որ ես
իւր կնոջը տարփածուն եմ:

«Ա՛հ, գոչեց, դժբաղդ Ծէրնանաս...
սպաննուելու վտանգի մէ՛ջ է:»

Դանիէլ տը Բէօրի առաջին աղաղակն իր
սիրած կնոջ համար պիտի ըլլար, և
այնպէս եղաւ. առաջին սպառնալիքը,
որ կը ներկայանար մտքին. իւր տար-
փուհիին գլխուն վրայ կախուածն էր:

— Ո՛չ, ո՛չ, մի՛ վախնաք այդ կող-
մէն, ըսաւ Բրէնպորն մտախոհ. իրենք
աւելի ծանր սպառնալիքներու տակ
են: Դերկոմսուհիին հետ ձեր յարա-
բերութիւններն իմանալով, փնտռածնին
նախ իրենց փրկութիւնն է...: Էրիկն
ինքզինք և կոմսուհին փրկելու ճարը
չի գտած, ուղղակի վրէժխնդրութիւն
չանցներ մտքէն: Ես աղէկ հասկցայ ա-
նոնց խաղցած խաղը: Ձեր գաղտնիքը
իմացած ըլլալով՝ կը յուսան իրենց
համար շահաւոր սակարկութեան մը

նիւթ բնել... որպէս զի զերծ մնան
արդարութեան ճանկէն:

— Կարելի է արդարեւ, մինչեւ իոկ
հաւանական ալ է, պատասխանեց
Դանիէլ՝ սրբելով ճակատը որ տամկա-
ցած էր սրտին բարոյական տագնա-
պէն: Եւ մտածե՛լ թէ չեմ կրնար եր-
թալ ապտակել... մենամարտի հրաւի-
րել այդ թշուառականը:

— Շշուկ պէտք չէ, պարո՛ն, գոչեց
Բրէնպորն, կը ծանրանայ գործը: Քա-
նի որ զգուշութեամբ վարուելու հար-
կին մէջ կը գտնուին, մենք չենք
կորնչիր:

— Ի՞նչպէս Ծէրնանտ չիմացուց ինձի:

— Ձի կրցաւ կամ դեռ չի գիտեր:

— Բայց որովհետեւ Պ. տը Ռիչմօն
գիտէ թէ ես իւր կնոջ տարփածուն
եմ, գիտէ՞ նաև զաւակ մ'ունենալնիս:

Բրէնպորն ցնցուեցաւ: Ինքն ալ ու-
նէր այդ վախը: Սակայն չուզեց նոր
մ'ալ աւելցնել Դանիէլի տագնապին
վրայ, վախնալով որ չէր կրնար դի-
մանալ:

— Ադոր համար պէտք եղած միջոց-
ները ձեռք առնուած են, ըսաւ: Լաւ
մտածեցիք մանկիկը վերցնել Տուէ փո-
ղոցէն:

— Եթէ ձեռքն իյնար, ըսաւ Դանիէլ, Ֆէրնանտի խելքին կուգար:

— Եւ մենք ալ անոնց կամքին գերի կ'ըլլայինք, աւելցոց Բրէնպորն:

— Պէ՛տք է տեսնե՛լ Ֆէրնանտը... գոչեց Դանիէլ, իմացընել իրեն այս բաները և իմանալ իւր տան մէջ անցածը:

Բրէնպորն, որ կը մտածէր, յանկարծակիան որոշում մ'ըրբաւ:

— Դուք չէք կրնար հոն երթալ, անոր տան մէջ երեւնալ, ըսաւ: Ես ինքս կ'երթամ:

Եւ դուրս նետուեցաւ:

Լուիզ կալթիէ ու այրի տիկին Սորլէն, ինչպէս գիտեն ընթերցողք, ուղարկ գացեր էին Ֆէրնանտին մինչև սարահարթին ծայրը, որ Լապիշ գիւղակէն կը բարձրանա, և կ'երթայ կը յանգի այն ճամբուն որ Սիւրվիէլէրի կայարանը կը տանի:

Սարին կատարը հասած ժամանակ Ֆէրնանտ հրաժեշտ առեր էր երկու ընկերներէն, համբուրելով զանոնք, և իւր սիրելի մանկիկը վերջին անգամ մ'ալ յանձնարարելով:

Երկու կիներն իսկոյն սարէն վար

իջնել սկսան իրենց բնակարանը վերադառնալու համար, առանց բնաւ նախատեսելու այն սարսափելի անակընկալը որ հոն կ'սպասէր իրենց:

— Աստուած տար որ մանկիկն արթընցած չըլլար, ըսաւ ոտնտուն, առւնէն ներս մտած ժամանակ, և առանց վայրկեան մը կորսնցընելու՝ վազեց այն սենեակն ուր թողած էր զայն քունի մէջ:

Տիկին Սորլէն վարը մնացեր, իրիկուան ճաշը պատրաստել կը մտածէր: Յանկարծ յուսահատական ճիչ մը սարսուեցուց զայն:

Իսկոյն դուրս վազեց խոհարանէն և ստնտուն դէմը ելաւ շնչասպառ, շմբած:

— Ի՞նչ կայ, հարցուց տիկին Սորլէն, ի՞նչ ունիք:

— Տղա՛ն... կակազեց ծծմարը խեղճուկ ձայնով:

— Տղա՛ն... կրկնեց տիկին Սորլէն զարհուրելով... Ի՞նչ եղաւ, արկած մը պատահեցաւ... հիւանդցա՞ւ... մեռա՞ւ...:

— Անյայտ, գոչեց Լուիզ վերջապէս:

Աւելորդ կը համարինք նկարագրել

երկու կիներուն յուսահատութիւնը,
երբ իրողութիւնն հասկցուեցաւ:

Մծմարը՝ խելայեղած՝ մազերը կը
փետտէր:

Տիկին Սօրլէն հասկցաւ որ շուտով
գործել պէտք էր, սկսաւ մտածել:

Ի՞նչ կրնար նշանակել այս առե-
ւանքը:

Շատ բան կ'անցնէր միտքէն և կէս-
մը կը գուշակէր ճշմարտութիւնը, թէև
եղբայրը բան մը չէր յայտնած իրեն:

Բայց ի՞նչ ընելու էր:

Ի՞նչպէս պիտի իմացընէին հօրը
կամ մօրը:

Տիկին Սօրլէն չէր ճանչեր զանոնք
իրենց բուն անունովը: Լուիզ կալթիէ
ալ աւելի բան մը չէր գիտեր, բայց
միայն Տուէ փողոցի տան հասցէն, ուր
չէին բնակեր անոնք:

— Ուրեմն եղբօրս պէտք է իմացնել:

Երկու կիները խորհելով որոշեցին
որ ստնտուն անմիջապէս ֆարիզ եր-
թայ, և տիկին Սօրլէն անոր տուաւ
Բրէնպորնի հասցէն:

Իրիկուան ժամը տասը զարկեր էր
երբ ստնտուն Բրէնպորնի բնակարանը
ներկայացաւ:

Ինչպէս գիտեն ընթերցողք, Բրէն-

պորն հոն չէր, և պառաւ սպասուհին
չի կրցաւ կամ չուզեց ըսել որ ժամուն
կրնար գալ, որովհետև յաճախ կը պա-
տահէր, որ քանի մ'օր շարունակ բը-
նակարանէն դուրս կ'անցունէր:

Լուիզ՝ յոյսը կտրելով՝ որոշեց Տուէ
փողոցն երթալ:

Հոն պէտք էր գիտնային Պ. Վառօ-
այի միւս հասցէն:

Բայց տիկին Պընօա, դռնապանու-
հին, վարանիլ սկսաւ:

Բացարձակ խորհրդապահութիւն
խոստացած ըլլալով Դանիէլ տը Բէօ-
րի-անոր անունն ու հասցէն մինչեւ
իսկ զաւակը սնուցանող ծծմարին տա-
լու չի համարձակեցաւ:

Ո՛րչափ և ծանր ըլլար պարագան,
այդ իրաւունքը չի կրցաւ տալ ինքնի-
րեն, բայց մտածեց անձամբ հօրը
տունն երթալ իմացընել:

— Սպասեցէք հոս ինձի, առանց
շարժելու, ըսաւ վերջապէս Լուիզ կալ-
թիէի, որուն յուսահատ վիճակը ցաւ
կը պատճառէր իրեն. ես ինքս կ'եր-
թամ կը գտնեմ Պ. Վառօան:

Եւ բարի կիներ՝ կառք մը վարձելով
այս ծանր պարագային համար, Դա-
նիէլ տը Բէօրի տունը գնաց:

Դժբազդ դատաւորը, Բրէնպորնի մեկնելէն ետեւ, որ տը Ռիչմոն դերկոմսուհիին տունը կ'երթար, իւր բընակարանը վերադարձեր էր, և սենեակին մէջ փակուեր էր, սպասելով իրեն անձնուէր բարեկամ եղող ճարտար օստիկանին վերադառնալուն:

Հոն, առանձին կը նստէր, իւր և քերանտի սոսկալի վիճակն և անոր ամէն երեւոյթներն աչքին առջեւ բերելով, և ելից հնար մը չի տեսնելով: Իւր կեանքն ինչպէս նաև պաշտած սիրուհիին կեանքն իրենց ամենէն յիսերիմ թշնամիներուն ձեռքին մէջ կ'զգար, և բան մը չէր կրնար ընել:

Իւր վտանգը, ամուսնին զայրոյթը բանի տեղ չէր դներ, և եթէ միտքը բերէր, ըսելու համար էր ինքնիրեն թէ՛ մինչեւ իսկ բարեբազդութիւն չունէր մենամարտի հրաւիրուելու, և դեր կոմսէն սպաննուելու կամ զայն սպաննելու, որով ընդ միշտ կ'ազատէր քերանտ:

Մենամարտի հրաւեր եթէ պիտի գար, արդէն եկած պէտք էր ըլլալ: Սակայն ժամերը կանցնէին... և արդէն ուշ էր ժամանակը:

Յանկարծ ցնցուեցաւ Դանիէլ: Դրան բոժոժը հնչեր էր:

Ինչ պիտի իմանար: Յատկեց բացաւ դուռն և տիկին Պընօա դէմն ելաւ, զոր սպասաւորը ներս կը մտցնէր:

— Դո՛ւք, տիկին Պընօա՛, գոչեց երիտասարդն ապշած:

Դոնապանուհին մօտեցաւ իրեն, և երկուքը մինակ մնացին սենեակին մէջ:

— Պարո՛ն, ըսաւ, քաջութիւն ունեցէք:

— Ունիմ քաջութիւն, ի՞նչ կայ:

— Ձեր զաւակը...

— Գէ՞րգը, գոչեց դժբազդ հայրը մոխիր կտրելով:

— Այո՛, պարոն... ծծմարը հիմա տուն եկաւ...

— Մեռա՞ւ զաւակս:

— Ո՛չ... ո՛չ, գողցուած, անյայտ եղած է:

— Գողցուած, անյայտ եղած, կրկնեց Դանիէլ դողալով:

— Այո՛, պարոն:

— Բայց ի՞նչպէս, ո՞րու ձեռքով:

— Ձեմ գիտեր, պարոն, Լուիզ ձեզի կ'սպասէ Տուէ փողոցի տանը մէջ: Ան կրնայ պատմել ձեզի:

Դանիէլ փողոց նետուեր էր:

Տիկին Պընօա վազեց ետեւէն հասաւ, և գինքք բերող կառքը նստեցուց, ինքն ալ քովը, և ճամբայ ելան սըրընթաց:

Ճամբան Դանիէլ շարունակ հարցումներ կ'ընէր տիկին Պընօայի, բայց խեղճ կինը բան մը չէր գիտեր և չէր կրնար ըսել:

Վերջապէս հասան:

Դանիէլ դուրս ցատկեց կառքէն, և խենթի պէս դռնապանուհիին օթեակը դիմելով՝ Լուիզ կալթիէն գտաւ հոն արտասուայեղջ:

— Պարո՞ն, գոչեց խեղճ ստնտուն երբ զայն տեսաւ, ես յանցանք չունիմ:

— Ըսէք ինձի ճշմարիտը, մի միայն ճշմարիտը, ուրիշ բան չեմ ուզեր ձեզնէ, պատասխանեց Դանիէլ խեղդուկ ձայնով:

Այն ատեն Լուիզ հեծկտալով պատմեց եղելութիւնը. Ծէրնանտին այցելութիւնը, քիչ մը տեղ անոր յուզարկ երթալին և տուն դառնալով օրոցք դատարկ գտնելին:

Այս պատմութիւնը լսելով՝ Դանիէլ տարակոյս չունեցաւ:

Բօլ տը Ռիչմօնի, Տիան տը Ֆէրնիքի այն աստիճան համարձակ, այն աստիճան լրբենի, այն աստիճան սպաննական վարմունքին պատճառն այս էր: Տղուն գոյութիւնը գիտնալով, Ծէրնանտի ամուսինը գողցեր էր զայն, ուրիշ մարդու գործ չէր:

Դանիէլի սրտին ցաւին իսկոյն յաջորդեց կամ մանաւանդ խառնուեցաւ զարհուրելի բարկութիւն մը:

Դանիէլ չի մտածեց այլ եւս, չի վարանեցաւ այլ եւս:

Չաւակն առեր էին իւր ձեռքէն, Ծէրնանտի ձեռքէն:

— Լաւ, ըսաւ Լուիզին: Եւ թողլով ստնտուն ու դռնապանուհին, որք սարսափահար եղեր էին իւր վայրագ զայրոյթը տեսնելով, դուրս նետուեցաւ անձամբ Բօլ տը Ռիչմօնի օթեւանն երթալու համար:

ՓՈԹՈՐԻԿԸ

Մեր պատմած խօսակցութենէն ետեւ, Բրէնպորն՝ Դանիէլ տը Գէօրի սենեակէն դուրս ելնելով՝ վայրկեան մ'իսկ չէր կորսնցուցած:

Դէմն ելնող առաջին կառքը ցատկելով՝ կռնէր-Սէն-Ժէրմէն փողոցը գացեր էր տը Ռիչմոնթի օթեւանը:

Հոն նախ ձեւի համար դերկոմար հարցընելով՝ իմանալէ ետեւ թէ դուրս ելած էր. քարտը ղրկեր էր Ֆէրնանտին, որ անմիջապէս իւր քով հանելու հրաման ըրեր էր:

Ոստիկանութեան պաշտօնատարին զինքը տեսնել ուզելը անշուշտ ծանր դէպքեր իմացընելու համար էր, ուստի բուռն սրտայուզութեամբ քովը մօտեցաւ երբ մինակ մնացին և ըսաւ:

— Դուք հո՛ս, պարո՛ն Բրէնպորն... արդեօք նոր դժբաղդութեան մը լո՞ւրր կը բերէք ինձի:

— Ինչ և է, տիկին դերկոմսուհի, նոր մտահոգութիւն մը կը բերէ զիս ձեր քով, պատասխանեց:

— Ի՞նչ մտահոգութիւն:

— Կուգամ խնդրել ձեզնէ որ օգնէք ինձի յուծումը գտնելու իրողութեան մը զոր չեմ հասկընար, և հետեւապէս սպառնական կ'երեւայ ինձի:

— Հասկըցուցէք տեսնեմ ի՞նչ է:

— Մէկ ժամու չափ առաջ տիկին տը Ֆէրնիք կոմսուհիին գացեր էր:

— Մօրս տո՞ւնը, կակազեց Ֆէրնանտ, զինքը ձերբակալելո՞ւ:

— Ո՛չ, մի՛ վախնաք, դեռ ո՛չ: Ընդհակառակն՝ փորձ մ'ընելու համար, որ չի հարկադրիմ ձերբակալել:

— Շնորհակալ եմ, պարոն. կը տեսնեմ որ Դանիէլ տը Բէօր... բայց լըմնցուցէք ըսելիքնիդ:

— Բաւական խօսեցանք տիկին տը Ֆէրնիք և ես...: Սարսափելի՛ կին մ'է: Վերջապէս... գործն ասոր վրայ չէ: Յանկարծ Պ. տը Ռիչմոն վրայ եկաւ...

— Ամուսի՞նս:

— Այո, եւ այս չէ զիս զարմացնող կամ անհանգիստ ընողը... այլ իւր խորխտ և սպառնալից երևոյթն, ինչպէս նաև տիկին կոմսուհիին ալ մէկէն ի մէկ փոխուիլն, երբ քանի մը խօսք փոխանակեցին իրարու հետ: Իսկոյն իրենք սկսան գրեթէ սպառնալ ինձի: Կը թուէր թէ աներկբայ էին իրենց փրկութեան մասին... և գործն իրենց ձեռքին մէջ առած էին...

— Արդարեւ զարմանալի բան է, մըմնջեց Ֆէրնանտ:

— Գիտէք որ, ըսաւ Բրէնպորն, ձեր որդին Տուէ փողոցը չէ հիմայ:

— Այո՛... այո՛...: Անոր վրա՞յ է ձեր
խօսելիքը: Ես ստացայ այն նամակը,
որով Դանիէլ կ'իմացընէր ինձի թէ որ-
դէինիս Լապիշ տարուած էր... ձեր
քրոջը տունը: Ես ալ հոն վազեցի գա-
ցի այսօր...:

— Այսօ՞ր, գոչեց մէկէն Բրէնպորն:

— Այո՛:

— Եւ տեսաք... ձեր զաւակը:

— Անշուշտ, պագի սիրեցի, և բա-
ւական ալ նստայ քովը:

— Ժամը քանիի՞ն Լապիշ էիք:

— Ժամը չորսին հոն էի տակաւին:

— Օ՛հ, շունչ կ'առնեմ, ըսաւ Բրէն-
պորն սփոփած դէմքով մը:

— Ի՞նչ կը նշանակէ... ինչո՞ւ հա-
մար: Ի՞նչ բանէ կը վայինայիք:

— Կը վայինայի... բայց սխալ էր
հաշիւս... վասն զի Պ. տը Ռիչմօն,
զոր տեսնելս մէկ ժամ իսկ չի կայ,
չէր կրնար ժամանակ ունենալ Լապիշ
երթալու՝ ձեր անկէց մեկնելէն ետեւ:

— Ամուսինս...: Գիտէ՞ Գէորգիս
գտնուած տեղը:

— Մտիկ ըրէք զիս, տիկի՛ն, և նե-
րեցէք ձեզի տալիք հարուածս...
բայց դուք քաջարի անձ մ'էք և պէտք

է որ ճշմարտութիւնն քեմ ձեզի...
բովանդակ ճշմարտութիւնը...:

Փէրնանտ մտիկ կ'ընէր սրտատրոփ.

— Պօտեցէք պարոն, ըսաւ տեսնելով
որ կը վարանէր, կրնամ և պէտք է
իմանամ ամէն բան:

— Պ. տը Ռիչմօն գիտէ որ դուք Պ.
Դանիէլ տը Բէօրի սիրուհին էք.

Փէրնանտի գոյնը նետեց, բայց չը
վըրդովեցաւ:

— Կ'ոպտսէի, պատասխանեց: Քանի
որ մայրս գիտէր, այդպէս պիտի ըլ-
լար:

— Արդ, յարեց Բրէնպորն, գիտնա-
լով զայդ, ասպարէզ կը կարգայ, կը
սպառնայ մեզի... վստահ կ'երեւի իւր
վրայ, ինչպէս որ ըսի:

Յանկարծ Փէրնանտ ձեռքը ճակտին
տարաւ յուսահատ շարժումով մը և
դողդոջեց:

Սոսկալի նշոյլ մ'անցաւ խելապա-
տակին մէջէն:

— Ադիէց աւելին գիտէ, ըսաւ խեղ-
դուկ ձայնով մը:

« Հիմա կը հասկնամ... բացայայտ կը
տեսնեմ... պէտք է գիտնայ, գիտէ
զաւակ մ'ունենալս... այն նամակը զոր

կորսուած կարծեր էի... գրեթէ հր-
րաչքով գտայ... սենեակիս մէջ ան-
կողնիս քովէն, ամուսնիս հոն մտնելէն
ետեւ... այն նամակը Պ. տը Ռիչմօն
ձեռքն անցուցեր, կարդացեր էր...
Այո՛, այնպէս է... կը յիշեմ հիմա:
Ճաշարանին մէջ ձգեր էի սեղանին
առջեւ, գտեր կարդացեր... յետոյ
սիրտս անդորրելու... զիս անհոգ ը-
նելու համար ինձի վերադարձուցեր
էր... Այն նամակն ամէն բան կ'ըսէր...
ձեր քրոջ անունն անդամ»

Դժբաղդ Ֆէրնանտ տեսակ մը զսպ-
եալ խանդով մը կը խօսէր, որ տը-
խուր տպաւորութիւն մը կ'ընէր տես-
նողին վրայ:

Խեղճ կիներ դիմացեր էր ամէն հա-
րուածներու... Բայց հիմա մօր մը
կ'ուղղուէր սպառնալիքը... և չափա-
զանց ծանր էր:

— Հանդարտեցէք, տիկին, ըսաւ Բը-
րէնպորն ծածկելով իւր սրտայուզու-
թիւնը: Հանդարտեցէք: Ըսածնիդ հը-
նարաւոր է, բայց հաւաստի չէ...
Եւ մենք տակաւին ժամանակ ունինք
նախազգուշական միջոցներ ձեռք առ-
նելու...:

Նոյն միջոցին դուռը զարնուեցաւ:
Ֆէրնանտ վազեց բացաւ:

Սենեկապանուհին ներս մտնելով նա-
մակ մը ներկայացուց իրեն:

— Ի՞նչ է այդ, հարցուց Ֆէրնանտ
մեքենաբար, ո՞վ բերաւ:

— Ֆէրնիքի օթեւանին սպասաւորնե-
րէն մէկը բերաւ, պատասխանեց սե-
նեկապանուհին, ապսպրելով որ տիկին
դերկոմսուհիին տրուի անյապաղ:

Սենեկապանուհին դուրս ելաւ:

— Կոմսուհիին դիրն է, մրմնջեց Ֆէր-
նանտ և նամակը բացաւ դողահար ձեռ-
քով մը:

Բայց հազիւ ականաբի մը վրան նե-
տեց, դժգոյն դէմքը բոլորովին մո-
խիր կտրեցաւ:

— Ա՛հ, գոչեց, չէի սխալած:

Եւ վրան մարելիք գալով կահի մը
կրթնեցաւ:

— Ի՞նչ կայ, հարցուց Բրէնպորն
զարհուրելով:

— Կարդացէ՛ք:

— Արդարեւ, ըսաւ ոստիկանը պը-
ռստելով յօնքերը, վատութի՛ւն

— Գողցա՛ն զաւակս, ըսաւ Ֆէրնանտ
տնկուելով, աչերն հրացայտ, դէմքը
սարսափելի:

Վաղեց վառարանին քով, բոժոժին լարն ուժով մը քաշեց:

Բրէնպորն նորէն կարգաց նամակը և դժգոյն դէմքին վրայ առաջին անգամ վհատութիւն տեսնուիլ սկսաւ:

Սենեկապանուհին նորէն երեւցաւ:

— Պ. տը Ռիչմօն իւր սենեակին է, հարցուց Ֆէրնանտ զօրեղ ձայնով մը:

— Այո՛, տիկին, հիմայ եկաւ դուրսէն, պատասխանեց Մարի:

Առանց աւելի սպասելու: Ֆէրնանտ սենեակէն դուրս դիմեց, թողլով ապշած սենեկապանուհին և Բրէնպորնը դէմ առ դէմ:

— Ես տիկին դերկոմսուհիին վերադառնալուն պիտի սպասեմ, ըսաւ Բրէնպորն, տեսնելով անոր շուարած դէմքը:

Արդարեւ Պ. տը Ռիչմօն տուն վերադարձեր էր կոմսուհիէն բաժնուելով:

Իւր աշխատութեան խուցին մէջ՝ գըրասեղանին քով կեցած՝ ձեռնոցները կը հանէր, դէմքը դժգոյն և աչերը բոցավառ:

Ֆէրնանտ ներս մտաւ:

Երկուքն ալ միակ նայուածք մ'ուղղեցին իրարու և հասկցան զիրար:

Ֆէրնանտի նայուածքն ըսել կ'ուզէր: «Դողցա՛ք զաւակս:»

Դերկոմսին նայուածքն ալ ըսել կ'ուզէր:

«Վրէժս կ'առնեմ:»

— Ի՞նչ ըրիք զաւակս, հարցուց մայրն առանց նախաբանի:

— Պատանդս, պատասխանեց ամուսինը գոհացած ատելութեան և քաջալերուած վատութեան քեքեւումով մը:

— Այդպէս...

— Այսպէս հիմայ ալ դուք իմ ձեռքիս մէջն էք, տիկին տը Ռիչմօն դերկոմսուհի, յարեց Բօլ յառաջանալով դէպի կինը, կծկած բերնով, ռիսերիմ, բայց ուրախ նայուածքով: Այո՛, ձեռքէս մէջն էք թէ՛ ձեր զաւակովը... թէ՛ ձեր տարփաւորովը, կինը, տարփուհին, մայրը, ամէնն ալ իմն են այսուհետեւ: Եւ այս ամէնը պատասխանատու են ինձի, թէ՛ իմ և թէ՛ տը Ֆէրնիք կոմսուհիին փրկութեանը համար: Կարգը իմն է հիմա, այնպէս չէ՞ տիկին: Դուք դիս բաւական անարգեցիք, բաւական սպառնացաք ինձի: Հիմա դուք պէտք է դողաք, թշուառակա՛ն:

Եւ արագ շարժումով մը Ֆէրնանտի երկու ձեռքէն բռնելով՝ ծունգի վրայ ձգէր էր գետնին վրայ, իւր ոտներուն առջեւ :

— Զաւա՛կս, մըմնջեց Ֆէրնանտ ա- նոր նայելով առանց երկիւղի, բայց յուսահատութենէ խելայեղ :

— Ա՛, դուք շնացեա՛լ մ'էք, տար- փաւո՛ր մ'ունիք. գաղտնաբար պոռն- կորդի՛ մը ծնած էք... : Եւ համարձա- կեցաք վռնաել զիս ձեր սենեակէն, նախատե՛լ, իմ ընթացքս երեսիս զարնե՛լ... : Եւ յանդգնեցաք սպառ- նալ ձեր մօ՛րը... : Արդ՛ ես հանգիստ եմ հիմա : Զեր տղան իմ ձեռքս է, ինչ որ ուզեմ կրնամ ընել անոր... կը մեռցնեմ, կ'ապրեցնեմ, ինչպէս որ յարմար դատեմ... : Դուք չի պիտի տեսնէք գայն երբէ՛ք... կամ պիտի հնազանդի՛ք ինձի : Զեր տարփածուն... կը մեռցնեմ կամ կը խայտառակեմ, ինչպէս որ ուզեմ... կամ ան ալ կը հնազանդի՛ ինձի... : Այո՛, Ֆէրնանտ տը Ռիչմօնի և Դանիէլ տը Քէօրի որ- դին ապահովութիւն է ինձի. զիս կը պաշտպանէ Ֆէրնանտի ատելու- թեան դէմ, ինչպէս նաև այն մարդուն դէմ, որուն, կեանքը ձեռքիս մէջն է :

— Շնո՛րհ, պարո՛ն, ոչ ինձի, այլ զաւ- կի՛ս համար. որ անմեղ է... և պա- ռոն տը Քէօրի՛ համար : Ըրէք ինձի ինչ որ կ'ուզէք. առէք իմ բոլոր արիւնս, բայց մի՛ դաչիք անոնց : Ես չեմ հա- կառակիր, չեմ պաշտպաներ զիս. կ'ը- նեմ ինչ որ ուզէք :

Եւ ուժով մը շտկուեցաւ :

— Երկու բան կայ որ չէք կրնար երբէք ստանալ ինձմէ, աւելցուց Ֆէրնանտ կտրուկ ձայնով մը, իմ յարգս և անձս :

— Ա՛, կը վիճի՞ք ինձի հետ, գոչեց դերկոմսը կատղած. տակաւին կը խի- զախէ՞ք ինձի դէմ :

Եւ վայրկեան մ'անոր նայեցաւ գա- լարած ձեռքերն երկնցնելով, իբր թէ՛ մէկէն վրան պիտի իյնար և եղունգ- ներովը գայն բըզըքատէր : Յետոյ սուբ ծիծաղ մը բրցուց :

— Բայց ո՛չ, ձեզ մեռցընե՛լ... ձե՛զ... ո՛չ տակաւին... ես ուրիշ բան ունիմ ընելիք : Պէտք է որ ապրիք դուք... զիս պաշտպանելու համար... կը լսէ՞ք... վրէժս հանելու համար : Ինչպէս որ ձեր տարփածուն ու յա- կոտն ինձի համար պատանդ են ձեզի դէմ, դուք ալ, ձեր զաւակն ալ իմ

սպատանդներս էք ձեր տարփաւորին
դէմ...: Ձեզ սպաննե՛լ... այո՛ թերեւս...
բայց ամէնէն վերջը... Դանիէլ աք
Քէօրէն ձեր Դանիէլէն ետեւ... երբ
լաւագոյն բան մը չունենամ ընելու
ձեզի դէմ...: Բայց նախ պիտի նուա-
ձեմ ձեզ, վստա՛հ եղիք:

«Շնացո՛ղ, շնացո՛ղ, շնացո՛ղ, կը
կրկնէր Նւ կը համարձակէի՛ք իմ վար-
քըս... զգաստութիւն և ցասում կեղ-
ծելով...:

—Բայց թէ որ հայրը պահանջէ՛
ձեզնէ իւր զաւակը, հարցուց Ֆէր-
նանտ անշարժ և անդգած իրեն
ուղղուած թշնամանքներուն ու սպառ-
նալեաց առջեւ:

Տը Ռիշմօն վայրագ քրքիջ մ'արձա-
կեց:

—Հայրը, ձեր տարփաւորը, Դա-
նիէլ ար Քէօր... ա՛, զայն ալ կ'ըս-
պասե՛մ, ըսաւ, ան կը պակսի իմ յաղ-
թանակի՛ս: Եւ եթէ չիգայ, ես պիտի
երթամ գտնեմ զինքը... պիտի ասլ-
տակեմ, թքնեմ երեսին և շնորհ խնդ-
րել պիտի տամ... ձեզի համար... ձեր
Գէորգի՛ն համար:

—Երբէ՛ք, գոչեց Ֆէրնանտ վեր-

ցատկելով իւր սիրելիին ուղղուած
թշնամանքներուն առջեւ:

Նոյն միջոցին դուռը զարկին:
Ռիշմօն սարսուեցաւ:

—Լռեցէք, տիկի՛ն, ըսաւ մէկէն,
ո՛չ մէկ խօսք, ոչ մէկ շարժում, ապա
թէ ոչ...: Սպասորեալը պէտք չէ տե-
ղեկանայ մեր ամուսնական մանր գոր-
ծերուն:

Եւ դէպի դուռը դիմեց իմանալու
համար թէ ի՛նչ կ'ուզուէր իրմէ:

Սենեկապանն էր ձեռքը քարտով
մը:

Դերկոման առաւ քարտը, ակնարկ
մը ննտեց վրան և ցնցուեցաւ:

—Լաւ թող սպասէ ըսաւ:

Սպասաւորը դուրս ելաւ:

Բօլ ար Ռիշմօն կնոջը դառնալով:

—Տեսէք, ըսաւ ակռաները սեղմե-
լով:

Ֆէրնանտ գոչիւն մ'արձակեց:

Իրեն ցոյց տրուած քարտին վրայ
հետեւեալ անունը տեսաւ:

Դանիէլ ար Քէօր

Հիւրանոցն էր: Կ'սպասէք:

ԵՌԱՋԱՅՆ

—Ա՛հ, դժբաղդը, կ'ըսէր մտքէն :
Ի՞նչ ընելու եկեր է : Ամէն բան իմա-
ցած է... և ամէն վտանգ աչքն առ-
նելով, ինձի համար դողալով, սրտիս
ցաւը գիտնալով, քաշածս կռահելով,
խենթի պէս պէս կը վազէ վտանգի
մէջ կը նետուի... :

—Այո՛, տիկին ըսաւ Ռիչմօն, Պ.
Գանիէլ տը ֆէօրն է, ձեր տարփա-
ւորն է որ համարձակի գալ հոս :

—Ի՞նչ պիտի ընէք, հարցուց Ֆէր-
նանտ :

—Պիտի ընդունիմ :

Ուրիշ կին մ'ըսէր թերեւս..

«Ես դուրս կ'ելնեմ» :

Ֆէրնանտ ըսաւ.

«Կը կենամ» :

Ամուսինը վարանեցաւ վայրկեան մը.
եաքը պատասխանեց.

—Լա՛ւ. կեցէք :

Հակառակ իւր նպաստաւոր վիճա-
կին, իւր նապաստակի սիրտը կը սեղ-
մուէր մտածելով որ դէմը պիտի գըտ-
նուէր այն մարդուն, որուն գալն ա-
ռանց որոշ դիտաւորութեան չէր կրը-

նար ըլլալ : Բայց, կ'ըսէր ինքնիրեն, սի-
րածկնոջը ներկայութիւնն անշուշտ կը
կակուղցնէր զայն, և աւելի դիւրատար
կ'ընէր ամուսնին տալիք հարուածնե-
ներուն :

Ուստի բոժոժն հնչեցնելով՝ սպա-
սաւորն երեւցաւ.

—Բերէք ներս, ըսաւ, այս քարտը
ձիզի տուող անձը :

Երկու վայրկեանի չափ անցաւ, դա-
րերու չափ երկայն վայրկեաններ Ֆէր-
նանտի համար, հանդիսաւոր կամ մա-
նաւանդ սարսափելի լռութեան մը
մէջ, նկատելով այն եղերական պա-
րագաները, որոց մէջ կը գտնուէին
երկու ամուսինները :

Վերջապէս դուռը բացուեցաւ և
Գանիէլ ներս մտաւ :

Սաստիկ դժգունած էր, բայց խի-
զախ և ինքնավստահ երեւոյթ մ'ու-
նէր :

Առաջին նայուածքով տեսաւ Ֆէր-
նանտն արձանի պէս ոտքի վրայ
կանգնած :

Աչերը, հակառակ իրենց տագնա-
պալից վիճակին և մայրական սիրտը
կեղեքող հնչնութներուն, կ'ըսէին
տարփածուին.

— Ինչ որ ալ պատահի քուկը եմ: Դանիէլ կրկնապատիկ քաջութիւն և և ուժ ստացաւ այդ նայուածքէն. ցորչափ Ֆէրնանտ չի տկարանար, ցորչափ զինքը չի թողուր տկարութեամբ, անձնասիրութեամբ կամ վատութեամբ, կ'զգար որ ցաւերուն ամէնէն դժնդակը կրելէ դերձ պիտի մնար, այն էր՝ ինքզինք խարուած կամ դաւաճանուած տեսնել իր պաշտած սիրուհիէն, որուն իրբոլոր արիւնը տալու պատրաստ էր:

Ուստի դարձաւ դերկոմսին, որ նմանապէս կանգուն կեցած էր, քիչ մը մէկ կողմ, որպէս զի կանթեղին լոյսն երեսին չի զարնէր:

Փոխադարձ նայուածքի ընդհարուրումէն երկուքն ալ թեթեւ մը ցնցուեցան:

— Պարոն, ըսաւ Դանիէլ տը Բէօր զօրեղ ձայնով մը, մեր մէջ այսուհետեւ ամեն նախարան անօգուտ է: Դուք զիտէք ճշմարտութիւնը... գիտէք ի՞նչ ո՞վ ըլլալս, ես ալ գիտեմ ձեր ո՞վ ըլլալը: Հետեւապէս մահու չափ թշնամի ենք իրարու: Դուք կ'ուզէք վրէժ առնել ինձմէ, իրբեւ սոսկ մաքրէ, և ինքզինքնիդ պաշտպանել դատաւորին դէմ:

— Ճշմարիտ է, պարոն, պատասխանեց Բօլ հեգնութեամբ:

— Եթէ սովորական պայմաններու մէջ ըլլայինք, եթէ դուք ուրիշ ամուսիններու պէս ըլլայիք, դուք պիտի գայիք ինձի, և ոչ ես ձեզի. դուք զիս կուրի պիտի հրաւիրէիք...:

Դերկոմսը ցնցեց ուսերը:

— Կա՛մ դուք պիտի փորձէիք սպաննել զիս, այնպիսի պարագաների շրջապատուելով, որք այդպիսի սպանութիւն մը գրեթէ անվտանգ վիճակի մէջ կը դնեն, կա՛մ, վերջապէս, դատ պիտի բանայիք ինձի դէմ:

Ռիչմօն կը շարունակէր իւր հեգնոտ ժպիտը:

— Բայց մինչեւ հիմա ատոնց մէկն ալ չըրիք...:

— Եւ չի պիտի ընեմ, գոնէ առ այժմ, ըսաւ Բօլ ընդմիջելով:

— Ինչո՞ւ համար, հարցուց Դանիէլ:

— Վասն զի ուրիշ լաւագոյն միջոցներ ունիմ ձեզ հարուածելու, վրէժս առնելու և ինձի սիրելի անձ մը վատ զրպարտութիւններու դէմ պաշտպանելու:

— Եւ այդ միջոցն է զաւակ մը գող-

նալ մօրմէն: Վասն զի դուք գողցած կամ գողցուներ տուած էք տղան այն տեղէն, ուր ապահով կը կարծուէր:

— Ի՞նչ տղայ է այդ, պարո՞ն, հարցուց Ռիչմօն: Եթէ հոս ներկայ գրտնուող տիկին տը Ռիչմօն դերկոմսուհիին մէկ զաւկին վրայ է ձեր խօսքը՝ տը Ռիչմօն դերկոմսին օրինաւոր ամուսինն ըլլալով. ծնած զաւակներուն ամէնն ալ իմս են, հետեւաբար ես շեմ գողցած այդ տղան, այլ իմ սեփականութիւնս ձեռք անցուցած եմ:

— Այդպէս թող ըլլայ, պարոն, թողունք զայդ: Օրինական պայմանը չէ որ պիտի կանոնաւորէ մեր յարաբերութիւնները: Վասնզի եթէ դուք օրէնքի խօսք ընէք, ես ալ կրնամ օրէնքը ձեռք առնել, և մէկ խօսքով ձեզ ձերբակալել տալ իբրեւ մեղսակից տը Ֆէրնիք կոմսուհիին, ձեր տարփուհիին, այն սպանութեան մէջ որ գործուեցաւ Բիէռֆիթի մէջ, Ժիւթին Պօնֆօայի անձին վրայ:

— Միայն թէ այդ խօսքը չի պիտի ըսէք:

— Ո՞վ կ'արգելէ զիս:

— Մա պարզ պարագան: Դուք տարփածուն էք կնոջս... սա պարկեշտ արարածին, որ շատ աղէկ կը խաղաբառաքինութեան և պարկեշտ ցասումներու կատակերգութիւնը: Արդ, եթէ դուք խօսիք, ես ալ կը խօսիմ...: Եթէ դուք գործէք, ես ալ կը գործեմ, ըսաւ ակաւաները կրճտելով:

«Այո՛, կ'իմացուի թէ նախաքննիչ դատաւորը, արդարութեան գործադիրը, շնութեան զուարճութիւններով կ'ըրօսնու: Կ'իմացուի թէ իւր տարփուհին դադանաբար տղայ մը ծնած է զոր չի կրնար ցոյց տալ... վասն զի անհետացած է... և եթէ դուք ամբաստանէք զիս և տը Ֆէրնիք կոմսուհին մտացածին ոճիբի մը համար, ես ալ կը պատասխանեմ թէ դուք էք, դուք դատաւոր, կը կրկնեմ, դուք, կնոջս տարփածուն, որ շահ ունէիք Ժիւթին Պոնֆօան անհետացնելու գործին մէջ, որպէս զի չի կրնար երեւան հանել ձեր ամօթալի գաղտնիքը...: Եւ եթէ այս բաւական չըլլայ, ես այսուհետեւ պատանդ մ'ունիմ, որ կը պատասխանէ ինձ՝ թէ՛ ձեզի և թէ՛ այս տիկինին համար... ձեր զաւակը...»

որ ձեռքիս մէջն է, և զոր ինչ ուզեմ կրնամ ընել, կրնամ մեռցընել կամ թշուառութեան մէջ ձգել մինչեւ այն օրն ուր գող մը, աւագակ մը, ոճրագործ մ'ըլլայ իրեն տալիք կրթութեանս համեմատ:

—Վատութիւն, կահազեց Ֆէրնանտ: Ինձի ըրէք ինչ որ կ'ուզէք, մեռցուցէք զիս, բայց Գէորգիս մի՛ դպչիք... մի՛ շարչարէք այդ խեղճ անմեղ մանկիկը:

—Ձեզ մեռցընել, տիկին, պատասխանեց ար Ռիչմօն, օ՛, ո՛չ, ես կ'ուզեմ որ դուք ողջ մնաք և իմ քովս ապրիք:

—Ո՛հ, ըրաւ Ֆէրնանտ սոսկումով, ձեռքերը գալարելով, բայց ես կ'աւեմ ձեզ:

—Աւելի՛ աղէկ:

—Եւ կ'արհամարհեմ, որչափ և մեղապարտ ըլլամ աշխարհի առջև:

—Գերագո՛յն, աւելի լաւ վրէժս աւած կ'ըլլամ և դուք ալ աւելի լաւ կը պատժուիք, ինչպէս նաեւ տարփածունիդ:

—Օ՛ն, պարոն, օ՛ն, գոչեց Դանիէլ ար Քէօր ահռելի զայրոյթով, երբէք ներելի չէ այդպէս վատ ըլլալ և կին

մ'ու աղեկ մը շարչարել, երբ մարդ մը կայ ձեր առջեւ: Զաւակը տիկինին դարձունելու համար ի՞նչ կը պահանջէք: Իմ խօսքս չեմ ըներ. մեր երկուքին մէջ կարգադրուելիք հաշիւ մ'է և ժամանակը պիտի գայ:

—Պահանջածս շատ պարզ է: Տիկին ար Ռիչմօն դերկոմսուհին իմ քովս պիտի մնայ իբրեւ իւր ամէն պարտականութեանց հյու ամուսին...:

Դանիէլի ձակտէն ջուրի պէս քրտինք կը վազէր:

—Եւ, շարունակեց դերկոմսը, դուք ալ պիտի դադրեցընէք ար Ֆէրնիք կոմսուհին և ինձի դէմ պատրաստուած դատական ձեռնարկն, և մեր անունը չպիտի արտասանել տաք: Այս պայմանով ես ալ խօսք կուտամ որ գայթակղութիւն չի հանեմ, յայտնելով ձեր երկուքին ամօթալի ընթացքը: Այսպէս կրնայ կինս անսնել օր մը իւր զաւակը: Բայց եթէ չէք հնազանդիր իմ հրամաններուս, խայտառակութեան փոխարէն խայտառակութիւն, գայռի փոխարէն գայռ, արիւնի փոխարէն արիւն:

«Ձեր ամբաստանութիւններուն ես ալ նմանօրինակ ամբաստանութիւններով կը պատասխանեմ. և որովհետեւ ապացուցուած է թէ կինս գաղտնաբար

գաւակ մը ծնած է, որուն ապօրէն հայրն էք դուք, հարկաւ չի պիտի կրնայ երեւան հանել այդ գաւակը, և այն ժամանակ պիտի հաւատան ինձի թերեւս, եթէ զինքն իրրեւ որդեսպան և ձեզ ալ իրրեւ մանկաբարձուհին քսպաննող ամբաստանեմ: Գալով տղեկին, պէտք եղած հրամանները տուած և զգուշութեան միջոցները ձեռք առած եմ. ձեր ընտրելիք բազում կամ վիճակը պիտի կրէ:»

Եւ դարձաւ Ֆէրնանտին:

— Ձեզ վերջին անգամ մ'ալ ձեր տարփածութիւն հետը կը թողում, տիկին, ըսաւ: Խրատ տուէք իրեն, խօսք հասկըցուցէք իրեն ալ պատիւը վտանգի մէջ է, որչափ ձերը...: Դուք իրրեւ մայր, կրնաք անոր սրտին հետ խօսիլ և համոզել թէ ինքն ալ գլուխ ձուելու հարկին մէջ է, ինչպէս դուք:

Ձայս ըսելով: Բոլ տը Ռիչմօն իսկոյն դուրս ելաւ սենեակէն, այնպէս որ Դանիէլ տը Բէօր ժամանակ չունեցաւ զայն արգիլելու և Ֆէրնանտ ալ ուժ և պաղարիւն չունեցաւ պատասխանելու:

Բայց այս առաջին վայրկեանին սպանքը չի տեսց:

Դանիէլ, որ Ֆէրնանտը բողոքովին կորսնցընելու վտխէն ընկճած և ինքզինքը զսպած էր, մէկէն տնկուեցաւ և ուզեց վազել այդ մարդուն ետևէն, որ իւր սիրելիները կորցելով իւր ձեռքէն, կը պատրաստուէր պաղութեամբ և դիտմամբ չարչարել իւր սրտին ամէնէն անձիւրի էակները, որք իւր կեանքին հետ կապուած էին և նոյն իսկ կեանքն էին:

Ֆէրնանտ բռնեց զայն:

— Դանիէլ, ըսաւ, ինքզինքիդ եկու ի՞նչ պիտի ընես. ի՞նչ կը յուսաս:

— Ձե՛մ գիտեր, պատասխանեց Դանիէլ հեւալով, սպաննել, ոտքերու տակը ջահջահել:

— Անհնար է. մի՛ մոռնար:

— Եւ դուն կը կարծես որ քեզ անոր ձե՞ռքը կը թողում, մեր գաւակն անոր ձե՞ռքը կը թողում: Ո՛հ, գիտցիր, Ֆէրնանտ, գողափարը միայն կը խենթեցընէ՛ զիս:

— Գիտեմ, ըսաւ Ֆէրնանտ պարզապէս. կը հասկընամ: Կը կարծես որ իմ սիրտս ալ չի՞ վշտագնիր: Բայց բռնութիւնն օգուտ մը չի կրնար ընել:

Դանիէլ անոր երեսը նայեցաւ:

— Շատ դիւրաւ կը համակերպիս, ըսաւ ա՛յնպիսի շեշտով մը, որուն մէջ ահռելի նախանձոտութեան սարսուռը կ'զգացուէր:

Ֆէրնանտ ալ անոր նայեցաւ, նախ զարմանքով, յետոյ գուշակեց մտքէն անցածը:

— Մի՛ վախնար, ըսաւ տրտում ժպիտով մը: Անոր ծրագրին մէկ մասը չի պիտի իրագործուի, կ'երդնում քեզի: Ես մայր եմ, բայց կին եմ: Ինչպէս որ զիս գաւկիս կը պարտիմ, այնպէս ալ կը պարտիմ այն մարդուն որ զիս կը սիրէ, ինչպէս դուն... Իրաւունք չունիմ անգթաբար զայն դաշունելու, խժդժաբար զոհելու մինչեւ իսկ մայրական սիրոյ: Ասկէ զատ ըստորնանալու աստիճան մը կայ, ուր աղէկ գիտցիր, Ֆէրնանտդ չիջներ երբէք: Եթէ ուզէ իսկ... չի կրնար: Կը մեռնի նախ:

— Մնացեալին համար պէտք է զիջանել, եթէ խիզճդ թող կուտայ:

— Ներէ՛, ըսաւ Դանիէլ, ամչնալով այն տկարութեան կամ համակերպութեան կասկածին համար որ կրցեր էր ընել Ֆէրնանտի վրայ, կասկած մը որ շատ կը ծանր դպչէր այդ խորոխ հոգիին. բայց ի՞նչ կը հասկնաս «զիջանել» բերով:

— Մօրս ետեւէն չիյնալ, դատաստանը կեցընել կամ ընթացքը փոխել:

— Անպատշաճ բան կ'ըլլայ, ըսաւ Դանիէլ տրտում դէմքով մը. բայց կ'ըլ եմ այդ զոհողութիւնը քեզի չամար: Պէտք է քեզ ազատել ամէն բանէ առաջ: Իմ առաջին պարտականութիւնս է, որուն մէջ չի պիտի թերանամ: Միայն թէ դժուար և միանպամայն վտանգաւոր է:

— Շնորհակալ եմ, ըսաւ Ֆէրնանտ. ձեր կարծածէն աւելի ստիպողական, աւելի հարկաւոր է: Կոմսուհին և ամուսինս ամէն միջոց ձեռք առած, ամէն բան խորհած, պատրաստած են: Տես սա նամակը որ մայր մը գրած է:

Եւ հանեց սուաւ այն նամակը զոր Տիան գրած էր իրեն:

— Այդ կինը ճիւա՛ղ մ'է, կակազեց Դանիէլ զարհուրելով այդ աստիճան:

վատթարութենէ : Այո՛ , զիջանինք վայրկեան մը փոթորիկին առջեւ : Բայց պիտի առնեմ վրէժդ , Ֆէրնանտ , կերգում սիրոյս վրայ . . . պիտի կորզեմ քեզ անոնց ճիրանէն . . . : Ե՞րբ , ի՞նչպէս , չե՞մ գիտեր . . . բայց վերջապէս պիտի ընեմ :

Պէտք էր բաժնուիլ իրարմէ :

Սոսկալի մորմոք մ'եղաւ այդ բաժանումը : Երկուքն ալ՝ ձեռքերնին իրարու տուած միջոցին կարծեցին թէ պիտի մեռնէին :

Ե՞րբ նորէն պիտի տեսնէին զիրար , և ի՞նչ պայմաններու մէջ :

Իրենց բոլոր երջանկութիւնը կործանած էր : Ուրիշ բան չէր մնար իրենց՝ բայց միայն զիրար սիրելու և վշտակրելու գօրութիւն :

— Գիտցիր զայս ըսաւ Ֆէրնանտ , հեռուէն ըլլայ թէ մօտէն , քուկդ եմ բոլորովին , քուկդ միայն և ընդմիշտ : Կարելի չէ որ չի սիրեմ քեզ , կամ պակաս սիրեմ , և կամ ո և է բան մ'ընեմ որ վիշտ , նախատինք կամ դաւաճանութիւն ըլլայ քեզի համար :

— Ինքը կը մնայ և ես կը մեկնիմ , կ'ըսէր մտքէն Դանիէլ , և այնպէս թը-

ւեցաւ իրեն թէ սիրուն այն աստիճան կ'ուռէր , որ պիտի պայթէր կուրծքին մէջ :

Ֆէրնանտ երբ մինակ մնաց , վար առաւ հանդարտութեան և համակերպութեան դիմակը զոր երեօին վրայ անցունելու դիւցազնութիւնն ունեցած էր իւր տարփածուին առջեւ , որպէս զի չի յուսահատեցնէր դայն :

Իւր սիրուն դէմքն այլայլեցաւ , այնպէս որ ներսէն զինքը կեղեքող սոսկալի տագնապը կը պատկերէր :

Տարփուհիին յաջորդեց մայրը :

— Գէ՞ճճ , զաւակս մընեջեց , և մաքրեցաւ :

Բայց երկար չտեւեց մարիլը :

Կսկիծին խթանէն արթննալով , նորէն գտաւ ինքզինք , և դժուարութեամբ ինքզինքը քաջըլելով դուրս ելաւ ամուսինին սենեակէն և իւր բնակարանն երթալ սկսաւ :

Դահլիճէն պէտք էր անցնիլ :

Հոն գտաւ Բրէնպորնը , ոք իրեն կը սպասէր և ինքը մուտքէր էր :

Դժգոյն , սրտատանջ , ժամանակին անցնիլը կը տեսնէր , չի գիտնալով ինչ ընելիքը , դժբաղդութիւն մը պատահելէ վախնալով , վայրկեաններուն թան-

կութիւնն զգարով . և չի կրնալով մեկնիյ առանց դերկամուհին տեսնելու :

— Ի՞նչ անցաւ , տիկին , գոչեց Ֆէրնանտի դէմը վաղելով , զարհուրած տնոր դէմքին այլայլութենէն :

— Ա՛հ , պարո՛ն մըմնջեց Ֆէրնանտ զողողալով և անոր յենլով . Աստուած կը զրկէ ձեզ իմ առջեւ : Դո՛ւք միայն կրնաք փրկել մեզ :

Եւ սկսաւ լալ , թող տալով որ վերջապէս թափէին արասուքները , զորս զսպեր էր ամուսինին առջեւ խրոխտաբար և տարփածուին առջեւ ալ փափկաբար :

— Լացէ՛ք , ըսաւ Բրէնպորն , որպէս զի սփոփուիք , բայց խօսեցէք , վասնզի գիտնալու պէտք ունիմ :

Այն ժամանակ Ֆէրնանտ կամքի բուռն ճիգով մ'իւր վրայ իշխելով պատմեց նախ իրեն եւ ամուսնին միջեւ անցած տեսարանը , ետքն ալ ամուսնին , իրեն և Դանիէլ աը Բէօրի միջեւ անցածը :

— Այո՛ , ըսաւ Բրէնպորն մինչեւ վերջը մտիկ ընելէ ետեւ , այդ գարշելիներուն ծրագիրը շատ պարզ է և սարսափելի : Յուսահատական խաղ մը կը խաղան յանդգնաբար և անխղճօրէն :

— Եւ պիտի շահին :

— Թերե՛ւս :

Ֆէրնանտ իւր բոցավառ սեւ աչերն անոր վրայ ուղղեց :

— Զիս ձեզի բարեկամ կը համարի՞ք , տիկին , ըսաւ ոտտիկանութեան պաշտօնատարը :

— Այո՛ , մեր միակ բարեկամը :

— Ուրեմն տիկին , ամէն բան կորած չէ : Այնպէս կը յուսամ :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք , գոչեց Ֆէրնանտ : Ա՛ , զգուշացէք . . . ետքի յուսաբարութիւնը չափազանց ահռելի կ'ըլլայ . . . : կը մեռցնէ՞ զիս :

— Մտիկ բրէք զիս , տիկին , ըսաւ Բրէնպորն մտազբաղ դէմքով մը , որ յանկարծական գաղափար մը յղացած կը թուէր : Ես բան մը չեմ խոստանար կը թուէր : Ես բան մը չեմ խոստանար ձեզի . . . ամէն հնարք ի գործ պիտի դնեմ յաջողելու համար . . . : Թերեւս ես . . . պիտի կրնամ գտնել ձեր զաւակն և ձեզի յանձնել . . . :

Ֆէրնանտ այս խօսքը լսելուն պէս՝ ծունգի վրայ եկաւ անոր առջև , ինչպէս որ կ'ընէ մարդ գերբնական հրաշալի զօրութեան մ'առջեւ :

Իւր Դէո՛րգը , իւր զաւա՛կը իրենց պիտի դարձունէր թերեւս :

— Ոտքի վրայ ելէք, տիկին, ըսաւ Քրէնպորն խորապէս յուզուած :

Եւ ձեռքերէն բռնելով օգնեց ոտքի վրայ ելնելուն, յետոյ անոր երկու ազնուապետական գեղեցիկ ձեռքերն իւր հաստ չրթունքին տանելով ակնածաւոր դէմքով մը աւելցուց :

— Վստահ եղիք իմ վրայ, ինչ որ մարդ մը կրնայ ընել. պիտի ընեմ :
Եւ մէկէն դուրս ելաւ դահլիճէն :

ՈՒՐ ԲՕՍՍՏ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԿԸ ՏԵՄՆԷ

Նոյն օրը որ այնչափ բեղնաւոր եղաւ սրտայոյզ անցքերով, և որուն հետեւեալ օրը, իրիկուան ժամը տասնին, ժիւլ Շամպէզի Բիւի-տը-լ'Էրմիթ փողոցը պիտի երթար խոստացուած երկու հարիւր յիսուն հազար ֆրանքն առանալու և քովի թողնելը Տիան կոմսուհիին յանձնելու, փոքրիկ իրողութիւն մը կատարուեր էր, զոր չէնք ուզեր լուութեամբ անցնիլ :

Միջնակարգ քաղքենի տան մը կառապանի կերպարանքով մարդ մը Սէն-Մառսէլ ծառուղիին ձիերու վաճառանոցը դացեր, պտըտեր, հոն մութ գոյնով ծախու կառք մը տեսեր էր

երկու հոգինոց, ամէն պէտք եղած սարքերովը :

Ուզուած գինն էր հազար երկու հարիւր ֆրանք :

Կառապանը հազար ֆրանք առաջարկեց, և թեթեւ վիճարանութենէ մետեւ, գնող և վաճառող համաձայնելով առաջինը լաւ ձի մը փնտռեց, և զայն ալ գտնելով ութ հարիւր ֆրանքի գրանց և կառքին լծեց :

Այս գնումներն երկու ժամ տեւեր էին, և մեր կառապանին ուրիշ գործ չէր մնացեր, բայց միայն ելնել կառքին առջեւը նստիլ և ուզած տեղն երթալ :

Այնպէս ըրաւ, իբրեւ իւր արհեստին քաջահմուտ մարդ :

Պէտսի կամուրջն անցաւ և Լիոնի կայարանին կողմէ վար իջաւ երկար պտոյտ մ'ընելով :

Երբ Լիոնի փողոցը հասաւ, հոն փայտաչէն կառատուն մը տեսաւ վրան ծանուցումով :

Քովը վեց յարկով մեծ շէնք մը կար. տակը գինեվաճառի խանութով :

Մեր կառապանը վար իջաւ կառքէն և կառատունին դրան առջեւ եր-

Թալով, հարցուց տեսաւ որ գինեվա-
ճառին յանձնուած էր կառատունը վար-
ձու տալու գործը:

Գինն էր տարեկան վեց հարիւր
Ֆրանք կանխիկ: Կէս ժամու մէջ գինը
վճարուեցաւ, կառքը ներս տարուե-
ցաւ, ձին ալ վարսակով լեցուն մսուրին
առջեւ դետեղեցաւ:

Չայս ընելէ ետեւ կառապանը մեկ-
նեցաւ և հանդարտ քայլերով հասաւ
Բիւրի տը լ'էրմիթ փողոցը:

Ընթերցողն հասկեցաւ անշուշտ թէ՛
Անթօան Բօսատն էր:

Շնորհիւ այն երեք հազար ֆրանքին
զոր տը Ֆէրնիք կոմսուհին տուած էր
իրեն, կրցեր էր այս պատրաստու-
թիւններն ընել և կերպարանքը փո-
խել, ա՛յնչափ կատարեալ կերպով, որ
իւր նկարագիրը ձեռու ընին ունեցող և
զինքը փնտռող ոստիկաններն անգամ,
եթէ հանդիպէին իրեն, չէին կրնար
ճանչել:

.
Մեր մարդոց ամէնն ալ, ինչպէս որ
կը հասկընան ընթերցողք, շատ յուզ-
ուած էին:

Դանիէլ տը Բէօրի և Ֆէրնանտի մը-
տային վիճակն յայտնի էր:

Բրէնպորն զգալով իւր պատասխանա-
տուութեան ծանրութիւնը, իսկապէս և
առաջին անգամ կենացը մէջը տենդոտ
տազնապ մ'ունեցեր էր՝ մտածելով
այն վտանգներն ու դժբաղդութիւն-
ներն որք կ'սպառնային Դանիէլ տը
Բէօրի և անոր սիրելւոյն, որոց ջեր-
մապէս համակրած և զորս ազատելու
խօսք տուած էր:

Գալով Տիանի և Բօլ տը Ռիչմօնի, որ-
չափ ալ խաղին յաղթող թուղթերը
ձեռքերնուն մէջ կը կարծէին, բայց և
այնպէս այսչափ սարսափելի խաղ մը
առանց սրտադողի և առանց ջիղերու
սաստիկ պրկման չի խաղցուիր:

Երկու մեղսակիցները զիրար նորէն
տեսեր էին:

Դերկոմսը իւր կնոջն և Դանիէլ տը
Բէօրի հետ ունեցած տեսարանը պատ-
մեր էր Տիանին:

Կոմսուհին բարեգուշակ համարեր էր
այն տեսակցութիւնը:

Տարակոյս չի կար որ նախաքննիչ
դատաւորը պիտի զիջանէր, գործը
խեղդէր, կամ իրենց գլխուն վրայ
կախուած կասկածները պիտի հեռացը-
նէր, իւր տարփուհիին պատիւը պահ-

պանելու, զաւակը գտնելու և Ֆէր-
նանտի յանձնելու, ինչպէս նաև վրա-
յէն հեռացընելու այն վտանգներն ու
խայտառակութիւնները զոր կը պատ-
րաստուէին թափել իւր վրայ, եթէ
չուղէր կատարել Տիանին ու դերկոմ-
սին ուզածները:

Կոմսուհին ազատ շունչ կ'առնէր:

Միայն կը մնար ժիւլ Շամպէզիի
կողմէ սպառնացուած վտանգը:

Բայց այն վտանգին դէմ ալ միջոց-
ներ ձեռք առած էր:

Հետեւեալ օրը, իրիկուան ժամը
ճիշդ իննին, ինչպէս որ որոշած էր
Անթօան Քօսատի հետ, Բիւի-Տը-Լ'էր-
միթ փողոցի փոքր տան առջեւ հասաւ,
վրան սրահած բանլիքով բացաւ դուռը
և մտաւ ներս:

Երբ տեսաւ Քօսատը, որ իրեն կ'ս-
պասէր և դէմն ելաւ, սոսկումի ճիչ
մ'արձակեց:

Անթօան պահեր էր կառապանի կեր-
պարանքը, և ա'յնչափ կատարեալ էր
ծպտումը, որ կոմսուհին, մէկէն ի մէկ
օտար մարդ մը կարծելով զայն, դող
ելեր էր:

Քօսատ մէկ բառով քաջալերեց զայն:

Ի՞նչ բանի համար է այդ ծպտումը,
հարցուց Տիան քիչ մը քաջալերուե-
լով, բայց սիրտը դարձեալ կը բա-
բախէր, կատարուելիք ահռելի գոր-
ծերը մտածելով:

— Կատարելու համար պէտք եղածը,
պատասխանեց Քօսատ խուլ ձայնով՝
մը, այսինքն քեզ ազատելու համար:

— Ի՞նչ պիտի ընես:

— Ինչո՞ւղ պէտք, հերիք է որ քո
փրկութիւնը ապահովի: Կասկած մ'ու-
նի՞ս այդ մասին:

Տիան սարսռեցաւ:

— Պիտի գա՞յ, աւելցուց Քօսատ:

— Անտարակոյս: Երբ մարդ մ'երկու
հարիւր հազար Ֆրանք պիտի ստա-
նայ, չի գալիք կ'ընէ՞:

— Բովդ պատրաստ է այդ գումա-
րը:

— Ո՛չ:

— Լաւ, ուրեմն պէտք է կատարեմ
գործը: Թուղթերը պիտի բերէ՞:

— Անշուշտ:

— Իմ կողմէս ալ ամէն բան պատ-
րաստէ: Միայն թէ կէս ժամու չափ
դուրս պիտի ելնեմ:

— Զիս մինա՞կ պիտի թողուս, հար-
ուց Տիան դողալով:

— Հարկ է :

— Եւ եթէ գա՛յ :

— Կ'ընդունիս... : Եւ եթէ ես վերա-
դարձած չըլլամ... կ'սպասեցնես... :

— Ի՞նչպէս :

— Հազար միջոց կայ : Գինին վրայ
քիչ մը վիճարանէ :

— Ես անպատճառ հո՞ս պիտի գըտ-
նուիմ, կրկնեց Տիան վարանելով և
դողահար :

— Հարկաւ, եթէ քեզ չի տեսնէ հոս...
կասկածի կ'երթայ, և ամէն բան կը
կորնչի... : Դուն պէտք է բանաս դուռը :

— Բայց զիս մի թողուր երթար :

— Քեզ թողո՞ւմ... կարելի՞ բան է :

Քիչ մը լռութիւն տիրեց :

— Կառք մը գնած եմ, պիտի երթամ
բերեմ : Երբ թաւալումը լսես, հասկը-
ցիր որ եկեր եմ : Ես դուրսը պիտի
սպասեմ դրանն առջև, կառքին նստա-
րանին վրայ, որպէս զի ներս մտնէ :
Ձիս չի կրնար ճանչել և կը կարծէ թէ
քեզ հոս բերող կառքն է... :

— Բայց ի՞նչ բանի համար է այդ
կառքը :

— Ձայն հոսկէ տանելու համար, պա-
տասխանեց Քոսատ այնպիսի նայուած-

քով մը, որ քստմնեցուց իւր մեզսա-
կիցը : Երթամ, ժամանակ չի կայ կոր-
նեցրնելու :

Եւ մեկնեցաւ անմիջապէս :

Ժամը տասնին քառորդ մնացած,
Տիան կառքի մը թաւալումը լսեց, որ
եկաւ կեցաւ փոքր տան առջև :

— Ան է, ըսաւ : Ժիւլ Շամպէզի ալ
կուգայ հիմա :



ՈՒՐ ԿՈՄՍՈՒՀԻՆ ԿԸ ՎՃԱՐԷ ԺԻՒԼ ՇԱՄՊԷՉԻ ՈՒՋԱՅԸ

Ժիւլ Շամպէզի չէր կրնար մոռնալ
Տը Ֆէրնիք կոմսուհիին հետ ըրած ժա-
մադրութիւնը :

Ցանելէ ետեւ քաղելու ժամանակն
եկած էր :

«Երկու հարիւր յիսուն հազար ֆը-
րանք, կ'ըսէր ինքնիրեն. այս իրիկուն
պիտի երթամ ստանամ... : Տարակոյս
չունիմ որ կոմսուհին պիտի վճարէ :
Անշուշտ տարփածուն, Պ. տը Ռիշմոն
պիտի հայթայթէ այդ գումարը... :

Չեմ կարծեր որ ինծի խաղ մը խաղալ կամ թակարդ մը լարել ուղէ, այդ մասին վախ չունիմ: Նաև Բիւի տը լ'էրմիթ փողոցի փոքրիկ տունն առանձին չէ. որովհետեւ ընդարձակ բռնակաւոր շէնք մը կայ քովո. երկրորդ ո՞վ պիտի համարձակի դաւել զիս, անշուշտ ո՛չ կոմսուհին. ո՛չ ալ տը Ռիշմոնը զոր տեսայ և կը ճանչեմ... վախկոտ մարդ մ'է, վտանգաւոր ձեռնարկ մ'ընելու անկարող: Կը մնայ ֆոսատ, այո՛, ահեղ մարդ է, ամէն բանի կարող... բայց վերջապէս մարդ մ'է... ես ալ պէտք եղած զգուշութեան միջոցը ձեռք առած եմ... զինեալ եմ...»

Եւ ատրճանակը զննելով քովի գրքպանին մէջ դրաւ ձեռքին տակը:

«Սակայն, ըսաւ. հիմա որ Անթօան ֆոսատ գիտէ թէ իւր նկարագիրը ուտիկանութեան ձեռքն է և զինքը կը փնտռէ իբրեւ հեղինակ Ժիւսթին Պօնֆօայի սպանման, անշուշտ փախած կամ ծածուկ տեղ մը պահուըտած է, սիրտը դողի մէջ, և չի կրնար համարձակիլ նոր շահատակութիւն մ'ընելու:

«Ասկէ զատ... ասկէ զատ... այս մարդիկը շատ բաներ ունին նկատե-

լիք... շատ վտանգներու ենթակայ են, հետեւաբար չեն համարձակիր նոր սպանութիւն մ'ընելու, որ զիրենք բացարձակապէս վտանգի ու կորստեան կը մատնէ:

Եւ ձեռքերը կը շփէր:

— Երկու հարիւր յիսուն հազար ֆրանս մէկ պահէն, կ'ըսէր: Քանի մ'օր ետքն ալ Դանիէլ տը Բէօրէն պիտի ստանամ նոյնչափ գումար մը, որով կ'ըլլայ կէս միլիոն ֆրանք: Տուէ փողոցի մանկիկէն ալ կրնամ բան մը քաղել... ինչպէս նաև տը Ֆէրնիք կոմսէն...: Այս վերջինին համար տեսնենք սակայն. վասնզի, երբ միւսները վճարեն, ազտոտ գործ կ'ըլլայ զանոնք մատնել... և ես ալ չեմ ուզեր գէշութիւն ընել անոնց, իմ ուզածս, իմ բարիքս է. ամէն բան կախում ունի ինձի հետ վարուելուն եղանակէն:

Ժամը իննուկէսին դուրս ելնելու պատրաստուեցաւ:

Լայն վերազգեստ մը հագաւ, դրամապանակին մէջ քիչ մ'աւելի ստակ դրաւ իբր նախահոգ պատրաստութիւն, աղքատաց գանձանակէն վերցուցած թուղթերն առաւ թղթապանակին մէջ դը-

րաւ, և տիկին Շաթլէնի գեղեցիկ երեսին վրայ գորովալից համրոյր մը գետեղելէ ետեւ.

— Յտեսութիւն, ըսաւ ակամայ յուզուած: Եթէ Փարիզի սիրահար չես, մեկնելու պատրաստուէ: Թերեւս, ամիս մը շանցած, կ'երթամք քեզի հետ Զուիցերիոյ գեղադալար մէկ անկիւնը հաճոյալից կեանք մը վարելու իրրեւերկու տարփաւոր և միանգամայն պարկեշտ քաղաքացի, և հոն թեթեւ սըրտով կը ճաշակենք մեր պատուական հասոյթները:

— Ուր որ երթաս, կուգամ, պատասխանեց Սոֆի, երկչոտ հիացում մ'զգալով տարփածուին ծածկախորհուրդ գէմքէն:

Ժամը տասը քառորդ անցած՝ Բիւլիտը-լ էրմիթ փողոցը հասաւ Շամպէզլի:

Խնամով աչքէ անցուց փողոցը, որ հանդարտ և խաղաղ կ'երեւար սովորականին պէս:

Տանն առջև սե կառք մը կեցած էր: Կառապանը նստարանին վրայ կը մրափէր ըստ սովորութեան իւր արհեստակիցներուն:

— Շատ աղէկ, ըսաւ ինքնիրեն Շամ-

պէզլի, կոմսուհին եկեր է: Եթէ չար դիտաւորութիւն մ'ունենար, քալելով կուգար և դրանն առջեւ կասկածելի վկայ մը չէր կեցրներ: Զիս անկասկած ընել ուզած է: Յիրաւի խելացի կին է: Ես ալ իրեն պէս ուղղութեամբ պիտի վարուիմ:

Եւ դէպի դուռն յառաջացաւ, շօշափելով գրպանին մէջի ատրճանակը, ինքզինք պատրաստ բռնելու համար: Կառապանը, որ կը քնանար, և ոչ խսկ նշմարեց զայն:

Շամպէզլի երկու անգամ կամացուկ մը բաղխեց դուռը և ականջ դրաւ:

Կնոջական քայլերու թեթեւ ոտնածայն մը հասաւ ականջին. յետոյ կըղպանքը ճոնչեց և դուռը քիչ մը բացուեցաւ:

— Դո՞ւք էք, հարցուց կամացուկ, բայց անուշ ձայն մը:

— Այո՛, տիկին՝ կոմսուհի, պատասխանեց Շամպէզլի նոյն կերպով:

Ճանչեր էր անոր ձայնը:

Դուռը բոլորովին բացուելով, Շամպէզլի տեսաւ կոմսուհին, ձեռքը մոմ մը բռնած:

Տիան խիստ դժգոյն էր և մոմը բռ-

նող ձեռքը կը դողար քիչ մը :

Զարմանալու բան մը չէր, պարագաներու նայելով, ուստի Շամպէզի ալ չի զարմացաւ :

Ներս մտաւ, դուռը գոցեց, և արագ նայուածք մը պտըտցուց իւր շուրջը :

Մտան առաջին սենեակը : Մարդ չի կար : Որմադարան, վարագոյր, կահ, ակնու կիւն. չէին կրնար երբորդ անձ մը ծածկել :

— Շատ լաւ, ըսաւ մտքէն :

Առանց խօսք մ'ուղղելու իրեն կոմսուհին առաջ անցնելով՝ ննջասենեակը մտաւ :

Հոն կասկածելի էր միայն արդէն ծանօթ որմադարանը, որ բակին վրայ բացուող դուռ մը կը ծածկէր :

Մարդ մը կրնար դարանիլ հոն :

— Հաճեցէք բանալ սա որմադարանը, տիկին կոմսուհի, ըսաւ պարզապէս Շամպէզի, սենեակին դրանը մէջ կենալով :

— Կը կասկածի՞ք ինձմէ, պարոն, պատասխանեց Տիան առանց բարկութիւն կամ դիւրազգածութիւն ցուցնելու :

— Անշուշտ գիտէք առածը, տիկին. ինչե՞տե՞ս ինչե՞տե՞ս ասո՞վն է ապահովութեան :

Տիան՝ առանց պատասխանելու՝ գրնաց որմադարանին քով, բացաւ, ամէն կողմը լուսաւորեց, վեր առնելով կախուած զգեստները, որոց ետին մարդ կրնար պահոււրտիլ :

— Կատարեա՞լ, ըսաւ Շամպէզի եւս քան զեւս գուարթանալով :

Կոմսուհին պիտի գոցէր որմադարանին դուռը :

— Ո՛չ, ո՛չ, գոչեց Շամպէզի, բաց թողէք այդ դուռը... : Եթէ հետաքրքիր մէկը հոգիէ ներս մտնել փորձէ, իսկոյն իմանանք... : Եւ գիտէք անշուշտ սա առածն ալ :

Էս իրողի ղ երկուստ կ'արթէ :

— Ինչպէս որ հաճոյ թուի ձեզի, պարոն, պատասխանեց կոմսուհին պաղութեամբ, որուն սեւ աչերը խոյս կուտային Շամպէզիի աչերէն : Բերի՞ք այն թուղթերը որ ինձի պիտի յանձնէիք :

— Այո՛, տիկին :

— Կրնա՞մ տեսնել :

— Կրնաք :

Եւ վերազգեստը բանալով՝ հանեց թղթապանակը, և մէջէն երկու թուղթ քաշեց :

Մէկը Անթօան Գօսատի ուղղուած նամակն էր, միւսն ալ հռչակաւոր սեկէտին յատակագիծը:

Շամպէզի բացաւ զանոնք և հեռուէն ցուցուց կոմսուհիին:

— Այո՛, ատոնք են, մրմնջեց Տիան, բան մը պակաս չէ:

— Միայն երեք հազար Ֆրանքի պանքտոմսները, որ այս թուղթերուն հետ էին, պատասխանեց Շամպէզի ժգտելով: Բայց չեմ կարծեր որ դուք դիտաւորութիւն ունենաք զանոնք վար դնելու ինձի համբելիք ստակներնուդ մէջէն:

«Անոնք ապագայ տիկին Շամպէզիի զարդասեղներն են, աւելցուց, միտքը բերելով Սօֆի Շաթլէնը զոր միտքը դրած էր կնութեան առնել ի վարձատրութիւն հլութեանն ու անձնութեան:

Տիան առջեւը կը նայէր, վախնալով որ բան մը կը գուշակէր իւր աչքերէն:

Չէր ալ խօսեր ականջն ուրիշ բանի տալով և ոչ Շամպէզիի խօսքերուն, որ կրնակը մուտքի դրանը դարձուցած էր և երեսն ալ որմադարանին դրանը, ուրկէ միայն էր վախը:

— Պայմանեալ երկու հարիւր յիսուէ.

հազար Ֆրանքը քովերնիդ պատրաստ է անշուշտ, աւելցուց Շամպէզի զարմանալով անոր լուսթեանը վրայ:

— Կը տեսնեմ որ անգութ էք, պատասխանեց Տիան:

— Օ՛, տիկին, ո՛չ վիճաբանելու, ոչ ալ սակարկելու ժամանակ է այլեւս: Պէտք է վճարէք, համրէք, համրէ՛ք:

Չայս ըսած միջոցին ալ ձեռքով բռնած թուղթերը կ'երբրցընէր, ձախձեռքն ալ կ'երկնցընէր:

— Ո՞ւր է խոստացուած գումարը, քովերնիդ չէ՞, հարցուց նորէն:

— Այո՛, պարոն...:

— Ուրեմն...:

— Սա գրասեղանին մէջն է:

Կոմսուհիին դէմքը կապարի գոյն առած էր և բոլոր մարմինը կը դողար:

Բայց և այնպէս գրասեղանին քով գնաց, և գրպանին մէջ բանալի փընտռել ձեւացուց:

Յանկարծ վեր ցատկեց և աչերը լուսաւորեցան, Շամպէզիին ետեւի կողմը նայելով:

Այս վերջինն ալ զարմանալով կոմսուհիին յանկարծական շարժումին և

փոփոխման վրայ, մէկէն ետին դարձաւ:

Կառապանը կամ մանաւանդ Անթօան ֆօսատ հոն իւր ետեւն էր:

Բերանը բացաւ գոչելու համար և միանգամայն գրպանէն ատրճանակը հանել ուզեց:

Բայց ֆօսատ ժամանակ չի թողուց:

Շամպէզի թաւալգլոր ինկաւ տախտակամածին վրայ, դանակի հարուած մ'ուտելով կուրծքին:

Հազիւ դնդերային արագ ցնցումով մը շարժեցաւ մարմինը շանթահար եղածի պէս:

Տիան խեղդուկ ճիչ մ'արձակեւր էր սչերը գոցելով:

Բայց երկար չի տեւեց:

Բացաւ աչերը:

— Թուղթե՛րը, կակազեց խռպոտ ձայնով մը:

— Աւասիկ, պատասխանեց ֆօսատ քաշելով դիակին կծկած ձեռքէն և իրեն երկնցնելով:

Տիան մէկէն առաւ, ստուգեց և մոմին ներկայացուց:

Իսկոյն բռնկելով մոխիր դարձան:

— Փրկուեցա՛յ, մրմռաց:

Յաղթական վայրագ ժպիտ մը լուսաւորեց և թուլցուց կծկած դիմագիծերը:

— Մի՛ կենար, չուէ՛, ըսաւ մէկէն Անթօան ֆօսատ:

— Եւ այս մարմինը՛:

— Իմ գիտնալիք բանս է:

Իսկոյն Տիան դուրս նետուեցաւ, և դուռը բանալով փողոցին մէջ գտաւ ինքզինք, առանց բառ մ'արտասանելու, և արագ քայլերով հեռացաւ այն սոսկալի տեսարանէն և սարսափելի տեղէն, շմորած, իւր բնազդին միայն հնազանդելով, և միակ զգացում մ'ուսնենալով, այն էր ազատման զգացումը: ֆօսատ ետեւէն նայեւր էր դժգոհ աչքով:

Տիան մոռցեւր էր շնորհակալութիւն յայտնել անոր:

Բայց քիչ ետքը գազանական գլուխն երերցընելով:

— Վախցաւ, ըսաւ, կը ներեմ իրեն:

Երբ մինակ մնաց, առանց վարանելու, իբրեւ իւր ընելիքն առաջուց խորհած ու պատրաստած մարդ, վերցուց թեւերուն մէջ գրկեց Շամպէզի աբիւնուայ մարմինը, սենեակներէն և

յետոյ դռնէն դուրս ելնելով՝ տարաւ
կառքին մէջ խոթեց, և բաց դռնակը
վրայէն գոցեց:

Չոյս ընելէ ետեւ, նորէն տանը
մէջ մտաւ, ճրագը մարեց, և դարձաւ
կառքին քով, նստաւ իւր կառապանի
աթոռին վրայ և ձին մտրակելով հե-
ռացաւ:

Կէս գիշերը զարնելու մօտ էր, երբ
գետեզրը հասաւ: Երկինքը ամպերով
ծածկուած, և հետեւապէս մթին էր:

Գետեզրը ամայի էր, մանաւանդ
Նարայէոն գետեզրը, ուր դիմեր էր
Քոստա:

Հոնկէ շարունակելով ընթացքը դէ-
պի ամբուսթիւնները, մտաւ երկաթու-
գիին կամուրջին մէջ, և հոն կեցաւ:

Առանձնութիւնն ու լռութիւնը բա-
ցարձակ էր հոն:

Վար իջաւ իւր նստարանէն, բացաւ
կառքին դռնակը, գրկեց վեր առաւ
դիակը և մէկ երկու անգամ որբելէ
ետեւ՝ գետին մէջ նետեց:

Խուլ շահնդ մը լսուեցաւ... Չուրերը
վեր ցատկեցին...:

Անթօան Քոստա հեռացեր էր ար-
դէն մտրակելով իւր ձին, որ դէպի
Լիոնի փողոցը կը տանէր զայն:



Ղ Ա Ղ Ա Ր Ո Ս

Բրէնպորն, կը յիշեն ընթերցողք,
յոյս տուեր էր Յէրնանտի թէ պիտի
գտնէր իւր զաւակը:

Այն վայրկենէն ի վեր գործ բնակ
էր իրեն փնտռել տղեկը, ճարպիկ ծո-
տիկանի մը հնարամտութեամբ և անձ-
նուէր բարեկամի մ'եռանդով:

Բայց աւա՛ղ, ճարտարամտութիւնն
ու եռանդը չկրցին յաջողիլ:

Բօլ տը Ռիչմօն միայնակ գործեր էր,
և ոչ ոք նշմարեր էր ըրածը:

Օրերն օրերու վրայ կ'աւելնային, և
Բրէնպորն թէեւ իւր ամէնէն ուշիմ
մարդիկը խուզարկութեան հաներ էր,
բան մը չէր կրնար գտնել:

Դիւրաւ կը գուշակուին Դանիէլ Գոթ
Քէօրի և Յէրնանտի սրտատանջութիւնն
ու տազնապը: Իրարմէ բաժնուած,
զիրար չկրնալով տեսնել, իրարու հետ
չի կրնալով կամ չի համարձակելով հա-
ղորդակցիլ, ամէն վշտաց և յուսահա-
տութեանց բաժակը կը քամէին:

Իսկապէս զիրար սիրողներու, Դա-
նիէլի և Յէրնանտի պէս զիրար սի-

րողներու մէկմէկէ բացակայութիւնը, ոչ միայն մոռացում կամ կրքի տկարացում չի բերեր, այլ առաւել կը գրգռէ ու կը բոցավառէ, և որչափ աւելի մէկը միւսէն հեռի ըլլայ, այնչափ աւելի կը զգայ իրարմէ դատուած ապրելու անհնարութիւնը:

Դանիէլի վշտակրութեան վրայ կ'աւելնար այն սուր, զկծիչ վիշտը, ցաւերուն ամէնէն դժնդակը, որ նախանձոտութենէ կը ծնի:

Թէեւ կասկած չունէր Ֆէրնանտի վրայ, բայց գիտէր որ միեւնոյն յարկի տակ էր ամուսնին հետ, ակամայ անոր մօտը կ'ապրէր, միեւնոյն օդը կը շնչէր անոր հետ: Այս գաղափարը յիմար կատաղութեան նոպայներ կուտար իրեն, երբ ինքզինք միայնակ կը տեսնէր իւր աշխատութեան սենեակին մէջ, ինքը որ իւր անձէն աւելի կը պաշտէր իւր սիրուհին. իւր առանձնութեան մէջ բոլոր մտածութիւնն անոր վրայ էր: «Ի՞նչ կ'ընէ արդեօք, կը հարցընէր ինքնիրեն, ի՞նչ կը դառնայ բնակարանին մէջ:»

Բրէնպորնի հետախուզութեանց անյաջողութենէն յուսահատելով, երկար վարանելէ և տատամսելէ ետեւ իւր

դատաւորական պարտականութեանց միջեւ, որք զինքը կ'ստիպէին յանցաւորներն արդարութեան ձեռքն յանձնել, և պարկեշտ մարդու և սիրողի պարտականութեանց միջեւ. որք զինքը կը հարկադրէին փրկել սիրեցեալ կինը, վերջապէս տեղի տուեր էր իւր կացութեան հարկին առջեւ, հետեւաբար յետաձգելի դատերուն կարգը դասելու մտքով տեղեկագիր մը շինէր էր, յայտնելով թէ եղած խուզարկութիւններն արդիւնք մը չունենալով, հարկ էր դադրեցնել դատական հետապնդումները մինչեւ ի նոր տնօրէնութիւն:

Լրագրաց մէջ տեսնուած այլ և այլ ծանուցագրեր հասարակութեան իմացուցած էին դատական իշխանութեան այս անկարողութիւնը:

Դանիէլ կ'սպասէր հիմա որ Ֆէրնանտի ամուսինը կատարէր իւր խոստումը:

Յանկարծ, հետեւեալ օրը, առաւօտեան փոքրիկ բայց բազմածաւալ օրագրի մը մէջ հետեւեալ հրատարակութիւնը տեսնուեցաւ.

«Դատական իշխանութիւնն ինքզինք անկարող կը ճանչէ Բիէնֆիթի ոճիրին հեղինակները գտնելու:

«Պատճառն այն է որ շատ լաւ չէ
փնտռած, կամ գտածին վրայ ձեռք
դնելու չէ համարձակած :

«Ոճիրներ կան որ անպատիժ կը մը-
նան, վասն զի գործողները բարձր
դիրք կը դրաւեն ընկերական սանդու-
ղին վրայ, մեծ անուն ունին կամ
բարձրաստիճան պաշտօնատարներ են :

«Պէտք պիտի ըլլար պրպտել բարձր
դասակարգէ մէկ կամ երկու կիներու
կեանքը : Հայր և ամուսին մեծ դիրք
մ'ունին Ֆրանսայի մէջ... կամ դուրսը :

«Այդ երկու կիներէն մէկին տարփա-
ւորը, որովհետեւ տարփաւոր մը կայ
մինչեւ իսկ երկու, իւրաքանչիւրին հա-
մար մէկ հատ... թերեւս նոյն իսկ
գործը քննելու և մեղապարտները
պատժելու պաշտօն ունեցող դատական
իշխանութեան կը վերաբերի :

«Յանցաւորները, վստահ իրենց ան-
պատժութեան վրայ, ձեռուընին կը
չլինեն :

«Բայց պէտք չէ մոռնանք թէ հայր
մը կայ ազնուատոհմ, տիպար պատուոյ
որ այս միջոցիս Ֆրանսայէն հեռու կը
գտնուի պաշտօնով, և որ բնաւ չի վա-
րանիր իւր կրկնապէս թշնամանեալ

պատուոյն վրէժը լուծելու և ամուր
ձեռքով հարուածելու զանոնք որ դա-
տական իշխանութիւնը չի համարձա-
կիր պատժել» :

Այս տողերը հրատարակող լրագիրն
անուանի էր իրբեւ սիրահար դատա-
կան և ուրիշ գայթակղութիւններու,
որ շահու աղբիւր մ'էին իրեն :

Այս պատճառով աւելի կը կարդա-
ցուէր :

Բայց ի՞նչպէս ձեռքը հասեր էր այս
տեղեկութիւնը, և ո՞վ տուեր էր :

Դեռատի և վայելչազգեստ կին մը
խմբագրատուն տարեր յանձներ էր
կնքեալ պահարանի մը մէջ :

Խմբագրատանը, բանալ կարդալէ ե-
տեւ՝ խոշոր գայթակղութեան մը հոտն
առնելով, որ հասարակութեան հետա-
քըքրութիւնը պիտի մտրակէր, անմի-
ջապէս հրատարակութեան տուեր էր
առանց ուսկից դալը փնտաւելու :

Մէջը անուն դրուած չըլլալով, բո-
ղոքէ կամ դատէ վախ չունէր :

Կինը կնքեալ թուղթն յանձնելէ ե-
տեւ մեկներ էր :

Խմբագրատան վարի դրանն առջեւ
20

սպասող կռուք մը զայն առնելուն պէս հեռացեր էր սրարչաւ, պուլվառներէն մինչեւ Պասթիլ, յետոյ Լիոնի փողոցը, անկէց ալ գետեզրը մինչեւ Պէրսի, և հոն կեցեր էր փոքրիկ կահաւոր օթեւանի մ'առջեւ:

Կինը կռուքին վարձը վճարելով օթեւանը մտեր, և սանդուղէն վեր ելնելով. առաջին յարկին վրայ 3 թիւ սենեակի դուռ մը բացեր ներս մտեր էր:

Սենեակին մէջ անկողին մը կար, մէջն ալ դժգոյն ու նիհար մարդ մը որ սաստիկ տենդէ մաշած կը թուէր:

Այդ մարդն էր Ժիւլ Շամպէզի. դեռ առաւի կինն ալ անոր տարփուհին էր, Սօֆի Շաթլէն:

Շամպէզի չէր մեռած, և ահա ինչպէս:

Դանակի հարուածը, զոր Անթօան Գօսատ բուռն զօրութեամբ անոր սըրտին տուեր էր, ծակեր անցեր էր այն թղթապանակը, որուն մէջէն Շամպէզի հաներ էր աը Ծէրնիք կոմսուհիին յանձնելիք թուղթերը:

Այդ տեսակ մը զրահը կոտրեր էր հարուածին ուժը, և դանակը չէր կըրցեր խորունկ մտնել կրուծքին մէջ:

Շամպէզի մարեր ինկեր էր հարուածին սաստկութենէն, և ներսէն վազած արիւնն ալ ՚դինքը մեռելակերպ անզգայութեան մէջ ձգելով, Անթօան Գօսատ աներկբայաբար կարծեր էր թէ կատարեալ դիակ մ'էր Աէնի մէջ նետածը:

Մարմինը ջուրին մէջ մխրճեր էր Նաբոլէոն կամուրջին երրորդ կամարին առջեւ, ուր մաքսաւորներ դարանամուտ եղած, մաքսանենգներ կը դիտէին, որք ալքօլի տակառներ պիտի անցընէին գնաին մէջէն:

Այս գործին զբաղած ըլլալով, մաքսաւորներն ուշադրութիւն չէին ըրեր կամուրջին վրայ կռուքին թաւալման շօինդին:

Բայց յանկարծ վերէն վար բանի մը իյնալը տեսեր էին:

Ջուրը ցայտեր էր իրենց նաւակին շուրջը, և մարմին մը սահեր էր տկար տապալտուկով մը:

Թեւճակի երկու հարուածով հասան ջուրին քած մարդուն քով, և բռնցին իրենց նաւակին մէջ առին, ուր տարածուեցաւ անզգայ վիճակի մէջ:

Մաքսանենգները մոռցուեցան:

Խեղդուողն ազատել հարկ էր :

Քաշեցին մաքսատան շոգենաւին վրայ հանեցին, ուր ուշաբերելու աշխատելով տեսան որ վէրք մ'ունէր կուրծքին վրայ :

Տարուած փութապինդ խնամքները Շամպէզիի խելքը գլուխը բերին :

Ձուրին զովութենէն վէրքը արիւննելով՝ վերահաս համախոնուով փրկեր էր զայն :

Կրցաւ քանի մը խօսք արտասանել, ըսաւ թէ՛ անծանօթ մարդ մը... իւր վրայ յարձակեր էր կամուրջին վրայ և խնդրեց որ մօտակայ պանդոկ մը փոխադրեն զինքը, և սենեակի մը մէջ դնեն :

Շտապով բերուած բժիշկ մը պատեր էր վէրքը, հաւաստելով թէ՛ մահացու չէր :

Երկու օր ետքը, Շամպէզի բուական կազդուրուելով, լուր դրկեր էր Տիկին Շաթիէնի, որ խկոյն հոն վազեր էր լալով, և քովէն չէր բաժնուեր :

Շամպէզի, իր իւրաքանչիւր հասկցուի, վրէժխնդրութեան ծարաւէ կը լափուէր :

Իւր կարծիքով Դանիէլ աը Քէօր, աը

Ռիչմոն գերկոմսը, կինը, և տը Ֆէրնիք կոմսուհին մաս ունէին սպանութեան փորձին մէջ որմէ մազապուր ազատեր էր :

Ստակը չէր մտածեր այլեւս, այլ միայն վրիժառութիւն այն ամէն անձանց դէմ, որոց ինքը սպառնացեր էր, և անոնք ալ այս դաւը լարեր էին իրեն դէմ :

Սօֆի մասամբ ծանօթանալով գործին, ինչպէս ամէն սիրահար կին, իւր տարփածուին ընթացքին բարոյականութիւնը չէր դատեր, այլ միայն անոր կեանքը վտանգի մէջ դնող խարդաւանքէն զգածուելով, ինքն ալ վրիժառութեան կը փափաքէր :

Հետեւապէս ուրախութեամբ կատարեց ինչ որ ուզեց վիրաւորեալը :

Անոր տուն տալովը գրեց այն հրատարակուած տողերը զոր յիշեցինք, և տարաւ յանձնեց որու որ պէտք էր, որպէս զի տը Ֆէրնիք կոմսն արթննալով պատժէր զանոնք, որոց դէմ Շամպէզի սաստիկ օխ ունէր հիմա, և միաքր դրէր էր ամէն միջոց ի գործ դնելով լուծել իւր վրէժը :

ՊԱՏՐՈՅԳԸ ԿԸ ԲՈՒՆԿԻ

Սօֆի, իրեն յանձնուած պաշտօնը կատարելէ ետեւ, Շամպէզիի գտնուած օթեւանը վերադարձաւ:

Շամպէզիի գոհ եղաւ, և հետեւեալ օրուան սպասեց հոն անհամբերութեամբ:

Առաւօտուն երբ Ք... լրագիրն ըստացաւ, տենդոտ ձեռքով մը խզեց վրայի գօտին:

Ղրկած ծանուցագիրն ամբողջապէս հրատարակուած էր:

Ուրախութեան հառաչ մ'արձակեց:

Դժբաղդաբար, Ք... լրագիրը, թէ և շատ տարածուած էր, բայց բարձր դասերու մէջ ընթերցող քիչ ունէր, այնպէս որ ոչ Դանիէլ տը Բէօր, ոչ Ֆէրնանտ, ոչ Բօլ տը Ռիշմօն, ոչ ալ Տիան չի կրցին ծանօթութիւն ունենալ:

Իսկ Շամպէզի, իւր ծանուցագրին հրատարակուած ըլլալը տեսնելուն պէս գրիչ մ'առաւ և հետեւեալ հեռագիրը շարագրեց.

«Պ. Կոմ. որ Ֆերնէի դեռպան Լըն...»

«Կարդացէք Ք... լրագրին... թիւը: Մէջը Բիէնֆիթի ոճրին վերաբերեալ

տեղեկութիւն մը պիտի տեսնէք: Անշուշտ ձեր աչքին պիտի զարնեն անոր պարունակած ակնարկութիւնները: Հասկցողին յայտնի է թէ դուք և ձերինները բաւական յստակ կերպով նըշանակուած էք, որով հասարակութիւնը յուզուելով կ'ըսէ թէ առանց կրակի ծովի չըլլար: Հասկըցողին շատ բարև:»

Շամպէզի անծանօթ անունով մ'ըստորագրեց այս հեռագիրը, և անմիջապէս հեռագրատունը ղրկեց:

Այս առաջին գործը կատարելէ ետև. առանց գրիչը ձեռքէն ձգելու, նամակ մը գրեց Սօֆիին բացակայութեան միջոցին, և գոցելով կնքեց:

Հասցէն էր

ՊԱՐՈՆ ԲՐԷՆՊՈՐՆ

Պաշտօնեայ ապահովութեան
ի Դուռն Ոստիկանութեան

— Սիրելի Սօֆիս, ըսաւ տարփուհիին երբ վերադարձաւ, այս իրիկուն մեր սովորական բնակարանը պիտի վերադառնանք: Զիս աւելի լաւ կը գտնեմ, և բժիշկը կը հաւատտէ թէ կըրնամ կատարել այս փոքրիկ ուղեւորութիւնը:

Սօֆի քանի մը դիտողութիւն ընել ուզեց, բայց տարփածուն նշանացի արգելեց զայն:

Պէտք է որ Տէօ-Բօն փողոցը վերադառնամ:

— Կը կատարեմ ուզածդ, պատասխանեց Թաթլէն հլու դէմքով մը:

Ինչպէս որ արդէն ըսած ենք, Սօֆիայն կակղախմոր արարածներէն էր, որք ամէն տեսակ լուծ կը կրեն, և անկախութեան ինչպէս նաև արժանապատուութեան զգացում չունենալով, այնպէս կը կարծեն թէ՛ կինը պէտք է սողայ իւր արուին առջև, օրինաւոր բլլայ թէ ոչ, ինչպէս շունը կը սողայ իւր տիրոջ առջև:

Պէտք է աւելցնենք նաև թէ՛ այս շնական հլութեան կը կցորդէր նաև շան մը հաւատարմութիւնն ու անձնուիրութիւնն առ իւր տէրն, որ հազուադէպ բացառութիւն մ'է, վասնզի այն ամէն մարդիկ, որոց սկզբունքն է հրամայել իրենց տանը մէջ, իշխել իրենց կնոջ վրայ, և իբրեւ մեծ տղայ մը կանաչաւորել զայն իրենց տխմար ինքնահաւանութեամբ, ամէնն ալ առանց բացառութեան կը խարուին այն գեղեցիկ ստրուկէն, որ կը ծիծաղի իրենց վրայ երբ կրնակնին դարձունեն:

— Նախաճաշէն անմիջապէս ետքը կը չուննք, ըսաւ Շամպէզի:

— Շատ աղէկ, սիրելի՛ս պատասխանեց Սօֆի:

Յետոյ աւելցուց տեսնելով վերք յիշուած նամակը:

— Այդ ի՞նչ է:

— Սիրատունս մ'է, զոր պիտի խնդրեմ քեզնէ իւր հասցէին տանիլ երբ մեր Տէօ-Բօն փողոցի բնակարանը վերադառնանք:

Սօֆի փութաց չուելու պատրաստութիւնները կատարել, և կէս օրէն երեք ժամ ետքը ժիւլ Շամպէզի գնաց նորէն զետեղուեցաւ իւր սենեակին անկողնին մէջ:

— Հիմա, ըսաւ Շամպէզի, պէտք է գիտնամ թէ ի՞նչ եղաւ այն Անթօան ֆօսատ կոչուած մարդը... որով զբաղեցաւ անցեալները:

— Գիմացի դրացիի՞ն համար կ'ըսէք... այն սարսափելի մարդուն...:

— Կր տեսնեմ որ կը հասկընաս ըսածս: Կ'ուզեմ գիտնալ թէ տակաւին դիմացի առ՞ւնը կը նստի... թէ ուրիշ տեղ փոխադրուած է:

— Աղկէ դիւրին բան չի կայ:

—Օ՛ն, աղջիկս, կ'սպասեմ քեզի:

Քառորդ ժամ ետքը Սօֆի բերաւ
Շամպէզիի բազմացած տեղեկութիւնը:

Քոստաի բնակարանին դռնապանու-
հիէն իմացեր էր թէ այդ մարդն, ա-
ռանց բնակարանը փոխելու գեղ գա-
ցեր էր:

—Միտքէս կ'անցնէր, գոչեց Շամ-
պէզի խուլ զայրուցով մը: Գարշելին՝
իմ ազգարարութեանս վրայ՝ ինքզինքը
ձեռք չի տալու համար՝ իւր այս որջը
ձգեր, ուրիշ շուննոց մ'ընտրեր է Բիւի-
-տը-լէրմիթ փողոցին մէջ: Առաջուց
նշանակուած էր այս... և ես իմ վնա-
սովս ստուգեցի:

—Միրելի Սօֆիս, շարունակեց վայրկեան
մը լռին մտածումէ ետեւ, սա նամակը
տանելու ժամանակն է. վազէ դատա-
կան պաշտօնատունը, ապահովութեան
պետին գրասենեակը հարցուր գտիր,
և անոր աջ կողմի տուփին մէջ խօթէ:

—Ուրի՞շ:

—Այսչափ:

Սօֆի առաւ նամակն և անմիջապէս
մեկնեցաւ:

Առաւօտուն ժիւլ Շամպէզիի կողմէ
Տը Ֆէրնիք կոմսին զրկուած հեռագի-
րը քանի մը ժամ ետքը կոմսին ձեռ-
քը հասեր էր:

կոմսը՝ զայն ստացած միջոցին կ'աշ-
խատէր ի-ր քարտուղարին հետ, կա-
ռավարութեան ուղղուած կարեւոր
հեռագիր մը գրել տալով անոր:

Այս պատճառաւ անմիջապէս չի բա-
ցաւ իրեն զրկուած հեռագիրը, որ
պաշտօնական հանգամանք չունէր:

Բայց գործը լմնցնելէ ետեւ բա-
ցաւ կարդաց:

Կարդացած միջոցին կոմսին դէմքը
նախ զարմանք յայտնեց չի հասկընա-
լու ձեւով:

Դարձուց ետին նայեցաւ հասցէն
ստուգելու համար:

—Այո՛, ինձի ուղղուած է, մումը-
ռաց, և նորէն կարդաց աւելի ուշադ-
րութեամբ:

—Ի՞նչ կը նշանակէ այս, ըսաւ յօն-
քերը պոստելով: Անանուն նամակի
մը հանգամանք ունի: Բիէնֆիթի ո-
ճիրը...: Ա՛, այո՛, կը յիշեմ... ման-
կաբարձուհի մը սպաննուած էր...:
Բայց ի՞նչ վերաբերութիւն ունի ինձի:

—Պարո՛ն Բէսթի, ըսաւ մէկէն քար-
տուղարին դառնալով, Ֆրանսայէն ե-
կած լրագիրներուն մէջ ք... օրա-
թերթն ալ կա՞յ:

— Այո՛, պարոն կոմս, աւասիկ, դեռ
խզուած չէ գօտին:

— Տուէք ինձի:

Կոմսը խղեց գօտին, բացաւ լրա-
գիրը, և տարտամ սրտատանջութեամբ
փնտռեց իւր ուշադրութեան յանձ-
նուած յօդուածը:

Գտաւ անմիջապէս և կարդալ սկսաւ:

Քանի կը կարդար, դէ՛մքը կ'այլայ-
լէր:

Երբ լմնցուց, դէ՛մքը բոլորովին դժ-
գունած էր:

Տարակոյս չի կար, հեռագրին շնոր-
հիւ անհնար էր որ զօրութեամբ չի
հասկցուէր Յէրնանտին, Ռիչմօնին և
Տիանին անունները:

Տարփածու դատաւորի մը ակնարկող
տողին վրայ քիչ մը վարանեցաւ՝ հար-
ցընելով ինքնիրեն թէ ո՞վ կրնար ըլ-
լալ:

Յանկարծ տնուն մը ցայտեց ուղե-
ղին մէջ, անուն մը, որ սարսափելի
կերպով կը լուսաւորէր խնդիրը:

Դանիէլ տը ֆէօրը միտքն եկաւ,
նախաքննիչ դատաւորը զոր իւր ազ-
ջիկը սիրեր էր երբեմն:

Յիշեց իւր վերջին անգամ Փարիզ

հասած ժամանակ աղջկանը հետ ու-
նեցած տեսակցութիւնը... անոր զար-
մանալի ձեւերը, զգուշաւոր խօսուած-
քը, շփոթութիւնը և մօրը նկամամբ
ցոյց տուած պաղութիւնը:

Յիշեց Անթօան Բօստտին իւր օթե-
ւանէն դուրս ելնելն և իւր առջեւէն
փախչիլը ձեռքը թուղթերով, զորս
չէր կրցեր իւր ական անցունել:

Յանկարծ տենդ բռնեց զինքը:

Իւր ամեն հին կասկածները, որք
ժամանակէ մ'ի վեր հանգարտած էին,
աւելի բուռն կերպով նորոգուեցան
մտքին մէջ, իրենց ամենամանր պա-
րագաներով:

Ամէնէն առաջ Յէրնանտ ներկայա-
ցաւ:

— Տարփածու մ'ունի, ըսաւ դողա-
լով բարկութենէն ու ցաւէն. Այդ տար-
փածուն Պ. տը ֆէօրը պէտք է ըլլայ,
զոր լրագրին յօդուածն իբրև դատա-
ւոր կը ներկայացընէ: Ոճիրի մ'ալ
խօսք կայ, որդեսպանութե՛ան...:

Պաղ սարսուռ մը կը պոտէր մոր-
թին տակ:

— Յէրնանտ Բարիզէն բացակայ գտնը-
ւեր էր իմ բացակայութեանս միջոցին:

Հեռացեր էր մօրմէն... հարկաւ պատ-
ճառ մը կար: Ասով կը բացատրուի
այդ երկու կիներուն միջեւ կեցած պա-
զութիւնը... որ աչքիս զարկեր էր...
և ես ալ չէի կրցած մեկնութիւն մը
տալ: Տիան գիտցած պէտք էր ըլլար
աղջկանը յոռի ընթացքը և կշտամբած
զայն...: Տիան... բայց անոր ալ ըն-
թացքը տարօրինակ էր, տարօրինա-
կէ՛ն աւելի...: Ոճիր և ամօթ կ'զգամ
չուրջս...: Օ՛ այս անգամ պիտի իմա-
նամ ճշմարտութիւնը, անպատճառ պի-
տի իմանամ...: Ոչ մէկ բան կրնայ
արգիլել զիս...:

Իէմքը մոխրի գոյն տռած, կոմսն
ուժով մը ճրմթկեց լրագիրն ու նե-
տեց:

Յետոյ մտածելով վերցուց զայն
գետնէն, խնամով ծալլեց, չարագոյժ
հեռագիրն անոր կցեց և երկուքն ալ
զգեստին քովի գրպանը դրաւ:

Քարտուղարը չի նշմարել կը ձեւա-
ցնէր իւր պետին յուռումը:

— Պ. Ռէսթի, ըսաւ անոր կոմսն այն-
պիսի ձայնով մը, որուն դողալն հա-
զիւ կրնար զսպել, հեռագիր մ'ստա-
ցայ որ զիս Փարիզ կը կոչէ. պէտք է

ճամբայ ելնեմ անյապաղ, անմիջապէս:
Բացակայութիւնս որ կարճ պիտի ըլ-
լայ, պէտք է ծածուկ մնայ: Զիս հար-
ցընողին կ'ըսէք թէ՛ հիւանդ է, և սո-
վորական գործերը դուք կը տեսնէք:
Վստահ եմ ձեր փոյթեռանդ ուշիմու-
թեան և խոհական զգուշաւորութեան
վրայ:

— Կրնաք վստահ ըլլալ իմ վրայ,
պատասխանեց քարտուղարն՝ առանց
բնաւ զարմանք կամ սրտայուզում ար-
տայայտելու:

Ճրանսա գացող կառախումբն իրի-
կուան ժամը վեցին կը մեկնէր. և քը-
սանուչորս ժամէն Փարիզ կը հասնէր,
ուստի կոմսն հետեւեալ օրը ժամը վե-
ցին միջոցները կրնար Բարիզ գտնուիլ:
Այս սպասումն անտանելի կ'երևար
կոմսին, որ սաստկապէս յուզուած ու
գրգռուած էր, Բայց չէր կրնար փու-
թացնել մեքենային ընթացքը:

Ինչպէս որ կը տեսնուի, Շամպէզի
չէր սխալած՝ մտածելով որ Պ. տը
Ֆէրնիք ամէն բան պիտի թողուր և
Բարիզ վազէր:

Անգամ մը միայն տեսեր էր զայն
Բիւի-տը. լէրմիթ փողոցին մէջ:

Այսչափը բաւական եղեր էր իրեն՝
զայն դատելու և միանգամայն գուշա-
կելու թէ ի՛նչ բանի կարող էր, եթէ
իւր պատիր, իւր անուան պատիւը
վտանգի մէջ տեսնէր,

Ժիւլ Շամպէզիի վրէժը լաւ ձեռքի
մէջ էր:

—Վազ իրիկուրնէ առաջ չի կրնար
հասնիլ, ըսեր էր ինքնիրեն, բայց վազ
իրիկուն հոս կ'ըլլայ...և իմ վրէժս
կ'առնուի: Անշուշտ իւր աղջկանը՝ Ռիշ-
մոն դերկումսուհիին տունը պիտի եր-
թայ բացատրութիւն փնտռելու: Հոնկէ
պիտի փայլատակէ իմ թշնամիներս
հարուածելու շա՛նթը: Բայց տուամը
հոն չի պիտի լուծուի, այլ Բիւրի-տը
լ'երմիթ փողոցին մէջ, ուր ամէնն ալ
պիտի գան: Հոն պիտի սպասեմ ի-
րենց...:

Յաջորդ ժամերուն մէջ Շամպէզի
պատրաստեց ինչ որ պէտք էր նպա-
տակին հասնելու համար, համբելով
այն վայրկեանները որք զինքը կը
բաժնէին հետեւեալ օրէն, ուր պիտի
աւարտէր այս եղերական պատմու-
թիւնը, զոր ամբողջովին նկարագրելու
ձեռնարկեցինք:

ՈՒՐ ԵՐԿՈՒ ԹՇՆԱՄԻՆԵՐ ԵՐԿՈՒ
ԴԱՇՆԱԿԻՑ Կ'ԸԼԼԱՆ

Երկու օրէ ի վեր Բրէնպորն չէր ե-
րեւցեր դատական պաշտօնատան մէջ,
ոչ ալ Դանիէլ տը Բէօրն ու Ֆէրնան-
տը տեսեր էր:

Բօլ տը Ռիշմօնի ձեռքով գողցուած
տղեկը փնտռելու զբաղած, և այդ
փնտռումքին անյաջողութենէն յու-
սահատած, ուրիշ ամէն բան մէկ կողմ
թողուցեր էր: Կ'ընկրկէր այն գաղա-
փարին առջեւ թէ հարկադրուած էր
իւր անկարողութիւնը խոստովանիլ այն
հօրը, այն մօրը, որոց տաղնապալից
վիճակը քաջ գիտէր:

Սակայն ուզելով տեսնել իրեն օ-
ժանդակող ոստիկաններուն տեղեկա-
գիրները, և կարդալով լրագրաց մէջ
այն ծանուցագիրը որ Բիէռֆիթի գոր-
ծին յետաձգուած ըլլալը կ'իմացնէր,
ոստիկաններուն գրասենեակը գնաց-
անկէց ալ Դանիէլ տը Բէօրի քով պի-
տի երթար իմանալու թէ Ֆէրնանտի
ամուսինը կատարե՞ր էր այն ըրած
խոստումը թէ տղան ետ պիտի տար

եթէ իրենց դէմ հետապնդումը դադարէր :

Գրասենեակէն իրեն տուին այն նամակը զոր տիկինն Շաթլէն տուփին մէջ ձգեր էր առջի իրիկունը :

Բրէնպորն բացաւ գայն անմիջապէս, և հետեւեալ պարզ առդերը կարդաց .

«Պարոն Բրէնպորն ,

«Կարեւոր գործի մը վրայ ձեզի հեռախօսակցիլ ուզելով, կը խնդրեմ որ հաճիք գալ իմ բնակարանս ի Տէօ-ֆօն «փողոց» Ժիիւ ՇԱՄՊԵՂԻ»

Բրէնպորն քիչ մը զարմացաւ նախ այս յանդուգն հրաւերին վրայ :

Բայց ժիւլ Շամպէզի կարեւոր դեր մ'ունենալով զինքն զբաղեցնող գործին մէջ, անմիջապէս գնաց անոր տունը :

—Սրդեօք նոր սպառնալիք մը կախուած կար իւր [պաշտպանած անձերուն գլխուն վրայ, ըսաւ ինքնիրեն :

Տիկին Շաթլէն դէմն ելնելով Շամպէզի քովը մտցուց գայն :

Այս վերջինը դեռ բաւական տկար ըլլալով իր վերքին հետեւանքէն, խոհեմութիւն համարեր էր տակաւին մէկ երկու օր անկողնէն չելնել, որպէս զի

գործելու ժամուն պահէր իւր ուժերը :

Բրէնպորն բաւական զարմացաւ ժիւլ Շամպէզի նիհար դէմքը տեսնելով, որ ծանր հիւանդութենէ ելած մարդու մ'երեւոյթն ունէր :

—Անհանգիստ էք, պարոն հարցուց ուշադրութեամբ զննելով գայն :

—Ապաքինման մէջ, պարոն Բրէնպորն : կը հասկնամ որ զարմանք պատճառէ այս վիճակս, վասն զի դուք զիս մեռած պէտք էր կարծէիք . . . դուք որ մտերիմն էք Պ. Դանիել տը ֆէօրի և տիկին Ռիչմօն դերկամուհիին :

—Մեռած, դուք, և ինչո՞ւ համար, չեմ հասկնար :

—Տգէտ մի՛ ձեւանաք, և վարպետութիւն մի՛ ծախէք ինձի :

—Կ'երդնում ձեզի, պարոն, թէ չեմ գիտեր ի՞նչ ըսել կ'ուզէք :

—Օ՛, աւելի բաց խօսիմ, եթէ կ'ուզէք : Երէկ կ'աւարտէր տիկին տը Ռիչմօնի խնդրած պայմանաժամը՝ երկու հարիւր յիսուն հազար ֆրք. ինձի վճարելու համար, որով իմ լուսութիւնս պիտի գնէր : Բայց բան մը չի ստացայ . . . գիտէ՞ք ինչու համար : Եւ լուռ կը կենաք :

—Մտիկ կ'ընեմ ձեզ, պատասխանեց Բրէնպորն խոհեմութեամբ, սրբտատանջ սպասելով խօսակցութեան ստանալիք դարձուածքին:

—Որովհետեւ, հինգ օրէ ի վեր, ձեր բարեկամը, Պ. Դանիէլ և իւր տարփուհին տիկին տը Ռիչմօն, կը կարծեն թէ՛ ես Սէն գետին յատակը պառկած եմ դանակի հարուած մ'ստանալով սրբտիս, և կ'ըսեն անշուշտ թէ պահանջատէրը մեռնելով, պարտքը կ'ոչնչանայ:

—Դարձեալ չեմ հասկնար, պատասխանեց Բրէնպորն: Ըսել է թէ սպանութեան փորձ մ'եղեր է ձեր վրայ:

—Անշուշտ, սիրելի՛ պարոն Բրէնպորն... և ես ալ երգում ըրի որ վըրէժ առնեմ...:

—Որմէ՞:

—Անոնց ամենէն որ իմ մահուանս մէջ շահ ունենալով, քիչ շատ մասնակցած են այն սիրուն դաւին, որուն մազ մնաց զոհ պիտի երթայի:

—Այսինքն:

—Այսինքն Պ. Դանիէլ տը Քէօրէն՝ այն արդարակորով դատաւորէն, Տիկին տը Ռիչմօնէն՝ այն պարկեշտ կիներէն,

տիկին Տիան տը Ֆէրնիք կոմսուհիէն, արժանի մայր այդ արժանի աղջկան, և անոր փեսայ ու տարփածու Ռիչմօն դերկոմսէն:

—Գիտէ՞ք... գոչեց Բրէնպորն զարհուրելով այս անակնկալ յարձակումէն:

—Ամէն բան գիտեմ, այո՛, սիրելի՛ պարոնս, և պիտի յայտնեմ, երբ հաճոյ թուի ինձի, անունն այն կնոջ որ սպաննեց մանկաբարձուհիին պարտէզին մէջ թաղուած աղեկր:

—Բայց տիկին տը Ռիչմօնը չէ:

—Օ՛, ոչ, տիկին տը Ֆէրնիքն է: Տիկին տը Ռիչմօն կը պահէ իրենք, որ ողջ է, Տուէ փողոցի 29 թիւ տան մէջ:

—Պարոն, ըսաւ Բրէնպորն վայրկեան մը խորհելէ ետեւ, հաճեցէք մանրամասնաբար պատմել ինձի թէ ինչ տեսակ խարդաւանութեան զոհ եղաք, և ես ալ ապացոյցով հաստատեմ թէ դուք երկու անմեղ կ'ամբաստանէք, և Պ. տը Քէօր և տիկին տը Ռիչմօն եթէ իսկապէս...:

Ժիւլ Շամպէզի ցնցեց ուսերը:

—Կ'երկբայի՞ք, Թովմաս առաքեալին պէս, կ'ուզէք տեսնել ու շօշափե՞լ որպէս զի հաւատաք: Ուրեմն տեսէք ու շօշափեցէք:

Եւ արագ շարժումով մը շապիկը վեր առաւ և դանակի հարուածով բացուած և նոր գոցուած վէրքը ցոյց տուաւ :

— Արդարեւ, մըմնջեց Բրէնպորն :

— Ո՞վ գարկաւ ձեզ, հարցուց բարձրաձայն :

— Ո՞վ : Այն սիրելի Անթօան ֆօսաւար, ժիւսթին Պօնֆօան սպաննողը, տան մը մէջ, ուր զիս հրաւիրած էին : Յետոյ զիս որ մտած էի, մեռած կարծելով, տարին նաբօլէոն կամուրջէն Սէն գետը նետեցին :

— Եւ դուք կ'ամբաստանէ՞ք... :

— Ամէնն ալ, և նորէն կ'ըսեմ, վրէժ պիտի առնեմ այդ ամենէն ալ :

Բրէնպորն չէր կրնար ծածկել իւր յուզմունքն այս սպանալիքներուն առջեւ :

— Զգուշացէք, պարոն, ըսաւ մէկէն : Կը հասկընամ ձեր զայրոյթն և վրիժառութեան տենչը. բայց նորէն կ'ըսեմ թէ անմեղներ պիտի հարուածէք, ձեր արդար ոխին պիտի ենթարկէք զանոնք, որ ձեզի պէս զոհեր են նոյն թշնամիներուն :

— Օ՞, օ՞, ըրաւ Շամպէզի հեգնութեամբ, մի' շանաք սիրտս շարժել... :

չէ՞ք կրնար : Մանաւանդ շատ ուշ է, պատրոյզը բռնկած է, պէտք է որ ականը պայթի :

— Մտիկ ըրէք զիս, ըսաւ Բրէնպորն յուզուած : Եթէ Անթօան ֆօսատն է ձեզ զարնողը, գիտէք որ աը ֆէրնիք կոմսուհիին գործիքն է :

— Գիտեմ, բայց տարակոյս չունիմ որ ինձմէ սպանալիք տեսնողներուն ամէնն ալ միաբանած են ինձի դէմ :

— Ահա այդ է ձեր սխալը : Տիկին աը ֆէրնիք և իւր տարփածուն, Բօլ աը Ռիչմօն, յոսերիմ թշնամիներն են Պ. Դանիէլ աը ֆէօրի և տիկին աը Ռիչմօնի :

Բրէնպորն մտածելով որ կրնար առանց վտանգի ամէն բան յայանել Շամպէզիի՝ ապացուցանելու համար Դանիէլի և ֆէրնանտի անմեղութիւնն անոր մասին, և զանոնք կորզել, եթէ հնար էր, անոր վրէժխնդրութենէն. ուստի բովանդակ ճշմարտութիւնն յայտնեց անոր :

Այսինքն թէ ինչպէս Բօլ աը Ռիչմօն իմացեր էր իւր կնոջ տարփական յարաբերութիւնը՝ նախաքննիչ դատաւորին հետ :

Թէ ինչպէս գողցեր էր անոնց զաւակն, և իբրեւ պատանդ պահեր էր:

Թէ ինչպէս այս պայմաններուն մէջ Դանիէլ տը Բէօր հարկադրուեր էր ետ ձգել Բիէնֆիթի գործը, որպէս զի յանցաւորները պատիժէ զերծ մեալով չի դպչէին իւր զակին, և Ֆէրնանտն ալ կարենար պաշտպանել ամուսնին վրէժխնդրութեան դէմ:

Ժիւլ Շամպէզի ուշադիր ականջով մտիկ ըրեր էր, նախ չի հաւատալով, բայց քիչ քիչ դէմքին արտայայտութիւնը փոխուեցաւ:

— Այսպէս ահա, ըսաւ Բրէնպորն, միայն տը Ֆէրնիք կոմսուհին և անոր տարփաւորը նիւթած են ձեզ սպաննելու խորհուրդը, և դուք հարուածելով Պ. տը Բէօրն և տիկին տը Ռիչմօնը, սպաս պիտի մատուցանէք ձեզ դաւաճանողներուն:

— Ճշմարիտ են ձեր այդ պատմածները, հարցուց վերջապէս Շամպէզի սասանելով:

— Կ'երդնում պատուոյս վրայ, և եթէ կը կասկածիք իմ խօսքիս վրայ, կրնամ ապացոյցներ հայթայթել:

Բրէնպորնի խօսուածքն այնչափ

յայտնապէս անկեղծ էր, որ Շամպէզի համոզուեցաւ:

— Կը հաւատամ ձեզի, ըսաւ, բայց ինչ ընեմ:

— Պէտք է աւրէք ըրածնիդ:

— Անհնար է, երդում ըրած եմ կոմսուհին և անոր փեսին մահուանը համար:

— Անոնց մահուանը համար, ըսաւ Բրէնպորն, ըսելիք չունիմ, ինչ որ կ'ուզէք ըրէք անոնց:

— Բայց միւսներն ալ, որոց դուք կը համակրիք, այն ցանցին մէջ բռնուած են:

— Օ՛ն, պարոն Շամպէզի. զանոնք ազատելու հնարը կրնայ գտնուիլ... և եթէ միաբանիք ինձի հետ, այն 250 հազար ֆրանքը զոր տիկին տը Ռիչմօն խոստացած էր ձեզի, և զոր դուք կորսուած կը կարծէք, կ'երաշխաւորեմ և աւելին իսկ:

— Հըմ, ըրաւ Շամպէզի, եթէ այդպէս է...

— Միաբանիք: Ձեր ուզածն ես ալ կ'ուզեմ: Մեր շահերը նոյն են... Թող Տիան տը Ֆէրնիք և Բօլ տը Ռիչմօն կորսուին, սատկին... ես ալ կ'ուզեմ

վասն զի անոնց մահը փրկութիւն կ'ըլլայ Դանիէլ տը Գէօրին և Ֆէրնանտ տը Ռիչմօնի համար:

—Եւ ատոնք կը վճարե՞ն ինձի:

—Կը վճարեն... այո՛, և վեհանձնարար: Ես վստահ եմ անոնց վրայ: Երբոր ազատ մնան, հարուստ են. առանց դժուարութեան կրնան վճարել:

—Անթօան Քօսաաի գլուխն ալ պէտք է ինձի:

—Համաձայն եմ, անոր համար կառափնարան: Երբոր միւսները մեռնին... անոր բերանը կը գոցուի... Օ՛ն, ընկեր ըլլանք փոխանակ թշնամի ըլլալու: Շամպէզի գլուխը քերեց:

—Շատ դժուարի՛ն է, մրմռաց:

—Ի՞նչ յատակագիծ յօրինած էք:

—Այն իմ գաղտնիքս է, պատասխանեց Շամպէզի, միշտ կասկածոտ: Մէկուն կ'սպասեմ, որ պիտի դայ այս իրիկուն ժամը վեցին, պէտք է գիտնամ գալը:

—Եւ այն ժամանակ:

—Այն ժամանակ ամէն բան կ'ըսեմ ձեզի:

—Ե՞րբ:

—Ժամը հինգին:

—Շատ ուշ է:

—Չեմ կրնար անկէ առաջ:

Բրէնպօրն կը մտածէր:

Բայց քանի կը մտածէր, այնչափ աւելի կ'զգար ինքզինք կամ մանաւանդ զանոնք որոց համար կեանքը զոհելու պատրաստ էր, Շամպէզիի ձեռքին մէջ:

—Ես կը վստահիմ ձեզի, ըսաւ, դուք ալ կը վստահի՞ք ինձի:

—Այո՛, պատասխանեց Շամպէզի, կը վստահիմ ձեր խոստումներուն:

—Պիտի կատարուին, կրկին խօսք կուտամ ձեզի պատուոյս վրայ:

Եւ ձեռքը ճակտին զարկաւ:

—Բայց եթէ Բօլ տը Ռիչմօն Ֆէրնանտի զաւակը մօրը վերադարձունելէ առաջ մեռնի... Ի՞նչպէս պիտի կրնան գտնել զայն, հարցուց Բրէնպօրն:

Շամպէզի վայրկեան մը լուռ կեցաւ:

—Գացէք հասկըցէք Պ. տը Գէօրէն թէ ո՞ւր մնացած է գործը: Դերկոմսը տեսե՞ր է: Ես գաղափար մ'ունիմ այդ մասին...:

—Հիմա կ'երթամ:

—Եւ այս իրիկուն ժամը հինգին...:

—Օ՛, պիտի գտնուիմ հոն:

—Մեր տեսակցութիւնը մարդու մի՛ յայտնէք:

— Զեմ յայտներ . բայց կրնամ վըստահիլ . . . ձեր վրայ :

— Անտարակոյս , իմ շահս է . . . : Ասկէ զատ երեւոյթիս չափ շար մարդ չեմ ես . . . : Դուք յանցաւորները կը յանձնէք ինձի , ես ալ պիտի ջանամ անմեղներն ազատել :

— Օ՛ն , կ'ըսէք Բրէնպորն ինքնիրեն՝ մեկնած միջոցին , ամէն բան այս չարածճիին ուղղամտութենէն կախումունի : Պարտաւորուեցայ անձնատուր ըլլալ իրեն . . . ուրիշ կերպ չէի կրնար ընել :

Եւ ուղղակի Դանիէլ տը Բէօրի գնաց , բայց հոն չի գտաւ :

Մտածեց թէ կրնար իւր գրասենեակը գտնուիլ , և ուղղակի դատական պաշտօնատունը գնաց :

Եւ արդարեւ հոն գտաւ :

— օ —

112

ԵՐԵՔ ՀԵՌՅՈՒՆԵՐԸ

Երբ Բրէնպորն իրեն ներկայացաւ , Դանիէլ տը Բէօր ընդհանուր դատախազին քովէն դուրս կ'ելնէր : և դէմքն այն աստիճան այլայլած էր որ Բրէնպորն սարսափահար եղաւ :

Աւասիկ անցածը :

Ք . . . լրագրին հրատարակած դիտողագիրը նոյն իրիկուան լրագիրներուն ամէնն ալ հրատարակած ըլլալով , դատական պաշտօնատունը բնականաբար յուզուեր էր :

Ընդհ . դատախազն իսկոյն Դանիէլ տը Բէօրը կանչելով ցոյց տուեր էր անոր :

Իրողութիւնը ծանր կ'երեւէր , և իրօք ալ այնպէս էր , հանրային կարծեաց վրայ ընելիք ողբալի տպաւորութեամբն և մանաւանդ այն մեկնութիւններով որոց առիթ պիտի տար անշուշտ :

Դանիէլ , որ ակնյայտի նշանակուած էր անոր մէջ , ջախջախեցաւ այդ հրատարակութենէն :

Ի՞նչ կրնար ըլլալ իրեն համար աւելի ծանր :

Բարեբաղդաբար իւր յանկարծական վրդովումն արդար ցասումի մը վերագրուեցաւ :

Հրաման եղաւ իրեն որ այն դիտողագիրը հրատարակող լրագրին տնօրէնն իւր գրասենեակը կանչել տայ , և Դանիէլ ալ իւր պետին քովէն մեկ-

ներ էր դողալով, վերջին ծայր սրտաբեկ և յուսահատ:

Տարակոյս չունէր որ այն տեղեկագիրը ժիւլ Շամպէզի բովէն ելած էր: Բայց ի՞նչ կրնար ընել անոր:

Ոչինչ:

Իւր պատիւն ու կեանքն անոր ձեռքով մէջն էր. ինչպէս նաեւ ֆէրնանտի պատիւն ու կեանքը:

Աւելին կար:

Բօլ տը Ռիչմօն կարգացեր էր անշուշտ այն հրատարակութիւնը, որուն մէջ ֆէրնանտի ամուսինին դէմ ալ սպառնալիք կար: Կրնար կարծել թէ վրիժառու թեան փորձ մ'էր Դանիէլի կողմէ... և այն ժամանակ մէջերնին եղած դաշնադրութիւնը խզուած կ'ըլլար:

Բօլ տը Ռիչմօն բնակամբար չի պիտի յայտնէր տղեկն ուր պահած ըլլալը:

Դանիէլ տը Բէօր իւր դատաւորական պարտականութիւններուն դէմ մեղանշած պիտի ըլլար՝ առանց կարենալ պաշտպանելու իւր պաշտած կիւնը, առանց կարենալ «գատելու իրենց սիրոյն պտուղն եղող մանկիկը»:

Կատարեալ կործանում մ'էր:

Իւր ամէն յոյսերը կ'ոչնչանային:

Սիրտը, հոգին, այն ամէն բան որ սիրելի կ'ընեն կեանքը, որչափ և դժնդակ ըլլայ երբեմն, կը թուէր իրեն թէ՛ բզիկ բզիկ եղած կ'երթային, և մեռնելէ զատ ուրիշ բան չէր մնար իրեն:

Այս սարսափելի վիճակին մէջ էյնալէն ի վեր, երկրորդ անգամ կը մտածէր անձնասպան ըլլալ իրբեւ միակ փրկութեան նաւահանգիստ:

Այս մտածութեան մէջ էր երբ Բըրէնպորն գրասենեակէն ներս մտաւ:

— Ի՞նչ ունիք, գոչեց. տեսա՞ք Պ. տը Ռիչմօնը:

Դանիէլ անոր երկնցուց Բ... լրագրին հրատարակած յօդուածը:

— Ձայս կարդալէ ետեւ ինչ ունենալա՞ չէք հարցներ ինձի:

Բրէնպորն արագապէս աչքէ անցուց ծանօթ դիտողագիրը:

— Ա՛, ա՛, ըրաւ յուզեալ դէմքով մը, կը գուշակեմ ուսկից գալը:

— Շամպէզի, ուզածը չստանալով՝ վրէժ կ'առնէ ամենէս ալ:

— Այո՛, այո՛, պատասխանեց Բրէն-

պորն, ճշդիւ անկէ կուգայ այս յօ-
դուածը... և չեմ գիտեր թէ ի՞նչպէս
պիտի կրնայ առաջըն առնել:

— Ի՞նչ բան կ'ուզէք:

— Չեմ կրնար բացատրել... առ այժմ:
Նախ որ չեմ գիտեր ամէնը, թէ եւ շատ
բան գիտեմ որ դուք չէք գիտեր առ-
կաւին: Բայց սիրտ առէք, որչափ ևս
ծանր է կացութիւնն իդ, յուսահատա-
կան չէ սակայն:

— Չէ՞ք տեսներ ուրեմն...:

— Շատ ազէկ կը տեսնեմ: Միայն թէ
ժամէ մ'ի վեր իրերը փոխուեցան: Շամ-
պէզի միաս չի պիտի հասցնէ ձեզի,
այլ կ'ուզէ ազատել ձեզ, տիկին տը
Ռիչմօնն և ձեր զաւակը:

— Կարելի՞ բան է:

— Ստոյդ է: Բայց, նորէն կ'ըսեմ, ես
ոչ ժամանակ ունիմ ոչ ալ միջոց ձեզի
հասկցնելու: Պէտք է գործել: Ետ-
քը կը հասկնաք: Տիկին տը Ռիչմօն ալ
անշուշտ ձեզի պէս տեսած է այս ըս-
պառնալից յօդուածը, այդ վատ ամ-
բաստանութիւնը, Ան ալ ձեզի պէս
յուսահատութեան մէջ պէտք է ըլլայ,
ամէն բան կորսուած պէտք է համա-
քի... վազեցէք իւր տունը, անպատ-

ճառ զինքը տեսէք: Ըսէք իրեն թէ
պէտք է ամէն բանի սպասէ... բայց չի
տկարանայ, արիութիւն, կորով, համ-
բերութիւն ունենայ: Ըսէք իրեն թէ
կը հսկենք իւր վրայ... թէ հրաշքներ
պիտի գործուին զինքը փրկելու հա-
մար, ինչպէս նաև ձեզ և ձեր զա-
ւակը...: Միայն թէ՛ գութ պէտք չէ
ունենայ իւր մօրը Տիկին Ֆէրնիքի վը-
բայ, ոչ ալ իւր ամուսնին՝ Պ. տը Ռիչ-
մօնի վրայ...: Թող չի զբաղի անոնց-
մով... Թող իրենց բաղդին ձգէ... ա-
նոնք դատապարտուած են:

— Դատապարտուած, կրկնեց Դա-
նիէլ տը Բէօր բան մը չի հասկնալով
Բրէնպորնի խօսքերէն:

— Աւելի բան մի հարցնէք ինձի, պա-
րոն տը Բէօր, չեմ կրնար և չի պիտի
պատասխանեմ: Բայց ըրէք ինչ որ
կ'ըսեմ ձեզի, և հիմա:

Նոյն միջոցին դիւանի սպասաւոր մը
Դանիէլի գրասենեակը մտնելով իմա-
ցուց թէ՛ ընդհանուր դատախազը վե-
բատին կը կանչէր զինքը, ստիպողա-
կան գործի մը համար:

Դանիէլ պարտաւորեցաւ սպասաւո-
րին հետ երթալ, և Բրէնպորն վերջին

անգամ նշանացի ապսպրելով անոր որ շուտով կատարէ իւր ըսածը, ինքն ալ մեկնեցաւ ժամանակ չի կորսնցնելու համար :

Շամպէզի Բրէնպորնի հետ ըրած դաշնադրութեամբ՝ կը հարկադրէր փոփոխել իւր յատակագիծը :

Հտրուածելիք անձերն էին Հիմա Տիւան տը Ֆէրնիք, Բօլ տը Ռիչմօն և Անթօան Բօսսատ :

Ժիւլ Շամպէզի հանձարեղ մարդ էր :

Նշանաւոր ոստիկանապետ մ'եւ ամենաճարտար վիպագիր մը կրնար ըլլալ, ամենէն կնճռոտ դժուարութիւնները լուծելու մասին :

Քառորդ ժամու մէջ կրնար իւր բոլոր մարտկոցները փոխել և նոր յատակագիծ մը կազմել, ճշմարտապէս սատանայական :

Երկու հեռագիր գրեց միևնոյն իմաստով :

«Ծանր գործ մը կայ : Այս իրիկուն «ժամն իննին պէտք է գտնուիք Բիւր-«տը-լ'էրմիթ փողոցը : ԱՆԹՕԱՆ»

Այս հեռագիրներուն մէկը ուղղուած էր Տիանին, միւսն ալ Բօլ տը Ռիչմօնի :

Ասոնցմէ ետեւ երրորդ մ'ալ գրեց որ էր հետեւեալը .

«Պ. Ժէռմէն Բիւր-տը-լ'էրմիթ փողոց :

«Այս իրիկուն ժամ իննին Սէն-Սիւլ-«բիս հրապարակը պէտք է գտնուիք : «Եթէ նոյն ժամուն զիս հոն չի տես-«նէք, Բիւր-տը-լ'էրմիթ փողոցը կ'ըլ-«լամ : ՏԻԱՆ»

Շամպէզի կը յիշէր որ Բիւր-տը-լ'էրմիթ փողոցի բնակարանը ժէռմէն անունով վարձուած էր :

Այս աշխատութիւնն աւարտելէ ետեւ կանչեց Սօֆին :

— Աղջիկս, ըսաւ անոր թուշին տակը շոյելով, ինչպէս կ'ընեն փոքրիկ տըղոց, այս էր զայն սիրելու ձեւը, պէտք է նորէն ճամբայ ելնես և շուտով :

— Պատրաստ եմ, պատասխանեց Սօֆի որ յոգնիլ չէր գիտեր, երբ իւր տարփածուն գոհ ընել պէտք էր :

— Աւասիկ երեք հեռագիր, բայց երկու գրասենեակի պիտի յանձնես : 1 և 2 թուահամար ունեցողները ժառանգ տէ-Բլանթի գրասենեակին, և 3 թուահամար ունեցողն ալ որ Պ. Ժէռմէնի ուղղուած է, Լիւքսանպուրի գրասենեակին պիտի յանձնես :

— Հասկցայ :

— Լաւ, բայց նախ պէտք է գիտնալ
թէ մարդ կա՞յ Պ. Ժէրմէնի տունը:

— Ուրեմն:

— Ուրեմն կառք մը բռնէ, վաղէ
գնա Բիւի-տը-լ'էրմիթ փողոցը թիւ 5.
կառադուռ մը կայ հոն: Հարցուր դըռ-
նապանին, որ պառաւ կին մ'է, թէ Պ.
Ժէրմէն Փարի՞զ է: Եթէ հոն է, կը
պատասխանէ քեզի թէ Յ թիւ դուռը
ղարկէք:

— Եւ հո՞ն երթամ:

— Ո՛չ: մի՛ երթար հոն. րնդհակառակն
նորէն կառքը նստէ գնա հեռագրա-
տունը:

— Այդ կերպով կը հասկնամ Անթօան
Քօսատի ուր ըլլալը:

— Իսկ եթէ դռնապանուհին «ոչ» պա-
տասխանէ, պահէ հեռագիրը և եկու ի-
մաց տուր ինձի: Այն ժամանակ ես ալ
ուրիշ միջոց մը կը մտածեմ: Հիմա,
սիրելի բարեկամս ճանբայ ել:

Սօֆի առաւ երեք հեռագիրներն և
ճանբայ ելաւ:

Ժիւլ Շամպէզիի հրահանգին համե-
մատ նախ Բիւի-տը-լ'էրմիթ փողոցը
գնաց:

5 թիւին դռնապանուհին, որ Բօլ տը

Ռիշմօնի հրամանին տակն էր, գիտէր
թէ Յ թիւ տունն անոր բարեկամնե-
րէն մին կը բնակէր, և հրաման ունէր
Ժէրմէն անունը կրելու իբր ճշմարիտ
վարձակալը:

Հետեւաբար դռնապանուհին.

— 3 թիւը նայեցէք, պատասխանեց,
ինչպէս որ նախատեսած էր Շամպէզի:

Տիկին Շամթլէն, որ աւելի բան իմա-
նալու պէտք չունէր, նորէն կառքը
նստաւ և երեք հեռագիրները նշանա-
կուած երկու գրասենեակները տարաւ:

Երբ Սոֆի տուն վերադառնալով՝
կատարած պաշտօնին համարը տուաւ,
Ժիւլ Շամպէզի ձեռքերը շփեց:

— Գործը գրպանիս մէջն է, մրմուաց
ինքնիրեն:

Եւ նորէն ցուցամատով Սոֆիին գի-
րուկ թուշը շոյեց ինչան իւր գոհու-
նակ զուարթութեան, ինչպէս որ ը-
սինք արդէն:



ԼԻՈՆԻ ԿՍՅԱՐԱՆԸ

Ամէնէն առաջ Բօլ տը Ռիշմօն ստա-
ցաւ իրեն ուղղուած հեռագիրը:

Հրագիրները կարդալով տակն ի վրայ եղած էր :

Հրատարակուած դիտողագրին ըստ առնական հանգամանքը ներկայ պարագաներու մէջ կը վրդովէր իրմէ նուազ վատ սիրտ մը :

Ի՞նչ ըսել կ'ուզէր այդ դիտողագիրը :

Դանիէլ տը Բէօրէ՞ն կուգար :

Բայց ո՛չ, Դանիէլ շահ մը չունէր Ֆէրնանտի հետ յարաբերութիւններն հրատարակելու մէջ . ընդհակառակն :

Ասկէ զատ իւր ձեռքին մէջ չէ՞ր գտնակին և տարփուհիին միջոցով :

Ի՞նչ կը նշանակէր ուրեմն :

Ո՞վ էր այդ մատնութիւններուն հեղինակը :

Շամպէզգի՞ :

Թերեւս :

Չէր գիտէր զոքանչին անոր դէմ լարած դաւը, վասն զի Տիան չէր յայտնած անոր իւր այս նոր ոճիրը :

Ստացած հեռագիրը, որ Անթօան ստորագրութիւնը կը կրէր, և որուն ուրկէ եկած ըլլալուն վրայ կասկած չէր կրնար սննեալ մտքին մէջ, վերջին հարուածը տուաւ անոր

Նոր և արտակարգ բան մը կար անշուշտ :

Վախը կոկորդէն բռնեց զայն :

Ուստի, առանց իւր կինը տեսնելու, առանց Ֆէրնանտին խօսք բանալու, այն բանն ըրաւ ինչ որ կ'ընեն տկար մարդիկ, երբ պէտք կը զգան աւելի զօրեղ և աւելի քաջասիրտ մէկու մը կրթնելու : Իսկոյն ելաւ Տիանի տունը գնաց :

Ան գիտէր թերեւս, կը հասկըցընէր իրեն թերեւս . . . :

Քոյն ելած ժամանակ հանդարտ վիճակի մէջ գաաւ զայն :

Հրագիրները չէր կարդացեր, որովհետեւ կարդալու մասին շատ անտարբեր էր, ինչպէս այն ամէն կիներն որք իրենց համար միայն կ'ապրին, իրենց իղձերուն ու կիրքերուն յագուրդ տալու միայն փոյթ ունին, և որոց քով մտաւորական կենդանութիւնը մի միայն մարդ խաբելու և հասարակ յարաբերութիւններ տածելու կը ծառայէ :

Բայց «Անթօան» ստորագրութեամբ հեռագիրն ալ ստացեր էր, և այս բանն անոր ալ մտահոգութիւն կը պատճառէր :

Շամպէզիի վրայ կատարուած սպանութեան փորձէն ի վեր մենք ալ տեսած չենք կոմսուհին :

Ի՞նչ կ'անցնէր անոր մէջ :

Ոչինչ լուրջ կամ ծանր :

Ողձատութիւն չունեցող, բարոյական զգացումէ զուրկ, անձնամոլ մինչեւ ի վայրագութիւն, իւր շահն ամէն բանէր իւր աչքին :

Կենաց գործերն իրենց արդիւնքով միայն կարեւորութիւն ունէին իրեն համար :

Անծանօթ և անպատիժ մնացած ոճիր մը ոճիր չէր իրեն համար, մինչև իսկ գոյութիւն չունէր իւր առջեւ :

Իւր բարոյականն ու խիղճը աշխարհէր միայն :

Ամէն բան օրինաւոր էր իրեն համար, բաւական էր որ չի գիտցուէր ըրածը :

Իրեն վախ պատճառող բանը, գործ մը չար կամ բարի, մեղապարտ կամ անմեղ ընողը՝ տիկին Ք...ի և տիկին Մ...ի կարծիքն էր :

Ցորչափ տիկին Ք... և տիկին Մ... չէին գիտեր իւր վարքը, և կը յարգէին զինքը, իւր ընթացքն եպերելի :

բան մը չունէր, և ինքնիրեն կը պարծէր որ ուրիշները չէին ճանչեր և չէին արհամարհեր զինքը :

Իրեն համար գայթակղութենէ զատ ուրիշ մեղք չի կար, և գաթակղութենէ զերծ մնալու համար ամէն մէջոց օրինաւոր կ'երեւար իրեն :

Շամպէզիի մեռնիլը, որուն կը հաւատար, զինքը քաջալերեր ու զուարթացուցեր էր՝ երբ առաջին ջղային սոսկումը փարատեր էր :

Յօլ տը Ռիչմօնի այցն իւր այս անգործութիւնը շփոթեց :

Լրագիրներուն մէջի յօդուածը զոր իրեն ցոյց տուաւ, իւր բոլոր վախերն արթնցուց և հնչնուքները նորոգեց :

Անչուշտ նոր բան մը կար, և ստացած հեռագիրն ալ բացառիկ ծանրութեան երեւոյթ մ'ունէր իւր աչքին, ինչպէս նաեւ Յօլ տը Ռիչմօնի :

Երկուքն ալ որոշեցին երթալ Բիւիտը-լէրմիթ փողոցի տունը, վարանում ներելի չէր : Քանի որ Քօսատ զիրենք հոն կը կանչէր ստիպողաբար, հարկաւ անհրաժեշտ պէտք մը կար :

Տեսակ մը բնազդով երկուքն ալ իրենք զիրենք սպառնալիքի տակ ըզ-

գալով, պէտք կը տեսնէին մէկ մէկու կրթնելու, հետեւապէս որոշեցին այն իրիկունն ի միասին անցունել մինչեւ ժամադրութեան վայրկեանը:

Անթօան Գօսատ ալ հանգիստ չէր: Ժէրմէն անունով և Տիանի ստորագրութեամբ ստացած հեռագիրը տարօրինակ կը թուէր իրեն:

Բայց ան ալ կասկած չըրաւ անոր իսկութեան վրայ, ոչ ալ ոտքին տակը լարուած թակարդին վրայ:

Որոշեց հնազանդիլ և նշանակուած ժամադրավայրը գտնուիլ:

Այս միջոցին Բրէնպորն ալ շտապով Ժիւլ Շամպէզիի տունը վերադառնալով, ժամը ճիշդ հինգին հոն հասաւ:

Շամպէզի անկողինէն ելեր, հագուեր, չուելու պատրաստուեր էր, թէև տակաւին կազդուրուած չէր:

Վրիժառութեան գաղափարն ուժ կուտար երեն:

— Տեսա՞ք Պ. Դանիէլ տը Բէօրը, հարցուց:

— Տեսայ:

— Տղե՞կը:

— Լուր չի կայ: Բայց լրագիրներուն մէջ հրատարակուած դիտողագիրը սարսափելի հարուած մը տուաւ անոր:

— Հարկաւ: Բայց կը յուսամ դարձանել անոր վերաբերեալ մասը: Ի՞նչ ըսիք իրեն:

— Առաջարկեցի իմացընել տիկին տը Ռիչմօնի, որպէսզի քաջութեամբ պատրաստուի ըլլալիքին առջև, առանց ինքզինքը կորսնցընելու:

— Երթանք ուրեմն:

— Ո՞ւր:

— Լիոնի կայարանը:

— Մարդո՞ւ կ'սպասէք:

— Այո՛:

— Որո՞ւ:

— Կը տեսնէք:

Եւ կառք մը նստելով գացին Լիոնի կայարանը, և գալիք կառախումբին կողմը վար իջնելով սպասեցին:

Շամպէզիի սրտատանջութիւնն ակնբերել էր:

Եթէ տը Ֆէրնէք կոմսը չի գար, իւր պատրաստածները չէին կրնար կատարուիլ, և ի՞նչ կ'ըլլար հետեւանքը:

Վերջապէս ժամացոյցը վեց դարկաւ:

Հեռուէն կը լսուէր եկող կառախումբին խուլ ցնցումը. և շոգեկառքին սոյլէն կը հասկցուէր թէ կայարանը կը մտնէր:

— Ելնող մարդոց ուշադրութեամբ նայեցէք, ըսաւ Բրէնպորնի ահանջն ի վար :

Շատ չանցաւ՝ ուղեւորներ ետեւէ ետեւ դուրս ելնել սկսան, նախ մի առ մի, յետոյ խումբ խումբ :

Յանկարծ Բրէնպորն գոչեց . աը Ֆէրնիք կո՞մսը :

— Այո՛, ան է ըսաւ Շամպէզի :

— Հիմա հասկըցայ, պատասխանեց Բրէնպորն : Սոսկալի՛ բան է ըրածնիդ : Ի՞նչ բրեր էր ձեզի այս մարդը :

— Բան մ'ըրած չէր, բայց ինքը միայն կրնար իմ վրէժս առնել ամենէն ալ :

— Ի՞նչպէս պիտի աղատենք Պ . աը Քէօրն և դերկոմսուհին :

— Կը կարծեմ որ կը յաջողիմ : Ետեւէն երթանք և նայինք թէ ուր կ'երթայ :

Տը Ֆէրնիք կոմսը, ուղեւորի կերպարանքով, խիստ երեւոյթով, մարմարի դէմքով մարդ, կառապանի մը նշան ընելով՝ կառք մը նստաւ :

Շամպէզի խսկոյն նստած կառքին դռնակէն գլուխը դուրս հանելով, ըսաւ իւր կառավարին :

— Կը տեսնէ՞ք սա կառքը, որուն մէջ աղերեկ մագերով և կուրծքը ժապաւինով մարդ մ'ելաւ նստաւ, պէտք է ետեւէն երթաք և բնաւ աչքէ չի վրիպեցընէք :

Կառավարը գլխովը նշան ընելով, ճանրայ ելաւ կոմսին նստած կառքին ետեւէն :

Կոմսն ինքզինք կրանտ օթէլ տանիլ տալով, վար իջաւ կառքէն և հոն մտաւ :

— Ա՛, ըսաւ Շամպէզի, որովհետեւ փոխանակ իւր տունն երթալու՝ Օթէլը կ'երթայ, գործելու որոշում ըրած է :

Կոմսը կէս ժամու չափ հոն կենալով հազուապէս փոխեց, յետոյ դուրս ելլելով նորէն կառքը նստաւ, և դէպի Սէն-ժէռմէն արուարձանն ուղղուեցաւ :

Բրէնպորն և Շամպէզի ալ, որ իրենց կառքին մէջ նստած կ'սպասէին ետեւէն երթալ սկսան :

— Իւր տո՞ւնը կ'երթայ թէ աղջկանը կը հարցնէր ինքնիրեն ժիւլ Շամպէզի :

Կառքը Պոնաբառթ փողոցին առջեւէն անցաւ առանց կանգ առնելու և մտաւ կռնէլ փողոցը :

— Դերկոմսուհին տո՞ւնը կ'երթայ, ըսաւ Բրէնպորն մտայոյզ :

—Աղջիկը միայն պիտի գտնէ հոն,
ըսաւ Շամպէզի:

—Ինչէ՞ն գիտէք:

—Պ. տը Ռիչմոն իւր զոքանչին
տունն է, աղէկ գիտեմ:

114

Հ Ա Յ Ր Ը

Դանիէլ տը Բէօր, որչափ և բուռն
տաղնապի մէջ էր, անհամբերութեամբ
կը փափաքէր տեսնել Ֆէրնանտոն, և ի-
մացնել թէ նոր բայց անծանօթ և թե-
րեւս առաւել սարսափելի վտանգ մը
կախուած էր իւր սիրելի գլխուն վը-
րայ և գոչել իրեն:

—Մի՛ վախնար, ես պատրաստ եմ,
եթէ պէտք ըլլայ, մեռնիլ քեզի հա-
մար, և իմ ամբողջ արիւննովս գնել
քեզ:

Դանիէլ, կ'ըսենք, դատական պաշ-
տօնատունը կեցեր էր իւր մեծերուն
քով, որ շատ յուզուած էին լրագրաց
մէջ հրատարակուած դիտողագրէն:

Երբ ազատ մնաց, վաղեց գնաց տը
Ռիչմոն դերկոմսուհիին տունը, աչքն
առնելով ամուսնին հանդիպիլը:

Անոր ալ խօսելիք ունէր, պիտի հաս-
կըցընէր թէ մէջերնին որոշուած պայ-
մաններէն իւր մասին վերաբերեալնե-
րը գործադրեր էր, թէ ինքը բնաւ
պատասխանատու չէր հրատարակուած
յօդուածին, որ զինքն ալ միւսներուն
հետ որոշապէս ցոյց տուած էր:

Ժամը վեց ու կէսն էր երբ Դանիէլ
Ռիչմոնի օթեւանը հասաւ:

Գիտեն ընթերցողք թէ դերկոմսն
արդէն մեկնած էր հոնկէ, և Տիանի
քով կը գտնուէր Պանաբառթ փողոցը:
Ֆէրնանտ մինակ էր:

Այն տեսարանէն ի վեր, զոր պատ-
մեցինք, ծաղկատի կիներ յուսահատու-
թեան և տառապանքի համար միայն
կ'ապրէր:

Չատուած իւր զաւկէն, զատուած այն
մարդէն զոր կը սիրէր, մնալու դատա-
պարտուած այն անիծեալ յարկին տակ
որ միայն իւր գերութեան շղթաները
կը յիշեցընէր իրեն, իւր քաջութիւնը
միայն ուժ կուտար իրեն դիմանալու,
ինչպէս նաև իւր կնոջ և սիրեցեալ մօր
պարտականութեանց զգացումը:

Ո՛րչափ երկար կը տեւէին ժամերն
այն սոսկալի առանձնութեան և մանա-
ւանդ առաւել սոսկալի կենսակցութեան
իւր ամուսնին հետ, մտածութիւնը ձրկ-

տած դէպի երկու սիրելի էակներ, զորս
կը վախնար թէ յաւիտեան չի պիտի
կրնար տեսնել:

Շուրջը գտնուած ամէն բան իւր
տարփածուն կը յիշեցընէին իրեն, տար-
փածուն զոր իւր բնակարանին մէջ ըն-
դունիլ ուղեր էր, որպէս զի անոր ներ-
կայութենէն և կաթոգին սէրէն բան
մը մնար հոն:

Չէր կրնար հայտին մօտն երթալ և
իւր սիրուն դէմքը տեսնել, առանց յի-
շելու Դանիէլի պատկերը, որուն ար-
տայայտիկ գլուխն հոն նկարուած էր
իրիկուն մը, իւր ուսին յեցած, ժպտե-
լով իրեն, զինքը գգուելով իւր կա-
պուտակ աչերուն գորովալից նայուած-
քովն, որոց մէջ սքանչացում կը տես-
նէր:

Այն հայտին մէջ ինքզինքը կը դի-
տէր երբեմն, վերջին անգամ մ ալ,
երբ Տուէ փողոցի բնակարանն երթար
ուր կ'զգար որ Դանիէլ իրեն կ'սպա-
սէր միշտ նոյն ուրախութեամբ, նոյն
անհամբերութեամբ, նոյն եռանդով, որ
յոգնիլ, սպառիլ չէր գիտեր ընալ:

Ասոնք յիշելով կը հեռանար հայտին
մօտէն, տժգոյն և վշտաբեկ:

Ժամացոյցը պաղութեամբ ժամերը
կը զարնէր, այն ժամերն որ իւր առ-

ջեւէն կ'անցնէին անզգած, յիշեցնելով
իրեն թէ ժամանակով նոյն վայրկենին
ինքը կ'երթար կը գտնէր զայն, և ան-
որ թեւերուն մէջն էր:

Վերջացէր էր այս:

Եւ ինքը մինակ էր բնակարանին մէջ:

Եւ հոն ինկաւ իւր երկայն աթոռին
վրայ, ուր Դանիէլ կը նստէր իրեն
քովիկը, թեւը մէջքին կը փաթթէր
և իւր ականջին ձուելով սիւրոյ խօսքեր
կը մըմնջէր, յետոյ բերանը ծոճրակին
վրայ դնելով, ուր գագաթին վրայ ամ-
փոփուած սև մազերուն դանգուրները
կը ծփային:

Հոն ինքը յաւիտենական սէր ուխ-
տած էր անոր, երգուըննալով որ մա-
հը միայն կրնար բաժնել զիրենք, և
թէ յաւիտեան իրենը պիտի ըլլար:

Եւ բաժնուած էին:

Մէկէն ոտքի վրայ ելաւ հեռանալու
համար այն սենեակէն որ այնչափ սի-
րելի բաներ կը յիշեցնէր իրեն, և ո-
րոց կը հետեւէին կսկիծ, ցաւ և ի՛ղձ:

Երբ Դանիէլ ալ Բէօրի այցելու-
թիւնն իմացուցին իրեն, այնպէս թը-
ուեցաւ իրեն թէ սիրտը պիտի ծակէր
դուրս ելնէր կուրծքէն, անոր դէմը
վազելու համար:

—Ներս թող գայ, ըսաւ առանց ուրիշ բան խորհելու մէկէն ի մէկ, բայց միայն թէ պիտի տեսնէր զայն:

Ոսք մը փոխանակելէ առաջ, ամէն բան մոռնալով իրարու փաթթուեցան: Երկար չի տեւեց սակայն:

Թող տուին զիրար, մէկմէկու նայեցելով, և երկուքն ալ ահաբեկեցան իրենց դէմքերուն այլայլութեանը վերայ:

Իրականութիւնը գրաւեց զիրենք:

—Ի՞նչ կայ, հարցուց Ֆէրնանտ, ի՞նչպէս համարձակեցար հոս գալու:

—Պէտք էր:

—Նոր դժբաղդութիւն մը կայ:

—Թերեւս: Կարդացի՞ր լրագիրները:

—Ո՛չ:

—Ուրեմն տես ի՞նչ կ'ըսեն:

Եւ գրպանէն լրագիր մը հանելով՝ ցոյց տուաւ յօդուածը:

—Լմեցա՞՞ծ ենք, մրմնջեց Ֆէրնանտ թեւերը վար ձգելով յուսահատաբար: Այս յօդուածը բացայայտ ամբաստանութիւն մ'է: Գէորգնիս չիպիտի տրորուի մեզի, Կորսուա՞՞ծ ենք, ես ալ, դուն ալ: Ո՞վ որաւ այս բանը:

—Ժիւլ Շամպէզի անշուշտ:

—Ճշմարիտ է...չի կրցի վճարել...

որոշուած օրը: Մինչեւ իսկ մոռցեր էի, զիս հարուածող դժբաղդութիւններուն պատճառաւ:

—Եկայ քեզի իմացնելու, որպէս զի չի վհատիս, ինքզինքդ չի կորսնցնես...ինչ և ալ պատահի, թերեւս յոյս մը կայ տակաւին:

—Յոյս մը, ըսաւ Ֆէրնանտ տխուր ժպիտով մը:

Դանիէլ պատասխանելու վրայ էր...

Յանկարծ փողոցին դուռը զարնուեցաւ ուժգնապէս:

Տարօրինակ բան մը չէր, բայց Ֆէրնանտ ցնցուեցաւ և Դանիէլ չի կրցաւ բերանը բանալ:

Դուռը բացուեցաւ, գոցուեցաւ, ոտքի ձայն կը լսուէր դուրսի բակին մէջ: Թէեւ իրիկուն եղեր էր, բայց դեռ բաւական լոյս կար դուրսն անցածը տեսնելու:

Ֆէրնանտ պատուհանի մը քով վազեց, վարագոյրը վեր առաւ, դուրս նայեցաւ, և խուլ ձայն մ'արձակելով՝ ետ նետուեցաւ:

—Ի՞նչ եղար Ֆէրնանտ, հարցուց Դանիէլ թեւերուն մէջ առնելով պայն:

—Հա՛յրս, կակազեց, հայրս Փարիզ եկեր է, հո՞ս է:

Դանիէլ ընկրկեցաւ:

— Իմացե՛ր է ամէն եղածը, կ'ըսէր մտքէն:

Սանդուղէն վեր ելնող մարդու մը ոտնաձայնը լսուեցաւ:

— Պէտք չէ որ քեզ տեսնէ, գոչեց Ֆէրնանտ ինքն ալ նոյն գաղափարն անցունելով միտքէն, և ուզելով ազատել զայն իւր նախատեսած վտանգէն: Շուտ, շուտ, սա փոքր սենեակը մտիր:

Եւ ուժով մը ներս հրելով իւր տարփածուն, դուռը վրայէն գոցեց:

Եւ ժամանակն էր:

Սրկապանին դուռը բացուեցաւ և առ Ֆէրնիք կոմսն երեւցաւ սեմին վրայ:

115

Դ Ա Տ Ո Ղ Ը

Եթէ Ֆէրնանտ կրցեր էր երկբայիլ, հօրը դէմքին դժգունութիւնը բաւական էր յայտնելու թէ իւր վախցածները առաւելապէս իրագործուեր էին:

Եթէ առ Ֆէրնիք կոմսն ալ տակաւին կ'երկբայէր, աղջկանը դէմքին այլայլութիւնն ու տագնապալից կեցուածքը տարակոյս չէին թողուր:

Երկուքն ալ վայրկեան մ'իրարու

նայեցան լռին, անշարժ:

— Հայրի՛կ, դուք հո՛ս, կակազեց Ֆէրնանտ:

Կոմսն երկու քայլ յառաջացաւ:

— Այո՛, ես հոս: ձեր տունը, Ռիչմոնդ գերկոմսուհիին տունը, աղջկանս տո՛ւնը: Եւ ձեր շփոթութիւնը կ'ըսէ թէ գիտէք գալուս պատճառը, թէ այն ամբաստանութիւնները որ մինչեւ ինձի հասան, Ֆրանսայէ դուրս, այն ամբաստանութիւնները ճշմարիտ են:

— Ի՞նչ ամբաստանութիւն, հարցուց դեռատի կինը, ինքնիրեն հեռ մտքառելով, պայքարելով ինչպէս անյոյս ջրակեղծ մը կը մտքառի բնազդով:

— Կր համարձակի՞ք հարցընել, Շընութիւնը բաւական չէր... մինչեւ ըսպանութեան դիմելու յանդգնեցա՛ք:

Ֆէրնանտ տնկուեցաւ:

— Ե՞ս, ըսաւ սրտմտեալ ձայնով մը:

— Այո՛, դուք որ տարփածու մ'ունիք... դուք որ առ Ֆէրնիք կոմսին աղջիկը... դուք ձեր տնկատուութեան ապացոյցներն անհետացընելու համար... սպաննեցիք...:

— Ե՛ս, կրկնեց Ֆէրնանտ, ո՛հ, հայրի՛կ:

Այս խօսքերուն արտասանութեան մէջ այնչափ ճշմարիտ ազնուութիւն մը կար, որ Պ. տը Ֆէրնիք քիչ մը վեր-գովեցաւ:

— Կ'ուրանա՞ք ուրե՛մն, ըսաւ:

— Կ'ուրանամ ինչ որ սուտ է... ձեր այդ ըսած սպանութիւնը:

— Զգուշացիր, ըսաւ հայրը աւելի յառաջանալով սպառնալից դէմքով մը, մնացեալը կը խոստովանիք ուրե՛մն: Տարփածո՞ւ մ'ունիք:

— Ճշմարիտ է, ըսաւ Ֆէրնանտ, Զեզի, հայրի՛կ սուտ չե՛մ ըսեր: Զգուած եմ սուտ խօսելէ: Յանցաւո՞ր եմ, չի պիտի պաշտպանեմ զիս, ըրէք ինձի ինչ որ կ'ուզէք:

Թէեւ կոմսը համոզուած էր աղջկանը յանցաւորութեան, այս խոստովանութիւնը սակայն սարսեց զայն:

— Զեր տարփածուին անո՞ւնը, հարցուց ակռաները սեղմելով:

— Զինքը մեռցընելու համար, այնպէս չէ՞:

— Անո՞ւնը կրկնեց կոմսը:

— Զե՛մ ըսեր:

— Թշուառական, գոչեց կոմսը ձեռքը վերցնելով:

Ֆէրնանտ բնաւ չի շարժեցաւ:

Ուղիղ և ծանր կեցաւ, առանց տրկարութեան իբրեւ քաջ և անձնուէր կին:

Հայրը ետ քաշուեցաւ, և ձեռքը ճակտին տարաւ յուսահատ շարժումով մը:

— Ճշմարտութիւնը պէտք է ինձի, բովանդակ ճշմարտութիւնը, ըսաւ վերջապէս: Ժամանակէ մ'ի վեր բաներ կ'անցնին բոլորաբար, բանե՛ր, զորս պէտք է գիտնամ... և պիտի գիտնամ, եթէ ամուսիննիդ բան մը չի գիտեր, կամ գիտէ ու բան մը չըրաւ, ես պիտի ընեմ պէտք եղածը: Ես համբարաջիս եմ ձեր պատուոյն: Եթէ գուք հիմա իմ անունս չէք կրեր, իմ արիւնս է որ կը վազէ միշտ ձեր երակներուն մէջ:

Նորէն կը զայրանար խօսած միջոցին և վերստին աղջկանը վրայ գնաց, որ աւելի գթալով քան թէ սարսափելով կը նայէր անոր, մոռնալով գրեթէ իւր ցաւերը, և միայն այդ տարաբաղդ հօր ցաւերը տեսնելով:

— Տարփածուիդ ա՛ն ո՞ւնը, այն անզգամին, որ ամօթ և անպատուութիւն բե-

բաւ երկու ազնուական ընտանիքներու մէջ :

— Արդէն պատասխանեցի ձեզի, հայրիկ... թէ չի պիտի ըսեմ :

— Դանիէլ տը Գէօրն է, այնպէս չէ՞ : Դուք սիրեցիք զայն երբեմն... : Դատաւորի մը խօսք կայ... նախաքննիչ դատաւորի մը... որ դադարեցուցեր է ժիւթին Պօնֆօա անուն կնոջ մը սպանիչները գտնելու համար եղած խուզարկութիւնները, որպէս զի ձեզ ազատէ թշուառակա՛նք :

— Մի հարցաքննէք զիս, հայրիկ : Չի պիտի պատասխանեմ ձեզի : Բայց քաջ զիտցէք զայս . իմ սիրած մարդս, ով և ալ է, թշուառական մը, սրիկայ մը չէ : Ոտքեցի ամուսինս, այո՛, ապօրէն յարարերու թեան մէջ գտնուեցայ... ահա ճշմարտութիւնք : Մնացեալը սուտ է, զրպարտութիւն է, Այո՛, հայրիկ, անպատուեցի ձեր անունը, ըրածս ոճիր մ'է, կը խոստովանիմ . կրնաք սպաննել զիս... բայց մինակ զիս :

Արիական անյողզողք արժանապատուութիւնը, որով կը խօսէր Ֆէրնանտօքիչ քիչ կոմսին զայրոյթը մեղմելով՝

զայն ալ նոյն խոհական ծանրութեան մէջ կը դնէր :

Կը տեսնուէր որ ներքին պայքար մը կը մղուէր իւր վիրաւորեալ գոռութեան զայրոյթին և հայրական գորովոյ զգացումներուն միջև :

— Ինձի մտիկ ըրէ, աղջիկս, ըսաւ կարճ լռութենէ մ'ետեւ : Դուք գիտէք որ, ինձի համար նուիրական բաներուն ամէնէն գերագոյնը, որուն համար իմ արեանս մինչեւ վերջին կաթիլը զոհելու պատրաստ եմ, իմ և ազգատոհմիս պատիւն է, որ մինչեւ ցայսօր անազարտ պահուած է : Տը Ֆէրնիքները երկար դարեր դատական բարձր իշխանութիւն վարած, ոճիրներն ու պարտազանցութիւնները պատժած, և զէն ի ձեռին ծառայած են իրենց վեհապետին և հայրենեաց : Այդ ազնուական ազգատոհմին ժառանդն ու ներկայացուցիչն եմ ես . հետեւապէս ժամու մը համար կրնամ ձեռքս առնել այդ հայրենական ընդհատեալ աւանդութիւնը : Իբրեւ հայր և իբրեւ իւր պատուոյն մէջ թշնամանեալ աղնուական, կրնամ՝ իմ արդար ցոսուն մէս մղուելով մեռցընել նախ ձեզ :

ետքն ալ ձեր տարփածուն: Բայց՝ իբրեւ դատաւոր պէտք է նախ լսեմ ձեր պատճառարանեալ խոստովանութիւնն, և ապա արձակեմ ձեր դատապարտութեան վճիռը: Կը հրամայեմ ձեզի որ պատասխան տաք ինձի:

— Իմ անձիս վերաբերեալներուն համար պատրաստ եմ պատասխանելու, հայրի՛կ, պատասխանեց Յէրնանտ այնպիսի ձայնով մը, որուն մէջ որդիական սիրոյ խորին արձագանգը կը զգացուէր:

— Ինչո՞ւ դրժեցիք ձեր ամուսինին տուած հաւատարմութեան երդումնիդ: Ամուսիննիդ պարկեշտ մարդ է, և եթէ չէք սիրեր զայն, գոնէ յարգելու պարտական էք:

— Արդարեւ, հայրի՛կ, բնաւ չէի սիրեր զայն, և չէի կրնար սիրել:

— Ի՞նչ պատճառաւ:

— Ձեմ ուզեր ըսել:

— Ի՞նչ յանցանք կամ գէշութիւն գործեց ձեզի դէմ:

— Ձեմ կրնար ըսել:

— Ձեր ամուսինն էր... այսչափը պէտք է բաւէ պարկեշտ կնոջ մը:

— Հայրի՛կ, ամէն ջանք ըրի սիրելու

համար... և չի կրնալով սիրել... Զանացի յարգել: Բայց ան հարկադրեց զիս որ ատեմ զինքը և արհամարհեմ:

— Արհամարհէ՛ք: Ի՞նչ յանցանքի կամ պակասութեան համար:

— Ձեմ ուզեր ըսել:

Յէրնանտ այս զարմանալի պատասխանները տուած ժամանակ, աչերը չէր խոնարհեցըներ հօրը նայուածքին առջեւ, և սակայն ուրիշ բան կը նշմարուէր անոնց մէջ, և ոչ թէ գրգիռ, յոխորտանք կամ բարկութիւն, խորին տրամութեամբ և գորովով լեցուն էին, ոչ թէ իր անձին, այլ իւր հօրը համար, որ կը հարցաքննէր զինքը, որ կ'սպասուար իրեն:

Ինչ որ ալ ըլլար կոմսը յուզող ըզգացումներուն բռնութիւնը, չէր կըրնար չազդուել այդ նայուածքին տարօրինակութենէն և յայտնած որդիական գութէն:

— Անէ՛ծք, մրմռաց ինքնիրեն այս ամէնուն մէջ գարշելի գաղտնիք մը կայ որ կը ծածկուի ինձմէ, բայց երեւան պիտի հանեմ: Կ'ուզեմ գիտնալ, անպատճառ գիտնալ:

Նորէն յառաջացաւ դէպի աղջիկը:

մէկէն բռնեց անոր փափուկ ձեռքերն իւր կծկած և պողպատի պէս ամուր ձեռքերովը :

— Ֆէրնանտ, պատասխան տուէք, ըսաւ խուլ ձայնով մը :

— Ձի պիտի պատասխանեմ, դուք բաւական բան գիտէք զիս դատապարտելու համար : Անկէց աւելին չի պիտի գիտնաք :

— Պիտի պատասխանե՞ս :

— Ո՛չ :

— Ինչո՞ւ չէիր կրնար սիրել ամուսինդ :

Ֆէրնանտ լուռ կեցաւ :

— Ինչո՞ւ կ'արհամարհէիր :

Ֆէրնանտ շարունակեց լուռ թիւնը :

— Ա՛հ, թշուառական, գոչեց կոմսն ինքիրմէ ելած. կ'զգես որ սպաննե՞մ քեզ :

Եւ բուռն շարժումով մը, որով Ֆէրնանտի ոսկրները ճարճատեցան, զետիւնը զարկաւ զայն իւր ոտքերուն առջեւ :

Ֆէրնանտ ցաւագին ճիչ մ'արձակեց :

Յանկարծ ձեռք մ'ինկաւ կոմսին ուսին վրայ, երկաթէ ձեռք մը, եւ ուժով մը ետ հրեց զայն, մինչ ձայն մ'ալ կ'ըսէր իրեն :

— Երբէ՞ն ի վեր է որ ազնուականները կիներ կը չարչարեն :

Կոմսն աղջիկը թողլով ետին դարձեր էր :

Դէմ առ դէմ դտաւ ինքզինքը Դանիէլ տը Քէօրի հետ, որ մեռեալի պէս դժգոյն էր, աչերն հրացայտ, կուրծքն ուռած :

— Ձեր աղջկան տարփածուին անունը կը հարցնէիք, պարո՞ն յարեց, ահա կը բերեմ ձեզի : Ես եմ, կը հարցնէիք թէ ինչո՞ւ համար ձեր աղջիկը չէր կրնար սիրել իւր ամուսինը, եւ կ'արհամարհէր : Ես պատրաստ եմ ըսելու :

— Ա՛, թշուառական, կակազեց կոմսն ինքզինքէն ելած, և գրպանէն ատրճանակ մը հանելով ուղղեց Դանիէլ տը Քէօրի վրայ, որ անշարժ կեցաւ ձեռքերը կուրծքին վրայ :

Բայց Ֆէրնանտ մէկէն ցատկելով զէնքին առջեւ նետուեր էր, մարմնովը ծածկելով Դանիէլի մարմինը :

Կոմսին թեւը կքեցաւ՝ առանց ատրճանակին կարթը քաշելու :

Հայրը կը յաղթէր դատողին :

Ֆէրնանտի շարժումն այնչափ արագ այնչափ անակնկալ եղեր էր, որ եթէ կոմսն ատրճանակին կարթը քաշէր,

Դանիէլի ուղղուած հարուածն ան պիտի ստանար՝ մինչեւ որ Դանիէլ ժամանակ ունենար զայն մէկ կողմ քշելու և իւր մարմնովը ծածկելու :

— Ֆէրնանտ, գոչեց սարսափահար :

Բայց փրկուած էր : Կոմսն ոչ եւս կ'սպառնար անոր իւր ատրճանակով :

Աղջկանը դիւցադնական գործը յուզէր էր զայն . յետոյ ժամանակ ունեցեր էր հասկնալու Դանիէլի խօսքերը որ ի սկզբան դատարկ ձայնի մը պէս եկեր էին ականջին :

— Մի՛ վախնաք, ըսաւ պաղութեամբ աղջկանը դառնալով . ըսի ձեզի թէ դատապարտելէ և հարուածելէ առաջ լսել կ'ուզէի : Յանկարծական գայրոյթի փայլակ մ'ունեցայ . . . բայց անցաւ : Այս մարդը կը խոստանայ ըսել, թող ըսէ :

— Պատրաստ եմ, պարոն կոմս, պատասխանեց Դանիէլ :

— Ո՛չ, ո՛չ, լռէ՛, մրմնջեց Ֆէրնանտ իւր կարմրած ձեռքերը անոր բերնին վրայ դնելով :

— Ֆէրնանտ, պատասխանեց Դանիէլ արտում բայց զօրեղ ձայնով մը, լռելու ժամանակն անցած է, եւ եթէ ձեր պարտքն էր թերեւս մեռնիլ քան թէ

ձեզ արդարեցնել, իմ պարտքս է այդ արդարացումը տալ ձեր հօր :

— Բայց խօսեցէք, պարոն, կրկնեց կոմսը :

Ֆէրնանտ հասկցաւ որ չէր կրնար այլեւս արգիլել :

Գնաց թիկնաթոռի մը յենարանին կրթնեցաւ, եւ երեսը ձեռքերուն մէջ ծածկեց :

— Արդէն, պարոն կոմս, պատասխանեցի ձեր հարցումներէն մէկուն : Դուք կ'ուզէք իմանալ ձեր աղջկան տարփաւորին անունը, որպէս զի մեռցնէք զայն : Աւասիկ ես ձեր առջեւն եմ, և չի պիտի պաշտպանեմ զիս իմ սիրելիիս հօրը դէմ . . . որ իրաւունք ունի զիս խստիւ դատելու ճշմարտութիւնը չգիտնալով :

— Լաւ, պարոն, այդ կէտը ետքը կը քննենք, շարունակեցէք :

— Կ'ուզէք գիտնալ թէ ինչո՞ւ համար տիկին տը Ռիչմօն դերկոմսուհին չէր կրնար ոչ սիրել, ոչ ալ յարգել իւր ամուսինը :

— Այո՛ :

— Բազում պատճառներէ զատ, որք ինձի ծանօթ են, հատ մը կայ, որ ձեզի համար բաւական է, պարոն :

— Ո՛րն է :

— Այս է թէ տիկին տը Ռիչմօն չէր

կրնար ո՛չ սիրել, ո՛չ ալ յարգել . . . իւր մօր հոմանին :

Ֆէրնանտ խուլ հեծութիւն մ'արձակեց :

Կոմսը դողդողաց :

—Սո՛ւտ կը խօսիք, ըսաւ խեղդուկ ձայնով մը, բայց առանց համոզման, վասն զի քանի մը վայրկեանէ ի վեր աղջկանը նայուած քէն լուսաւորուելով՝ գրեթէ կ'սպասէր այս սարսափելի յայտնութեան :

—Պարո՛ն կոմս, եթէ զիս ճանչէիք, պատասխանեց Դանիէլ քաղցրութեամբ, կը գիտնայիք թէ Դանիէլ տը ֆէօր երբէք սուտ խօսած չէ, և շի խօսիր՝ մինչեւ իսկ իւր կեանքն ազատելու համար :

—Իրա՞ւ է, գոչեց կոմսն աղջկանը քովը վազելով և խեղճի նայուածք մը ուղղելով անոր գեղեցիկ սեւ աչերուն մէջ որ արասուքով լցուած էին :

—Շնո՞րհ, գոչեց աղջիկը ծունգի վըրայ իյնալով :

—Որո՞ւ համար :

—Մօ՛րս համար :

Վայրկեան մը հանդիսաւոր լռութիւն տիրեց :

Կոմսը շանթահար եղած կը թուէր :

—Ապացոյցներ ունի՞ք, հարցուց վերջապէս ցած ձայնով մը, որ մահատիպ բան մ'ունէր :

Ֆէրնանտ գլուխը ծռեց :

—Պատասխան տուէք, աղջիկս, մի՛ չարչարէք զիս, ըսաւ դժբաղդ կոմսը գարովալից ձայնով մը :

—Այո՛, ըսաւ Ֆէրնանտ :

Նորէն լռութիւն տիրեց :

—Ոտքի վրայ ելէք, ըսաւ կոմսն այն փամանակ, ոտքի վրայ ելէք, զաւա՛կս : Պզճագործ մօր մ'աղջիկ, ի՞նչ կրնամ ըսել քեզի : Թշուառական մարդու մը ջճակից, վէրքդ կը ծածկես ինձմէ, որպէս զի չի մեռնիմ սրտիս ցաւէն . . . քեզ մեղքնալէ . . . և յանցանքդ ներելէ դատ ուրիշ բան չեմ կրնար ընել . . . :

Եւ Դանիէլ տը ֆէօրի մօտենալով .

—Պարո՛ն, ըսաւ, երբ այսչափ ամօթ, այսչափ խայտառակութիւն կ'աղտեղեն ինձի պէս մարդ մը . . . այլեւս էբաւունք չունիմ մէկը դատելու, դատապարտելու : Ուստի ներողամիտ եղիք ինձի :

Եւ դէպի դուռը շտկուեցաւ :

—Հայրի՛կ, ո՞ւր կ'երթաք, հարցուց Ֆէրնանտ սրտատրոփ :

—Տը Ֆէրնիք կոմսին ապարանը:

—Ի՞նչ ընելու:

—Արդարութիւն:

Եւ դուրս ելաւ:

— 0 —

ՈՒՐ ԺԻՒՂ [ՇԱՄՊԷՉԻԻ ՀՆՈՐԻՄԱՅՈՒ-
ԹԵԱՆՅ ԱՐԳԻՒՆԻՔԸ ԿԸ ՏԵՄՆՈՒԻ

Տը Ֆէրնիք կոմսը բերող կառքը կը
ապասէր Ռիչմոնի օթեանին դուռը:

Կոմսը դռնէն դուրս ելնելուն պէ՝
կառքը նստաւ հրամայելով կառապանին

«Պոնաբառթ փողոց թիւ...»:

Ուրիշ կառք մ'ալ օթեանին դիմա-
ցը կեցած էր, բայց փողոցին միւս
կողմը:

Բրէնպորն ու Շամպէզի տանող կառ-
քն էր:

Այս անգամ թող տուին որ կոմսն
իւր տունը տանող կառքը մինակ երթար:

—Կը տեսնէք որ Պոնաբառթ փողո-
ցը կ'երթայ, ըսաւ Շամպէզի Բրէնպոր-
նին:

—Այո՛:

—Ուրեմն պէտք է շուտով գործա-
դրէք մեր մէջ եղած սրուումը. ժամա-

նակ կորսնցընելու չի գար, վայրկեան-
ները տարի կ'արժեն:

—Կը հասկնամ, պատասխանեց Բը-
րէնպորն:

Եւ կառքէն իջնելով, ինքն ալ Պո-
նաբառթ փողոցին ճամբան բռնեց:

Շամպէզի, մինակ մնալով, դռնակէն
դուրս ծռեցաւ:

—Բիւի-տը-լ'էրմիթ փողոց Ե շու-
տով, ըսաւ կառապանին:

—Ի՞նչ թիւ հարցուց կառապանը:

—Ես կ'իմացնեմ՝ երբ պէտք ըլլայ:

Եւ ճամբայ ելաւ կառքը:

Նոյն միջոցին տը Ֆէրնիք կոմսն ալ
դէպի իւր բնակարանը կ'ուղղուէր
հանդարտօրէն:

Կեանքի իսկութիւնն իրմէ ծածկող
քողը պատռելով, ոչ տարակոյս մնա-
ցած էր իրեն, ոչ ալ վարանում:

Բարոյական սաստիկ յոյզերն, եթէ
չմեռցընեն անմիջապէս, կ'ամրապնդեն
մեզ, ինչպէս պաղ ջուրի մէջ խոթ-
ուած տաք երկաթը:

Հիմա կը հասկնար ամէն բան, յըս-
տակ կը տեսնէր իւր կեանքը:

Արդարեւ միշտ կասկածեր էր թէ
կինը կը խարէր զինքը, բայց անոր

վաւաշոտ փաղաքշանքէն հրապուրուե-
լով՝ ճշմարտութիւնն ինքնիրեն խոս-
տովանիլ չէր ուզած :

Եւ այս բանը տեսակ մ'արհամար-
հանք կ'ազդէր իրեն դէմ :

Յետոյ յանկարծ զգուանքն սպան-
ներ էր իւր սրտին սէրը :

Արիոսդի Ալկինէին պէս, հոգևով
մարմնով սիրած կինը պարզապէս ճի-
ւաղ մ'էր, և երբ սխրանքն անհետա-
ցեր, պատրանքը չուեր էր, այդ ճի-
ւաղը գարշանք միայն կ'ազդէր իրեն :

Ամօթ կ'զգար զայն սիրած ըլլալուն
համար :

Պղծուած կը համարէր զինքն այն
խաբեբայ բերանէն ստացած համբոյր-
ներով :

Ամենէն աւելի սրտին դաշող բանն
այս էր, որ երբէք պաղութիւն մը չէր
տեսեր անոր գգուանքներուն մէջ :
Ուրիշ մը սիրելով, ինքզինք ուրիշ
մը տալով, երբէք խորշում մը կամ
դժկամակութիւն մը չէր ունեցեր
տարփածունին տաք համբոյրներէն ե-
տեւ անմիջապէս ամուսնին թեւերուն
մէջ նետուելու հաւասար հաճոյքով
առանց խղճմտութեան :

Այս միայն բաւական էր իրեն ըոե-
լու թէ սէրը կամ կիրքը չէր զայն
առաջնորդողը, այլ բարուց ապակա-
նութիւնը, ցոփութիւնը միայն, որ
տը Ծէրնիք կոմսին աչքին, վատթա-
րացման վերջին կէտն էր :

Ոչ եւս սիրող այրն էր որ պիտի
հարուածէր անհաւատարիմ կինը, այլ
դատաւորն էր որ պիտի պատժէր լը-
պիրը կինը, և նոյն վայրկենին ինք-
զինք այնչափ հեռի կ'զգար անկէ,
որ աւելի կը մտածէր պատժել զայն
աղջկանը դէմ գործած չարութեան,
քան իրեն ըրած նախատինքին հա-
մար :

Եւր իւր օթեւանին դուռն հասաւ,
զարհուրելի հանգարտութիւն մը կար
վրան :

Սպասաւորները չփոթեցան երբ
տեսան զայն, որովհետեւ չէին սպա-
սեր այդ յանկարծական վերադարձին :

— Տիկին կոմսուհին իւր բնակարանն
է, հարցուց կոմսը :

— Ո՛չ, պարոն կոմս, պատասխանեց
մօտը գտնուող սպասաւորը : Տիկին
կոմսուհին չի գիտնալով ձեր վերա-
դարձը, ճաշէն ետքը դուրս ելաւ Պ.
տը Ռիչմոն դերկոմսին հետ :

Վերջին անունը յիշեցուց իրեն այն
թշուառականը զոր մոռցած էր գրե-
թէ :

Կոմսը ժամացոյցը հանելով նայեցաւ .
ժամն իննին քանի մը վայրկեան
կար :

— Չէ՞ք գիտեր ո՛ւր երթալնին ,
հարցուց :

— Տիկին կոմսուհին բան մը չըսաւ :

— Ուրեմն բնակարանս ելնեմ : Երբ
տիկին կոմսուհին վերադառնայ , իմա-
ցուցէք ինձի :

Եւ իւր սենեակը մտնելով՝ սկսաւ
ծանր ծանր ճեմել մեքենաբար :

Հազիւ տասն վայրկեան անցեր էր ,
սենեակին դուռը դարձուեցաւ :

Մէկէն գնաց բացաւ , և ծառան տե-
սաւ դէմը , որ նամուկ մը ներկայացուց :

— Բերողը խնդրեց որ անմիջապէս ձեր
վսեմութեան ներկայացընեմ , ըսաւ ծա-
ռան :

— Ի՞նչպէս իմացեր են Փարիզ վերա-
դառնալս , հարցուց ինքնիրեն Պ . աը
Ֆէրնիք նամակին կնիքը խզելով , եւ
կարդաց .

« Եթէ պարոն տը Ֆէրնիք կոմսը կ'ու-
զէ տեսնել տիկին կոմսուհին և պարոն

աը Ռիչմոն դերկոմսը , պէտք է անմի-
ջապէս Պ . Ֆէրմէնի տունը երթայ Բիւի-
տը-լ'Էրմիթ փողոց թիւ 3 : »

Կոմսը խուլ բացագանչութիւն մ'ար-
ձակեց :

Եւ զայրոյթն ահռելի կերպով նորո-
գեցաւ :

— Վերջապէ՛ս , մրմռաց , երկուքն ալ
նորէն ժողովուած են . . . այն անիծեալ
տան մէջ , ուր խաղ խաղացին ինձի :

Արդարեւ Տիան և աը Ռիչմոն դեր-
կոմսը նոյն ժամուն Բիւիտը-լ'Էրմիթ
փողոցը գնացած էին , ինչպէս որ ազ-
գարարած էր իրենց ժիւլ Շամպէզիի
կրկին հեռագիրը :

Տունէն ներս մտած ժամանակնին մե-
ծապէս զարմացան Անթօան Բօսատն
հոն չի գտնելնուն վրայ :

Այս զարմանքն և միանգամայն մը-
տահագութիւնը զոր կը պատճառէր
Բօսատի անբացատրելի բացակայութիւ-
նը , գրաւելով կոմսուհիին միտքն և
զարհուրեցընելով աը Ռիչմոն դեր-
կոմը , քիչ մը հանդարտեցուցին այն
ջգային սոսկումը զոր երկուքն ալ
կ'զգային սենեակէն ներս մտած ժա-
մանակնին , ուր ժիւլ Շամպէզիի ըս-

պանութիւնը կատարուեր էր Տիանի-
աչքին առջեւ :

Այս վերջինն իմացուցեր էր իւր
տարփածուին՝ այդ գործուած նոր ո-
ճիրը :

Երկուքն ալ այն կէտին հասեր էին ,
որ իրարմէ ծածկելու բան մը չունէին ,
ոչ ալ պատճառ մ'ունէին անօգուտ
կատակերգութիւն մը խաղալու իրա-
րու հանդէպ :

Բօլ տը Ռիչմօն փութացեր մոմ մը
վառեր էր :

— Կ'երեւի որ , ըսաւ այն ժամանակ
դողդօջուն ձայնով մը , Անթօան Քօ-
սատ ծանր պատճառ մ'ունեցեր է
դուրս ելնելու , որպէս զի իւր նշա-
նակած ժամադրութեան չի կրնայ ներ-
կայ գտնուիլ :

— Այո՛ , ճշմարիտ է , պատասխանեց
կոմսուհին ձայնը ակամայ ցածցընելով
և աչերը դարձունելով դէպի այն
տեղն , ուր իւր փրկութեան համար
խողխողուած դժբաղդը տապաստ ին-
կեր էր :

— Ի՞նչ պիտի ընենք հիմա , հարցուց
դերկոմսը :

— Պիտի սպասենք :

Երկուքն ալ լուռ կեցած կը դողային
բուն սրտայուզութեամբ մը , զոր չէին
համարձակեր յայտնել իրարու՝ վախ-
նալով որ աւելի կը ծանրանար :

Երկար չի սպասեցին :

Յանկարծ , առանց փողոցի դրան բա-
ցուիլը լսուելու , ոտնաձայն մը հնչեց
առաջին սենեակին մէջ :

— Անթօանն է , գոչեց կոմսուհին :

Ժիւլ Շամպէզի'ն էր , որ մէկէն տն-
կուեցաւ առջեւին , երկու ձեռքը մէկ
մէկ ատրճանակ :

Տիան և Բօլ ար Ռիչմօն , որ մեռած
կը կարծէին զայն , սարսափահար ետ
ետ գացին , ուրուական մը տեսած ըլ-
լալու պէս :

— Կր հասկընամ ձեր գարմանքը , ը-
սաւ Ժիւլ Շամպէզի յաղթական և ըս-
պառնալից հեգնութեամբ մը : Պարոն
դերկոմսին դարմանքը բաւական կը
հասաատէ թէ ինքն ալ ձեզի պէս զիս
քանի մ'օրէ ի վեր Սէն գետին յատա-
կը պառկած կը կարծէր : Ի՞նչ պիտի
ընէք . իմ կեանքս շատ պինդ է : Հա-
կառակ ճարպիկ Անթօան Քօսատի տը-
լած դանակի հարուածին , հակառակ
նաև այն լողանքին որ ընել տուաւ

ինձի նարուէոն կամուրջին վրայէն, չի մեռայ ես: Եւ հիմա եկած եմ մեր փոքրիկ հաշիւը կարգադրելու:

Բօլ տը Ռիչմօն և Տիան մտիկ կ'ընէին անձայն, կեցած տեղերնին սարսափահար դամուած:

Տարակոյս չի կար:

Գծոխային թակարդի մը մէջ ինկեր էին:

Անթօան Գօսատ դիտմամբ հեռացուցուեր էր, որպէս զի իրենց եկած ժամանակ չիմացընէր իրենց թէ զիրենք հօն բերող հեռագիրներն ինք ստորագրած չէր:

—Նախ, պարոն դերկոմս, յարեց Շամպէզի իւր սուր և հեգնիչ ձայնովը, պէտք է ըսէք ինձի թէ ո՞ւր պահեցիք ձեր տիկին ամուսնին և Պ. Գանիէլ տը Բէօրի գաւազը:

Բօլ տը Ռիչմօն գրեթէ շունչ առաւ... Աւելի գէշ բանի կ'սպասէր:

Եթէ այս էր իրմէ ուղուածը... շատ աւելին յօժար էր տալու, որպէս զի ազատէր ինկած ծուղակէն... կարծեր էր թէ պիտի սպաննուէր:

Եւ սակայն կը վարանէր, մտածելով որ անզէն պիտի մնար Թէրնանտի և Գանիէլ տը Բէօրի դէմ:

—Պարոն դերկոմս, ըսաւ Շամպէզի քայլ մ'առաջ երթալով, պէտք է իմացընեմ ձեզի, թէ կենալու ժամանակ չունիմ. եթէ անմիջապէս չի կատարէք հրամանս, գլուխնիդ ջախջախելու պիտի հարկադրեմ:

Շամպէզի կատակ ընելու երեւոյթ չունէր, ընդհակառակն:

—Աւատիկ հասցէն այն մանկաբարձուհիին որուն տունն է... տղեկը, կակազեց դերկոմսը գրպանէն թղթապանակ մը հանելով և մէջէն քարտ մը ներկայացնելով Ժիւլ Շամպէզիի:

—Լաւ լաւ, ըսաւ վերջինը քարտին վրայ ակնարկ մը նետելով, բայց առանց առնելու, որովհետեւ երկու ձեռքն ալ մէկ մէկ ատրճանակ կային, զորս իւր երկու խօսակիցներուն վրայ ուղղած էր: Վառարանին վրայ դրէք:

Բօլ տը Ռիչմօն հնազանդեցաւ:

—կատարեա՛լ, ըսաւ Շամպէզի, Հիմա նստէք սա սեղանին առջեւ:

Բօլ տը Ռիչմօն գրեթէ ինկաւ այն աթոռին վրայ, զոր ատրճանակին փոշը ցոյց կուտար իրեն:

Տիան անշարժ կեցած՝ կը նայէր, մտիկ կ'ընէր լռին, կ'կորդը չորցած,

ակուաները սեղմած, մարելու վիճակի մէջ, անիծելով մտքէն Անթօան Բօսատն, որ այսպէս գէշ մեռցուցեր էր:

— Շատ աղէկ, ըսաւ Շամպէզի հեգնելով. պէտք է խելօք և հնազանդ ըլլաք այսպէս:

— Հիմա առէք սա գրիչն ու գրասեղանին վրայ կեցած թուղթը, և գրեցէք:

— Ի՞նչ գրեմ, հարցուց Բօլ տը Ռիչմօն:

— Կը հասկնաք, պարո՛ն դերկոմո, և տիկին կոմսուհին ալ աւելի աղէկ կը հասկընայ թէ՛ արտասովոր բան մը չըլլար եթէ ձեզնէ մէկուն կամ միւսին արկած մը պատահի:

Երկու թշուառականները ցնցուեցան:

— Ի՞նչ ընենք, ամէնքս ալ մահկանացու ենք... գրեթէ ամէնքս ալ... բայց ես բացառութիւն եմ, բացառութիւնը կը հաստատէ կանոնը:

Եւ նորէն քրքիջ մ'արձակեց, հաճոյք մ'ըզալով իւր վրիժառութենէն:

— Արդ, եթէ գժբաղդութիւն մը պատահի ձեզ, որովհետեւ տիկին առաւ ձեռքէս այն թուղթերն, որ իմ դօրութիւնս էին ձեզի դէմ, ես կա-

տարելապէս կողոպտուեցայ, լմնցայ, ո՞վ պիտի վճարէ այն 250,000 ֆրանքի փոքրիկ պարտքը, որուն վրայ յոյսս դրած եմ ձերութեան օրերս ապահովելու համար:

— Ուրեմն, ըսաւ կոմսուհին խզելով լռութիւնը:

— Ուրեմն, Պ. տը Ռիչմօն, որ շատ սիրուն մարդ մ'է, կը հաճի՝ իմ տուն տալովս՝ գրել փոքրիկ... մեքենայ մը, որ ինձի համար մեծագումար ոսկիի արժէք պիտի ունենայ, երբ թէ՛ տիկին տը Ռիչմօնի և թէ՛ տը Ֆէրնիք կոմսին դիմեմ:

— Մի՛ գրէք, ըսաւ Տիան իւր տարփածուին:

— Գրեցէք, կամ կրկին կ'ըսեմ՝ գըլուխդ կը ջախջախեմ, ըսաւ Շամպէզի դերկոմսին մօտենալով և ատրճանակներէն մին անոր քունքին ուղղելով:

Բօլ տը Ռիչմօն գրիչը ձեռքն առաւ:

Տիան ձեռքերը կը գալարէր: Շամպէզի տուն տալ սկսաւ:

«Ստորագրեալս կը յայտնեմ թէ, Տը Ֆէրնիք կոմսուհին հետ համախոհութեամբ, ժիւլ Շամպէզի կոչուած անձն սպաննելու մղեցինք Անթօան Բօսատը...»:

—Ո՛չ, ո՛չ, գոչեց Տիան շմորած, մի գրէք զայդ:

—Չեմ կրնար, ըսաւ Բօլ տը Ռիշմօն: Ատրճանակին փողը քունքին կրթնեցաւ:

Դերկոմսը վեր վեր ցատկեց ելեքտրական բարդէ մը զարնուածի պէս, և նորէն ձեռք առաւ գրիչը:

—Վա՛տ, մրմռաց կոմսուէին:

—Ստորագրեցէք ամբողջ, և յստակ գիրերով, շարունակեց Շամպէզի:

Թշուառականն ստորագրելու վրայ էր, չգիտնալով այլևս իւր բրածը, և անձնատուր ըլլալով անմիջական մահուան վտանգին առջեւ, որուն սարսափը շուարեցուցեր էր զինքը. յանկարծ հրադէնի պայթում մը յսուեցաւ:

Բօլ տը Ռիշմօն վեր ցատկելով՝ թեւերն օդին բաղխեց, և թաւալգլոր ինկաւ գետնին վրայ:

Գնտակ մը ծակեր անցեր էր սիրտը:

—Չի պիտի ստորագրէ՞, գոչեց Անթօան Բօսատ՝ ծածուկ դռնէն երեւան ելնելով և Շամպէզիի վրայ ուղղելով ատրճանակի մ'երկրորդ հարուածը:

Շամպէզի մէկ կողմ նետուելով՝ մաքեց մոմը:

Պահ մը մութ և լռութիւն տիրեցին սենեակին մէջ:

Դիւրաւ կը հասկցուի եղածը:

Անթօան Բօսատ, Սէն-Սիւլբիսի հըրապարակին մէջ սպասելէ ճանճրանալով, վերադարձեր էր Բիւի-տը-Լէր-միթ փողոցը:

Գազանի դրան անցքին մէջ պահուրտելով՝ ամէն բան լսեր էր, դերկոմօին հակառակ ըլլալով և Տիանն անգամ մ'ալ փրկելու փափաքող, զոր տարփածուն վատութեամբ պիտի մատնէր, զարկաւ սպաննեց դերկոմսը, ժամանակ չի թողլով որ ստորագրէր մատնութեան ամբաստանագիրը:

Բայց կ'երեւի թէ կամ դէնքին պայթումը նշան մ'ըլլալով միւսներուն, կամ պարզ զուգադիպութեամբ մը, դուրսի դուռը մէկէն բացուելով՝ նոր լոյս մ'երեւցաւ և տը ֆէրնիք կոմսը ներս մըտաւ:

Ետեւէն կուգար Բրէնպորն:

—Ռաո՛ւլ, գոչեց կոմսուէին սարսափահար, ճանչելով ամուսինը:

Պ. տը ֆէրնիք ուղղակի անոր վրայ քալեց:

—Չեր մեղսակիցը պատժելու իրաւ-

ունքս գողցան ինձմէ, ըսաւ դերկոմնին
դիակր ցուցընելով, բայց ձեր ու իմ
մէջ մարդ չի պիտի մտնէ:

—Շնորհ, կակաղեց կոմսուհին՝ ծուն-
գերուն վրայ իյնալով, ձեռքերն ա-
ղերսական շարժմամբ տարածած:

—Այնչափ վատ, որչափ ոճրագործ
և անամօթ. մրմռաց կոմսն աջ ձեռքին
մէջ բռնած ատրճանակ մ'անոր վրայ
ուղղելով: Շնորհակալ եղիք ինձի, որ
ձեզ կ'ազատեմ կառափնարանէն, որ
սա մարդուն կ'սպասէ:

Եւ Անթօան ֆօսատի նայեցաւ, որ
կանգուն կեցած էր գաղտնի դրան
մօտ, և Բօլ տը Ռիչմօնի դիակովը բաժ-
նուած էր կոմսէն:

—Շնորհ, կրկնեց կոմսուհին շմորած:

—Եթէ ես շնորհ ընեմ ձեզի, պա-
տասխանեց կոմսն անողոք, դահիճը
պիտի առնէ ձեր գլուխը: Ես չեմ թո-
ղուր երբէք որ տը Ֆէրնիք կոմսուհի
մը կառափնարան ելնէ: Մնաց որ,
շնորհ ո՞րու համար, շնացեալ կամ ազ-
գապիղծ և կամ ոճրագործ կնոջ հա-
մար: Դուք մահ պէտք էր խնդրէիք
ինձմէ, և ոչ կեանք: Ձեզ կառափնա-
րանէ կ'ազատեմ, ուր, նորէն կ'ըսեմ,
սա մարդը միայն պէտք է երթայ:

—Կ'ընդունիմ, ըսաւ ֆօսատ խռպոտ
ձայնով մը, կառափնարանն ինձի հա-
մար: Բայց թողէք որ ապրի սա: Ես
իմ վրաս կ'առնեմ գործուած ամէն ո-
ճիրները: Ասոր անունը... ձեր անու-
նը երբէք չի պիտի ելնեն բերնէս,
պարոն կոմս: Իմ արիւնս ասոր արիւ-
նին տեղ, այս միայն կրնամ տալ ի-
րեն... ուստի շնորհ իրեն... և դահի-
ճը թող դայ զիս առնէ:

Այսպէս խօսելով Անթօան ֆօսատ
քիչ քիչ կոմսին կը մօտենար:

—Ետ քաշուեցէք, գոչեց Պ. տը
Ֆէրնիք, փրկութիւն չի կայ և չի պի-
տի ըլլայ անոր...:

—Այգ է ահա ձեզ խաբողը, մռն-
չեց ֆօսատ:

Եւ մէկէն ատրճանակը հանելով, զոր
պահած էր մինչեւ այն վայրկեանը,
կոմսին վրայ ուղղեց և քաշեց:

Բայց նոյն վայրկենին երկու պայ-
թում մէկէն լսուեցաւ:

Քօսատի թեւը կէս շրջանակ մը ձե-
ւացնելով վար ինկաւ, և կոմսուհին ալ
զարնուելով գետինը փռուեցաւ:

Բրէնպորն, որ կոմսին ետեւէն ներս
մտած էր, հասկընալով ֆօսատի միտ-

քը, երբ այս վերջինը կոմսին կ'ուզ-
զէր ատրճանակը, փութացեր իրենը
պարպեր էր:

Իւր գնտակը Անթօան Քօսատի թե-
ւը դարնելով, անոր հարուածը խտտո-
րեցուցեր էր, որ գացեր կոմսուհին
զարկեր էր՝ ծունգի վրայ եկած վի-
ճակին մէջ, այնպէս որ ձայն չէր կըր-
ցեր հանել:

Անթօան Քօսատ ալ ձայն չէր հա-
նած թէեւ թեւը ջախջախած էր:

Բայց երբ տեսաւ կոմսուհին արիւնա-
թաթաւ փռուած, տեսակ մը մռնչիւն
արձակելով՝ անոր մարմինին վրայ նե-
տուեցաւ:

— Տրա՛ն, Տրա՛ն, քոյրս, գոչեց,
պատասխան տուր: Ո՛հ, մեռա՛ծ, մե-
ռա՛ծ:

Եւ ոտքի վրայ ելաւ աչերը խոլոտած
մազերը քունքին փակած, երկու քայլ
առաւ դէպի կոմսը, յետոյ սկսաւ խն-
դալ բարձրաձայն:

Խենթեցեր էր թշուառականը:

Բրէնպորն առաջ եկաւ:

— Պարոն կոմս, ըսաւ պատկառանօք,
արդարութիւնը կատարուեցաւ, հա-
ճեցէք ետ քաշուիլ, ոչ մէկ կաթիլ ա-

րիւն չի պղծեց ձեր ձեռքը, և ձեր ա-
նուան պատիւը փրկուած է, կ'երդ-
նում ձեզ:

— Այո՛, բայց ես կողոպտուեցա՛յ,
մրմնջեց Շամպէզի աղեկէզ դէմքով մը
այն տոմսակին նայելով, զոր Բօլ աը
Ռիչմօն ժամանակ չէր ունեցեր ստորա-
գրելու

«Բիէնֆիթի գործը» անհետեւանք
գործերուն կարգը դասուեցաւ:

Անթօան Քօսատ, իբրեւ խելագար
յիմարանոց դրուելով, այնպէս համար-
ուեցաւ թէ տը Ֆէրնիք կոմսուհին եւ
տը Ռիչմօն դերկոմսը մեռցրնելու եւ
կողոպտելու համար դաւով Բիւի-տը-
լէրմիթ փողոցի տունը տարեր էր:

Տիանի և Ֆէրնանտի ապօրէն յարա-
բերութիւնները ոչ ոք գիտէ, և տը
Ֆէրնիք կոմսին պատիւն երկու դիակ-
ներու վրայ կանգնած անազարտ կը
մնայ:

Գանի մ'ամիսէն, Դանիէլ տը Քէօր,
որ հրաժարական տուաւ, և Ֆէրնանտ,
որուն այրիութեան պայմանաժամը կը
լրանայ, Իտալիա պիտի երթան, ուր
պիտի ամուսնանան առանց աղմուկի:

Կը յուսան որ ար Ֆէրնիք կոմսն ալ
որ հանրային կեանքէն քաշուեցաւ,
իրենց քով պիտի երթայ, և տեսնելով
իւր ազնկան երջանկութիւնը, պիտի
մխիթարուի իւր թոռան գգուանքին
տակ:

Կ'ուղէին Բրէնպորնն ալ իրենց քով
ուեննալ, բայց ան կ'ուղէ իւր պաշա-
տին վրայ մնալ:

Գալով ժիւլ Շամպէզիի, որովհետեւ
ան միայն կրնար խօսիլ և ճշմարտու-
թիւնը յայտնել, Դանիէլ կատարեց
այն խոստումը զոր Բրէնպորնի միջո-
ցով տուած էր:

Երեք հարիւր հազար ֆր.ի գումար
մը գոցեց անոր բերանը:

Ան ալ գնաց հաստատուիլ Զուիցե-
րիոյ մէջ, և հոն հանգիստ կ'ապրի,
ամուսնանալով Սոֆի Շաթլէնի հետ,
որուն կը շարունակէ սովրեցընել կրա-
ւորական հնազանդութիւնը, որ կարգ
մ'ամուսիններու սիրած երազն է:

Զուարթ եղած ժամանակներն «Աղ-
ջիկ» կը կոչէ զայն՝ թուշին տակը
չոյելով:

Վ Ե Ր Զ



5p

1671

607

«Ազգային գրադարան»



NL0312195

6577